

ՎԱՂԻՆԱԿ ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

ԵՄ ԵՄ ՃԱՄԲԱՆ,  
ՃՇՄԱՐՏՈՒԹԻԻՆԸ ԵՒ ԿԵԱՆՔԸ

ՊԵՂՐՈՒՔ  
2006

ՋՕՆ

ԲՈԼՈՐ ԱՆՈՆՑ՝ ՈՐՈՆՔ

ԿԸ ՍԻՐԵՆ ՅԻՍՈՒՍԸ

## «ԵՄ ԵՄ ՃԱՄԲԱՆ»

«Ես եմ համբան» (Յե 14.6): Երբեմն մարդիկ կը յաւակնին ըսելու թէ բոլոր կրօններուն համբաներն ալ Աստուծոյ կ'առաջնորդեն: Այս խօսքը հշմարիտ չի կրնար ըլլալ, որովհետեւ մենք միայն Քրիստոսով «գտանք մեր արդարութիւնը, սրբութիւնը եւ փրկութիւնը» (Ա.Կր 1.30): Մէկ Փրկիչ կայ, եւ հետեւաբար, փրկութեան մէկ համբայ կայ միայն:

Աստուծոյ գալու համար Քրիստոսէ գատ ուրիշ համբայ կամ ուրիշ միջոց չկայ, որովհետեւ «աշխարհի մէջ միակն է անիկա, որ Աստուած մարդոց տուաւ, որպէսզի անոր անունով կարենանք փրկուիլ» (Գրծ 4.12): Ուրիշի մը անունով չենք կրնար փրկուիլ, որովհետեւ Քրիստոսէ գատ ուրիշ մէկը իր արիւնը չթափեց մեր փրկութեան համար:

Քրիստոս մեր կեանքին դիմաց բացուած բազմաթիւ համբաններուն շարքին ալ համբայ մը չէ: Քրիստոս փրկութեան առաջնորդող համբաներէն մէկը չէ, ալ մէկ եւ միակ համբան է: Քրիստոս չըսաւ. «Ես համբայ մըն եմ», ալ՝ «Ես եմ համբան»: Ի՛նքն է միակ համբան սիրոյ եւ սրբութեան: Ի՛նքն է միակ համբան փառքի եւ փրկութեան: Ի՛նքն է միակ համբան հաւատքի եւ յաղթութեան: Ի՛նքն է միակ համբան կեանքի:

Բոլոր կրօններուն հիմնադիրները բարոգեցին գերեզմանէն անդին գոյութիւն ունեցող կեանքին մասին, բոլոր հիմնադիրները համբաներ որոնեցին, հշոյեցին ու առաջարկեցին մոլորած մարդկութեան համար՝ որպէսզի կարենային յաղթանակ տանիլ մահուան բերած սարսափին վրայ, բայց միայն մէկ հոգի՝ Քրիստոս ի՛նքն, գերեզման տարուելէ ետք՝ վերադարձաւ գերեզմանէն, վերադարձաւ կենդանացած ու կենդանացնող Աստուած իբրեւ, եւ ատով իսկ ան դարձաւ միակ համբան յարութեան ու կեանքի, միակ համբան անմահութեան ու յաւիտենականութեան:

Աշխարհի պատմութիւնը կերտող մարդիկ խօսեցան տեսակ-տեսակ համբաններու մասին, բայց անոնցմէ ո՛չ ոք համարձակեցաւ ինքզինքն «համբայ» կոչել, Քրիստոս սակայն, առաջնորդը աշխարհի պատմութեան, չխօսեցաւ համբու մը կամ համբաններու մասին, ալ ինքզինքն հոչակեց իբրեւ համբայ, եւ անով իսկ ստիպեց աշխարհի բոլոր մարդոց, խօսելու իր մասին եւ գինք ներկայացնելու իբրեւ ճամբան բոլոր համբաններուն, ճամբան բոլորին՝ մեծին ու փոքրին, հարուստին ու աղքատին, հանրածանօթին եւ անձանօթին:

Աստուած անսահմանօրէն սիրեց մեզ, ահա թէ ինչո՛ւ ան չուզեց մեր փրկութիւնը վստահիլ հրեշտակի մը, մարգարէի մը, կամ առաքեալի մը, ալ ուզեց ինք անձամբ գալ եւ մեզ առաջնորդել փրկութեան: Հրեշտակները կ'աշխատին փրկութեան համբուն մէջ պահել մեզ, բայց իրենք չեն ո՛չ փրկութեան համբան եւ ո՛չ ալ փրկութեան առաջնորդող համբան: Քրիստոս ի՛նքն է հաւատացեալին փրկութեան համբան եւ համբորդակիցը: Քրիստոս ի՛նքն է փրկութեան առաջնորդող համբան եւ ի՛նքն է համբան որուն կ'առաջնորդուինք մենք՝ փրկուածներս: Քրիստոս

մեզ իր անձով եւ իր անձին կ'առաջնորդէ: Քրիստոս մեզ իր անձին փառելէ ետք՝ կը ներկայացնէ մեզ մեր երկնաւոր Հօր:

Քրիստոս'ս է երկինքի առաջնորդող նամբան: Առանց Քրիստոսի մենք չենք կրնար մեր երկնաւոր Հօր գալ: Ան ըսաւ. «Միայն ինձմով կարելի է Հօրս երթալ» (Յհ 14.6): Իսկ Պօղոս հաստատեց թէ Քրիստոս «կրնայ վերջնականապէս փրկել անոնք՝ որոնք իր միջոցաւ Աստուծոյ կու գան» (Եբր 7.25): Որդիին միջոցաւ Հօրը եկողը՝ պատուած կ'ըլլայ Որդին: Փրկութեան տարբեր նամբայ փնտոողը՝ անպատուած կ'ըլլայ Աստուծոյ Որդին, իսկ Աստուծոյ Որդին անպատուողը՝ չի փրկուիր:

Քրիստոս խաչին վրայ իր թափած արիւնով դարձաւ միակ նամբան երկրաւորները դէպի երկինքի առաջնորդող: Երկնաւոր Սրբարանին նամբան Քրիստոսի արիւնով բացուեցաւ (Եբր 9.12): Քրիստոս'ս է նամբան Աստուած եւ մարդ հաշտութեան: Քրիստոսի անձին մէջ է որ Աստուած եւ մարդ իրարու հանդիպեցան ու փարեցան: Մարդ ու Աստուած երբեք պիտի չկրնային ու չեն կրնար իրարու հանդիպիլ առանց Քրիստոսի միջամտութեան ու միջնորդութեան:

Սուրբերն ու հրեշտակները նաեւ կրնան բարեխօսել եւ միջնորդել մեզի համար մեր երկնաւոր Հօր առջեւ, բայց անոնք Աստուծոյ ցոյց տալիք բան մը չունին, սակայն Քրիստոս ցոյց կու տայ Աստուծոյ իր վերջերն ու խոցերը ու կը պահանջէ անկէ որ փառութիւն շնորհէ զոչումի եւ ապաշխարութեան կեանքի ապրողներուն: Այո՛, Քրիստոս մարդոց համար փառութիւն պահանջող մըն է եւ ո՛չ թէ խնդրող մը:

Սուրբեր եւ հրեշտակներ մարդոց համար փառութիւն չեն պահանջեր, այլ կը խնդրեն: Քառութիւն կրնայ պահանջել ա՛ն միայն որ Աստուծոյ արդարութեան պահանջը գոհացուց, իսկ Աստուծոյ արդարութեան պահանջը լրացնողը Քրիստոս ի՛նքն էր: Աստուծոյ արդարութիւնը կը պահանջէր որ արիւն թափուէր մեզի ջնջումին համար:

Ոմանք հարց կու տան ըսելով. «Եթէ Քրիստոս ի՛նքն է նամբան, հապա ինչո՞ւ այնքան խոչընդոտներու կը հանդիպինք»: Սա խօսով մենք Քրիստոսէ պահանջած կ'ըլլանք բան մը որ ինք չխոստացաւ: Ան չխոստացաւ մեզի հեզասահ եւ անփորձանք կեանք մը, բայց խոստացաւ հոգեւոր յաղթանակներով ու նուաճումներով լեցուն կեանք մը: «Յաղթանակ» եւ «նուաճում» բառերը կը պարզեն այն՝ որ մենք հոգեւոր պայքարի մէջ ենք: Հոգեւոր պայքարի մէջ եղող մէկը խոչընդոտներու ներկայութեան պէտք չէ գարմանայ:

Քրիստոս եւս ծանր պահերէ անցաւ: Ան սակայն իր ուշադրութիւնը չկեղորոնացուց Գողգոթայի նեղ նամբուն վրայ, այլ կեղորոնացուց այդ նամբուն աւարտին յարութեան բոցկլտացող լոյսին վրայ, որովհետեւ յարութեան այդ լոյսին մէջ ան տեսաւ յարութիւնն ու յաղթանակը ամբողջ մարդկութեան: Մե՛նք ալ սիրելիներ, մեզ շրջապատող տառապանքներուն մէջ լոկ տառապանք չտեսնենք, այլ այդ տառապանքին ետին կանգնող յաւիտեանական կեանքն ու աստուածային օրհնութիւնները տեսնենք:

## «ԵՄ ԵՄ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ»

Աշխարհ լի է կեղծիքներով ու կեղծաւորներով, սուտերով եւ ստախոսներով, այս բոլորը տեսնելով՝ նշմարտութիւնը սիրող ու փնտոող հաւատացեալ մարդուն հոգին կը տոչորի, եւ աւելի ուժգնօրէն կը փարի ոտքերուն անոր որ յայտարարեց. «*Ե՛ս եմ նշմարտութիւնը*» (Յե 14.6):

Այո՛, Քրիստոս ի՛նքն է նշմարտութիւնը: Առանց Քրիստոսի եւ Քրիստոսէ հեռու՝ ամէն բան սուտ ու դատարկ է, ամէն բան փուռ ու կեղծ է: Քրիստոսէ հեռու եղող մարդը՝ նշմարտութենէն է որ հեռու կ'ըլլայ: Եթէ սիրենք նշմարտութիւնը՝ գՔրիստոս է որ սիրած կ'ըլլանք: Եթէ հալածենք նշմարտութիւնը՝ Քրիստոսի սիրտն է որ արիւնած կ'ըլլանք: Եթէ քարոզենք նշմարտութիւնը՝ գՔրիստոս է որ փառաւորած կ'ըլլանք:

Ան որ կը հաւատայ Աստուծոյ գոյութեան կամ ան որ կը հաւատայ թէ Աստուած նշմարիտ է՝ պատուած ու մեծարած չ'ըլլար զԱստուած: Ի՞նչ օգուտ երբ կը հաւատանք թէ Աստուած նշմարիտ է ու նշմարտութիւն, բայց մեր կեանքն ու գործը անհունօրէն հեռու են նշմարիտէն ու նշմարտութենէն: ԶԱստուած փառաւորած կ'ըլլանք միայն ա՛յն ատեն՝ երբ փորձենք իր Որդիին նշմարիտ սիրոյ կեանքը ապրիլ երկրի վրայ:

Այո՛, նշմարի՛տ էր ու է Յիսուսի սէրը, նշմարի՛տ է անոր տագնապը, նշմարի՛տ է անոր զօրութիւնն ու զոհողութիւնը, նշմարի՛տ է անոր խաչն ու խաչելութիւնը, նշմարի՛տ էին Գեթսեմանիին պարտեզին մէջ անոր թափած քրտինքներն ու արցունքները, նշմարի՛տ է աշխարհ բերած իր փրկութիւնը մեզի համար, նշմարի՛տ է անոր սէ՛րը մեզի հանդէպ, անոր մա՛հը մեր սիրոյն ու մեր փոխարէն, անոր յարութի՛ւնը մեր կեանքին մէջ:

Ո՞ւր է Քրիստոսի յարութեան զօրութիւնը մեղքի աշխարհէն յարութիւն առած քրիստոնեաներու կեանքին մէջ: Ո՞ւր է Աստուծոյ նշմարտութիւնը Աստուծոյ նշմարտութեան հաւատացողներու կեանքին մէջ: Ո՞ւր է մեր կեանքերուն մէջ Աստուծոյ նշմարտութեան Հոգին. այն Հոգին՝ որ մեր յարաբերութիւնները Աստուծոյ եւ մեր նմաններուն հետ կը դարձնէ նշմարիտ, իրական, խորունկ ու ջերմ:

Աստուծոյ Հոգիին նշմարտութեամբ տոգորուած ու համակուած հաւատացեալը՝ պէտք է Յիսուսի նշմարի՛տ սիրոյ նշմարի՛տ նառագայթումը դառնայ, միշդ այնպէս՝ ինչպէս արեւին լոյսով լեցուած լուսինը՝ լոյս կը սփռէ իր չորս դին:

Եթէ Քրիստոս ի՛նքն է նշմարտութիւնը, ապա նշմարտութեան վկան՝ քրիստոնեայ մարդը ի՛նքն պէտք է դառնայ: Ա՛յս է հրահանգը Քրիստոսի. «*Ի՛մ վկաներս պիտի ըլլաք*» (Գրծ 1.8): Ի՛նչ աւելի գեղեցիկ ու գերիվեր բան կայ բան ըլլալ վկա՛ն նշմարտութեան, վկա՛ն Փրկիչ էմմանուէլին, վկա՛ն Քրիստոսի զօրութեան ու յաղթանակին:

Բայց վա՛յ մեզի եթէ երբեք նշմարտութեան համար վկայելու կանչուածներս սո՛ւտ խօսինք, ստութեան կեանք ապրինք, անօրէնին կողմին եւ անօրէնութեան կողմնակից ըլլանք: Աստուած կը յայտարարէ

որ «նշմարտութեան վկան սուտ չի խօսիր» (Առ 14.5): Ինչպէս կրակէն կարելի չէ ջուր դուրս բերել, այնպէս ալ Սուրբ Հոգիին «մաքուր ջուրով» (Եզ 36.25) մաքրուած քրիստոնեայէն ստութիւն պէտք չէ դուրս գայ:

Քանի որ քրիստոնեայ մարդը վկա՛ն է Քրիստոսի նշմարտութեան, ստութեամբ լի այս աշխարհին մէջ, բնական երեւոյթ է որ ան կրնայ հալածանքի ենթարկուիլ: Անբնականը եւ անընդունելին սակայն այն է՝ որ քրիստոնեայ հաւատացեալը իր հաւատակից եղբօր կամ քրոջ կողմէն չի կենար երբ կը տեսնէ անոր հալածուիլը ի խնդիր նշմարտութեան:

Ան որ իսկապէս նշմարտութեան վկան է, ան մնայուն կերպով պատրաստ պէտք է ըլլայ եւ ակնկալէ բաղիւմ ունենալ այս աշխարհին հետ: Ընդհարում ու անհամաձայնութիւն ունենալը աշխարհին հետ՝ անխուսափելի է: Մեզի կը մնայ քաջութիւնը ունենալ ոտքի՛ կանգնելու ի խնդիր նշմարտութեան, որպէսզի մարգարէին ըսած խօսքը մեզի համար նաեւ ըսուած չըլլայ. «Ճշմարտութեան համար երկրի վրայ քաջութիւն չունին» (Եր 9.3):

Որպէսզի կարենանք նշմարտութեան համար քաջութեամբ ոտքի կանգնիլ, բացարձակ պայման է նորոգուած ըլլալ Քրիստոսի խաչով: Քրիստոս ի՛նքն է որ մեր մէջ ապրելով, գօրութիւն կու տայ մեզի բարձրադասակ յայտարարելու նշմարտութիւնը: Ո՛չ ոք կրնայ Քրիստոսի պարգեւած ազատութեան վկա՛ն ըլլալ երբ ինք ստրուկ մըն է մեղքին:

Քրիստոսով ազատագրուող մա՛րդը միայն կրնայ հսկայ վկան դառնալ հոգեւոր ազատագրութեան: Իսկ Քրիստոսով ազատագրուելու համար պէտք է քանչնալ նշմարտութիւնը, համաձայն նոյնինքն Ազատարարին խօսքին. «Ճշմարտութիւնը ձեզ պիտի ազատէ» (Յհ 8.32):

Ի՞նչն է ազատաբեր այն նշմարտութիւնը որ մարդը պէտք է քանչնայ: Մարդը պէտք է գիտնայ որ առանց Քրիստոսի ինք առ յաւէտ կորսուած մըն է: Պէտք է գ՛րիստոս քանչնայ ու յայտարարէ իբրեւ մէկ ու միակ քամբան փրկութեան (Գրծ 4.12):

Սիրելի՛ ընթերցող եղբայր եւ քոյր, «Ե՛ս եմ նշմարտութիւնը» յայտարարող աստուածորդին սուտ չի խօսիր: Ի՛նքն իսկ կը վկայէ ըսելով. «Ես՝ Տէրս՝ արդարութիւն կը խօսիմ եւ նշմարիտ բաներ կը յայտնեմ» (Ես 45.19): Ան ինչ որ կը յայտնէ եւ ինչ որ կ՛ըսէ՝ նշմարիտ են: Ճշմարիտ են ապագային վերաբերեալ իր բոլոր ըսածները: Ճշմարիտ են յաւիտենական կեանքին ու դժոխքին կապակցաբար իր բոլոր հաստատումները: Ճշմարիտ են իր համբերատարութեան, իր սիրոյն եւ իր քաղցրութեան մասին իր խօսածները:

Հաւատա՛ իր խօսքերուն եւ կանչէ զինք: «Տէրը մօտ է այն ամենուն... որ նշմարտութեամբ զինք կը կանչեն» (Սղ 145.18): Ուստի, նշմարտութեամբ կանչէ Տիրոջ, այսինքն՝ ամբողջ սիրտովդ եւ հոգիովդ փափաքիր Աստուծոյ Որդիին յանձնուիլ եւ իր փառքին համար աշխատիլ:

*«Ինձի եկե՛ք...»* (Մտ 11.28): Այս հրաւերը քեզի՛ եւ ինձի՛ ուղղուած է: Եթէ կողմնակից ենք նշարտութեան՝ պիտի ընդառաջենք իր հրաւերին, քանի ի՛նք ըսաւ. *«Ով որ կողմնակից է նշարտութեան՝ անիկա իմ խօսքս կը լսէ»* (Յհ 18.37): Զվախնանք կողմնակից ըլլալու նշարտութեան: Զվախնանք աշխարհին ըսելու թէ մենք կը սիրենք Յիսուսը:

## «ԵՄ ԵՄ ԿԵԱՆՔԸ»

«Ե՛ս եմ կեանքը» (Յհ 11.25, 14.6): Եթէ Քրիստոս է կեանքը եւ եթէ Քրիստոս է կեանքի արարիչն ու տուիչը, այդ կը նշանակէ որ զՔրիստոս ունեցող մարդը՝ կեանք ունի, Աստուծոյ շնունչը ունի, Աստուծոյ Հոգի՛ն ունի, Աստուծոյ գթութիւնը ունի:

Աստուած իր Որդիին միջոցաւ կեանք շնորհեց մեղքով մեռած մարդկութեան, նո՛ր կեանք, յաւիտենակա՛ն կեանք, յաղթո՛ղ կեանք: Հոն ուր չկա՛յ Քրիստոս՝ հոն չկա՛յ կեանք ու կենսունակութիւն, հոն չկա՛յ յաղթութիւն եւ անմահութիւն:

Առանց Որդիին ո՛չ ոք կեանք ունեցաւ կամ պիտի ունենայ: Յովհաննէս առաքեալ կ'ըսէ. *«Աստուած յաւիտենական կեանք տուաւ մեզի, եւ այդ կեանքին աղբիւրը Որդին ինքն է: Հետեւաբար, ով որ Աստուծոյ Որդին իր մէջ ընդունած է՝ այդ կեանքը ունի. իսկ որ չունի Որդին՝ յաւիտենական կեանք այ չունի»* (Ա.Յհ 5.11):

Քրիստոս ո՛չ միայն աղբիւրն է կեանքին, այլեւ կեանքն իսկ է: Ի՛նքն է կեանք աղբերացնողը եւ ի՛նքն է աղբերացուող կեանքը: Ի՛նքն է կեանք տուողը եւ ի՛նքն է տրուած կեանքը: Այս իմաստով, ժառանգել յաւիտենական կեանքը, կը նշանակէ ժառանգել Քրիստոսի անձը, եւ այդ Անձին մէջ թափնուած ամբողջ սէրն ու սրբութիւնը, ամբողջ փառքն ու գեղեցկութիւնը, ամբողջ զօրութիւնն ու խաղաղութիւնը:

Յաւիտենական կեանքը նոյնիմէն Աստուծոյ կեանքն է: Ուստի յաւիտենական կեանքը ժառանգելը ուրիշ բան չէ եթէ ոչ Աստուծոյ կեանքին մասնակցիլ մը: William Barclay կ'ըսէ. *«Աստուծոյ մէջ խաղաղութիւն կայ, ուստի "յաւիտենական կեանք" կը նշանակէ հանդարտութիւն եւ ազատագրութիւն ամէն տեսակ վախերէ: Աստուծոյ մէջ զօրութիւն կայ, ուստի "յաւիտենական կեանք" կը նշանակէ յաղթութիւն մեր տկարութեանց եւ պարագաներուն վրայ: Աստուծոյ մէջ սրբութիւն կայ, եւ հետեւաբար, "յաւիտենական կեանք" կը նշանակէ յաղթանակ ընդդէմ մեղքին եւ ընդդէմ աշխարհի պղծող ազդեցութեանց: Աստուծոյ մէջ սէր կայ, ուստի "յաւիտենական կեանք" կը նշանակէ վախճան դառնութեան եւ ատելութեան: Աստուծոյ մէջ կեանք կայ, ուստի "յաւիտենական կեանք" կը նշանակէ պարտութիւն մահուան»:*

Ան որ ունի Յիսուս-կեանքը իր սրտին մէջ՝ իր սիրտը կը դառնայ կեանքով բարախուն, զօրութեամբ լեցուն, յոյսով եռուն, եռանդով գեղուն: Սիրտ մը որուն մէջ Յիսուս-կեանքը կը բնակի՝ կը վերածուի ինկարոյր տանարի, նո՛ր Բեթլեհէմի, սիրոյ արդիւրի, սրբութեան սեղանի: Սիրտ մը որ իր դռները կը բանայ Յիսուսի կենսագործող ներկայութեան դիմաց՝ կը դառնայ երկինքէն աւելի մաքուր, աստղի նման անհպելի, ձիւնէն աւելի սպիտակ, կրակէն աւելի ջերմ:

Մէկը որ սիրտը կը բանայ Յիսուսի սիրտէն հոսող սիրոյն դիմաց՝ այդ սիրով կ'անի, կը մեծնայ, կը բիրեղանայ, կը կայտառանայ, կը



թարմանայ ու կը գուարթանայ: Յիսուսի սիրտէն հոսող սիրոյն դիմաց՝ մարդուն սիրտը կը վերածուի երգի՝ ու երգարանի, ֆաղցրալից սկիհի, փառաբանութեան խորանի, լուսանաճանչ արեգակի:

Քրիստոս է կեանքը որովհետեւ Քրիստոս յաղթեց մեղքին ու մահուան: Քրիստոնէական հասկացողութեամբ իսկական մահը մարմնաւոր մահը չէ, այլ հոգեւոր մահը: Մեղքի կեանքը ապրող ու սիրող մարդը՝ հոգեւորապէս մեռած մարդ է: Անառակ որդին հոգեւորապէս մեռած մըն էր այնքան ատեն երբ հեռու կը մնար իր հօրմէն, բայց երբ իր հօրը վերադարձաւ, հայրը ըսաւ. *«Իմ այս գաւազն մեռած էր՝ ողջնցաւ...»* (Ղկ 15.24):

Իգնատիոս Վարդապետ կը հաստատէ թէ պարարտ հորթին զենումը կրտսեր գաւկին վերադարձին առիթով նախապատկերացումն էր Քրիստոսի զոհագործական մահուան: Այս իմաստով, կրտսեր գաւակը (հասարակ խաւին պատկանող Հրեաներն ու հեթանոս աշխարհը), կենդանացաւ եւ Աստուծոյ հետ հաշտուեցաւ Քրիստոսի մահուամբ:

Յիշեմք Ադամին օրինակը եւս: Աստուած անոր պատուիրեց. *«Պարտէզին բոլոր ծառերէն համարձակ կեր. բայց բարիի ու չարի գիտութեան ծառէն մի՛ ուտեր, որովհետեւ այն օրը որ անկէ ուտես, անշուշտ պիտի մեռնիս»* (Ծն 2.16-17): Հո՛ւ նաեւ խօսքը հոգեւոր մահուան մասին է, փաստօրէն այն օրը որ արգիլեալ ծառին պտուղէն կերան՝ մարմնապէս չմեռան:

Ադամ պատուիրանագանց գտնուելէ ետք, Աստուած զինք փնտոցեւ ըսաւ. *«Ո՞ւր ես»*: Եւ անիկա պատասխանեց. *«Պարտէզին մէջ էի ճայնդ լսեցի ու վախցայ, որովհետեւ մերկ էի ու պահուրտեցայ»* (Ծն 3.10): Այստեղ խօսքը հոգեւոր մերկութեան մասին է:

Ադամ Աստուծոյ դէմ մեղանշելէ ետք, մերկացաւ ու զրկուեցաւ այն սիրալիք կեանքէն որ ունէր ու կը վայելէր Աստուծոյ հետ, մերկացաւ Աստուծոյ պաշտպանարար եւ առաջնորդող ներկայութենէն, մերկացաւ անմահութեան եւ սրբութեան պատմունանէն: Ադամ իր մեղանշումէն ետք, սկսաւ փախիլ ու խուսափիլ Աստուծոյ ներկայութենէն, եւ ասիկա փաստ մըն է, որ ան կորսնցուցած էր իր հոգեւոր կենսունակութիւնը: Աստուծոյ ներկայութիւնը կենսաւորող ու կենսագործող ներկայութիւն է: Աստուծոյ ներկայութենէն խուսափիլը ապացոյց մըն է որ մենք Քրիստոսով չենք ծածկած մեր մերկութիւնը եւ չենք հաշտուած իր հետ:

Լսեցէ՛ք Աստուծոյ խօսքը. *«Զիս գտնողը կեանք կը գտնէ ու Տիրոջմէ շնորհք կը ստանայ: Բայց ինձի դէմ մեղանշողը իր հոգիին անիրաւութիւն կ'ընէ: Բոլոր զիս ատողները մահը կը սիրեն»* (Առ 8.35-36): Այս բառերը եւս ցոյց կու տան որ մեղք գործելը՝ մեր հոգիները անիրաւել է եւ կեանքի փոխարէն մահը սիրել է: *«Զիս գտնողը կեանք կը գտնէ»*: Սիրելի՛ բարեկամ, գտա՞ծ ես Քրիստոս՝ կեանք:

Առանց Քրիստոսի մա՛հ է բաժինդ: Առանց Քրիստոսի խաւա՛ր է կեանքդ ու յաւիտենականութիւնդ: Քու եւ յաւիտենականութեան միջեւ

Ֆայլ մը միայն կայ: Այդ ֆայլը մարմնաւոր մահն է: Զգոյշ եղիր որ չըլլայ թէ պարտադրուի քեզի այդ ֆայլը առնելու, եւ դուն յաւիտենականութեան անցնիս առանց Քրիստոսի: Գերեզմանէն անդին Քրիստոսէ զատ ուրիշ պաշտպան չունիս: Գերեզմանէն անդին գՔրիստոս ունենալու համար իբրեւ պաշտպան ու պահապան, պէտք է այսօր իսկ յանձնուիս իրեն:

## «ԵՄ ԵՄ ԱՇԽԱՐՀԻ ԼՈՅԱԸ»

*«Ե՛ս եմ աշխարհի լոյսը: Ով որ ինձի կը հետեւի՝ խաւարի մէջ պիտի չՖալէ, այլ պիտի ունենայ այն լոյսը որ կեանքին կ'առաջնորդէ»* (Յե 8.12): Մե՛ղքն է որ խաւարով պատեց մարդուն կեանքը: Մե՛ղքն է որ մարդուն սիրտին մէջ շիջեցուց արդարութեան լոյսը: Մե՛ղքն է որ աղօտացուց լոյսը մեր հոգիներուն: Մարդը կորսնցուց յաւիտենական կեանքին առաջնորդող ցամբան երբ կամովին մարեց այդ ցամբուն լոյսը:

Յաւիտենական կեանքին առաջնորդող լոյսը Քրիստոս ի՛նքն է: Խզել մեր կապը Քրիստոսի հետ, կը նշանակէ մերժել մեզ կենսաւորող լոյսը: Առանց Քրիստոսի խաւա՛ր է մարդուն կեանքը ու մեռա՛ծ է անոր հոգին: Առանց Քրիստոս-Լոյսին մարդուն միտքը տարտարոսներուն մութին մէջ կը խարխափէ, մարդուն սիրտը իր խաղաղութիւնը կը կորսնցնէ, իսկ մարդուն հոգին առ յաւէտ աղիողորմ ճիչեր կ'արձակէ:

*«Ով որ ինձի կը հետեւի՝ խաւարի մէջ պիտի չՖալէ...»*: Արդարեւ, խաւարի մէջ չՖալեցին Եգիպտոսէն ելող Իսրայէլացիները որոնք *«ամպին առաջնորդութեան եւ պահպանութեան տակ էին եւ բոլորն ալ Կարմիր ծովէն անցան, եւ Մովսէսի հետեւելով՝ բոլորն ալ մկրտուեցան ամպին եւ ծովուն մէջ»* (Ա.Կր 10.1-2): Ամպը որուն մասին կը խօսի առա՛հալը, ակնարկութիւն է անապատին մէջ Իսրայէլի ժողովուրդը առաջնորդող ամպի եւ կրակի սիւնին (Ել 13.21-22): Իսկ ամպի եւ կրակի սիւնին մէջ մենք Քրիստոսի ներկայութիւնն է որ կը տեսնենք: Ինչպէս Քրիստոս անցեալին Իսրայէլի ժողովուրդը առաջնորդեց Սինայի անապատներէն ու Կարմիր ծովէն, այնպէս ալ այսօր, ան մեզ կ'առաջնորդէ ներկայ կեանքի տաժանալից անապատներէն ու մրրկալից ծովերէն:

Սիրելի՛ բարեկամ, ինչպէս Իսրայէլացիները առանց անցնելու Սինայի անապատէն ու Կարմիր ծովէն պիտի չկրնային հասնիլ խոստացեալ Քանանու երկիրը, այնպէս ալ մենք չենք կրնար հասնիլ Աստուծոյ խոստացած թագաւորութեան եթէ նախ չանցնինք կեանքի անապատներէն ու ծովերէն: Իսկ կեանքի անապատներէն ու ծովերէն կարենալ անցնելու համար՝ անհրաժեշտօրէն մեզի հետ ու մեր կողքին ունենալու ենք զՔրիստոս:

Կեանքի անապատն ու ծովը լեցուն են վայրի գագաններով ու անտեսանելի սողուններով: Հո՛ն է Սատանան իր ծուղակներով ու հրապուրիչ երեւոյթներով: Հո՛ն են չար ոգիները իրենց պատրաստած անհամար փորձութիւններով: Առանց Քրիստոսի չենք կրնար յաղթանակ տանիլ անոնց դէմ: Պէտք ունինք Քրիստոս-Սիւնին որպէսզի իրեն կրթնինք, իրմով գորանանք, իրմով ու դէպի իրեն առաջնորդուինք: Չարին կողմէ նիւթուած չարաբնոյթ ծրագիրները միայն Քրիստոս-Լոյսին դիմա՛ց կը խափանուին, եւ Աստուծոյ փառաւոր ու փառաւորիչ լոյսը պայծառօրէն հանդէս կու գայ:

Մենք չենք երթար Քրիստոսի որպէսզի անկէ լոյս առնենք, այլ որպէսզի՝ գայն ընդունինք մեր կեանքներուն մէջ իբրեւ լոյս: Ան ոչ միայն մեր հոգիները լուսաւորող է, այլեւ լոյսն է մեր հոգիներուն: Քրիստոս-Լոյսն է որ արդարութեան քամբան կը ցուցնէ: Քրիստոս-Լոյսն է որ նշմարտութիւնը երեւան կը բերէ: Առանց Քրիստոս-Լոյսին նշմարտութիւնը ծածկուած կը մնայ մեզմէ: Քրիստոսն է նշմարտութիւնը, եւ հետեւաբար, Քրիստոսէ հեռացողը նշմարտութենէն է որ հեռացած կ'ըլլայ: Լոյսը նշմարտութիւնն ու իրականութիւնը հանդէս բերելու յատկութիւնը ունի:

Արդարեւ, լոյսը չէ՞ որ ամէն բանի ինքնութիւնը, ամէն առարկայի ինչութիւնը, ամէն երեւոյթի իսկութիւնը երեւելի կը դարձնէ: Ինչպէս երբ արեւը ծագի մութին ու խաւարին մէջ ծածկուած, անծանօթին ու անորոշին ետին պահուրտած բոլոր մարդիկն ու առարկաները երեւան կու գան իրենց նշմարիտ պատկերով, այնպէս ալ երբ Քրիստոս իբրեւ լոյս ծագի մեր սիրտերուն ու հոգիներուն մէջ, այն ատեն է որ մեր իսկական ինքնութիւնը պիտի բացայայտուի, պիտի անդրադառնանք որ կորսուած ենք մեղքի խաւարին մէջ եւ շուտով Քրիստոսի ոտքերուն պիտի փաթթուինք:

Պօղոս առաքեալ կ'ըսէ. *«Աստուած ինք, որ ըսաւ՝ "Խաւարին մէջ լոյս թող ծագի", ինք մեր սիրտերուն մէջ ծագեցաւ, որպէսզի լուսաւորուինք եւ Աստուծոյ փառքը ցանկնանք Յիսուս Քրիստոսի անձին մէջ»* (Բ.Կր 4.6): Յիսուս Քրիստոսի լոյսով էր որ մենք ցանկացանք Աստուծոյ փառքը: Յիսուս Քրիստոսով մենք լուսաւորուեցանք եւ դարձանք երկինքի լոյսը երկրի վրայ տարածող երկնառաք դեսպաններ:

Առանց Քրիստոսի լոյսին մենք թշնամի կը մնանք երկինքին: Առանց Քրիստոսի լոյսին մենք մնայուն կերպով վախի եւ անորոշութեան գիրկին մէջ կ'ըլլանք: Այո՛, խաւարին մէջ վախն է որ կը հանգչի, խաւարին մէջ վտանգն է պահուրտած, խաւարին մէջ Սատանան է դարանակալ նստած: Մութին մէջ քաղցր ո՛չ միսիթարութիւն ունի եւ ո՛չ ալ խաղաղութիւն, ո՛չ հանգիստ եւ ո՛չ ալ ապահովութիւն:

Քրիստոս ի՛նքն է որ այս բոլորէն մեզ ազատագրեց: Ի՛նքն է որ մեզ անհաւատութեան խաւարէն դուրս բերաւ եւ հաւատքի որդիներ դարձուց: Ի՛նքն է որ մեզ տգիտութեան նիրաններէն ձերբազատեց եւ առաջնորդեց նշմարիտ գիտութեան որ նոյնինքն աստուածգիտութիւնն է: Ի՛նքն է որ մեզ խաւարին մէջ թաղուած մեռելոտի կեանքէն դէպի յաղթական կեանքի առաջնորդեց:

Կեանք ունենալ, կը նշանակէ ունենալ այն լոյսը *«որ խաւարին մէջ կը փայլի»* (Յհ 1.5): Այն Լոյսը փայլեցաւ ու կը շարունակէ փայլիլ ամբողջ աշխարհի մարդոց վրայ, որովհետեւ ամբողջ աշխարհի մարդոց վրայ տիրեց մեղքի խաւարը: Այն Լոյսը միայն Հրեաներուն համար չեկաւ աշխարհ, այլ ողջ մարդկութեան համար (Յհ 12.46): Ինչպէս արեւը բոլորին վրայ կը ծագի, այնպէս ալ արեւին Ստեղծիչը պատրաստ է

«մահուան աշխարհին ու շուքին մէջ ապրողներուն վրայ» ծագելու (Մտ 4.16):

Սիրելի՛ ընթերցող, ինչպէս երբ արեւի լոյսը ծագի, աշխարհը պատող խաւարը կը փարատի, այնպէս ալ, թոյլ տուր որ Քրիստոսի լոյսը ծագի սիրտիդ մէջ, որպէսզի ցրուի էութիւնդ պատող անհաւատութեան մէգը:

## «ԵՄ ԵՄ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ»

«Ե՛ս եմ յարութիւնը» (Յհ 11.25): Քրիստոսի յարութիւնը մեծագոյն ապացոյցն է յաւիտենական կեանքի գոյութեան: Իր յարութեամբ մահը դարձուց նամբայ՝ յաղթական կեանքի առաջնորդող: Իր յարութեամբ երկինքը երկրի վրայ հաստատեց: Իր յարութեամբ մեզ արդար Աստուծոյ արդար գաւակները դարձուց (Հո 4.25):

Իր յարութեամբ խնդացուց երկինքն ու երկնքին նայիլ սիրողները, եւ ահի մատնեց Չարն ու չարագործները: Իր յարութեամբ մեղքով անապատացած մարդուն հոգին Աստուծոյ շնորհներով լի ծաղկաստանի վերածեց: Իր յարութեամբ ցնծացուց ննջեցեալներու աշխարհը:

Իր յարութեամբ սորվեցուց մարդուն յարութիւն առնել մեղքի գերեզմանէն ու յաղթանակ տանիլ չար Վիշապին վրայ: Իր յարութեամբ դարձաւ զօրացնողը սարսափահար առաքեալներուն եւ զօրագլուխը հաւատացեալներուն: Իր յարութեամբ վիմափոր գերեզմանէն՝ դարձաւ Վեմ գերեզմանէն վախցող մարդկութեան:

Իր յարութեամբ փաստեց թէ ինքն է Տէրն ու տուիչը կեանքին: Իր յարութեամբ գօտեպնդեց հաւատքը անոնց՝ որոնք հաւատքի ջահակիրներ պիտի դառնային ամէնուրեք: Իր յարութեամբ փաստեց թէ Աստուած ի՛նքն է որ կ'իշխէ երկնքի մէջ ու երկրի վրայ եւ ո՛չ թէ Չարին զօրութիւնը:

Իր յարութեամբ Քրիստոս մեզի համար պատրաստած եղաւ յաւիտենապէս անեղծ ժառանգութիւն մը: Եթէ Քրիստոսի մարմինը եղծանելի ըլլար եւ փտութիւն տեսնէր՝ մեզի խոստանալիք իր ժառանգութեան անեղծութեան վերաբերեալ մենք կասկածամտութեամբ պիտի մօտենայինք: Ճիշդ է որ Քրիստոս իր յարութեամբ վերջ չդրաւ փորձութիւններուն եւ Փորձիչին գործունէութեան, բայց ան ամրապնդեց ու յոյսով զօրացուց իր հետեւորդները ընդդէմ Սատանային:

Եթէ Քրիստոս յարութիւն չառնէր, ո՞վ պիտի կրնար ամբողջ հոգիով ու սիրտով պայքարիլ Սատանային ու անոր չար արքանեակներուն դէմ: Եթէ Քրիստոս յարութիւն չառնէր, ո՞վ պիտի կրնար իր վստահութիւնն ու հաւատքը ամբողջութեամբ հաստատել իր վրայ: Ան իր յարութեամբ դարձաւ վստահութեան աղբիւրը իր հաւատացեալներուն: Իր յարութեամբ դարձաւ ապաւենն ու պաշտպանը բոլոր անոնց՝ որոնք իրենց հայեացքը սեւեռած դէպի երկինք, կը սպասէին աստուածային միջամտութեամբ մը ազատագրուիլ անյուսութեան անդունդէն:

Քրիստոսի յարութիւնը երաշխիքն է մեր յարութեան: Եզնիկ Կողբացի կ'ըսէ. «Քրիստոս իր յարութիւնը մեր յարութեան նշմարիտ օրինակը դարձուց»: Եթէ Քրիստոս ըսաւ թէ ինք պիտի մեռնէր ու դարձեալ յարութիւն պիտի առնէր (Մտ 20.19), եւ իր ըսածը կատարուեցաւ, մենք պատճառ մը չունինք չհաւատալու իր խոստումին, թէ՛ մենք ալ յարութիւն պիտի առնենք (Մտ 22.30, Յհ 5.28-29): Իր

յարութիւնը պատճառ մըն է որ մենք հաւատանք արտասանած իր բոլոր միւս խօսքերուն:

Երբ կը խօսինք մեռելներու յարութեան մասին, բնականաբար անոնց մարմիններուն յարութեան մասին է որ խօսած կ'ըլլանք եւ ո՛չ թէ հոգիներուն յարութեան մասին: Մարդուն հոգին յարութիւն առնելու պէտք չունի քանի որ անիկա ըլլա՛յ փրկուած, ըլլա՛յ կորսուած, երբեք չի մեռնիր: Եթէ Քրիստոսի նմանողութեամբ է որ յարութիւն պիտի առնենք, ուրեմն յստակ է որ յարութիւնը մարմնաւոր յարութիւն է, քանի որ Քրիստոս մարմինով յարութիւն առաւ: Անոր հոգին կենդանի մնաց իր մարմինին մահէն ետք եւ *«հոգիով ալ՝ գնաց քարոզեց քանտարկուած հոգիներուն»* (Ա.Պտ 1.19):

Ոմանք կը դժուարանան հաւատալ եւ հարց կու տան թէ ինչպէ՞ս Աստուած պիտի կարենայ յարութիւն տալ մեռելներուն որոնք ամբողջովին փոշիացած ու մոխրացած են: Այդպէս մտածողներուն կը յիշեցնենք թէ *«ամէն ինչ կարելի է Աստուծոյ համար»* (Մր 10.27): Եթէ Աստուծոյ համար կարելի եղաւ ոչինչէն ստեղծել աշխարհը, կամ գետնին հողէն ստեղծել մարդը (Մն 2.7), հապա ինչո՞ւ անկարելի պիտի ըլլայ իրեն համար հող ու փոշի դարձած մարդկութեան յարութիւն տալ: Եթէ մարդուն համար կարելի է ամբողջովին փլատակուած շէնք մը վերակառուցել, Աստուծոյ համար ինչո՞ւ անկարելի պիտի ըլլայ ամբողջովին մոխրացած մարդկութեան յարութիւն պարգեւել:

Բնութիւնը անգամ կ'ապացուցանէ յարութեան իրական ըլլալը: Այո՛, յարութեան խոստումին մասին մենք միայն Աստուածաշունչին կամ այլ գիրքերու մէջ չէ որ կը կարդանք, այլ նաեւ բնութեան մէջ: Եթէ անշունչ ծառեր որոնք ձմռան լիովին կը չորնան եւ կենդանութեան շունչն իսկ չի մնար անոնց մօտ՝ կրնան գարնան ու ամռան վերստին ծաղկիլ ու կանաչիլ, հապա որքա՛ն աւելի Աստուած, կարողութիւնը ունի ննջածները վերստին կեանքի կոչելու: Պօղոս առաքեալ կ'ըսէ. *«Եթէ ընդունինք թէ մեռելները յարութիւն չեն առներ, ըսած կ'ըլլանք նաեւ՝ թէ Աստուած Քրիստոսը չյարուցանեց»* (Ա.Կր 15.15):

Կաւարտեմ Կիւրեղ Երուսաղէմացիին խորիմաստ խօսքով. *«Եթէ արմատէն կտրուած ծառը կրնայ վերստին անիլ եւ ծաղկիլ՝ արդեօ՞ք մարդը վերստին պիտի չծաղկի: Եթէ սերմանուած սերմերը վերստին անելով եւ հնձուելով կը պատրաստուին կալի, մարդ արարածը ինքն ալ վերստին կալի չի՞ պատրաստուիր: Եթէ այգիներէն կամ ծառերէն կտրուած ռստերը ուրիշ տեղ տնկուած ըլլալով վերստին կ'անին, մարդը ինքն ալ հողի մէջ դրուելէ ետք, վերստին պիտի չկենդանանա՞յ»:*

*Դուն դատէ ու տես թէ ո՞ր մէկը աւելի մեծ է. նոր ստեղծել ամենեւին չստեղծուածը, թէ՛ ինկածն ու կործանուածը վերստին ձուլել եւ ստեղծել անկէ նոր պատկեր: Արդ, եթէ Աստուած իր շունչով ստեղծած է մեզ, միթէ կարող չէ՞ ստեղծուածին եւ ինկածին յարութիւն պարգեւել: Աստուած գիտէ քու թերահաւատութիւնդ, ահա թէ ինչո՞ւ ան այնպէ՛ս ըրաւ, որ դուն*

*տեսնելով անշունչ եւ անմոռունչ բնութեան վերյառնումը՝ հաւատաս  
շնչաւոր եւ բանական էականերու յարութեան»:*



## «ԵՄ ԵՄ ԻՐԱԻ ՀՈՎԻԻԸ»

«Ե՛ս եմ՝ իրաւ հովիւր» (Յհ 10.11): Իրաւ հովիւր մէկիկ-մէկիկ կը ցանցնայ իր ոչխարները իրենց անուններով (Յհ 10.3): Քրիստոս իրա՛ւ հովիւ է, որովհետեւ մեզ կը ցանցնայ մեր տկարութիւններով, խեղճութիւններով, թերութիւններով եւ առաւելութիւններով: Իրա՛ւ հովիւ է, որովհետեւ գիտէ թէ ի՛նչ բաներու կարիքը ունինք, ի՛նչ բաներէ կը վախնանք, ի՛նչ բաներ կը փափաքինք, ի՛նչ բաներ մեզ կը մտահոգեն ու կը տագնապեցնեն, ի՛նչ բաներէ պէտք է ազատինք կամ կ'ուզենք ազատիլ:

Քրիստոս ի՛նքն է մեր իսկական հովիւր, որովհետեւ մեզ կը ցանցնայ մեր իսկութեան, բնութեան եւ ինքնութեան մէջ: Ան գիտէ որ մեր ինքնութիւնը երկնային ծագում ունի: Քանի որ մեզ կը ցանցնայ՝ ուրեմն կրնայ մեզ հասկնալ, եւ քանի որ մեզ կը հասկնայ՝ ուրեմն կրնայ մեզ բուժել: Ինչպէս հիւանդին հիւանդութիւնը ցանցնող բժիշկը միայն կրնայ զանիկա բուժել, այնպէս ալ մեր հոգիներուն ցաւը ցանցնող Տէր Յիսուսը միայն կրնայ հոգեկան անդորրութիւն եւ հանգիստ պարգեւել մեզի:

Ան իրա՛ւ հովիւ է, որովհետեւ թոյլ չի տար որ կարօտութեան մէջ իյնանք. «Տէրը իմ հովիւս է, ես բանի մը կարօտութիւն պիտի չունենամ» (Սղ 23.1): Խօսքը հարկաւ նիւթական կարօտութեան մասին չէ, այլ՝ հոգեւոր: Քրիստոս կը կշտացնէ իր ոչխարներուն հոգիները, կը յագեցնէ անոնց սիրտերուն ծարաւը: Ան զանոնք կ'առաջնորդէ դէպի խոտաւէտ արօտավայրեր, դէպի հանդարտ ու զուլալ ջուրեր (Սղ 23.2):

Այո՛, ան մեզ կ'առաջնորդէ դէպի խոտաւէտ արօտավայրեր եւ ո՛չ թէ խոտագուրկ արօտավայրեր, հանդարտ ջուրերու ֆոյլ եւ ո՛չ թէ մրրկայոյզ ջուրերու ֆոյլ: «Խոտաւէտ արօտավայրերը» կը ներկայացնեն աստուածատուր այն օրհնութիւնները, պարգեւներն ու շնորհները, որոնցմով Աստուած կը զարդարէ իր հետեւորդներուն հոգիները: Իսկ «հանդարտ ջուրերը» կրնան պատկերացնել երկու բան. առաջին.– այն ներքին խաղաղութիւնը որ Յիսուս կը շնորհէ իր հետեւորդներուն մնայուն կերպով, բայց մանաւանդ երբ փորձանքի հանդիպին, եւ երկրորդ.– ուշագրաւ իրողութիւն է որ ոչխարները կը վախնան ուժգնութեամբ հոսող ջուրին մօտենալ եւ խմել անկէ: Ահա թէ ինչո՛ւ հովիւր կը ջանայ «հանդար ջուրերու ֆոյլ» առաջնորդել զանոնք:

Ինչպէս հովիւ մը չի ծիծաղիր իր ոչխարին վրայ ու չ'այպաներ զայն իր վախկոտութեան համար, այնպէս ալ Քրիստոս, նկատի կ'առնէ մեր տկարութիւնները եւ երբեք չ'ստիպեր որ դիմակալենք փորձութիւններ որոնք մեր կարողութենէն վեր են (Ս.Կր 10.13): Ան երբեք մեզ չ'առաջնորդեր խոռվայոյզ ջուրերու ֆոյլ, այսինքն հոն՝ ուր ահ ու սարսափ առթող երեւոյթներ կան: Քրիստոս մեզ «հանդար ջուրերու ֆոյլ» կը տանի, այսինքն՝ մեր կարողութեան համեմատ կը վերաբերի մեր հետ:

Երբ նեղութեան մէջ իյնանք մարդիկ կը լքեն մեզ, բայց Քրիստոս իրա՛ւ հովիւ է, որովհետեւ եթէ «մահուան շուքի ձորին մէջ» անգամ

իյնանք՝ տէր կը կանգնի մեզի եւ կը պաշտպանէ իր «ցուպով» ու «գաւազանով» (Սղ 23.4): Յուպն ու գաւազանը խորհրդանշիչ նկատուած են երեք բաներու. *տաշիւ*.-- կը խորհրդանշեն այն պաշտպանութիւնը որ Քրիստոս կը շնորհէ մեզի երբ աղէտներու հանդիպինք: Ինչպէս հովիւներ միշտ իրենց հետ կ'ունենային գաւազաններ, իրենք գիրենք եւ իրենց ոչխարները պաշտպանելու համար յարձակող գազաններու դիմաց, այնպէս ալ Քրիստոս մեզ կը պաշտպանէ սատանայական ամէն տեսակի յարձակումներու դիմաց:

*Երկրորդ*.-- ուրիշներ ցուպ ու գաւազան բառերուն ետին, կ'ուզեն տեսնել Աստուծոյ կողմէ մեզի պարգեւուած Չարին գլուխը ջախջախելու իշխանութիւնն ու զօրութիւնը: *Երրորդ*.-- ցուպն ու գաւազանը նաեւ նշանակ նկատուած են աստուածային առաջնորդութեան: Աստուած գիտէ որ մարդ արարածը կեանքի այս փուսին մէջ պէտք ունի իր առաջնորդութեան, ահա թէ ինչո՛ւ Քրիստոս կը հաստատէ թէ ինք անձամբ մեզ կ'առաջնորդէ (Յհ 10.4): Եւ պատահական տեղեր չէ որ կ'առաջնորդէ, այլ «*արդարութեան մամբաներու մէջ*» (Սղ 23.3): Ան սխալ մամբաներէ եւ դէպի սխալ մամբաներ չ'առաջնորդեր, այլ դէպի արդարացում, յաղթանակ, աստուածապաշտութիւն եւ սրբութիւն:

Շատ մը կենդանիներ եթէ կորսնցնեն իրենց տէրը՝ կրնան տուն վերադառնալ: Նոյնը չէ պարագան ոչխարին: Ոչխարը եթէ կորսնցնէ իր հովիւը եւ չլսէ անոր ձայնը, անկարելի է որ կարենայ տուն դառնալ: Սա ցոյց կու տայ որ եթէ Քրիստոս մոլորած ոչխարներս չփնտռէ, չգտնէ ու դէպի տուն չդարձնէ՝ մենք չենք կրնար մեր սեփական մարտարութեամբ ու միջոցներով դառնալ Աստուծոյ: Այս իրողութիւնը կը պարզուի նաեւ կորսուած ոչխարին առակին մէջ. «*Չ'երթար կորսուածին ետեւէն, մինչեւ որ գտնէ զայն*» (Ղկ 15.4): Այո՛, Քրիստոս կ'երթայ ամէն մէկ կորսուած մարդու ետեւէն եւ չի դադրիր զայն փնտռելէ մինչեւ որ գտնէ զայն:

Քրիստոս իրա՛ւ հովիւ է, որովհետեւ ինչ որ ըսաւ, տուաւ ու պիտի տայ՝ իրաւ է: Ան իրաւամբ իրա՛ւ է, որովհետեւ «*իրաւ հովիւը իր կեանքը կու տայ ոչխարներուն համար*» (Յհ 10.11): Մարդիկ իրենք գիրենք կը գոհէին իրենց չաստուածներուն համար, մինչ մեր Աստուածը՝ Քրիստոս, ինքզինք գոհեց մեզի համար: Պատմութեան ընթացքին ո՞ր չաստուածը գոհուած է իր հետեւորդներուն համար:

Քրիստոս իր սեփական արիւնով ձեռք ձգեց հովուապետութեան իր պաշտօնը (Եբր 13.21): Ան եղաւ այն իրա՛ւ հովիւը, հովիւը այն բոլոր հովիւներուն, որ ո՛չ միայն իր կեանքը գոհեց ոչխարներուն համար, այլ՝ ինքզինք դարձուց մեր կեանքը:

Քրիստոս մեզ պաշտպանելու եւ ազատելու համար գայլերէն, յանձն առաւ իբրեւ անպաշտպան ոչխար յանձնուելու անոնց ճիրաններուն (Յհ 10.11-15): Երբ նման փառաւոր ու մեծ Աստուած մը ունինք Տէր Յիսուսի նման, ինչո՞ւ կը տնտնանք եւ ի՞նչ կը սպասենք, իսկոյն Դաւիթի նման մեր հոգիները անոր ձեռքը յանձնենք (Սղ 31.5), որպէսզի հովիւի պէս

արածէ մեզ եւ առաջնորդէ կեանքի աղբիւրի կենսատու ջուրին, եւ Աստուած մեր աչքերէն ամէն արցունք սրբէ (Յլտ 7.17):

## «ԵՄ ԵՄ ՈՉԽԱՐՆԵՐՈՒՆ ԴՈՒՌԸ»

«Ե՛ս եմ ոչխարներուն դուռը» (Յե 10.7): Աշխարհի մէջ գոյութիւն ունին հարիւրաւոր կրօններ, որոնք երկինք առաջնորդող հարիւրաւոր մամբաներ ու դոներ ցոյց կու տան մեզի: Փրկութեան հասնելու համար հազարաւոր միջոցներ կը ներկայացուին, ինչպէս օրինակ, անդամ ըլլալ այսինչ կամ այնինչ եկեղեցիին, յաճախել այսինչ կամ այնինչ հոգեւոր ժողովարանը, թղթիկի մը վրայ գրել թէ մենք որոշած ենք մեր կեանքը Յիսուսի տալ, «պարտադրուիլ» Սուրբ Հոգիին լեզուներով խօսիլ, մնայուն կերպով եկեղեցի յաճախել ամէն Կիրակի, այս եւ մման շատ մը բաներ կը ներկայացուին իբրեւ փրկութեան պայման կամ միջոց:

Այս բոլորը մարդոց կողմէ հաստատուած բաներ են: Սակայն Աստուածաշունչը տարբեր բան կը հաստատէ: Աստուածաշունչը բնա՛ւ չ'ըսեր թէ որոշ եկեղեցիի մը անդամ պէտք է ըլլալ որպէսզի փրկուինք, ո՛չ ալ Սուրբ Հոգիին լեզուներով խօսիլը փրկութեան ապացոյց կը նկատէ: Աստուածաշունչը երբե՛ք չ'ըսեր թէ թղթիկի մը վրայ պէտք է արձանագրել թէ մենք կը փափաքինք մեր կեանքերը Քրիստոսի յանձնել: Ես չեմ ըսեր թէ այս բոլորը ընելը սխալ է. բայց սխալ կը դառնայ երբ մարդոց խօսինք եկեղեցի գալուն մասին բայց չխօսինք Քրիստոսի գալուն մասին: Սխալ կը դառնայ երբ մեր անունները թղթիկի վրայ գրելով՝ կարծենք որ Կենաց Գիրքին մէջ գրուեցան անոնք: Շեշտը Քրիստոսի անձին վրայ պէտք է դնել: «*Ինծի՛ եկէ՛ք...*» ըսաւ Քրիստոս (Մտ 11.28):

Աստուածաշունչի համաձայն միայն մէկ ճամբայ, մէկ Դուռ, մէկ Անուն կայ որով կրնանք փրկուիլ: Պետրոս կը հաստատէ. «*Միայն անո՛վ կրնա՛ք փրկուիլ: Աշխարհի մէջ միակն է անիկա, որ Աստուած մարդոց տուաւ, որպէսզի անոր անունով կարենանք փրկուիլ*» (Գրծ 4.12): Փրկուիլ ի՞նչ բանէ: Առաջին հերթին փրկուիլ մեղքի ծառայութենէն: «*Ով որ մեղք կը գործէ՛ ծառայ է մեղքին*» (Յե 8.34): Քրիստոսէ գատ ուրիշ ո՛չ ոք կրնայ մեզ ազատել մեղքի ծառայութենէն, համաձայն իր իսկ խօսքին. «*Եթէ Որդին ձեզ ազատէ, այն ատեն իրապէս ազատ պիտի ըլլա՛ք*» (Յե 8.36): Քրիստոս ի՛նքն է դուռը այդ ազատութեան, յաւիտենական ու աստուածապարգեւ ազատութեան:

«*Իր արիւնով մեր մեղքերուն շղթաները փշրեց*» (Յյտ 1.5): Մեր մեղքերուն շղթաները փշրելու ուրիշ միջոց կամ ուրիշ անձ չկա՛յ: Մեղքի ստրկութենէն ձերբազատիլը պայման է որպէսզի կարենանք երկինք մտնել: Եթէ առանց մեր մեղքերէն ձերբազատելու չենք կրնար մուտք գործել երկինք, եւ եթէ Քրիստոսէ գատ ուրիշ մէկը չի կրնար սրբել մեր մեղքերը, ուրեմն, այս իմաստով, Քրիստոս կը դառնայ մէկ եւ միակ դուռը երկրաւորները դէպի երկինք առաջնորդող:

Զգո՛յ՜ ըլլանք փրկութեան տարբեր միջոցներ փարոզելէն կամ փարոզողներէն: Երբեմն մեզի հարց կը տրուի թէ քրիստոնէութենէն գատ միւս բոլոր կրօնները սխա՞լ են արդեօք: Այո՛, սխա՛լ են եւ հազար

անգամ սխալ: Որեւէ կրօնք որ չ'ուսուցաներ թէ Քրիստոս ի'նքն է միակ դուռը փրկութեան, միակ դուռը Աստուծոյ տանող, այդ կրօնքը սխալ է, եւ հազար անգամ սխալ: Պօղոս առաքեալ կ'ըսէ. *«Ով որ մեր քարոզածէն տարբեր աւետարան մը քարոզէ՝ ձեզի, ո՛վ ալ ըլլայ՝ նոյնիսկ մենք կամ երկինքէն հրեշտակ մը՝ անիծեալ ըլլայ: Ահա ըսի եւ կը կրկնեմ. ով որ ձեզի աւանդուածէն տարբեր աւետարան մը քարոզէ՝ անիծեալ ըլլայ»* (Գղ 1.8-9): Հարց կու տամ ձեզի սիրելի՛ ընթերցողներ, միւս կրօնքները Պօղոս առաքեալին քարոզած աւետարանէն տարբեր աւետարան չե՞նք քարոզեր:

Առաքեալը անէծքի արժանի կը տեսնէ բոլոր այն կրօնքները, անձերը, հաստատութիւնները, որոնք Քրիստոսով իրագործուած փրկութեան վրայ չեն դնել շեշտը: Այո՛, անէծքի ենթակայ են, որովհետեւ կը փակեն դո՛ւր օրհնութեան, դո՛ւր սրբութեան, դո՛ւր փրկութեան, եւ կը բանան տարբեր դոճներ, անյուսութեան դոճներ, յուսախարութեան դոճներ, դէպի կորուստ ու դժոխք տանող դոճներ:

*«Ե՛ս եմ ոչխարներուն դուռը»*: Այս խօսքը ո՛չ միայն ցոյց կու տայ թէ Քրիստոս է մէկ եւ միակ դուռը փրկութեան, այլեւ ցոյց կու տայ, թէ ինքն է մեր միակ միջնորդն ու բարեխօսը մեր երկնաւոր Հօր առջեւ: *«Դուռը»* հետեւաբար, մատնացոյց կ'ընէ Քրիստոսի բարեխօսի եւ միջնորդի հանգամանքը: Պէտք է Քրիստոս-դուռէն անցնիլ հասնելու համար Աստուծոյ: Պօղոս կը վկայէ թէ Աստուծոյ փափաքն է որ բոլոր մարդիկ գիտնան *«թէ՛ մէկ Աստուած կայ միայն, եւ Աստուծոյ ու մարդոց միջեւ միակ միջնորդ մը՝ Յիսուս Քրիստոս մարդը, որ ինքզինքը իբրեւ փրկագին տուաւ բոլոր մարդոց համար»* (Ա.Տմ 2.3-6 Հմմտ Ա.Յհ 2.1):

Թէ ինչո՛ւ *«Աստուծոյ ու մարդոց միջեւ միակ միջնորդը»* Քրիստոս է, տուեալ համարը պատասխանը կու տայ: Քանի որ Քրիստոս *«ինքզինքը իբրեւ փրկագին տուաւ բոլոր մարդոց համար»*: Քրիստոսէ գատ ուրիշ ո՛չ ոք կրնայ մեր միջնորդը ըլլալ Աստուծոյ առջեւ՝ որովհետեւ Քրիստոսէ գատ ուրիշ ո՛չ ոք իր արիւնը թափեց մեր փրկութեան համար: Ճիշդ է որ սուրբերը իրենք եւս միջնորդ ու բարեխօս են մեզի համար, բայց անոնք տարբեր հանգամանքով կը ներկայանան: Նիւթս դուրս է խօսիլ սուրբերու բարեխօսութեան մասին, բայց կ'ուզեմ մէկ բան հաստատել, այն՝ թէ Քրիստոս Աստուծոյ առջեւ կենալով անկէ կը պահանջէ մեր փրկութիւնը, իսկ սուրբերը՝ չեն պահանջեր, այլ՝ կը խնդրեն:

Դուռը նաեւ Յիսուսի պարգեւած պաշտպանութեան նշան է: Ինչպէս մեր տան դուռը մեզ հեռու կը պահէ արտաքին փորձանքներէն, այնպէս ալ Յիսուս իբրեւ մեր դուռը, մեզ հեռու կը պահէ կործանիչ պատահարներէն: Յիսուս-դուռը մեզ չարիքէն բաժնող իրականութիւնն է:

Ոչխարներուն փարախը ունի իր դուռը, եւ դուռը Քրիստոսն է: Ան որ *«փարախը (երկինք) դռնէն (Քրիստոսի միջոցաւ) չի մտներ, այլ ուրիշ տեղէ կը մագլցի, անիկա գող է եւ աւազակ»* (Յհ 10.1): *«Ե՛ս եմ դուռը: Ով որ ինձմէ անցնելով ներս մտնէ՛ պիտի փրկուի...»* (Յհ 10.9): Ուրիշի մը մէջէն անցնելով ո՛չ միայն չենք փրկուիր, այլ թշնամի կ'ըլլանք Փրկիչին:

## «ԵՄ ԵՄ ՃՇՄԱՐԻՏ ՈՐԹԱՏՈՒՆԿԸ»

*«Ես եմ նշմարիտ որթատունկը»* (Յհ 15.1): Քրիստոս կեանքով ու գորութեամբ լեցուն յաւիտենական որթատունկ մըն է: Եթէ մենք նիւթերու նման միացած ըլլանք Քրիստոս-որթատունկին՝ մեր ներսիդին կը հոսի այն կեանքն ու գորութիւնը, այն սէրն ու սրբութիւնը, այն հոգին ու ոգին, այն փաղցրութիւնն ու գեղեցկութիւնը որ ան ունի իր ներսիդին: Ճիւղ մը իր մէջ կ'ունենայ այն կեանքը որ որթատունկ մը ունի իր մէջ: Սա կը նշանակէ որ մենք Քրիստոսի կեանքը ունինք մեր կեանքերուն մէջ, որովհետեւ որթատունկը Քրիստոս է, իսկ մենք՝ իր վրայ հաստատուած նիւթերը (Յհ 15.5):

*«Ինչպէս որ նիւթը ինք առանձին պտուղ չի տար՝ եթէ որթատունկին միացած չըլլայ, նոյնպէս ալ դուք չէք կրնար պտուղ տալ՝ եթէ ինծի միացած չըլլաք»* (Յհ 15.4): Երբ Քրիստոս մեզ կը նմանցնէ իր վրայ հաստատուած նիւթերու, շատ յստակ է որ ըսել կ'ուզէ, թէ մեր կեանքը իրմէ կախեալ է: Ինչպէս ծառէն հեռացող նիւթը՝ կը չորնայ, աղբիւրէն հեռացող գետը՝ կը ցամփի, աստղերէն պարպուող երկինքը՝ կը մթննայ ու կը տգեղնայ, այնպէս ալ Քրիստոս-որթատունկէն հեռացող մարդը՝ հոգեւորապէս կը տգեղնայ, կը մթննայ ու կը մեռնի:

*«Ով որ ինծի միացած է եւ ես անոր՝ անիկա առատ պտուղ պիտի տայ, որովհետեւ առանց ինծի դուք ոչինչ կրնաք ընել»* (Յհ 15.5): Քրիստոսնայ մարդուն կեանքին պտղաբերումը պայմանաւորուած է անոր Քրիստոսի միացած ըլլալով ու մնալով: Հակառակ Քրիստոսի խօսքին, *«առանց ինծի դուք ոչինչ կրնաք ընել»*, շատեր կը փորձեն իրենց սեփական նիւթով ու միջոցներով յառաջ տանիլ իրենց առաքելութիւնը:

Շատ քրիստոնեաներ հիմնուելով իրենց նարպիկութեան ու խօսքի նարտարութեան վրայ՝ կը ջանան մարդիկը Քրիստոսի բերել: Ան որ կը փորձէ իրեն յատուկ միջոցներով փրկութեան հրաւիրել մարդիկը՝ կը նշանակէ թէ ան կ'ուրանայ Քրիստոսի փրկութեան միակ միջոցը ըլլալու հանգամանքը: Երբ կը փորձենք առանց Քրիստոսի բան մը գործել կամ իրագործել՝ այդ ցոյց կու տայ որ մենք չենք հաւատար Քրիստոսի խօսքին, թէ՛ *«առանց ինծի դուք ոչինչ կրնաք ընել»*:

Ո՛չ ոք կրնայ օգտակար դառնալ հոգեւորապէս ծարաւ մարդուն, եթէ ինք բաժնուած է կեանքի աղբիւրէն՝ Քրիստոսէ: Նկատի պէտք է առնել որ նիւթերը իրենց կարգին իրենց վրայ հաստատուած նիւթեր ունին: Եթէ մենք Քրիստոսի վրայ հաստատուած նիւթեր ենք՝ միայն այն ատեն կրնանք օգտակար դառնալ մեր վրայ հաստատուած նիւթերուն: Բայց բնականօրէն երբ կը յաջողինք նոր ու նորոգուած կեանքի մը առաջնորդել մեզի դիմող անհատը՝ պէտք է ընդունիլ որ մենք չէ որ զայն առաջնորդեցինք նոր կեանքին, այլ նոյնինքն Քրիստոս ինք՝ տուիչը նոր կեանքին:

Մենք չենք կրնար պարծիլ եւ ըսել. *«Մենք է որ օգտակար դարձանք մեր վրայ հաստատուած նիւղերուն»*, որովհետեւ, մենք ալ մեր կարգին, Քրիստոս-որթատունկին վրայ հաստատուած նիւղեր ենք: Մենք պարզապէս նիւղեր ենք, այսինքն՝ միջոցներ, եւ ո՛չ թէ որթատունկեր: Ինչպէս որ լուսինը որ իր լոյսը կ'առնէ արեւէն չի կրնար հպարտանալ որ ինքն է բաշխիչն ու հեղինակը լոյսին, այնպէս ալ մենք որ մեր հոգեւոր սնունդը կ'առնենք Քրիստոս-որթատունկէն, չենք կրնար յայտարարել որ մենք ենք տէրն ու տուիչը այդ սնունդին:

Ինչո՞ւ Քրիստոս ինքզինք կը նմացնէ որթատունկի եւ ո՛չ թէ ուրիշ ծառի մը: Առաջին հերթին նկատի պէտք է առնել այն՝ որ որթատունկի մը նիւղերը կը տարածուին չորս կողմ եւ կը մագլցին ուր որ կարելիութիւն գտնեն: Ինչպէս որթատունկը կը տարածուի ամէն կողմ, այնպէս ալ Քրիստոսի փրկութիւնը կը տարածուի աշխարհի չորս կողմերը ու մուտք կը գործէ մարդոց սիրտերէն ներս եթէ ընդունելութիւն գտնէ:

Քրիստոս չի նմանիր այն որթատունկին որ որոշ ամիսներ միայն պտուղ կու տայ, ահա թէ ինչո՞ւ ինքզինք կը կոչէ *«նշմարիտ որթատունկը»*: Ճշմարիտ որթատունկ է, որովհետեւ տարին տասներկու ամիս պտուղ կու տայ (Հմմտ Յտ 22.2): Ճշմարիտ որթատունկ է, որովհետեւ չի խաբեր ու յուսախար չ'ըներ իրեն եկողները: Մատթէոս մեզի կ'ըսէ թէ Յիսուս անօթեցած ըլլալով մօտեցաւ տերեւախիտ թօզնիի մը պտուղ ուտելու համար անկէ, *«բայց տերեւէ գատ ոչինչ գտաւ»* (Մտ 21.18-19):

Յիսուս այնպիսի որթատունկ մը չէ որուն մօտեան հոգեւորապէս անօթի մարդիկ եւ յուսախար մեկնին: Յիսուս-որթատունկը մէկն է որ քովը եկողին համար կ'ըսէ. *«Զե՛մ ուզեր գիրենք անօթի տուն դրկել»* (Մտ 15.32): Այո՛, Յիսուս իրեն դիմող մարդը անօթի տուն չի դրկեր: Ան ամբողջապէս կը կշտացնէ անոր սիրտն ու հոգին:

Քրիստոս է այն *«նշմարիտ որթատունկը»*, որ *«իր պատմութեանը գինիով»* լուաց եւ *«իր հանդերձը խաղողի արիւնով»* (Ծն 49.11): Պատմութեանը գինիով լուան ու հանդերձը խաղողի արիւնով լուալը նախապատկերացումն էին այն արիւնլուայ վիճակին որուն Քրիստոս պիտի մատնուէր մեր փրկութեան համար: Քրիստոս է *«նշմարիտ որթատունկը»*, որովհետեւ իրեն եկողները կը ստանան արիւնով լուացուած արդարութեան ու փրկութեան պատմութեանը: Աստուած օր մը անոնց վերաբերեալ պիտի յայտարարէ. *«Անոնք իրենց պարեգօտները լուացին եւ ներմկցուցին Գառնուկին արիւնով»* (Յտ 7.14):

Տակաւին, Քրիստոս է *«նշմարիտ որթատունկը»*, որուն տակ մարդիկ ապահովութեամբ կրնան նստիլ (Գ.Թգ 4.25): Թգեմին եւ որթատունկը Եբրայական մտածողութեան մէջ խաղաղութեան եւ ապահովութեան խորհրդանիշ իբրեւ կը ներկայանան: Քրիստոս մարդոց ապահովութեան երաշխիքն է, խաղաղութեան իշխանն է (Ես 9.6): Հոգեպէս խոռված եւ անապահովութեան զգացումներով բռնուած

մարդիկ կրնան դիմել Քրիստոս-որթատունկին եւ գտնել իրենց խաղաղութիւնն ու ապահովութիւնը: Ուստի, եկո՛ւր եւ միացիր Քրիստոս-որթատունկին, որպէսզի անոր խաղաղութիւնը հոսի սրտիդ մէջ:



## «ԵՄ ԵՄ ԿԵԱՆՔԻ ՀԱՅԸ»

«Ե՛ս եմ կեանքի հացը» (Յե 6.48): Քրիստոս ի՛նքն է յաւիտենական կեանք ու մնայուն կենսունակութիւն պարգեւող հացը: Ի՛նքն է ներքին խաղաղութիւն եւ ուրախութիւն շնորհող հացը: Ի՛նքն է մեր առջեւ բազմահազար օրհնութեանց ու պարգեւներու դուռը բացող հացը: Ի՛նքն է մեզ գօրութեամբ ու արիութեամբ լեցնող հացը: Ի՛նքն է մեզի վստահութիւն եւ ապահովութիւն ներշնչող հացը: Ի՛նքն է երկինքի դուռը բացող եւ երկինքը կշտացնող հացը: Ի՛նքն է մեր հոգիները լիացնող միակ հացը: Առանց Քրիստոս-հացին դատա՛րկ է երկինքը: Առանց Քրիստոս-հացին աղֆա՛տ ու անօթի՛ է մարդկութիւնը: Երկինք երկնաէջ Հացով է հարուստ: Երկիր երկնաէջ Հացով է օրհնեալ ու սրբեալ:

Սուրբ Օգոստինոս կ'ըսէ. «Առանց Աստուծոյ մենք չենք կրնար, իսկ առանց մեզի Աստուած ի՛նք պիտի չընէ»: Օգոստինոսի այս կարն, եւ սակայն իմաստալից բռները օգտագործելով, կրնանք ըսել, թէ առանց երկնքի միջամտութեան, առանց երկնաէջ անձրեւին ու երկնապարգեւ արեւին, մէկ խօսքով, առանց Աստուծոյ՝ մենք չենք կրնար հաց պատրաստել, եւ առանց մեզի ու մեր գործակցութեան, Աստուած ո՛չ թէ չի կրնար, այլ չ'ուզեր հաց պատրաստել ու չի պատրաստեր:

Ինչպէս հացագործին աշխատանքին յաջողութիւնը կախեալ է երկնաէջ անձրեւէն ու երկնապարգեւ արեւէն, այնպէս ալ մեր հոգեւոր կեանքին անու՛մն ու զարգացումը, կախեալ է երկնաէջ հացէն՝ Քրիստոսէ (Յե 6.51): Հացագործը իր ամբողջ յոյսը կը դնէ երկնքին վրայ: Ան գիտէ որ առանց երկնքին դատապարտուած է ձախողութեան եւ սնանկութեան: Ուստի, երբ Քրիստոս ինքզինք հաց կը կոչէ, իրականութեան մէջ, մեր անձրեւն իր Անձէն կախեալ ըլլալն է որ կը հրապարակէ:

Քրիստոս ինքզինք հաց կոչելով՝ կապ մըն է որ ստեղծած կամ հաստատած կ'ըլլայ երկնքին ու երկրին միջեւ: Ինչպէս նիւթական հաց պատրաստողները իրենց հայեացքը մի՛շտ դէպի երկինք կը սեւեռեն, այնպէս ալ աննիւթական Հացը փնտոողները, իրենց հայեացքը պէտք է Քրիստոսի վրայ սեւեռեն:

Ան ինքզինք հացի նմանցնելով, խորքին մէջ ինքզինք յայտարարած կ'ըլլայ մեր կեանքին ամէնէն կենսական բանը: Մարդուն Ձիգիքական գոյութեան պահպանման համար՝ անհրաժեշտութիւն մըն է նիւթական հացը, իսկ մարդուն հոգեւոր կեանքին պահպանման համար՝ բացարձակ անհրաժեշտութիւն է աննիւթական Հացը՝ Քրիստոս: Առանց Քրիստոսի մարդը սովամահ կ'ըլլայ հոգեւորապէս: Մի՛այն Քրիստոս կրնայ կշտացնել Աստուծոյ բնակութեան համար ստեղծուած մեր սիրտը:

Նիւթական հացն ու նիւթական ամէն բան սահմանուած են կորսուելու: Անոնք որոնք նիւթականին ու նիւթական հացին փնտոողները իրենց համար դարձուցած են առաջնահերթութիւն՝ անոնք եւս սահմանուած են կորսուելու, որովհետեւ եթէ անցաւոր բաներու կապենք

մեր յոյսը՝ մենք ալ անոնց հետ կ'անցնինք ու հետք չենք ձգեր: Ահա թէ ինչն'ը Յիսուս ըսաւ. *«Փոխանակ կորստական ուտելիքը փնտոելու, ջանացէ՛ք ապահովել այն կերակուրը որ յաւիտենական կեանքի մէջ կը մնայ: Այդ կերակուրը Մարդու Որդին պիտի տայ ձեզի, որովհետեւ Հայրն Աստուած իր հաւանութեան կնիքը դրաւ անոր վրայ»* (Յհ 6.27):

Քրիստոս հարկաւ չի պատուիրեր որ չաշխատինք բնական հացին համար. անոր ըսածը այն է՝ որ մեզի համար առաջնահերթը պէտք չէ ըլլայ աշխարհայինը, այլ՝ աստուածայինը: Կորստական ուտելիքը սահմանուած է կորսուելու: Կորստական ուտելիք ըսելով միայն հացը չենք հասկնար, այլ ամէն բան որ աշխարհէն կու գայ եւ մեր հոգին կը սպաննէ: Կորստական ուտելիք են փառքն ու մեծութիւնը, հարստութիւնն ու այլազան գանձերը, դիրքն ու աթոռները: Ասո՛նք նաեւ սահմանուած են փնանալու ու փնացնելու: Երբեմն մարդիկ այսպիսի բաներ կը փնտոեն նիշդ այնպէս՝ ինչպէս անօթի մը հաց պիտի փնտոէր:

Քրիստոս կը թելադրէ չվագել գնայունին, անկայունին, անորոշին, անապահովին, խաբուսիկին, անարժէքին եւ մեզ արժեգրկողին ետեւէն: *«Չանացէ՛ք ապահովել այն կերակուրը որ յաւիտենական կեանքի մէջ կը մնայ»*: Այն կերակուրը Քրիստոս ի՛նք կու տայ բոլոր փափաքողներուն. կերակուր մը՝ *«որ յաւիտենական կեանքի մէջ կը մնայ»*:

Ինչ որ Քրիստոս տայ մեզի յաւիտենական են ու յաւիտենական պիտի մնան: Յաւիտենական են անոր տուած խաղաղութիւնն ու երջանկութիւնը, հանգիստն ու անդորրութիւնը, յաղթանակն ու մեծութիւնը, սէրն ու սրբութիւնը: Մենք Քրիստոս-հացով է որ կը մեծնանք ու կը սրբուինք: Քրիստոս-հացով է որ կը գեղեցկանանք ու կը փառաւորուինք: Քրիստոս-հացով է որ կը դառնանք անմահ զաւակները անմահ Աստուծոյ:

Այս իրողութիւնը մենք չէ որ կը հաստատենք Քրիստոսի վերաբերեալ, այլ մեր երկնաւոր Հայրը ինք. *«Հայրն Աստուած իր հաւանութեան կնիքը դրաւ անոր վրայ»*: Քրիստոսի կատարած բոլոր հրաշքները ու խօսած բոլոր խօսքերը, ցոյց կու տան որ *«Հայրն Աստուած իր հաւանութեան կնիքը դրաւ անոր վրայ»*: Մկրտութեան պահուն Սուրբ Հոգիին էջքը Յիսուսի վրայ եւ Աստուծոյ երկնաբուրդի վկայութեան ձայնը անոր համար, կ'ապացուցանեն որ *«Հայրն Աստուած իր հաւանութեան կնիքը դրաւ անոր վրայ»*:

Երբ Քրիստոս կը յայտարարուի իբրեւ Փրկիչը աշխարհի ու նշմարիտ ազատարարը մեղաւոր մարդկութեան, սա ինքնին ապացոյց մըն է որ *«Հայրն Աստուած իր հաւանութեան կնիքը դրաւ անոր վրայ»*: Երբ Քրիստոս կը ծանուցուի *«Աստուծոյ եւ մարդոց միջեւ միակ միջնորդ»* իբրեւ (Ա.Տմ 2.5), եւ երբ կը հաստատուի թէ մեր *«Հօրը բով բարեխօս ունինք միակ Արդարը՝ Յիսուս Քրիստոսը»* (Ա.Յհ 2.1), սա անհերքելի վկայութիւն մըն է որ *«Հայրն Աստուած իր հաւանութեան կնիքը դրաւ անոր վրայ»*: Սիրելի՛ ընթերցող, *«Լայն բաց բու բերանդ»* եւ

գանիկա Աստուած ի՛նք պիտի լեցնէ. պիտի լեցնէ իր Որդիին անմար  
կրակով, անոր հրաբխային սիրով, եւ անոր կարեկցող հոգիով:

## ԳՈՐԾԱԾԵՆՔ ԱՅՆ ԻՆՉ ՈՐ ՈՒՆԻՆՔ

*«Աստուծոյ շնորհքը իւրաքանչիւրիս տարբեր պարգեւ մը տուած է, որ պէտք է գործածենք» (Հն 12.6): Եթէ մարդիկ անդրադառնան այս իրողութեան, անոնք պիտի դադրին գիրար բամբասելէ եւ մեղադրելէ: Յանախ մարդիկ իրենք գիրենք կը բաղդատեն ուրիշներու հետ եւ կ'ակնկալեն ուրիշներէն ընել այն՝ ինչ որ իրենք կ'ընեն:*

Մէկը կրնայ լաւ ֆարոգիչ մը ըլլալ, ուրիշ մը կրնայ վարչական կարողութիւններով օժտուած ըլլալ: Ո՛չ ֆարոգիչը պէտք է մեղադրէ վարչական կարողութիւններ ունեցող մարդը՝ լաւ ֆարոգիչ չըլլալուն համար, եւ ո՛չ ալ վարչական կարողութիւններ ունեցող մարդը պէտք է այպանէ ֆարոգիչը՝ վարչական կարողութիւններէ զուրկ ըլլալուն համար: Անոնք որոնք ծառայելու շնորհքը ունին թող ծառայեն առանց բամբասելու իրենց սենեակները ֆաշուած եւ ստեղծագործող մարդիկը, եւ փոխադարձաբար:

*Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Եթէ մարգարէութեան պարգեւը ունինք՝ պէտք է պատգամենք մեր հաւատքին համեմատ: Եթէ ծառայելու շնորհք տրուած է՝ պէտք է ծառայենք: Եթէ ուսուցանելու ձիրքը ունինք՝ պէտք է ուսուցանենք: Եթէ յորդորելու կարողութիւնը ունինք՝ պէտք է յորդորենք: Իր ունեցածը ուրիշներուն բաժնողը առատօրէն թող բաշխէ: Վերակացու եղողը եռանդազիւն թող աշխատի: Ողորմութիւն ընողը խնդութեամբ թող ընէ» (Հն 12.6-8):*

Առաքեալը այստեղ մէկ տեսակ պարգեւի մասին չէ որ կը խօսի, այլ տեսակ-տեսակ պարգեւներու մասին: Եթէ տեսակ-տեսակ պարգեւներ կան, ուրեմն տեսակ-տեսակ կարողութիւններով օժտուած մարդիկ կան: Եւ եթէ տեսակ-տեսակ կարողութիւններով օժտուած մարդիկ կան, ուրեմն մենք իրաւունք չունինք պահանջելու ուրիշներէն որ մեզի նմանին եւ մեր ունեցած կարողութիւնները յայտնաբերեն իրենց անձերուն վրայ:

Ինչպէս թուզ բերող ծառը չի կրնար մեղադրել որթատունկը թուզ չբերելուն համար, այնպէս ալ մարդիկ պէտք չէ մեղադրեն ուրիշները եթէ երբեք անոնք իրենց նոյն պարգեւները կամ ձիրքերը չունին: Ամէն մարդ որոշ պարգեւ մը, ձիրք մը կամ կարողութիւն մը ունի տրուած իրեն Աստուծոյ կողմէ: Մարդ իրաւունք չունի անտեսելու իր ունեցած պարգեւներն ու ձիրքերը եւ իր ուշադրութիւնը կեդրոնացնելու իր չունեցածին վրայ: Երբեմն մարդիկ այնքա՛ն կը մտածեն իրենց չունեցածին մասին որ իրենց ուշադրութենէն կը վրիպի իրենց ունեցածը:

Ճիշդ է որ Աստուած իր ստեղծած մարդը օժտած է զանազան պարգեւներով ու կարողութիւններով, բայց միւս կողմէն, անուրանալի է որ Աստուած ամէն մէկ մարդու կեանքին մէջ դրած է տեսակ-տեսակ պակասութիւններ, տկարութիւններ եւ կարիքներ, որպէսզի մարդիկ ստրվին օգտուիլ իրարմէ: Իւրաքանչիւր մարդ եթէ փորձէ գործածել աստուածատուր իր պարգեւները, մարդոց կեանքին մէջ գոյութիւն

ունեցող շատ մը նեղութիւններ կը վերնան, պակասութիւններ կը լրացուին, կարիքներ կը գոհացուին եւ խոչընդոտներ կը վերցուին:

Ո՛չ ոք կրնայ բոլորովին անկախ ապրիլ ուրիշներէն: Իւրաքանչիւր մարդ թէ՛ տալիք ունի մարդոց եւ թէ՛ առնելիք: Աստուած մեզ այնպէս ստեղծած է որ մենք կախեալ ըլլանք իրարմէ: Օրինակ, հարուստն ու աղքատը փոխադարձաբար իրարու պէտք ունին: Աղքատը պէտք ունի հարուստին օգնութեան որպէսզի կարենայ իր մարմնաւոր պէտքերը գոհացնել, իսկ հարուստը պէտք ունի աղքատին որպէսզի անոր օգնելով, կարենայ հոգեկան գոհունակութիւն եւ գոհացում ձեռն առնել:

Բարօր ու յաջողութեամբ լի կեանքի մը տիրանալու համար՝ մարդիկ իրարու կարիքը ունին: Ո՞ր մարդուն յաջողութիւնը կախեալ չէ ուրիշէն: Ո՞ր մարդուն ուրախութիւնը կախեալ չէ ուրիշէն: Ո՞վ կրցած է գիտնական ըլլալ առանց ուսումնասիրելու կեանքն ու գործը այլ գիտնականներու: Ո՞վ կրցած է իշխող կոչուիլ առանց շուրջը ունենալու իշխուող դասակարգը: Մարդիկ իրարմով է որ կը բարձրանան, իրարմով է որ կը հարստանան, կը գորանան ու դժուարութիւններ կը նուաճեն:

Երբ կը խօսինք Աստուծոյ կողմէ մեզի տրուած պարգեւներուն, կարողութիւններուն եւ այլ տեսակի շնորհներուն մասին, չենք կրնար չմտաբերել Քրիստոսի եկեղեցին: Առաքեալին վերոյիշեալ խօսքը առնչութիւն ունի բոլոր մարդոց հետ, բայց յատկապէս սերտ աղերս ունի Քրիստոսի եկեղեցիին հետ:

Եկեղեցւոյ կեանքին մէջ կան հոգեւորապէս խակերը, որոնք կարիքը ունին հոգեւորապէս հասուն հաւատացեալներու յորդորներուն: Կան տկարները, որոնք պէտք ունին մեր գորակցութեան եւ գօտեպնդիչ ներկայութեան: Կան հիւանդները, որոնց պէտք է այցելութիւն տալ եւ հոգ տանիլ: Կան սգաւորները, որոնց միտքարութեան պէտք է փութանք: Կան հոգեւորապէս տգէտները, որոնց պէտք է առաջնորդել աստուածգիտութեան: Կան անփորձառուները, որոնք կարիքը ունին մեր փորձառութեան:

Ամէն մէկ մարդ բայց մասնաւորաբար ամէն մէկ քրիստոնեայ պատասխանատու է Աստուծոյ առջեւ իրեն շնորհուած պարգեւներուն եւ այլազան ձիրքերուն համար: Յիսուս կը պատմէ թէ *«մարդ մը կար, որ երբ ուրիշ երկիր պիտի երթար, կանչեց իր ծառաները եւ անոնց յանձնեց իր ստացուածքը որ շահարկեն: Համաձայն անոնց կարողութիւններուն, մէկուն տուաւ հինգ հարիւր ոսկի դրամ, միւսին՝ երկու հարիւր եւ ուրիշի մը՝ հարիւր»* (Մտ 25.14-15):

Հինգ եւ երկու հարիւր ոսկի դրամ ունեցողները իրենց դրամները շահարկութեան դրին եւ աւելին շահեցան, իսկ հարիւր ոսկի դրամ ունեցողը դատապարտուեցաւ եւ *«չար ու ծո՛յլ ծառայ»* կոչուեցաւ իրեն տրուած գումարը շահարկութեան դրած չըլլալուն համար (Մտ 25.25-27): Յստակ է որ ոսկի դրամները Աստուծոյ կողմէ մարդուն տրուած զանազան պարգեւներն են: Աստուածատուր այդ պարգեւները իր եւ

ուրիշին բարիքին համար չօգտագործող մարդը «չար ու ծո՛յլ ծառայ»  
մըն է Քրիստոսի իսկ բառերով:

## ՀԵՂԻ, ՍԱՄՈՒԷԼ ԵՒ ՄԵՆՔ

Հեղի ֆահանան թէեւ աստուածատուր իր ֆահանայական կոչումը բժախնդրութեամբ կ'ընէր, բայց իր սխալը կը կայանար անոր մէջ, որ ան չէր յանդիմաներ իր երկու որդիները՝ Ոփնի եւ Փենէէէս ֆահանաները իրենց ապրած անօրէն կեանքին համար (Ա.Թգ 3.13):

Հեղի ֆահանան սկսած էր տարիքը առնել եւ իր աչքերուն ալ տեսողութիւնը սկսած էր տկարանալ: Աստուած ուզեց ընտրել մէկը որ կարենար իր պատգամախօսը դառնալ: Ան չէր կրնար ընտրել Ոփնին կամ Փենէէէսը, որովհետեւ անոնք անօրէն մարդիկ էին: Ուստի, Աստուծոյ ընտրութիւնը կեդրոնացաւ Սամուէլին վրայ:

Եւ գիշերով մը երբ Սամուէլ *«տանարին մէջ կը ֆնանար, ուր Աստուծոյ տապանակը կար»* (Ա.Թգ 3.3), Աստուած կանչեց զայն երեք անգամ եւ երեք անգամներուն ալ Սամուէլ կարծելով որ Հեղին էր զինք կանչողը՝ քնքն գնաց եւ հարցուց թէ ի՞նչ կ'ուզէր: Հեղի գիտցաւ որ Տէրն էր Սամուէլը կանչողը, ուստի անոր պատուիրեց որ եթէ Տէրը անգամ մը եւս զինք կանչէր, թող անոր ըսէր. *«Ո՛վ Տէր, ի՞նչ է, քանզի ես ծառայ մտիկ կ'ընէ»* (Ա.Թգ 3.9):

Ուշագրաւ երեւոյթը այս բոլորին մէջ այն է, որ փոխանակ Հեղի ֆահանան խօսելու Սամուէլին, Սամուէլը ի՛նք խօսեցաւ Հեղի ֆահանային: Եւ խօսեցաւ, որովհետեւ Աստուած ինք Սամուէլին էր որ խօսեցաւ եւ ո՛չ թէ Հեղիին: Եւ վստահաբար, բաւական ժամանակէ ի վեր Աստուած չէր խօսած Հեղիին (Ա.Թգ 3.1-2):

Այստեղ հանդէս կու գայ Հեղիի նկարագրային գիծերէն մէկը որ որոշ չափով մը կը պարզէ անոր վեհանձնութիւնը: Աստուած դադրած էր Հեղիին խօսելէ: Հակառակ ասոր, երբ Հեղի լսեց որ Աստուած սկսաւ խօսիլ Սամուէլին, ո՛չ միայն չնախանձեցաւ եւ ո՛չ միայն չփորձեց Սամուէլը տանարէն հեռացնել, այլ հակառակը, փորձեց օգնել իրեն Աստուծոյ հետ իր յարաբերութեան մէջ: Հեղի ի՛նքն էր որ սորվեցուց Սամուէլին ինչպէ՛ս լսել Աստուծոյ ձայնն ու խօսիլ: Ան պատուիրեց Սամուէլին որ եթէ Աստուած անգամ մըն ալ խօսի, ըսել իրեն. *«Ո՛վ Տէր, ի՞նչ է, քանզի ես ծառայ մտիկ կ'ընէ»*:

Պահ մը կապենք այս ուղիւնքները մեր այսօրուան կեանքին: Այսօր եկեղեցւոյ կեանքին մէջ կան Սամուէլներ, բայց Հեղիներ չկան կամ գրեթէ չկան: Եթէ կան՝ պատի՛ւ անոնց: Այո՛, կան Սամուէլներ, որոնց կը խօսի Աստուած, որոնք կը լսեն Աստուծոյ ձայնը եւ կ'առնեն երկնային պատգամներ, բայց ո՞ւր են Հեղիները: Ո՞ւր են այն մեծերը՝ որոնք նեցուկ պէտք է կանգնին ներկայ ժամանակի Սամուէլներուն: Ո՞ւր են անոնք՝ որոնք երբ տեսնեն անհատ մը կը փորձէ հաւատարմութեամբ Քրիստոսի հետեւիլ, ֆաշալերեն եւ գորավիզ կանգնին անոր:

Հեղի ֆահանան չյոխորտաց ու չըսաւ թէ ինք աւագ ֆահանայ մըն է եւ թէ իր իրաւունքն է ստանալ աստուածային պատգամները: Աստուած

իր պատգամը կու տայ որո՛ւ որ ուզէ: Աստուծոյ պատգամը ստանալը կախում չունի մեր ունեցած կարգէն, տարիքէն, հանգամանքէն կամ փորձառութենէն, այլ կախում ունի Աստուծոյ նկատմամբ մեր ունեցած հաւատարմութենէն, մեր հաւատքէն, Յիսուսի հանդէպ մեր ունեցած սէրէն ու կապուածութենէն:

Դիւրին չէ Հեղի մը ըլլալը: Հեղի կը տեսնէր որ Սամուէլ շուտով զինք պիտի գերազանցէր: Ան չփորձեց Սամուէլը հեռացնել նշմարտութենէն, չփորձեց խափանել անոր դիմաց Աստուծոյ ձայնը լսելու ֆամբան: Եթէ այսօրուան Հեղիները, այսինքն՝ դիրքով, հանգամանքով կամ տարիքով մեծ եղողները, տեսնեն որ կարգ մը անձեր յառաջ կ'երթան իրենց հաւատքի գնացքին մէջ, յառաջ կ'երթան ուսումնական գետնի վրայ, կրնա՞ն չնախանձիլ անոնց, կրնա՞ն իրենց խաղաղութիւնը եւ հանգիստը չկորսնցնել անոնց պատմառով, եւ մանաւանդ, կրնա՞ն զօրակցութիւն յայտնել անոնց:

Նայեցէ՛ք Հեղիին: Դիտեցէ՛ք անոր վերաբերմունքը: Ան եթէ ուզէր խաբել Սամուէլին՝ կրնար խաբել: Եթէ ուզէր արգելքներ դնել անոր դիմաց՝ կրնար դնել: Բայց ան լաւ գիտէր որ եթէ նման ֆայլ մը առնէր՝ յաջողութիւն պիտի չգտնէր: Այսօրուան Հեղիները կ'անդրադառնա՞ն արդեօք որ գուր է Աստուծոյ զաւակներուն դիմաց արգելքներ շարելու ամէն ջանք: Աստուած արգելքները խափանող Աստուած է: Երանի՛ թէ ներկայ դարուս Հեղիները իրենք եւս ընդօրինակելին Հեղի ֆահանային վերաբերմունքը եւ չաշխատէին ծուղակներ լարել Աստուծոյ զաւակներուն ոտքերուն առջեւ:

Առաւօտուն Հեղի կանչել տուաւ Սամուէլը եւ հարցուց անոր թէ Աստուած ի՛նչ ըսաւ իրեն: Ան ուզեց գիտնալ նշմարտութիւնը պատանի Սամուէլին բերնէն, եւ գիտցաւ: Ան նուաստութիւն չհամարեց նշմարտութիւնը լսել իրմէ աւելի փոքրին բերնէն: Ո՞ւր են այսօրուան Հեղիները, որոնք խոնարհութիւնն ու վեհանձնութիւնը ունենան ներկայ Սամուէլներուն հարցնելու նշմարտութեան վերաբերեալ: Ո՞ւր են անոնք՝ որոնք նուաստութիւն ու անարգանք չեն համարեր նշմարտութիւնը լսել Սամուէլներուն, այսինքն՝ իրենցմէ աւելի փոքրերուն, նուազ փորձառուներուն եւ համեստ կարգի պատկանողներուն բերնէն:

Ճշմարտութիւնը լսելը ֆաջութի՛ւն կ'ուզէ: Հեղի գիտէր որ Աստուած բարկացած էր իրմէ իր որդիներուն նկատմամբ իր ցուցաբերած անփոյթ եւ թոյլատու վերաբերմունքին պատճառով: Ան գիտէր որ Աստուած սպառնացած էր զինք պատժել (Ա.ԹԳ 2.29-34), հակառակ ասոր, ան չվախցաւ Սամուէլին հարցնելու թէ Աստուած ի՛նչ ըսաւ իրեն: Երբ Սամուէլ Հեղիին պատմեց Աստուծոյ կողմէ իր վրայ գալիք հարուածին մասին՝ Հեղի չբարկացաւ Սամուէլին, այլ ըսաւ՝ *«Անկա Տէրն է: Իր աչքերուն հանդ երեւցածը թող ընէ»* (Ա.ԹԳ 3.17-18):

Ներկայ ժամանակի Հեղիները իրենք եւս կրնա՞ն խոնարհիլ փոքրիկ Սամուէլներուն միջոցաւ յայտնուած նշմարտութիւններուն դիմաց:



## «ԱՆՕԹԻ ԷՒ ԵՒ ԶԻՍ ԿԵՐԱԿՐԵՑԻՔ»

«Անօթի էի եւ գիս կերակրեցիք» (Մտ 25.35): Քրիստոս ինքզինքն անօթիին մէջ անօթի կը տեսնէ: Քրիստոս անօթիին տրուած կերակուրը իրեն տրուած կը նկատէ. «Որովհետեւ իմ այս փոքր եղբայրներէս մէկունը ըրիք, ինծի ըրած եղաք» (Մտ 25.40): Բայց զգո՛յ՛ջ: Աստուած մեր նիւթական հացին պէտք չունի: Աշխարհի բոլոր հացերն ու հացագործները Աստուծոյ սեփականութիւնն են: «Տիրոջն է երկիրն ու անոր լիութիւնը: Տիրոջն է աշխարհն ու անոր բնակիչները» (Սղ 24.1): Այլուր, Աստուած կ'ըսէ. «Եթէ անօթեմամ' քեզի պիտի չդիմեմ. որովհետեւ աշխարհն ու անոր լիութիւնը իմս է» (Սղ 50.12):

«Անօթի էի եւ գիս կերակրեցիք»: Փորձեմք հոգեւոր իմաստով մը բացատրել այս բառերը, մեր միտքը ամփոփելով չորս կէտերու մէջ.–

1– Ո՞վ է իսկական անօթին կամ Ի՞նչ կը նշանակէ անօթին կերակրել: Աստուած ո՛չ միայն «հաց կու տայ անօթիներուն» (Սղ 146.7), այլ նաեւ ինքզինքն կու տայ իբրեւ կեանքի հաց. «Ե՛ս եմ կեանքի հացը» (Յհ 6.48): Անօթին կերակրել հետեւաբար, կը նշանակէ գայն առաջնորդել կեանքի Հացին՝ Քրիստոսի, որպէսզի Քրիստոսով կշտանայ, եւ անոր մարմինէն եւ արիւնէն ֆաշակելով՝ բնակի Աստուծոյ մէջ եւ Աստուած իր մէջ (Յհ 6.56):

2– Անօթին նաեւ այն մարդն է որ չի սնանիր Աստուծոյ խօսքով: Անօթին կերակրել, կը նշանակէ գանհկա առաջնորդել Աստուծոյ խօսքին՝ Աստուածաշունչին: «Մարդ միայն հացով չ'ապրիր, այլ բոլոր այն խօսքերով, որ Աստուած խօսած է» (Մտ 4.4): Այս խօսքը բացայայտօրէն ցոյց կու տայ, որ մարդ արարածը լոկ Ֆիզիքական գոյութիւն մը չէ: Մարդ արարածը կ'անդրանցնի մարդկայինը, որովհետեւ ան գործակիցն է Աստուծոյ, տաճարն է Աստուծոյ, բնակարանն է Աստուծոյ:

3– Աստուած Եսայի մարգարէին ֆամբով կ'ըսէ. «Եթէ անօթին յօծարութեամբ կերակրես, եւ եթէ կարօտ եղող մարդուն հոգին կշտացնես, այն ատեն քու լոյսդ խաւարի մէջ պիտի ծագի ու քու խաւարդ կէտօրուան պէս պիտի ըլլայ» (Ես 58.10): Մարդուն հոգեկան կարօտութիւնը կարելի չէ նիւթական ուտելիքով գոհացնել: Ի՞նչ կը նշանակէ «կարօտ եղող մարդուն հոգին կշտացնել», կամ որո՞նք են հոգեկան կարօտութեան մէջ եղողները:

Հոգեկան կարօտութեան մէջ եղողները անոնք են՝ որոնք պարպուած են Աստուծոյ Հոգիէն, եւ իրենց կապը ամբողջովին խզած են երկինքին եւ երկինքի Բնակիչին հետ: Անկարօտ Աստուծմէ հեռացողը անկասկած որ կարօտի մէջ կ'իյնայ: Մարդուն ստեղծիչը միայն կրնայ լեցնել մարդուն հոգիին մէջ գոյութիւն ունեցող դատարկութիւնը: Ուրիշ ո՛չ ոք եւ ոչինչ կրնայ գանհկա լեցնել:

Տակաւին, հոգեկան կարօտութեան մէջ եղողները անոնք են՝ որոնք մեր գութին եւ կարեկցութեան, մեր գործին եւ գործակցութեան պէտք

ունին, որպէսզի կարենան վերադառնալ Աստուծոյ, որուն կը պատկանէին նախապէս, ինչպէս Աստուած ի՛նք կ'ըսէ. *«Բոլոր հոգիները իմս են»* (Եգ 18.4):

Այո՛, բոլոր հոգիները Աստուծոյ կը պատկանին: Ճշմարիտ ֆրիստոնեայ մարդը ո՛չ մէկ հոգիի նկատմամբ պէտք է անտարբեր ըլլայ: Ընդհակառակը, ան բոլոր հոգիներուն փրկութեան համար ժրջանօրէն պէտք է աշխատի: Քրիստոնեայ մարդը հոգեւոր բժիշկ պէտք է դառնայ կորսուած հոգիներուն համար: Քրիստոսի արիւնով բժշկուած մարդը անպայման պիտի ուզէ որ ուրիշներն ալ ծանօթանան իր Բժիշկին՝ Յիսուսի:

4- Վերջապէս, անօթին կերակրել, կը նշանակէ օգնել անոր գործադրելու Աստուծոյ կամքը եւ իր լրումին հասցնելու Աստուծոյ կողմէ իրեն յանձնուած գործը, համաձայն Քրիստոսի խօսքին. *«Իմ կերակուրս այն է՝ որ գործադրեմ՝ զիս դրկողին կամքը եւ լրումին հասցնեմ անոր գործը»* (Յհ 4.34):

Ինքզինք Աստուծոյ կամքին չյանձնած մէկը չի կրնար ամբողջացնել այն գործը որ Աստուած իրեն յանձնած է: Հետաքրքրական է որ Քրիստոս իր երկնաւոր Հօր կամքին կատարումը կը նկատէ իր կերակուրը: Անոր ըսել ուզածը այն է, որ Աստուծոյ կամքին կատարումը մեր սնունդն է: Աստուծոյ կամքին կատարումով է որ մենք հոգեպէս կ'անհիմք եւ կը մեծնանք:

Սիրելի՛ հաւատացեալ, երբ փրկութենէ հեռու եղող մը Փրկիչին կ'առաջնորդես ո՛չ միայն զինք կերակրած կ'ըլլաս, այլեւ՝ զՔրիստոս, որովհետեւ *«անօթի էի եւ զիս կերակրեցիր»* խօսքը, Քրիստոսի՛ նաեւ կը վերաբերի: Քրիստոս կ'ուզէ մարդիկը փրկել: Քրիստոս մարդիկը իրմով իր Հօրը հետ հաշտեցնելու փափաքն ունի: Քրիստոս անօթի է: Չայն կշտացնելու համար պէտք է կորսուած հոգիները անոր բերել:

Բանա՛նք մեր հոգիներուն ականջը եւ լսենք Քրիստոսի ձայնը ուղղուած իւրաքանչիւրիս.

Անօթի՞ ես՝ զի՛ս կեր (Յհ 6.51):

Մե՞րկ ես՝ թեւերուս տակ մտիր (Ղկ 13.34):

Զո՞հ կ'ուզես՝ յիշէ որ ես քեզի համար մեռայ (Ա.Թ.ս 5.10):

Հիւս՞նդ ես՝ ես քեզ կը բժշկեմ (Մտ 8.7):

Ծարա՞ւ ես՝ ինձի՛ եկուր եւ իմէ (Յհ 7.37):

Աղքա՞տ ես՝ ես քու գանձը եմ (Եփ 3.8):

Յոգնա՞ծ ես՝ ես քեզի հանգիստ կու տամ (Մտ 11.28):

Մեղքի ստրո՞նկ ես՝ ես կրնամ քեզ ազատել (Յհ 8.36):

Տնագո՞ւրկ ես՝ մի՛ մոռնար որ երկինքի մէջ քեզի համար տեղ պատրաստած եմ (Յհ 14.2): Շուտով կու գամ եւ քեզ իմ քովս կ'առնեմ, որպէսզի ըլլաս հոն՝ ուր ես կը գտնուիմ (Յհ 14.3) եւ այնուհետեւ ինձի հետ միասին ըլլաս յաւիտեան (Ա.Թ.ս 4.17):

## «ԾԱՐԱԻ ԷՒ ԵՒ ԶՈՒՐ ՏՈՒԻՔ»

*«Ծարաւ էի եւ ջուր տուիք»*: Դարձի եկող մը Քրիստոսի ջուր տուող մըն է: Եւ սակայն, Քրիստոսի ծարաւը յագեցնելու միակ կերպը անձնապէս Քրիստոսի դառնալը չէ միայն, այլ ուրիշներն ալ դարձի բերելն է: Ահա թէ ինչո՛ւ Քրիստոս ըսաւ. *«Որովհետեւ իմ այս փոքր եղբայրներէս մէկուն ըրիք, ինծի ըրած եղաք»* (Մտ 25.40): Այո՛, մարդկութեան ծառայողը Քրիստոսի՛ է որ ծառայած կ'ըլլայ: Եթէ երբեք նիւթական ջուր տալը ողորմութիւն կը նկատուի, որքա՛ն աւելի մեծ ողորմութիւն պիտի նկատուի երբ աննիւթական ջուրի Աղբիւրին առաջնորդենք մեղքի իբրեւ հետեւանք ծարաւցած մարդիկը:

Հետեւաբար, ծարաւին ջուր տալը, անոր նիւթական ջուր տալն է այո՛, բայց մանաւանդ, զայն աստուածնաւաչողութեան առաջնորդելն է: ԶԱստուած չնանչցող մարդուն հոգին ծարաւէն կը ցամփի: *«Իմ ժողովուրդս Տէրը չնանչնալով՝ գերի կ'իյնայ ու անոր մեծամեծ մարդիկը սով կը կրեն, բազմութիւնը ծարաւէն կը ցամփի»* (Ես 5.13):

Եսայի մարգարէն Տէրը չնանչցող մարդոց բաժինը կը նկատէ գերութիւնը, սովն ու ծարաւը: Արդարեւ, Ազատարարէն հեռացողը՝ գերի կը բռնուի Սատանային կողմէ: Կեանքի Հացէն չուտողը՝ հոգեպէս սովամահ կը դառնայ: Կենաց Աղբիւրէն չխմողը՝ յաւիտենապէս ծարաւ պիտի մնայ:

*«Իմ ժողովուրդս Տէրը չնանչնալով... ծարաւէն կը ցամփի»*: ԶԱստուած նանչցող մարդիկը անոնք են, որոնք սերտ եւ սիրոյ յարաբերութեան մէջ են Աստուծոյ հետ: Անոնք են, որոնք կը վայելեն Աստուծոյ բարեկամութիւնը: Խզել մեր յարաբերութիւնը Աստուծոյ հետ, պիտի նշանակէր սովի մատնել մեր հոգիները եւ ծարաւով տանջել մեր սիրտերը: Մեր սիրտերը ստեղծուած են Աստուծոյ կողմէ եւ Աստուծոյ համար, եւ հետեւաբար, մի՛այն Աստուած կրնայ զանոնք լեցնել:

Ինչպէս ամէն օր պէտք ունինք նիւթական ջուրի եւ հացի որպէսզի կարենանք ապրիլ մեր երկրաւոր կեանքը, նոյնպէս ալ ամէն օր պէտք ունինք Քրիստոսապարգեւ աննիւթական ջուրին՝ Սուրբ Հոգիին, որպէսզի կարենանք երկրի վրայ երկնաւոր կեանք մը ապրիլ: Ստանալու համար աննիւթական ջուրը՝ Սուրբ Հոգին, մեզմէ դրամ չի պահանջուիր, մեզմէ արիւն եւ քրտինք չ'սպասուիր. մեզմէ ակնկալուածը կամեցողութիւնն է, զօրաւոր փափաքն ու վնոակամութիւնն է: Սուրբ Հոգիին ջուրը ձրի կերպով մեզի կը տրուի: Ասիկա Քրիստոսի խոստումն է. *«Ես ծարաւիկն կեանքի ջուրի աղբիւրէն ձրի ջուր պիտի տամ»* (Յյտ 21.6 Հմմտ Ես 55.1):

Մեզմէ պահանջուածը ընդառաջելն է Քրիստոսի կոչին. *«Ով որ ծարաւ է՝ թող ինծի գայ եւ խմէ: Ով որ ինծի հաւատայ, ինչպէս Սուրբ գիրքը կ'ըսէ՝ անոր սիրտէն կենսատու ջուրի գետեր պիտի բղխին...: Յիսուս ասիկա կ'ըսէր Հոգիին համար, որ իրեն հաւատացողները պիտի ընդունէին»* (Յհ 7.37–39): Հետաքրքրական է որ այստեղ Սուրբ Հոգին

ջուրի խորհրդանիշով կը պատկերանայ: Եսայի մարգարեութեան մէջ նաեւ ջուրը կը ներկայացուի իբրեւ խորհրդանիշ Սուրբ Հոգիին. «Քանզի ծարաւին վրայ ջուր պիտի թափեմ...: Քու սերունդիդ վրայ իմ Հոգիս պիտի թափեմ...» (Ես 44.3):

Ինչո՞ւ ջուրը կը ներկայացուի իբրեւ խորհրդանիշ Սուրբ Հոգիին: Աշխարհի մէջ երկու տեսակ կրակ գոյութիւն ունի՝ նիւթական կրակը եւ մեղքի կրակը: Նիւթական կրակը ջուրով կը շիջեցուի, իսկ մեղքի կրակը՝ Սուրբ Հոգիին ջուրով: Ինչպէս ջուրը անբերրի արտերը կ'որոգէ եւ զանոնք բերրի կը դարձնէ, այնպէս ալ Սուրբ Հոգին կ'արգասաւորէ մեր անպտղաբեր հոգիները եւ կեանք կը շնորհէ մահամերձ մեր սիրտերուն:

Դարձնալ, ինչպէս երկիրը առանց անձրեւի ջուրին փուշ ու տատասկ բուսցնող անապատի կը վերածուի, նոյնպէս ալ երկրաբնակ մարդիկը առանց Սուրբ Հոգիի օրհնաբեր հեղումին՝ կեանքի ցօղէն զրկուած անապատներու կը վերածուին: Ուրեմն, ծարաւ մարդուն ջուր տալ, կը նշանակէ առաջնորդել զինք հոգեւոր անպտղաբերութենէ դէպի հոգեւոր պտղաբերութիւն եւ անապատացեալ վիճակէ դէպի Եդեմական վիճակ:

Քրիստոս ի՛նքն է մեր անապատացեալ հոգիները դրախտանման դարձնողը: Պօղոս խօսելով Մովսէսի առաջնորդութեամբ Եգիպտոսէն ելող Իսրայէլացիներուն մասին, կ'ըսէ. «Բոլորն ալ նոյն հոգեւոր ուտելիքը կերան եւ բոլորն ալ նոյն հոգեւոր ըմպելիքը խմեցին, որովհետեւ խմեցին հոգեւոր ժայռէ մը՝ որ իրենց հետ կ'երթար. եւ այդ ժայռը Քրիստոս ինքն էր» (Ա.Կր 10.3-4):

Ինչպէս Քրիստոս ի՛նքն էր անապատներուն մէջ Իսրայէլացիներուն ընկերացողն ու անոնց ծարաւը յագեցնող ժայռը, այնպէս ալ Քրիստոս ի՛նքն է այն ժայռը որ կ'ընկերանայ մեզի ներկայ աշխարհի անապատին մէջ եւ կը յագեցնէ մեր հոգիներուն ծարաւը Աստուծոյ եւ աստուածայինին: Հետեւաբար, ծարաւին ջուր տալ, կը նշանակէ անոր ֆայլերը ուղղել դէպի Քրիստոս-ժայռը՝ այդ ժայռէն ցայտող ջուրով յաւիտենական յագեցում եւ յաւիտենական կեանք ստանալու համար (Յե 4.13-14):

Քրիստոս միայն ջուր չէ որ կու տայ ծարաւ մարդուն, այլեւ՝ իր արիւնը (Յե 6.54): Ուրեմն, ծարաւին ջուր տալը՝ զայն Քրիստոսի արեան պաշտպանութեան տակ բերելն է: Աշխարհ մեզ իր ուտելիքն ու խմելիքը կը դարձնէ, իսկ աշխարհի ստեղծիչը՝ Քրիստոս, ինքզինք մեր ուտելիքն ու խմելիքը կը դարձնէ: Այո՛, Քրիստոս մեզի համար գոհուող Աստուած է եւ ո՛չ թէ մեզ գոհող Աստուած մը:

Սիրելի՛ ընթերցող, չե՞ս ուզեր ֆիչ մը գոհողութիւն յանձն առնել Քրիստոսի սիրոյն, որ քեզ «փրկելու համար ինքզինքը Աստուծոյ ընծայեց որպէս անուշահոտ ընծայ եւ գոհ» (Եփ 5.2): Զե՞զ ուզեր ապաշխարութեանդ արցունքներով յագեցնել ծարաւը Փրկիչիդ:

Վերջապէս, դուն ալ կրնա՞ս Սաղմոսագիրին նման ըսել. «Հոգիս ծարաւի է Աստուծոյ, կենդանի Աստուծոյն. ե՞րբ պիտի գամ ու երեւնամ

*Աստուծոյ առջեւ» (Սղ 42.1-2): Պատրա՞ստ ես երեւնալու Աստուծոյ առջեւ  
եւ անկէ լսելու. «Ծարաւ էի եւ ջուր տուիր ինծի»:*

## «ՕՏԱՐԱԿԱՆ ԷՒ ԵՒ ԸՆԴՈՒՆԵՑԻՔ ԶԻՍ»

«Օտարական էի եւ ընդունեցի՛ գիս» (Մտ 25.35): Որո՞նք են օտարականները: Մեր միտքը ամփոփենք հինգ կէտերու մէջ.–

1– Օտարականները այն մարդիկն են, որոնք մեղքի պատճառով օտարացան Աստուծոյ արքայութենէն, անոր սէրէն եւ ընկերակցութենէն, անոր սփոփարար ներկայութենէն, անոր շնորհած պաշտպանութենէն եւ պահպանութենէն, անոր գօրութենէն եւ գօրակցութենէն:

Մարդիկ նախապէս իբրեւ սիրելի գաւակները Աստուծոյ, կ'ապրէին անոր ներկայութեան մէջ եւ ամբողջապէս կը վայելէին անոր սէրը: Մեղքը մարդիկը խորթացուց Աստուծոյ եւ դուրս շարտեց զանոնք անոր ներկայութենէն եւ օտարական դարձուց զանոնք Աստուծոյ եւ իրարու: Մէկը պէտք էր որ մեզ վերստին դարձնէր մեր երկնաւոր Հօր եւ հաշտեցնէր անոր հետ: Եւ այդ մէկը եղաւ Քրիստոս, որ իր սո՛ւրբ արիւնով սրբեց մեր մեղքերը եւ մեզ հաշտեցուց մեր երկնաւոր Հօր հետ (Հն 5.10, Բ.Կր 5.18, Եփ 2.16, Կղ 1.20):

Ուրեմն, օտարականը ընդունիլ, կը նշանակէ օգնել անոր որ դառնայ Աստուծոյ սիրոյն, դառնայ իր Հօրենական տունը: Օտարականը ընդունիլ, կը նշանակէ ջանալ վերականգնել Աստուծոյ եւ իր միջեւ այն Հօր եւ որդիական յարաբերութիւնը որ նախապէս կար երբ մեղքը չկար:

2– Օտարական մարդը իր ինքնութիւնը կորսնցուցած մարդն է: Մեղքով մարդը օտարացաւ ինքնիր բնութեան, հեռացաւ իր արմատներէն, կորսնցուց իր աստուածային պատկերն ու նմանութիւնը, եւ զանոնք կորսնցնելով՝ կորսնցուցած եղաւ իր ինքնութիւնը: Ահա թէ ինչո՛ւ Աստուծոյ Որդին մարդկային մեր բնութիւնը առաւ, որպէսզի վերադարձնէ մարդը իր նշմարիտ բնութեան, իր իսկական ինքնութեան, եւ վերականգնէ անոր մէջ Աստուծոյ պատկերն ու նմանութիւնը:

Այս նշմարտութիւնը պարզելու համար էր որ Քրիստոս պատմեց կորսուած դրամին առակը (Ղկ 15.8–10): Փռշիին մէջ կորսուած դրամը կը պատկերացնէ մեղքին մէջ կորսուած մարդը, իսկ դրամը փնտոող կինը՝ նոյնինքն Քրիստոս: Անցեալին դրամներուն վրայ Հոռոմի կայսրին պատկերը կ'ըլլար: Ինչպէս երբ մէկը գտնէր կորսուած դրամ մը, կը մաքրէր անոր վրայի փռշին որպէսզի կայսրին պատկերը յայտնաբերէր, այնպէս ալ Քրիստոս աշխարհ «եկաւ կորսուածը փնտոող» (Ղկ 19.10) եւ անոր մէջ վերստին յայտնաբերելու Աստուծոյ պատկերը: Ուրեմն, օտարականը ընդունիլ, կը նշանակէ օգնել անոր որ դառնայ իր ինքնութեան, իր աստուածային պատկերին եւ նմանութեան:

3– «Օտարականը մի՛ նեղէ՛ք, վասն զի օտարականին սիրտին վիճակը գիտէ՛ք, որովհետեւ դու՛ք ալ Եգիպտոսի մէջ օտարական էի՛ք» (Ել 23.9): Ո՞վ է այն հաւատացեալը որ Քրիստոսով դո՛ւրս եկած է Եգիպտոսէն՝ (իր անապաշխարութեան վիճակէն), եւ չի փանչնար օտարականին, այսինքն՝ տակաւին իր անապաշխար վիճակին մէջ յամեցող մարդուն սիրտին

վիճակը: Քրիստոսով մեղքի պատճառած տառապանքներն ազատողը պարտի հասկացողութիւն ցուցաբերել անոնց նկատմամբ՝ որոնք տակաւին զուր տեղ կը շարունակեն իրենց սեփական նիգերով ձերբազատիլ մեղքի հեղձուցիչ ներկայութենէն:

Սիրելի՛ ընթերցող, Աստուծոյ առաջնորդութեամբ դուրս եկա՞ծ ես Եգիպտոսի գերութենէն, այլ խօսքով, ազատա՞ծ ես մեղքի ստրկութենէն: Մեղքը քեզ օտար մը դարձուցա՞ծ է Աստուծոյ եւ զԱստուած քեզի: Քու եւ Աստուծոյ միջեւ փոխադարձ ֆանաչողութիւն կա՞յ, թէ օտարութիւնն է որ կը տիրէ սիրտիդ մէջ:

Հարց կու տամ քեզի, արդեօ՞ք ոչխար մըն ես որ կը ֆանչնաս Հովիւդ եւ Հովիւդ քեզ կը ֆանչնայ (Յե 10.14): Հոն ուր փոխադարձ ֆանաչողութեան հարց կայ, հոն չի՛ կրնար օտարութեան հարց ծագիլ, հոն չի՛ կրնար խորթութեան մասին խօսք ըլլալ: Հոն ուր փոխադարձ ֆանաչողութեան պարագայ կայ, հոն մտերմութիւնն է որ կ'իշխէ, սէրն է որ կը թագաւորէ, անկեղծութիւնն է որ կը բոցկլտայ:

4- Օտարականը նաեւ տառապած ու վշտակիր մարդն է: Վշտակիր մարդը ընդունիլը, լոկ խօսքով անոր վշտակցիլը չէ, այլ օգնելն է անոր դուրս գալու վիշտի անդունդէն: Տանջուած օտարականը ո՛չ դասախօսի պէտք ունի եւ ո՛չ ալ խրատողի: Ան իր ձեռքէն բռնողի պէտք ունի: Ան գիճմբ ոտքի կանգնեցնողի պէտք ունի: Օտար մարդը մի՛շտ վախի մէջ կ'ըլլայ, մի՛շտ մտահոգ կ'ըլլայ: Օտար մարդը մի՛շտ անվստահութեան եւ անապահովութեան զգացումներով շրջապատուած կ'ըլլայ: Օտար մարդը ենթակայ է լքուելու, մոռցուելու եւ իրաւագրկուելու:

Մեզմէ ո՞վ այս փուկերէն չ'անցնիր երբ կ'ապրի օտար երկրի մը մէջ եւ շրջապատուած է արտասովոր բնաւորութիւն ունեցող մարդոցմով: Ուրեմն, օտարականը ընդունիլ, կը նշանակէ ապահովութիւն ներշնչել անապահովութեան զգացումով գերուածին, նեցուկ կանգնիլ տապալելու վրայ եղողին, հոգ տանիլ մտահոգին, հետապնդել իրաւունքը՝ իրաւագրկուածին, դատը՝ անարդարութեան գոհ գացածին:

5- Ի վերջոյ, օտարականը նաեւ կրնայ ըլլալ ոեւէ մէկը, որ մեր հաւատքէն տարբեր հաւատք եւ մեր համոզումներէն տարբեր համոզումներ ունի: Պէտք չէ օտարականի աչքով նայիմք մեզմէ տարբեր եղողներուն եւ երեւցողներուն, գործողներուն եւ մտածողներուն: Քրիստոնեայ մարդը իր նմանները ընդունող մարդ պէտք է ըլլայ: Աղքատ է իր նմանները աղքատ սեպողը: Խեղճ է իր եղբայրները խեղճ նկատողը:

Սիրելի՛ ընթերցող, անապաշխար եւ անգիղջ մարդը օտարական մըն է Աստուծոյ համար: Օտարական մարդը երկինք պիտի չմտնէ: Օտարական մարդը պիտի ուրացուի Աստուծոյ կողմէ. *«Բնա՛ւ ձեզ չեմ նանչնար»* (Մտ 7.23): Ի՞նչ ահաւոր բան է ուրացուիլ Արարիչին կողմէ: Որո՞ւ պիտի աղաղակենք երբ մարդոց աղաղակները Լսողը փակէ իր ականջները մեր աղիողորմ նիչին առջեւ: Նման անել կացութեան

չմատնուելու համար, ապաշխարութեամբ դառնանք Աստուծոյ եւ ան  
որդիի յատուկ պատմունքան պիտի շնորհէ մեզի:



## «ՄԵՐԿ ԷՒ ԵՒ ՀԱԳՑՈՒՑԻՔ ԻՆՏԻ»

«Մերկ էի եւ հագցուցիք ինձի» (Մտ 25.36): Ո՞վ է մերկ մարդը: Մերկը Աստուծոյ արդարութենէն եւ սրբութենէն մերկացած մարդն է: Մերկը աստուածապարգեւ անմահութիւնը կորսնցուցած անհատն է: Մերկը Աստուծոյ ներկայութեան կանգնելու փափաքէն եւ հանոյքէն դատարկուած էակն է: Մերկը Աստուծոյ հետ ամէն տեսակի կապ, հաղորդակցութիւն եւ յարաբերութիւն դադրեցուցած արարածն է:

Մերկ կը նկատուին բոլոր անոնք՝ որոնք իրենց անհաւատութեան եւ անհնազանդութեան պատճառով չեն վայելեր Աստուծոյ ընկերակցութիւնն ու պաշտպանութիւնը: Մերկը ուրեմն, անպաշտպան, անպահապան, անընկեր եւ երեսի վրայ ձգուած անհատն է: Մեղաւոր մարդը մերկ մարդ մըն է, իսկ մերկ մարդը՝ ենթակայ է չար ու պիղծ ոգիներուն ձաղկումին եւ ծաղրանքին առարկան դառնալու:

Ան որ Քրիստոսով շնորհուած արդարութեան պատմունքանով չի ծածկեր իր հոգեւոր մերկութիւնը՝ ան մնայուն թիրախը կը դառնայ Սատանային կողմէ արձակուած մեղքի նետերուն: Հետեւաբար, մերկը հագցնել, կը նշանակէ առաջնորդել գայն Քրիստոսի, որպէսզի անկէ ստանայ լաւագոյն պատմունքանը (Ղկ 15.22):

Մարդկութիւնը հոգեւոր մերկութիւնը ժառանգեց Ադամէն: Ահա թէ ինչո՞ւ այդ մերկութիւնը յաճախ կոչուած է «Ադամական մերկութիւն»: Աստուած չստեղծեց Ադամը հոգեւորապէս մերկ: Ադամ այդ հոգեւոր մերկութեան մէջ ինկաւ Սատանային եւ անոր պիղծ ու չար ոգիներուն ձեռքով: Ասոր փաստը կը գտնենք բարի Սամարացիին առակին մէջ: Հոն կը կարդանք. «Մարդ մը երուսաղէմէն երիւթով կ'իջնէր: Ճամբան աւազակներու ձեռքը ինկաւ, որոնք կողոպտելով՝ մերկացուցին զինք...» (Ղկ 10.30): Որո՞նք են այստեղ յիշուած աւազակները որոնք կը յարձակին մարդուն վրայ եւ կը մերկացնեն զինք: Ս. Գրիգոր Նարեկացի, Իգնատիոս Վարդապետ, Ստեփանոս Սիւնեցի եւ ուրիշներ, կը հաստատեն որ աւազակները կը ներկայացնեն Սատանան եւ անոր չար գունդերը:

Աստուածորդին գթաց մարդուն վրայ եւ աշխարհ գալով մերկացաւ մարդուն ձեռքով եւ մարդուն համար (Մտ 27.28), որպէսզի ազատագրէ մարդը Ադամական մերկութենէն: Քրիստոս Լաւոդիկիայի եկեղեցիին կ'ըսէ. «Դուն ողորմելի մըն ես, խեղճ ու աղքատ, մերկ եւ կոյր: Ուստի քեզի հետեւեալ խորհուրդը կու տամ.՝ Կրակէն անցած զուտ ոսկի գնէ ինձմէ, որպէսզի հարստանաս, եւ ներմակ հագուստներ առ՝ հագնելու համար, որպէսզի մերկութեանդ ամօթը ծածկես» (Յյտ 3.17-18):

Ճերմակ հագուստը պատկերացումն է Քրիստոսապարգեւ արդարութեան, սրբութեան եւ անմեղութեան: Այդ հագուստը լուացուած եւ ներմկցուած է Գառնուկին արիւնով (Յյտ 7.14): Մերկը հագցնելը ուրեմն, ուրիշ բան չէ եթէ ոչ ուղղել մեր նմանին քայլերը խաչին վրայ մեռած Գառնուկին, որպէսզի Աստուած այդ Գառնուկին բուրդով ծածկէ

անոր մերկութիւնը եւ Գառնուկին շունչով ջերմացնէ անոր սիրտն ու հոգին:

Ինչպէս Ֆիզիքապէս մերկ մարդը չ'ուզեր իր նմաններուն ներկայութեան կանգնիլ, այնպէս ալ հոգեւորապէս մերկ եղող մարդը բնա՛ւ չ'ուզեր Աստուծոյ ներկայութեան բերուիլ: Դարձի չեկած մարդը չ'ուզեր լսել Քրիստոսի աշխարհ վերադառնալուն մասին: Իր երկրաւոր կեանքի ընթացքին շնորհիւ անիմանալի լոյսով չլուսաւորուած մէկը պիտի չկրնայ կանգնիլ լոյս Աստուծոյ առջեւ: Քրիստոսով չարդարացած մարդը կը սարսափի երբ լսէ Աստուծոյ արդար դատաստանին մասին: Մեղքը մարդը կը դարձնէ վախկոտ եւ անհամարձակ:

Քրիստոսի կողմէ մեզի շնորհուած «ներմակ պարեգօտները» կը փարատեն մեր ներսիդէն վախկոտութիւնը եւ համարձակութիւն կու տան մեզի կանգնելու մեր երկնաւոր Հօր առջեւ: Փրկութեան պատմութեան մեզ համարձակ կը դարձնէ մեղքին դէմ մղած մեր պայքարին մէջ: Մեղքի կեանքը սիրող մարդը անհամարձակ կ'ըլլայ: Իսահակ Աստրի կ'ըսէ. *«Անկարելի է որ մարմնաւորին կապուած մարդը աղօթքի ժամանակ կարենայ համարձակութիւն ձեռք ձգել»:*

Սիրելի՛ ընթերցող, մինչեւ այսօր քանի՞ հոգիներ կրցած ես հագցնել: Քանի՞ մարդ առաջնորդած ես Քրիստոսի խաչին: Քանի՞ անհատներ յաջողած ես հաւաքել Քրիստոսի պաշտպանարար թելերուն տակ: Չըլլայ որ այլոց փրկութեան պատճառ ըլլալու փոխարէն կորստեան պատճառ ըլլաս: Չըլլայ որ դուն ալ պատկանիս անոնց շարքին՝ որոնք փոխանակ ծածկելու իրենց նմաններուն մերկութիւնը (մեղքերը), ընդհակառակը կը հրապարակեն զանոնք:

Լաւ բան է մեղքերը հրապարակելը եթէ երբեք առոնք քու մեղքերդ են: Ուրիշին մեղքերը հրապարակելու իրաւունք չունիս: Ուրիշին մեղքերուն մասին կրնաս խօսիլ մի՛այն եւ մի՛այն մեղքերու Քաւիչին՝ Քրիստոսի:

Որպէսզի կարենաս հոգեւորապէս մերկ եղողները առաջնորդել Քրիստոսի արդարութեան պատմութեանին, նախ դուն ի՛նքդ պէտք է արդարացած ըլլաս Քրիստոսի արիւնով: ԶՔրիստոս իբրեւ Փրկիչ ընդունելուդ պէս քամբայ մի՛ իյնար ուրիշներուն փրկութեան աւետիս տալու: Նախ թոյլ տուր որ Սուրբ Հոգին թրծէ ու եփէ քեզ հոգեւոր կեանքին մէջ, եւ ուշադիր եղիւր չկորսնցնելու փրկութեանդ հագուստը: Այդ հագուստը կորսնցնելու կարելիութիւնը միշտ ի գօրու է: Ահա թէ ինչն'լ Քրիստոս կ'ըսէ. *«Ահա ես գողի պէս կու գամ: Երանի՛ անոնց՝ որոնք արթուն կը մնան եւ իրենց հագուստները կը պահեն, որպէսզի մերկ չըջին եւ իրենց ամօթոյքը չերելի»* (Յլտ 16.15):

Աստուած արդար եւ փրկութեան արժանի կը նկատէ մերկը հագցնող մարդը (Եզ 18.5-9): Մերկը հագցնելը անոր մարմինին համար հագուստ տալը չէ միայն, այլ նաեւ Տիրոջ խօսքով անոր հոգին ջերմացնելն է:

Ձերմացուր սիրտդ Սուրբ Հոգիին կրակով, որպէսզի դուն քու կարգիդ  
դառնաս ջերմութիւն մեղքով ցրտահար դարձած այս աշխրհին մէջ:

## «ՀԻՒԱՆԴ ԵՒ ԵՒ ՀՈԳ ՏԱՐԻՔ ԻՆԾԻ»

«Հիւանդ էի եւ հոգ տարիք ինծի» (Մտ 25.36): Որո՞նք են հիւանդները: Զանոնք կարելի է բաժնել հինգ խումբի.–

1– Հիւանդները բոլոր անոնք են՝ որոնք հեռու են եկեղեցիէն, աղօթքէն, Աստուծոյ խօսքէն, Քրիստոսի մարմինէն եւ արիւնէն, Սուրբ Հոգիին ներգործութենէն եւ ամէն բանէ որ գիրենք կրնայ մօտեցնել Աստուծոյ: Եկեղեցիին (վերածնած հաւատացեալներուն եւ հոգեւոր հովիւներուն) պարտականութիւնն է այցելել իրենց տուններուն մէջ նստած եւ հաւատացեալներէն ու հոգեւոր հովիւներէն մոռցուած, անտեսուած ու չայցելուած անհատներուն եւ գիրենք առաջնորդել եկեղեցի եւ եկեղեցւոյ ընդմէջէն՝ Աստուծոյ:

2– Հիւանդները անոնք են՝ որոնց սիրտը կոտրած է ու հոգին տրտմած, ուրիշներուն կողմէ իրենց կրած նեղութիւններուն եւ նախատիւնքին պատճառով: Դաւիթ մարգարէն կ'ըսէ. «Նախատիւնք սիրտս կոտրեց ու հիւանդացայ. գթացող մը փնտոնեցի բայց չկար, եւ միտքարութիւն տուողներ որոնեցի բայց չգտայ» (Սղ 69.20):

Ուրիշը նախատել եւ անարգել, կը նշանակէ կոտրել անոր սիրտը: Քննադատող եւ դատապարտող լեզուն կործանիչ ու քանդիչ է: Քրիստոնեաներուն կոչումն է քաջալերող եւ միտքարող լեզու ունենալ, գթացող եւ կարեկցող սիրտ ունենալ: Հիւանդին հոգ տանիլը, կոտրած սիրտ եւ տրտմած հոգի ունեցողները վերականգնելն ու վերաշխուժացնելն է:

3– Հիւանդ մարդը յուսահատ մարդն է: Քիչ չէ թիւր այն մարդոց որոնք կը փորձեն պայքարիլ մեղքի դէմ, եւ սակայն, Զարին կողմէ իրենց ստացած նետահարումներուն իբրեւ հետեւանք՝ յուսահատ գետին կ'իյնան եւ ալ չեն ուզեր ոտքի կանգնիլ ու պայքարիլ: Հիւանդին հոգ տանիլ, կը նշանակէ նեցուկ կանգնիլ եւ պատերազմակից դառնալ բոլոր անոնց՝ որոնք մեղքին դէմ իրենց մղած պայքարին մէջ հետզհետէ սկսած են ընկրկիլ եւ նահանջել: Մեր առաքելութիւնն է Քրիստոսով զօրացնել տկարները եւ սորվեցնել անոնց որ պէտք չէ նկիլ փորձութեանց դիմաց: Փորձիչը տեղի կու տայ երբ ընդդիմադիրներու հանդիպի:

4– Հիւանդ մարդը սիսալ հոգեւոր սնունդ ստացող մարդն է: Ինչպէս սիսալ դեղ ստացող մարդը հիւանդ ու անհանգիստ կ'ըլլայ Ֆիզիքապէս, այնպէս ալ թիւր եւ մոլորեցուցիչ հոգեւոր ուսուցումներու ուշադրութիւն դարձնող մարդը՝ հոգեւորապէս հիւանդ կ'անի: Մեզմէ պահանջուածը այն է, որ նշմարութենէն մոլորածները առաջնորդենք Քրիստոսի առողջ եւ առողջացուցիչ ուսուցումներու սուրբ կաթին:

5– Կասկած չկայ որ հիւանդ մարդը նաեւ Ֆիզիքապէս հիւանդ մարդն է: Վերել յիշուած չորս կէտերուն նման այս կէտը նաեւ նոյնքան արժէք եւ կարեւորութիւն կը ներայացանէ Աստուծոյ համար:

Տիգիֆապէս հիւանդները Քրիստոսի ինամֆին արժանացան (Մտ 4.24):  
Քրիստոս թելադրեց մեզի նոյնը ընել (Մտ 10.8, Մր 16.18, Յկ 5.14):

## «ԲԱՆՏԻ ՄԷՋ ԷՒ ԵՒ ԱՅՑԵԼԵՑԻՔ ԻՆՏԻ»

«Բանտի մէջ էի եւ այցելեցի՛ք ինձի» (Մտ 25.36): Ի՞նչ են այն բանտերը որոնց մէջ անհամար թիւով մարդիկ կ'ապրին:

1- Մեղքի բանտը: Ան որ Քրիստոսով չէ ազատագրուած իր մեղքերուն կապանքներէն՝ բանտարկեալ մըն է: Սողոմոն կ'ըսէ. «Չարագործը... իր մեղքին չուաններովը պիտի կապուի» (Առ 5.22): Դարձի չեկած մարդը՝ կապուած մարդ է: Քրիստոս ի՛նքն է արձակիչն ու ազատարարը մարդկային ցեղին (Յե 8.36): Բանտարկեալներուն այցելելը հետեւաբար, երթալ եւ գտնելն է բոլոր այն մարդիկը՝ որոնք կ'ապրին մեղքի կեանք մը եւ զանոնք Քրիստոսի խաչին առաջնորդել:

2- Յուսահատութեան բանտը: Ամենագէշ բանը որուն մարդը կրնայ հանդիպիլ յուսահատութեան բանտն է: Իր յոյսը կորսնցուցած մարդը՝ կը կորսնցնէ նաեւ իր աշխատելու եռանդը, պայքարելու ոգին, յառաջանալու փափաքը, լաւ ապագայի մը հասնելու տեսիլքը, բան մը իրագործելու երազը: Յուսահատութեամբ լեցուած մարդը՝ նեղութեանց դիմաց ընկրկող, ակող, նահանջող եւ պարտուող մարդն է:

Այս բոլորին մէջ ամենավատը այն է, որ յուսահատ մարդը կը կորսնցնէ նաեւ վերականգնելու եւ Աստուծոյ դատնալու ամէն իդձ եւ տրամադրութիւն, ինչպէս եղաւ պարագան Յուդայի եւ Երուսաղէմի բնակիչներուն (Եր 18.12): Աստուածատուր մեր կոչումն է այցելել յուսահատութեան բանտը ինկած մարդիկը եւ յոյսով գօտեպնդել զանոնք եւ յիշեցնել անոնց որ «յոյսը երբեք ամօթով չի ձգեր» (Հո 5.5):

3- Մահուան բանտը: Մահէն վախցող մարդիկը կարելի է բաժնել երկու խումբի. – (1) Մահէն կը վախնան անոնք՝ որոնք Քրիստոսի արիւնով իրենց մեղքերուն համար թողութիւն չեն գտած եւ (2) անոնք՝ որոնք չունին մահուան ուղիւս իմացութիւնը: ԶԱստուած եւ մահը չնանչցողը բնականօրէն կը վախնայ անոնցմէ: Անորոշ եւ մթին բաները միշտ կը մտահոգեն մարդ արարածը:

Քրիստոսով Աստուծոյ հետ հաշտուածներուս պաշտօնն է՝ «որ այս հաշտութիւնը պատգամենք բոլոր մարդոց» (Հո 5.19) եւ յիշեցնենք անոնց, որ հաւատացեալ մարդը պէտք չունի վախնալու մահէն, որովհետեւ երբ ան իր աչքերը փակէ երկրի վրայ՝ ինքզինք իսկոյն կը գտնէ Քրիստոսի ներկայութեան մէջ, յաւիտենապէս ապահով: Այս իմաստով, բանտին մէջ եղողներուն այցելել, կը նշանակէ օգնութեան ձեռք երկարել մեր բոլոր եղբայրներուն եւ քոյրերուն եւ ազատագրել զանոնք մեղքի ու մահուան բանտէն, վախի եւ կասկածամտութեան բանտէն, յաւիտենական դատապարտութեան եւ կորստեան բանտէն:

Սիրելի՛ ընթերցող, անհաշիւ է թիւը իրական բանտարկեալներուն եւ հոգեւոր իմաստով բանտարկեալներուն: Իբրեւ Ազատարարին զաւակը, բու կոչումդ է ուղիւս ազատութեան փողը հնչեցնող զինուոր մը ըլլալ: Մարդիկ պէտք ունին նման Քրիստոսաւէտ զինուորներու:

## ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՆԽԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԶՕԳՏԱԳՈՐԾԵՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ ԴԷՄ

Ոմանք կը տրամաբանեն ըսելով. «Քանի որ Աստուած ամենագէտ ու կանխագէտ է, ուրեմն, ոչինչ կրնայ պատահիլ առանց իր գիտութեան»: Սկզբունքով մենք համաձայն ենք որ ոչինչ կրնայ պատահիլ առանց Աստուծոյ գիտութեան: Այլապէս, եթէ աշխարհի մէջ որեւէ բան կրնայ պատահիլ առանց Աստուծոյ գիտութեան, Աստուած պիտի դադրէր ամենագէտ եւ նախագէտ Աստուած ըլլալէ:

Առողջ տրամաբանութիւն ունեցող մարդը սակայն, չ'ընդունիր որ տեղի ունեցող չարիքները Աստուծոյ կամքով է որ տեղի կ'ունենան: Նախ յստակ տարբերութիւն պէտք է դնել Աստուծոյ կանխագիտութեան եւ կամեցողութեան միջեւ: Գիտնալը ուրիշ բան է, կամենալը՝ ուրիշ բան: Աստուած սկիզբէն գիտէ թէ ի՛նչ չարիքներ պիտի պատահին, բայց այդ չի՛ նշանակեր որ ի՛նք կը կամենայ անոնց պատահումը:

Ենթադրեցէք պահ մը որ երկու տարեկան փոքրիկ մը իր տան դռնէն փողոց ելածին պէս, մեքենայ մը ճգմեց գայն: Ո՞վ կը յանդգնի ըսել որ գորովագութեամբ Աստուած ի՛նքն էր որ կամեցաւ փոքրիկին այդ ձեւի մահը: Եթէ մենք որ չար ենք՝ գիտենք բարին կամենալ եւ գործել, մեր երկնաւոր Հայրը որքա՛ն աւելի բարին կը կամենայ եւ կը գործէ (Հմմտ Մտ 7.11):

Ոմանք կրնան մտածել որ Աստուած սկիզբէն գիտէր որ այդ երկու տարեկան փոքրիկը պիտի ճգմուէր, հետեւաբար, ինչո՞ւ չփրկեց ու չազատեց գայն: Թէ Աստուած սկիզբէն գիտէր՝ կասկած չունինք, քանի որ ան կանխագէտ Աստուած է: Բայց գո՞յշ ըլլանք սիրելիներ: Աստուծոյ կանխագիտութիւնը պէտք չէ օգտագործենք Աստուծոյ դէմ: Պէ՞տք է գԱստուած մեղադրենք իր կանխագէտ ըլլալուն համար: Աստուծոյ կանխագիտութիւնը երբե՛ք գԱստուած պատասխանատու չի՛ դարձներ պատահող չարիքներուն:

Փոխանակ Աստուծոյ վրայ յարձակելու եւ մեր ձայնը անոր դէմ բարձրացնելու, նախ փորձենք արկածին պարագաները քննել: «Աստուած ինչո՞ւ փոքրիկը չազատեց» ըսելու փոխարէն, հարց տանք նախ, թէ «ինչո՞ւ փոքրիկին մայրը ուշադրութիւն չդարձուց անոր: Ինչո՞ւ դուռը փակ չպահեց: Ինչո՞ւ մեքենավարը տունին դուռին առջեւէն արագօրէն անցաւ: Ինչո՞ւ աւելի ուշադրութեամբ չէ՞ց»:

Քանի որ Աստուած սկիզբէն գիտէ ինչ որ պիտի պատահի, այդ չի՛ նշանակեր որ ի՛նքն է պատճառն ու պատասխանատուն ամէն բանի որ կը պատահի: Խօսինք օրինակներով: Աստուած սկիզբէն գիտէ որ ամբարիշտ եւ անօրէն մարդը եթէ դարձի չգայ՝ առ յաւէտ պիտի կորսուի: Բայց անոր սկիզբէն գիտնալը զինք յանցաւոր չի դարձներ:

Եսայի մարգարէն կ'ըսէ. «Թող ամբարիշտը՝ իր մամբայէն ու անօրէն մարդը իր խորհուրդներէն հրաժարի եւ Տիրոջը դատնայ ու անիկա պիտի ողորմի անոր... վասնզի անիկա առատապէս կը ներէ» (Ես 55.7): Եթէ

երբեք ամբարիշտ եւ անօրէն մարդը կը մերժէ ընդառաջել Աստուծոյ այս հրաւերին՝ ի՛նք կը դառնայ պատճառն ու պատասխանատուն ինքնիր կորստեան եւ ո՛չ թէ Աստուած: Ո՞վ կրնայ արգելք հանդիսանալ մարդուն եթէ ան ուզէ հրաժարիլ իր ամբարշտութենէն:

Մարդը կատարեալ ազատութիւնը ունի ընդառաջելու Աստուծոյ փրկութեան հրաւերին եւ կամ մերժելու զանիկա: Աստուած մարդուն ազատ կամք շնորհած եղաւ երբ անոր առջեւ դրաւ կեանքի ու մահուան ճամբան (Բ.Օր 30.19): Այնքան ատեն որ երկու ճամբայ կայ մարդուն առջեւ դրուած, մարդը իրաւունք չունի մեղադրելու զԱստուած իրեն պատահող դժբախտութեանց համար:

Մարդիկ աստուածապարգեւ իրենց ազատութիւնը չարաչար օգտագործեցին եւ կ'օգտագործեն: Պետրոս առաքեալ կ'ըսէ. «*Ձեր ազատութիւնը չարիք գործելու պատրուակ թող չդառնայ*» (Ա.Պտ 2.16): Երբ մէկուն կը յանձնարարենք որոշ բան մը չընել եւ ան մեզի կ'ըսէ. «*Ես ազատ եմ, կ'ուզեմ՝ կ'ընեմ, չեմ ուզեր՝ չեմ ընեմ*», եւ չարիք կը գործէ ու ապա չարիքի կը հանդիպի. ասոր համար պէ՞տք է մեղադրենք զԱստուած: Պէ՞տք է այպանենք զԱստուած աղէտի մը համար որ մարդոց ազատ կամեցողութեան չարաբար օգտագործման արդիւնքն է:

Ինչպէս շատ բաներ կան որոնց նախքան պատահիլը մենք կրնանք գիտնալ, բայց այդ բնա՛ւ մեզ անոնց պատահումին պատասխանատուն չեն դարձնել, այնպէս ալ Աստուած սկիզբէն գիտէ թէ ի՛նչ պիտի պատահի, բայց այդ չի նշանակել որ ի՛նքն է պատճառը անոնց պատահումին:

Օրինակ, Աստուած սկիզբէն չէ՞ր գիտեր որ Ադամ եւ Եւա անհնազանդ պիտի ըլլային իրեն: Սկիզբէն չէ՞ր գիտեր որ Կայէն պիտի սպաննէր Աբելը, չէ՞ր գիտեր որ Սողոմն ու Գոմորը պիտի կործանէին, չէ՞ր գիտեր որ Յովսէփ պիտի չարչարուէր իր եղբայրներուն ձեռքով, չէ՞ր գիտեր որ Դաւիթ պիտի հալածուէր Սաւուղին կողմէ, չէ՞ր գիտեր որ Սամսոն դժբախտ մահով մը պիտի մահանար, չէ՞ր գիտեր որ Յովհաննէս Մկրտիչ պիտի գլխատուէր Հերովդէս չորրորդապետին հրամանով, չէ՞ր գիտեր որ իր միածին Որդին պիտի մատնուէր Յուդա Իսկարիոտացիին ձեռքով, չէ՞ր գիտեր որ Ստեփանոս պիտի քարկոծուէր իր ազգակիցներուն կողմէ, չէ՞ր գիտեր որ Յակոբոս սրամահ պիտի ըլլար Հերովդէս Ագրիպպաս Ա.ի կողմէ:

Աստուած այդ բոլորը սկիզբէն գիտէր ըսելով, արդեօք ի՞նք պէտք է նկատուի պատճառն ու պատասխանատուն այդ բոլորին: Աստուած գիտէր այդ բոլորը, այո՛, բայց ինք չէ՛ր կամեցողն ու կատարողը այդ բոլորը: Անոնք որոնք կ'ուսուցանեն որ Աստուած իր ազատ կամքով նեղութիւն կու տայ մարդոց, անոնք կը հակասեն Աստուածաշունչին որ կը հաստատէ որ «*Աստուած իր կամքովը նեղութիւն չի տար ու մարդու որդիները չի տրամեցներ*» (Եր 3.33):



Սիրելի՛ս, ի՞նչ պիտի ըլլար մեր վիճակը եթէ Աստուած կանխագէտ Աստուած չըլլար: Ան սկիզբէն գիտնալով մեզի պատահելիք չարիքները, իր հզօր բազուկով կը խափանէ անոնցմէ շատերը եւ կամ ալ կ'օգտագործէ զանոնք մեր փրկութեան համար: Ուստի, շնորհակալ ըլլանք որ Աստուած կանխագէտ է եւ ո՛չ թէ այսպանենք զինք իր կանխագիտութեան համար:

## ԱՍՏՈՒԱԾ ԻՐ ԾՐԱԳԻՐԸ ԿԸ ՓՈԽԷ ԵԹԷ ՄԵՆՔ ՄԵՐ ԸՆԹԱՑՔԸ ՉՓՈԽԵՆՔ

Թէպէտ Աստուծոյ ծրագիրն է գեղեցիկ ապագայ մը շնորհել մարդուն (Եր 29.11), փրկել եւ ազատել զայն (Եր 15.20), բարին գործել անոր համար (Եր 32.40), եւ սակայն, եթէ մարդը յամառի իր անգիղջ եւ անապաշխար ընթացքին մէջ մնալ, Աստուած իր բարի ծրագիրը ի գործ պիտի չդնէ անոր կեանքին մէջ: Աստուածաշունչը բազմաթիւ կերպերով նոյն այս իրողութիւնը կը հաստատէ:

Աստուած Երեմիա մարգարէին բերնով կ'ըսէ. *«Եթէ ազգի մը կամ թագաւորութեան մը համար ըսելու ըլլամ թէ պիտի քակեմ, պիտի փլցնեմ, ու պիտի կորսնցնեմ, բայց եթէ այն ազգը, որուն մասին խօսեցայ, իր չարութենէն դառնայ, եւ ալ պիտի չընեմ այն չարիքը, որ մտածեք էի անոր ընել: Իսկ երբ ազգի մը կամ թագաւորութեան մը համար ըսելու ըլլամ թէ պիտի շինեմ ու պիտի տնկեմ, բայց եթէ անհկա իմ խօսքիս մտիկ չընելով՝ իմ առջեւ չարութիւն ընէ, եւ ալ պիտի չընեմ այն չարիքը, որ խոստացեք էի անոր ընել»* (Եր 18.7-10):

Համաձայն այս խօսքին, Աստուած ո՛չ միայն կը փափաքի «տնկել» եւ «շինել» մարդ արարածը, այլեւ որոշում առած է գանհկա «տնկելու եւ շինելու»: Մարդուն կը մնայ «տնկուելու եւ շինուելու» փափաք յայտնաբերել: Չսպասեմք որ Աստուած մեզ վերականգնէ երբ մենք վերականգնելու փափաք չունինք: Չակնկալեմք որ Աստուած միտքարէ մեզ երբ մենք մեղքի կեանք մը ապրելով սուգի կը մատնենք մեր հոգիները:

Աստուած Երեմիա մարգարէին ցամբով կը յայտնէ որ իր նպատակը մեղքի մէջ ինկած մարդը վերականգնելն է, բայց եթէ մեղքի տիղմին մէջ թաւալող մարդը մերժէ Աստուծոյ գալ մաքրուելու համար մեղքի տիղմէն, Աստուած պիտի «պատժէ» զայն թոյլ տալով որ աւելի՛ միտքունի մեղքի տիղմին մէջ: Երբ Աստուած թոյլ տայ որ մարդը դառնայ ստրուկը մեղքին՝ ատիկա արդէն անոր համար պատիժ կը սեպուի: Պօղոս առաքեալ կ'ըսէ. *«Քանի որ չուզեցին զԱստուած ցանկնալ, Աստուած ալ թոյլ տուաւ որ անոնք իրենց անարգ միտքերուն անձնատուր եղած՝ ընեն ինչ որ պէտք չէ ընել»* (Հո 1.28): Աստուած չի պարտադրեր մարդուն զինք ցանկնալ:

Դարձի եկող մարդը կ'ազատի պատիժէն: Ասոր լաւագոյն օրինակը կը տեսնենք Յովնանի մարգարէութեան մէջ: Երբ Յովնան Աստուծոյ հրամանով գնաց եւ Նինուէցիներուն ըսաւ, որ Աստուած քառասուն օր ետք իրենց քաղաքը պիտի կործանէ, *«Նինուէցիները հաւատացին Աստուծոյ եւ ծովապահուծիւն քարոզեցին ու մեծէն մինչեւ պզտիկը բուրձ հագան»*: Իսկ Նինուէի թագաւորը, ըսաւ. *«Ամէն մարդ իր չար նամբայէն թող դառնայ եւ թող դադրի անիրաւութիւն գործելէ. Ո՞վ գիտէ, թերեւս Աստուած դառնայ ու գթայ եւ իր սաստիկ բարկութիւնը իջնէ եւ չկորսուիմք»*: Երբ Աստուած տեսաւ որ Նինուէցիները *«իրենց չար*

նամբաներէն դարձան, ուստի Աստուած գթաց անոնց վրայ, եւ այն չարիքը որ անոնց վրայ պիտի բերէր, չբերաւ» (Յվն 3.1-10):

Ինչպէս կը տեսնէք, եթէ հրաժարինք մեր չար գործերէն, Աստուած ալ պիտի հրաժարի իր բարկութիւնը մեր վրայ թափելու իր «ծրագիրէն»: Աստուած «բարկութիւն եւ գայրոյթ պիտի վերապահէ անոնց՝ որոնք հակառակութենէ տարուած՝ չեն հաւանիր նշմարտութեան, այլ անհրաւուրեան մէջ կը մնան» (Հո 2.8): Աստուած օրհնութիւն պիտի չվերապահէ անիծեալ կեանք մը ապրող մարդուն համար:

Աստուծոյ սպառնալիքները պայմանական են: Աստուած կը ջնջէ մեր պարտամուրհակին վրայ արձանագրուած պատիժները եթէ երբեք ներումի համար իրեն դիմենք: Լաւ է ապաւինիլ Աստուծոյ բարութեան. բայց եթէ երբեք ապաւինինք Աստուծոյ բարութեան եւ սկսինք չարիք գործել՝ Աստուած երբեք ալ բարի որոշումներ պիտի չառնէ մեր նկատմամբ: Աստուած բարի ու ներող է ըսելը մեզ չի փրկեր: Աստուած մեզ կը փրկէ երբ իրեն դառնանք: Նոյնը կը հաստատէ Սաղմոսագիրը. «Ո՛վ Տէր, դո՛ւն բարի ու ներող ես եւ խիստ ողորմած այն ամէնուն նկատմամբ, որոնք քեզի կը կանչեն» (Սղ 86.5): Երբեք արդարութիւն պիտի չըլլար ողորմութիւն ակնկալելինք Աստուծմէ երբ մենք անողորմ ենք մեր անձերուն նկատմամբ:

Վերել ըսուածներէն պէտք չէ հետեւցնենք այն, որ Աստուծոյ բարի ըլլալը պայմանաւորուած է մեր բարի ըլլալով: Աստուած բարի է եւ բարի պիտի մնայ իրեն դառնանք կամ ոչ: Յիշեցէք որ Աստուած Ադամին եւ Եւային փրկութեան խոստում մը տուաւ երբ Ադամ եւ Եւա գղջումի կամ ապաշխարութեան նուագագոյն տրամադրութիւն անգամ ցոյց չէին տուած (Մն 3.15): Աստուածաշունչի գիրքերէն որեւէ մէկուն մէջ չենք կարդար որ Ադամ եւ Եւա գղջացին եւ ապաշխարեցին:

Աստուած փրկութիւն խոստացաւ երբ փրկութի՛ւն աղաղակող չկար: Աստուած փնտոեց Ադամն ու Եւան երբ անոնք կը փորձէին փախչիլ իրմէ եւ պահուրտիլ «պարտէզին ծառերուն մէջ» (Մն 3.8): Աստուած այսօր ալ կը շարունակէ փնտոել պատմութեան բոլոր Ադամներն ու Եւաները, իսկ անոնք իրենց յատուկ ծառեր շինած են, որոնց ետին կը փորձեն պահուրտիլ ամէնուրեք Աստուծմէ:

Սիրելի՛ բարեկամ, Աստուած պատուիրեց Երեմիա մարգարէին որ երթայ եւ Յուդայի բնակիչներուն խօսի իրենց չար նամբաներէն հրաժարելու մասին, եւ ըսաւ. «Թերեւս մտիկ ընեն եւ ամէն մարդ իր չար նամբայէն դառնայ, ես ալ գղջամ այն չարիքին համար որ անոնց չար գործերուն պատճառով իրենց վրայ բերել կը խորհիմ» (Եր 26.2-3): Երբ կը հեռանաս Աստուծմէ, գլխուդ եկած չարիքներուն պատճառն ու պատասխանատուն դո՛ւն կ'ըլլաս եւ ո՛չ թէ Աստուած: Նոյնը Երեմիա մարգարէն կ'ըսէ. «Զէ՞ որ ասիկա դուն քու վրադ բերիր քու Տէր Աստուածդ ձգելով, երբ անիկա նամբուն մէջ քեզի առաջնորդութիւն կ'ընէր» (Եր 2.17): Աստուծմէ հեռանալը աղիտաբեր է:

## ԱՍՏՈՒԱԾՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ինչո՞ւ աստուածսիրութեան եւ մարդասիրութեան պատուիրանները իրարմէ անբաժան կը ներկայացուին (Մր 29–31, Մտ 22.37–39, Ղկ 10.27): Աստուածասէր եղողը չի՛ կրնար մարդասէր չըլլալ: Ան որ աստուածամօտ է, նաեւ մարդամօտ պէտք է ըլլայ: Աստուածսիրութիւնն ու մարդասիրութիւնը միեւնոյն նիւթին վրայ հասունցած երկու պտուղներ են: Միեւնոյն երկնակամարին վրայ ինքնուրուի պսպղացող երկու աստղեր են: Անոնք երկաթուղիի գուգահեռ երկու գիծերուն նման գուգընթացաբար կ'առաջնորդեն մէկ եւ նոյն տեղը՝ արքայութիւն:

Ինչպէս մարմինը կը մեռնի առանց շունչի, այնպէս ալ մարդկային մեր հոգիները կը մեռնին առանց սիրոյ: Սէրն է որ կեանք կը պարգեւէ մեր հոգիներուն: Ինչպէս արեւագունդին լոյսն ու կրակը իրարմէ չեն բաժնուիր, նմանապէս ալ այս երկու առաքինութիւնները իրարմէ չեն բաժնուիր: Ամպը իրական ամպ ընողը անոր մէջի ջուրն է, իսկ աստուածսիրութիւնը իրական աստուածսիրութեան վերածողը անոր ետին կանգնող մարդասիրութիւնն է:

Ինչպէս իր ներսիդին առատ ջուր ունեցող ամպն է որ կ'անձրեւէ եւ կ'ոռոգէ ցամփած արտերը, այնպէս ալ Քրիստոսի առատ սիրով լիացածները միայն կրնան առատապէս յագեցնել ծարաւը կաթիլ մը սիրոյ պապակը ունեցողներուն: Զմմանինք ամպերու որոնք կ'որոտան եւ սակայն տեղացնելիք անձրեւ չունին: Մեր եղբայրսիրութեամբ փաստենք որ լոկ որոտացող ամպեր չենք:

Մարդասէր ըլլալը մահէն կեանքի անցնիլ է: *«Մենք գիտենք՝ թէ մահէն կեանքի անցած ենք. ապացոյց՝ որ մեր եղբայրները կը սիրենք»* (Ա.Յհ 3.14): Ամէն բան որ իր ապացոյցը ունի, վաւերական կը նկատուի: Մեր եղբայրսիրութիւնը ապացոյց մըն է որ Քրիստոսով եւ Քրիստոսի մէջ յայտնուած նոր կեանքին ժառանգորդներն ենք: Եթէ երբեք մեր նմանը սիրելը մահէն կեանքի անցած ըլլալու ապացոյց է, ուրեմն, մեր նմանը չսիրելը՝ մեր մեռած ըլլալուն ապացոյցն է: Փաստենք հետեւաբար, որ մահէն կեանքի անցած ենք՝ սիրելով մեր նմանը: Անմարդասիրութիւնը մահասիրութիւնն է:

Անմարդասիրութիւնը մահասիրութիւնն ըլլալուն կողմին նաեւ մարդասպանութիւնն է: *«Ով որ իր եղբայրը կ'ատէ՝ մարդասպան մըն է»* (Ա.Յհ 3.15): Կայէնին եղբայրատեցութիւնը չէ՞ր որ զինք առաջնորդեց իր եղբայրը սպաննելու (Ծն 4.8, Ա.Յհ 3.12): Օրէնքի ուսուցիչներուն եւ Փարիսեցիներուն ասելութիւնը չէ՞ր որ զիրենք մղեց Քրիստոսի մահը պահանջելու: Սաւուղ ալ կ'ատէր Դաւիթը եւ սպաննել կ'ուզէր զանիկա:

Ի՞նչ ահաւոր բան է ատել մարդը որ Աստուծոյ գուրգուրանքին եւ սիրոյն առարկան է: Ով գիտէ թէ որքա՛ն կը խոցոտենք Աստուծոյ քաղցր սիրտը երբ կ'ատենք իր սիրով ու իր սիրոյն համար ստեղծուած մարդը: Պէ՞տք է խոցոտել մարդը՝ որուն վերքերը Աստուած իր վերքերով բուժեց:

Պէ՞տք է անհանգստացնել մարդը որուն մէջ Աստուած հանգչիլ կ'ուզէ: Մեզմէ ո՞վ պիտի ուզէր որ իր սիրասուն գաւակը բոլորին ատելութեան առարկան դառնար: Մեզմէ ո՞վ պիտի ուզէր որ իր ուրախութեան պատճառը եղող իր գաւակը՝ ուրիշներուն նախանձին պատճառը դառնար:

Ինչպէս որ մենք չենք ուզեր որ մարդիկ ատեն մեր սիրածները, այնպէս ալ Աստուած չ'ուզեր որ ատենք մեր նմանները՝ որոնց հանդէպ անչափ սէր ունի ան: Ահա թէ ինչո՞ւ ըսաւ. «*Ինչպէս ես ձեզ սիրեցի՝ դուք ալ իրար սիրեցէ՛ք*» (Յե 13.34): Սա խօսքով, Քրիստոս կը թելադրէ որ իրար սիրենք այնքան եւ այնպէս՝ որքան եւ ինչպէս ի՞նք մեզ սիրեց: Ան մեզ ա՛յնքան սիրեց՝ որ իր կեանքը գոհեց մեզի համար: Հետեւաբար, Քրիստոսի ըսել ուզածը այն է, որ մենք ա՛յնքան պէտք է իրար սիրենք, որ պատրաստ ըլլանք մեր կեանքն իսկ տալու իրարու համար:

Միայն զԱստուած սիրողը չէ որ քրիստոնեայ է: Քրիստոս միայն զԱստուած չէր որ սիրեց, այլեւ՝ մարդը: Քրիստոս կատարեալ աստուածաւէր եւ կատարեալ մարդաւէր էր: Ան կատարեալ աստուածսիրութեան եւ կատարեալ մարդասիրութեան ախոյեանը հանդիսացաւ:

Քրիստոնէութիւնը աստուածսիրութեան եւ մարդասիրութեան կրօ՞նք է: Ա՛յս է նաեւ Նոր Կտակարանին ուսուցումը. «*Ով որ զԱստուած կը սիրէ, պէտք է իր եղբայրն ալ սիրէ*» (Ա.Յե 4.21): 13-րդ դարու Վարդապետ՝ Յովհաննէս Երզնկացի, կ'ըսէ. «*Ամէն մարդ որ զԱստուած կը սիրէ՝ պէտք է սիրէ նաեւ իր եղբայրը, որովհետեւ մեր եղբայրը սիրելով է որ մեր սէրը յայտնած կ'ըլլանք Աստուծոյ նկատմամբ*»:

Մարդիկ իրե՞նք է որ մեր սիրոյն կարօտ են եւ ո՛չ թէ Աստուած: Յովհաննէս առաքեալ կ'ըսէ. «*Ով որ չի սիրեր իր եղբայրը՝ որ կը տեսնէ, ի՞նչպէս կրնայ սիրել զԱստուած՝ որ չի տեսներ*» (Ա.Յե 4.20): Անտեսանելիին հանդէպ մեր սէրը կ'ապացուցուի տեսանելիին հանդէպ մեր ցուցաբերած սիրով: Ի՞նչ է իմաստը «*Ով որ չի սիրեր իր եղբայրը՝ որ կը տեսնէ...*» բառերուն: Առաքեալին ըսել ուզածը այն է, որ եթէ չենք սիրեր գործնականօրէն օգտակար դառնալ մեր եղբօր որ կը տեսնենք կարօտեալ եւ թշուառ վիճակի մը մէջ, ինչպէ՞ս կը յանդգնինք մենք զմեզ աստուածաւէր յայտարարել:

Արդարեւ, ի՞նչ օգուտ երբ սէր կը ցուցաբերենք Աստուծոյ հանդէպ որուն կարօտ չէ բնաւ, եւ սիրոյ ո՛չ մէկ կաթիլ մարդոց՝ որուն այնքան կարօտ են: Ի՞նչ օգուտ երբ կը սիրենք զԱստուած բայց չենք սիրեր մարդը որուն սիրոյն համար Աստուծոյ սիրտը սրախողխող եղաւ իսաչին վրայ: Ինչո՞վ կ'օգտուինք երբ սիրոյ անթիւ մարգարիտներ ունինք մեր սիրտի գանձանակին մէջ, մինչ մեր շրջապատը կը լեցնեն սիրոյ անթիւ մուրացկաններ: Սիրոյ դրամներու կարիքը ունեցող մարդոց թիւը շա՛տ աւելի է քան ոսկեայ դրամներու կարիքը ունեցող մարդոց:

Ջանանֆ երկրի վրայ ձեռք ձգել աստուածասէր եւ մարդասէր ըլլալու վարժութիւնը, որովհետեւ յաւիտենականութեան մէջ մեր ժամանակը աստուածսիրութեամբ եւ մարդասիրութեամբ պիտի անցընենք:

## ՄԱՐԴ ԶԻ՝ ԿՐՆԱՐ ԵՐԿՈՒ ՏԵՐԵՐՈՒ ԾԱՌԱՅԵԼ

*«Ոեւէ մարդ չի կրնար երկու տէրերու ծառայել. որովհետեւ կա՛մ մէկը պիտի սիրէ եւ միւսը ատէ, կա՛մ մէկը պիտի մեծարէ եւ միւսը արհամարհէ: Նոյնպէս ալ դու՛ք, չէ՛ք կրնար Աստուծոյ ծառայել, որքան ատեն որ կը ծառայէ՛ք դրամին» (Մտ 6.24):*

Աշխարհի մէջ ապրող ամէն մարդ կամայ թէ ակամայ ծառայութիւն մատուցանող էակ մը կը նկատուի: Կարելորը այն է, թէ որո՞ւ կամ ի՞նչ բանի է որ կը ծառայենք: Ընդհանրապէս մենք կը ծառայենք ա՛յն բանին կամ ա՛յն անձին որ կը սիրենք: Եթէ զԱստուած կը սիրենք, բնականաբար պիտի ծառայենք Աստուծոյ, իսկ եթէ դրամը կը սիրենք՝ դրամին է որ պիտի ծառայենք: Երկուքը սիրել եւ երկուքին հաւասարապէս ծառայել կարելի բան չէ:

Ասորեստանի հողերուն վրայ գերութեան մէջ եղող Յուդայի բնակիչներուն վերաբերեալ կը կարդանք. *«Թէպէտ Տիրոջմէ կը վախնային, բայց իրենց կուտօններուն ալ ծառայութիւն կ'ընէին» (Դ.Թգ 17.41):* Ոչինչ փոխուած է պատմութենէն: Այսօր ալ քիչ չէ թիւը այն մարդոց, որոնք թէեւ կը յայտարարեն թէ կը վախնան Աստուծմէ, եւ սակայն, երբեք ալ չեն փաշուիր ապրելու կոպաշտ կեանք մը: Կոպաշտութիւնը միայն փայտէ կամ քարէ շինուած կուտօն պաշտելը չէ: Ինչ բան որ կը սիրենք, ինչ բանի որ կապած ենք մեր սիրտն ու հոգին, ատիկա մեզի համար կը դառնայ կուտօն:

*«Անոնք Տիրոջմէ կը վախնային, նաեւ իրենց աստուածներուն ծառայութիւն կ'ընէին...» (Դ.Թգ 17.33):* Զարմանալի թող չթուի այս խօսքը: Մեզմէ ո՞վ չէ հանդիպած այնպիսի դրամատէրներու որոնք ո՛չ կ'ուզեն դրամէ հրաժարիլ եւ ո՛չ ալ կ'ուզեն Աստուծմէ հեռանալ: Մարդիկ այնքա՛ն անձնասէր դարձած են որ կը փորձեն իրենց մէկ ձեռքին մէջ ունենալ Աստուած եւ միւս ձեռքին մէջ ունենալ դրամ: Այդպիսի մարդիկ կամաւորապէս կը մոռնան մեր Տիրոջ խօսքը. *«Մարդ չի կրնար երկու տէրերու ծառայել»:* Հետաքրքրական է որ Քրիստոս "տէր" բացատրութիւնը կը գործածէ նիւթեղէն աշխարհին համար, աւելի նեղ առումով մը՝ դրամին համար:

Դրամը ի՛նքն ալ «տէր» մըն է այն իմաստով, որ կատարելապէս կը տիրէ եւ կ'իշխէ զինք սիրողներուն սիրտին վրայ: Դրամը կը ստրկացնէ հոգիները բոլոր անոնց՝ որոնք պաշտամունք կը մատուցանեն իրեն: Ան բռնակալ եւ դաժան տէր մըն է: Զկա՛յ ազատութիւն դրամասէր մարդոց համար: Զկա՛յ հանգիստ եւ խաղաղութիւն անոնց համար: Դրամը անագորոյն բռնապետ մըն է որ մեզ կը հեռացնէ մեր գթառատ Փրկիչէն:

Դրամասէր մարդուն համար դրամը արգելք մըն է սիրելու եւ վստահելու Աստուծոյ: Զարեհ Ա.բ. Ազնաւորեան կ'ըսէ. *«Դրամ ունեցող մարդը Աստուծմէ հեռանալու փորձութեան ենթակայ է: Ինչո՞վ դրամը մարդը կը հեռացնէ Աստուծմէ: Կը հեռացնէ անով, որ փոխանակ իր*

վստահութիւնը Աստուծոյ վրայ դնելու, կը դնէ դրամին վրայ: Դրամը կարծէ՛ք գԱստուած փոխարինելու կու գայ: Պօղոս առաքեալի, ինչպէս նաեւ Յակոբոս առաքեալի մտածողութեան մէջ կը տեսնենք որ դրամը կու՛նք նկատուած է: Դրամասիրութիւնն ու ազահութիւնը կոապաշտութիւն նկատուած են, որովհետեւ դրամը սիրող մարդուն համար դրամը տեսակ մը կու՛նք կը դառնայ: Կու՛նք մը, որուն սիրահարը կը դառնայ, անոր ծառայ ու հպատակ եւ զանհկա կ'ընդունի իբրեւ տէր»:

Կոապաշտութեան համագոր խօսք մը չէ՞ ժողովրդական բացատրութիւնը. «Վերը Աստուած, վարը դրամ» կամ «Դրամը ամէն բան կ'ընէ»: Դրամը ամէն բան չի՛ կրնար ընել: Օրինակ, դրամը չի՛ կրնար մարդոց սիրտերը սիրով եւ խաղաղութեամբ լեցնել իրարու նկատմամբ: Դրամը անկարող է աստուածսիրութեան եւ աստուածպաշտութեան առաքինութիւններով զարդարել մեր հոգիները: Դրամը երբեք չի կրնար մեզ առաջնորդել հաւատքի, փրկութեան եւ արդարութեան:

Դրամը կրնայ մեզ տիրող եւ իշխող դարձնել աշխարհի մէջ, բայց նաեւ կրնայ տիրապետութիւն եւ իշխանութիւն հաստատել մեր ներաշխարհին վրայ: Այլ խօսքով, դրամը մեզ կը վերածէ իշխուած իշխողներու, տիրապետուած տիրապետողներու:

Յիշեցէ՛ք մեծահարուստ երիտասարդին պարագան (Մր 10.17-23): Ան վստահաբար իր ունեցած հարստութեան պատճառով տիրող ներկայութիւն մըն էր իր շրջապատին մէջ. բայց միւս կողմէն չենք կրնար ուրանալ որ ան միաժամանակ տիրապետուած եւ ստրկացուած անձ մըն էր իր հարստութեան կողմէ, որովհետեւ երբ Քրիստոս կոչ ուղղեց իրեն իր ունեցածը ծախելու եւ աղքատներուն տալու, ան ո՛չ միայն չհնազանդեցաւ կոչին, այլեւ տրտում-տխուր հեռացաւ Քրիստոսէ:

Դրամ ունենալը սխալ բան չէ: Սխալը դրամին կապուիլն է: Սխալը դրամէն չկարենալ բաժնուիլն է: Մեծահարուստ երիտասարդը դրամէն բաժնուելու Տէրունական հրահանգին չէր կրցած հնազանդիլ: Երբ բան մը կայ որմէ չենք կրնար բաժնուիլ, կը նշանակէ թէ այդ բանին ստրուկը դարձած ենք:

Դրամէն շա՛տ աւելին կ'արժէ հօրեանական տուն մը կամ գաւակ մը: Աբրահամ երբ հրաման ստացաւ Աստուծոյ կողմէ բաժնուելու իր հօրեանական տունէն (Ծն 12.1) կամ իր միածին գաւակէն (Ծն 22.2-3), ան կատարեալ հնազանդութիւն ցուցաբերեց: Պէտք չէ թիւր մեկնութեան երթալ ըսելու համար, որ Աբրահամ իր ամբողջ սիրտով չէր սիրեր իր Իսահակ որդին: Ամէն կասկածէ վեր է որ Աբրահամ իր ամբողջ սիրտով կը սիրէր իր որդին, բայց ան իր սիրտը լիովին կապած էր Աստուծոյ: Իրեն համար Աստուծոյ հրահանգին հնազանդիլը կ'արժէր հազար հատ Իսահակ: Աբարահիմ սրտին տէրը Աստուած ի՛նքն էր եւ ո՛չ թէ դրամը, գաւակը, հօրեանական տունը կամ ազգականները:



Սիրելի՛ ընթերցող, մի՛ ընդունիր գերեզարուիլ ուեւ մէկու մը կամ որեւէ բանի մը կողմէ: Աստուծմէ գատ ուրիշ բան չսիրելու կոչ մը չէ որ կ'ուղղեմ քեզի, այլ՝ գԱստուած ամէն բանէ աւելի սիրելու կոչ մը:

## ԻՆՉՈ՞Ւ ԱՍՏՈՒԱԾ ՄԵՁ ԱՏԵՂԾԵՑ

Աստուածաշունչ մատեանը կը հաստատէ որ *«Տէրը ամէն բան իր նպատակին համար ստեղծեց»* (Առ 16.4): Այս խօսքը յստակօրէն ցոյց կու տայ որ Աստուած յատուկ նպատակով մը ստեղծեց նաեւ մարդը: Արդ, հարց կու տանք թէ ի՞նչ էր այն նպատակը որուն համար Աստուած ստեղծեց մեզ: Աստուած ի՞նչ կու տայ այս հարցումին պատասխանը րսելով. *«Զանոնք իմ փառքիս համար ստեղծեցի...»* (Յս 43.7):

Աստուած փառքի եւ փառաւոր Աստուած մը ըլլալով, չուզեց իր փառքը միայն իրե՛ն համար պահել: Աստուծոյ համար ուրախութիւն է մեզ իր փառքին մասնակից դարձնել: Աստուած իր փառքէն բան չի կորսնցնէր եթէ մեզ իր փառքին մասնակից դարձնէ եւ ո՛չ ալ իր փառքին վրայ բան կ'աւելնայ եթէ երբեք զինք փառաւորենք առաւօտէն մինչեւ իրիկուն:

Աստուած անկարօտ Աստուած է, հետեւաբար, ան չստեղծեց մեզ որովհետեւ պէտք ունէր մեզի, կամ որովհետեւ փառաւորուիլ ու սիրուիլ կը մուրար, այլ որովհետեւ, իր կամքն ու ծրագիրն էր իր կեանքէն կեանք շնորհել մեզի, իր լիութենէն՝ լիութիւն, իր փառքէն՝ փառք, իր գորութենէն՝ գորութիւն եւ իր երջանկութենէն՝ երջանկութիւն:

Երբ մարդիկ մոռնան որ իրենք ստեղծուած են Աստուծոյ կողմէ եւ Աստուծոյ համար, երբ անգիտանան որ իրենք կոչուած են ժառանգելու գԱստուած եւ ժառանգուելու Աստուծոյ կողմէ, երբ չմտաբերեն որ իրենք սահմանուած են յաւիտեանական կեանք ունենալու եւ ապրելու Աստուծոյ հետ եւ Աստուծոյ գրկին մէջ, երբ չյիշեն որ իրենք ստեղծուած են հրեշտակներուն փառակից եւ փառաբանակից ըլլալու համար, այն ատեն անոնք կը սկսին ապրելու անաստուածահանոյ կեանք մը, անառակ կեանք մը, մեղքի կեանք մը: Բայց այդ ընթացքը երկար չի տեսեր. ուշ կամ կանուխ, ծանր փորձութիւններ կու գան զիրենք ինքնագիտակցութեան բերելու: Անոնց խիղները կ'արթննան եւ կը սկսին տանջել զիրենք:

Երբ մեղքով բթացած մարդոց խիղները արթննան իրենց թմբիրէն, այն ատեն անոնց հոգիները կը սկսին բողոքել եւ անոնց սիրտերը ընդվզիլ իրենց դէմ: Անոնց սիրտերը դէպի Աստուած ետդարձ կը սկսին պահանջել: Ա՛յն ատեն է որ մարդիկ կ'անդրադառնան թէ իրենք իրաւունք չունին ապրելու Աստուծմէ հեռու կեանք մը: Կը գիտակցին թէ իրենց սիրտերուն բացարձակ իրաւունքն է բարձրեալ Աստուծոյ շունչին ներքեւ գտնուիլը: Ինչպէս զաւակ մը իրաւունք չունի լքելու եւ մոռնալու իր մայրը, այնպէս ալ մարդ արարածը իրաւունք չունի լքելու գԱստուած:

Միթէ մենք ալ Աստուծոյ զաւակները ըլլալու համար չե՞նք ստեղծուած (Եբր 2.12-13): Զգո՛յ՜ ըլլանք, չըլլայ որ Աստուծոյ խօսքը ըսուած Նսայի մարգարէին միջոցաւ մեզի եւս պատշանի. *«Զաւակներ մեծցուցի եւ բարձրացուցի, բայց անոնք ինծի դէմ ապստամբեցան»* (Նս 1.2): Աստուծոյ դէմ ապստամբիլը՝ անոր դէմ յեղափոխութիւն

կազմակերպելը չէ, այլ անոր տիրութիւնն ու իշխանութիւնը չճանչնալն է: Ահա թէ ինչո՞ւ յաջորդ համարին մէջ Աստուած կ'ըսէ. *«Եզր իր տէրը կը ճանչնայ ու էշը իր տիրոջ մտուրը, բայց Իսրայէլ գիս չի ճանչնար, իմ ժողովուրդս չ'իմանար»* (Յս 1.3):

Մեր կեանքերուն մէջ Աստուծոյ տեղ չտալը, զԱստուած բանի տեղ չդնելը՝ անոր դէմ ապստամբիլ է: Տուեալ համարին ըսել ուզածը այն չէ որ զԱստուած չճանչցող մարդը եզեն եւ էշէն տարբերութիւն չունի, այլ ատոր ըսել ուզածը այն է, որ իր տէրը ճանչցող եզր եւ իր մտուրը ճանչցող էշը աւելի՛ լաւ է քան այն մարդը որ չի ճանչնար եւ չի դաւանիր զԱստուած իբրեւ իր Տէրը:

Զի՛ բաւեր ընդունիլ Աստուծոյ տիրութիւնը կամ Տէր ըլլալը, այլ պէտք է ընդունիլ գանիկա իբրեւ մե՛ր Տէրը: Իսկ գայն իբրեւ մեր Տէրը ընդունիլը՝ գայն Տէ՛ր, Տէ՛ր կոչելը չէ, այլ անոր կամքը կատարելն է (Մտ 7.21), անոր վստահիլն ու ապաւինիլն է, անոր թագաւորութեան աշխարհի մէջ տարածման եւ հաստատման համար ժրջանօրէն աշխատիլն է:

Աստուծոյ փառքին համար ստեղծուած մարդը պէտք է Աստուծոյ փառքը պատմէ: *«Ես այս ժողովուրդը ինծի համար ստեղծեցի, անոնք իմ գովութիւնս պիտի պատմեն»* (Յս 43.21): Մարդուն համակ կեանքը Աստուծոյ գովքը հիւսող, Աստուծոյ փառք բերող, Աստուծոյ փառաբանութիւնը կատարող կեանք մը պէտք է ըլլայ:

Ցաւալի է որ Աստուծոյ գովքը հիւսելու համար ստեղծուած մարդիկ ոչ միայն իր գովքը չեն հիւսեր, այլ ամէն տեսակի աստուածուրաց խօսք եւ արտայայտութիւն կ'ունենան: *«Ո՞ւր է Աստուած»* կը բացականչեն ամէնուրեք Աստուծոյ երեսն ի վեր: *«Ինչո՞ւ բան մը չըրբաւ»* կ'աղաղակեն անդու կերպով գործող Աստուծոյ ներկայութեան: *«Թող բան մը ընէ՛»* կը հրամայեն, որպէս թէ Աստուած իրենց ծառան եւ իրենք Աստուծոյ վարպետները ըլլային:

Տակաւին, մենք ստեղծուեցանք որպէսզի սիրալիր եւ քաղցր յարաբերութեան մէջ ըլլանք Աստուծոյ հետ, որպէսզի աշխարհ գալով՝ մեզի հետ զԱստուած բերենք աշխարհ, որպէսզի Աստուծոյ լուսաւորուած՝ դառնանք լո՛յսը աշխարհի, Աստուծոյ կենսաւորուած՝ դառնանք կեանքը աշխարհի: Աստուծոյ համար մեծ վիշտ է տեսնել աշխարհի վրայ իշխելու համար ստեղծուած մարդիկ իշխուած աշխարհին կողմէ: Աստուծոյ համար տրտմութիւն է ականատես ըլլալ որ մարդիկ աշխարհը լեցնելու փոխարէն լեցունին աշխարհով:

Սիրելի՛ ընթերցող, Աստուած մեզ ստեղծեց որպէսզի իր յաւերժութիւնը տայ մեզի, իր ուրախութիւնն ու խաղաղութիւնը պարգեւէ մեզի, իր սէրն ու սրբութիւնը թափէ մեր վրայ: Ան մեզ ստեղծեց որպէսզի սիրով լեցուն յաւիտենականութիւն մը շնորհէ մեզի: Աստուած յաւիտենական սէր է, եւ անոր համար ալ խոստացաւ տալ մեզի յաւիտենականութիւն մը որ ամբողջութեամբ սէր է:

Ինչպես մանուկ մը իր ուրախութիւնն ու ապահովութիւնը իր մօրմէն հեռու տեղ չի փնտոեր, այնպէս ալ մենք, մեր ուրախութիւնն ու ապահովութիւնը Քրիստոսէ հեռու տեղ չփնտոենք:

## ԽԱԶԻՆ ՀՐԱՇԱԼԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԸ

Խաչն'վ էր որ մարդակարօտն Աստուած եւ աստուածակարօտ մարդը իրարու հանդիպեցան եւ կը հանդիպին: Խաչի'ն վրայ գամուած Քրիստոսի անձին մէջ էր, որ իրար փնտոող Աստուած եւ մարդ գտան իրար: Խա'չը, երկինքն ու երկիրը իրարու մօտեցուց: Խա'չը, հրեղէններն ու հողեղէնները բարեկամացուց:

Խա'չը, մեղքի խաւարին մէջ ապրող մարդիկը լոյսով ողողեց եւ զանոնք լոյսի վկաներն ու ջահակիրները դարձուց: Խա'չը անչափ համարձակութիւն տուաւ մեղքի իբրեւ հետեւանք իրենց համարձակութիւնը կորսնցուցած մարդոց, եւ կաշկանդեց Սատանան որ ամենայն համարձակութեամբ կը գործէր:

Խա'չը եղա'ւ այն սիւնը որուն կոթնեցաւ եւ կը կոթնի իյնալու վրայ եղող մարդը: Խա'չը եղա'ւ այն վէմը որուն վրայ շինուողը անսասան կը մնայ առ յաւէտ: Եղա'ւ այն հիմը որուն վրայ կառուցուեցաւ տիեզերական փրկութեան եւ եղբայրութեան շէնքը: Եղա'ւ այն սուրը որով պատուուեցաւ Աստուած եւ մարդ իրարմէ բաժնող տանարին վարագոյրը: Եղա'ւ շնորհքի այն աթոռը որուն գահակալը եղաւ Քրիստոս եւ որուն մօտեցողը թողութիւն ստացած տուն մեկնեցաւ:

Խա'չը եղա'ւ մեզ կատարելութեան եւ Կատարեալին առաջնորդող տապանը: «*Ամէն բան կատարուեցաւ*» (Յե 19.30): Քրիստոս այս խօսքը խաչին վրայ արտասանեց, ցոյց տալու համար որ ամէն բանի կատարումը եւ կատարելութեան ձեռք բերումը իրագործելի է մի'այն խաչով: Այո', ամէն բան խաչն'վ էր որ կատարուեցաւ: Խաչն'վ էր որ մարդկութեան պարտքը վճարուեցաւ:

Խաչն'վ էր որ Հին Կտակարանի ֆահանայութիւնը իր աւարտին հասաւ, եւ Նոր Կտակարանի ֆահանայութիւնը սկզբնաւորուեցաւ: Խաչն'վ էր որ Աստուծոյ տիեզերական փրկագործութեան ծրագիրը իրագործուեցաւ: Խաչն'վ էր որ Օրէնքն ու մարգարէութիւնները իրենց լրումը գտան: Խաչն'վ էր որ Աստուծոյ շնորհքին դուռը լայնօրէն բացուեցաւ Օրէնքին ստրկութենէն ձերբազատիլ ուզող մարդկային ցեղին առջեւ:

Ու դեռ, խաչն'վ էր որ այս աշխարհի իշխանը՝ Սատանան, հեռացուեցաւ իր իշխանութենէն եւ գօրութենէն: Խաչն'վ էր որ կատարուեցաւ Հին Կտակարանի մէջ յիշուող Աստուծոյ տանարին, Շարաք օրուան, ֆահանայութեան, եւ կենդանական բոլոր գոհերուն վերաբերող օրէնքները, որոնք շուքն էին գալիք իրականութեանց, «*իսկ իրականութիւնը Քրիստոսի մէջ է*» (Կղ 2.17 Հմմտ Եբր 10.1):

Խա'չը եղա'ւ Յակոբ նահապետին յայտնուած այն «*սանդուխը որ երկրի վրայ հաստատուած էր եւ որուն գլուխը երկինք կը հասնէր*» (Մն 28.12): Այդ սանդուխին մէկ ծայրը երկրի վրայ հաստատուած էր, ցոյց տալու համար որ Աստուած ներկայ էր իր ժողովուրդի կեանքին մէջ, կը

տիրապետեր հոն, եւ կ'առաջնորդէր զանոնք, իսկ միւս ծայրը կը հասներ մինչեւ բարձունքը երկինքներուն, լեցնելու համար զանոնք խնդրանքներովը տառապակոծ մարդկութեան:

Հրեշտակները այդ խաչասանդուխէն կ'ելլէին եւ կ'իջնէին, Աստուծոյ օգնութիւնն ու օրհնութիւնը բերելու համար մարդոց: Ինչպէս հրեշտակները կ'ելեւէջէին այդ սանդուխին վրայէն Աստուած եւ մարդ փոխ յարաբերութեան մէջ դնելու համար, այնպէս ալ Քրիստոս, խաչի'ն ֆամբով կ'ելեւեջէ մեր կեանքներուն մէջ, մեզ սերտ ու սիրոյ յարաբերութեան մէջ պահելու իր Հօրը հետ:

Խաչով ուրեմն, հաստատուեցաւ նոր եւ սիրալիր յարաբերութիւն մը Աստուծոյ եւ մարդուն միջեւ: Խաչը եղա՛ւ արարիչն ու արարածները իրար զօդող ոսկեգօծ օղակը: Եղա՛ւ ֆանապարհ մը, ուրկէ Աստուած եկաւ մարդուն եւ ուրկէ մարդը գնաց Աստուծոյ: Եղա՛ւ կամուրջ մը, որուն բարձունքին վրայ Ստեղծիչը հանդիպեցաւ ստեղծուածին եւ անոր ֆակատին դրոշմեց նոր ստեղծագործութեան կնիքը:

Խաչը եղա՛ւ Մովսէսի այն գաւազանը, որով Աստուծոյ ծարաւը ունեցող մարդիկ, զարկի'ն, անխո՛նջ կերպով զարկի'ն, յարատեւութեամբ զարկի'ն, զարկի'ն մինչեւ փշրեցի'ն մեղքերով ֆարացած իրենց սիրտերը, անկէ բղիտեցնելու համար արցո՛ւնք ապաշխարութեան, դա՛նն արցունք՝ դա՛նն գղջումի իբրեւ արտայայտութիւն, անով յագեցնելու համար ծարաւը Աստուծոյ եւ շիջեցնելու համար կրակը մեղքին:

Խաչը եղա՛ւ Ահարոնի այն ֆալող գաւազանը, որուն դիմաց ո՛չ միայն փարաւոնի իմաստուններուն եւ կախարդներուն վիշապները կու տրուեցան (Ել 7.10-12), այլ նաեւ ու մանաւանդ, անոր դիմաց կու տրուեցաւ այն *«մեծ վիշապը, այն սոռչին օձը, որ քանսարկու եւ Սատանայ կը կոչուի եւ որ ամբողջ աշխարհը մոլորեցուց»* (Յլտ 12.9):

Խաչը եղա՛ւ կենսատու այն ծառը, որ գԱստուած տեսնել ուզող մարդիկ, Աստուծոյ ընկերակցութիւնը ձեռք ձգել փափաքող մարդիկ, առին եւ իրենց կեանքի անդաստաններուն մէջ տնկեցին: Այդ խաչածառը ա՛յնքան մեծցաւ որ հսկայ ծառի մը վերածուեցաւ. ծառի մը, որուն շուքին ներքեւ բնակութիւն հաստատելու եկան ամէ՛ն գոյնէ, ամէ՛ն ազգէ, ամէ՛ն ցեղէ հաւատացեալներ. ծառի մը, որուն վրայ գԱստուած տեսնել ուզող Զակէոսներ բարձրացան պատմութեան ընթացքին, աւելի մօտէն եւ աւելի յստակ տեսնելու համար աստուածորդին:

Խաչը եղա՛ւ կրակէ այն սիւնը, որ անապատագնաց Իսրայէլի որդիներուն ցոյց տուաւ խոստացեալ Քանանու երկրին ֆամբան: Ինչպէս անապատներուն մէջէն գացող Իսրայէլի որդիները ցերեկը ամպին կը հետեւէին եւ գիշերը կրակէ սիւնին որպէսզի հասնէին խոստացեալ երկիրը, այնպէս ալ ֆրիստոնեայ մարդը, պարտի խաչով առաջնորդուի կեանքի այս անապատին մէջ, որպէսզի կարենայ ապահովութեամբ եւ յաղթական հասնիլ խոստացեալ աստուածակեդրոն թագաւորութեան:

Ապաւինի՛նք իսաչին, քանի որ անկա Աստուծոյ թագաւորութեան  
բանալին է: Փարիսնք իսաչին որ մեր փարելի Փրկիչին անկոտրելի ցուպն է:

## ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ ԱՆԷ՞ԾՔ, ԹԷ՛ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Հարստութիւնը կը դառնայ անէծք երբ մեր օրհնութիւնը անոր մէջ կը տեսնենք: Սողոմոն իմաստուն կ'ըսէ. «Տիրոջ օրհնութիւնն է որ հարստութիւն կու տայ ու անոր հետ տրտմութիւն չի խառներ» (Առ 10.22): Տուեալ համարին մէջ երկու հիմնական գշտարտութիւններ կան որոնց նշումը կ'արժէ.

*Առաջին.*– «Տիրոջ օրհնութիւնն է որ հարստութիւն կու տայ» խօսքով, հեղինակը ըսել կ'ուզէ, որ հարստութիւնը Աստուծոյ օրհնութեան արդիւնքն է եւ ո՛չ թէ օրհնութիւնը հարստութեան արդիւնքն է: Եթէ երբեք մենք նիւթապէս աղֆատ ենք այդ չի՛ նշանակեր որ գուրկ ենք Աստուծոյ օրհնութենէն: Աստուծոյ օրհնութիւնը կրնայ հաւասարապէս ներկայ ըլլալ թէ՛ աղֆատ եւ թէ՛ հարուստ մարդուն կեանքին մէջ: Աստուծոյ օրհնութիւնը վայելելը պայմանաւորուած չէ մեր աղֆատ կամ հարուստ ըլլալով: Եթէ երբեք մենք Աստուծոյ կապուած մարդիկ ենք, ո՛չ հարստութիւնը կրնայ մեզ հեռացնել Աստուծոյ օրհնութիւնը վայելելու պարգեւէն եւ ո՛չ ալ աղֆատութիւնը:

*Երկրորդ.*– «Անոր (հարստութեան) հետ տրտմութիւն չի խառներ»: Կարելոր գշտարտութիւն մը կայ թափնուած այս բառերուն ետին գոր պէտք է հանդէս բերել: Կան մարդիկ որոնք այն սխալ համոզումն ու տպաւորութիւնը ունին, ըստ որուն, Աստուած չ'ուզեր որ մարդիկ վայելեն իրենց ունեցած հարստութիւնը եւ ուրախանան անով: Վերոյիշեալ բառերը կու գան հերքելու այս համոզումն ու տպաւորութիւնը:

Աստուած կ'ուզէ որ վայելենք իր տուած հարստութիւնը եւ ուրախ կեանք մը ապրինք, բայց ան չ'ուզեր որ մեր կեանքին վայելքն ու ուրախութիւնը տեսնենք նիւթական հարստութեան մէջ: Ո՞վ է այն հայրը որ չ'ուզեր իր գաւակը հանգիստ եւ ուրախ կեանք մը ապրի: Եթէ երբեք երկրաւոր հայրեր իրենց գաւակներուն համար կը ցանկան երջանկութեամբ լի կեանք մը, որքա՛ն աւելի Աստուած որ երջանկութեան աղբիւրն ու նոյնիմէն երջանկութիւնն է, կը ցանկայ մեզի համար լաւն ու գեղեցիկը:

Աստուած չ'ուրախանար երբ մեր ուրախութեան աղբիւրը նիւթական հարստութիւնը նկատենք: Իր յոյսը հարստութեան վրայ դնողը ո՛չ միայն անարգած կ'ըլլայ զԱստուած, այլ աստուածացուցած կ'ըլլայ իր հարստութիւնը: Նիւթական հարստութիւնը ինքնիւր յոյսը նկատող մարդը խորքին մէջ անյոյս մարդ է, եւ մնայուն կերպով իյնալու եւ կործանելու մտավախութիւնը կը կրծէ իր միտքը:

Սողոմոն կ'ըսէ. «Իր հարստութեան վրայ յոյս դնողը պիտի իյնայ, բայց արդարները կանաչ տերեւի պէս պիտի ծաղկին» (Առ 11.28): Սողոմոնին ըսել ուզածը այն է, թէ անոնք որոնք իրենց յոյսը կը դնեն



Աստուծոյ վրայ՝ անոնք արդար են եւ արժանի յաւիտեանական կեանքը ժառանգելու: Այստեղ յիշուած «կանաչ տերեւը» խորհրդանշել է կեանքի՝ յաւիտեանական կեանքի: Յաւիտեանական կեանքին ժառանգորդները պիտի ըլլան անոնք՝ որոնք իրենց յոյսը կը կապեն այդ կեանքին Տիրոջ եւ տուիչին՝ Քրիստոսի: Նիւթական հարստութիւնը ժամանակաւոր հանգամանք ունի: Ահա թէ ինչո՛ւ բնագիրը կը հաստատէ թէ *«իր հարստութեան վրայ յոյս դնողը պիտի իյնայ...»*:

Հաստատեցինք թէ Աստուած կ'ուրախանայ երբ վայելենք իր պարգեւած հարստութիւնը, բայց ասիկա բնականօրէն նշմարիտ է միայն այն մարդոց պարագային՝ որոնք Քրիստոսի միջոցաւ հաշտուած են իրեն հետ: Աստուծոյ համար առաջնահերթը հոգեւոր հարստութիւնն է, այլ խօսքով՝ փրկութիւնն է: Փրկութիւնը ձգելով հարստութեան ետեւէն վազելը կը տրտմեցնէ գԱստուած: Աստուծոյ պահանջն է որ նախ ինդրենք որ իր արժանութիւնը գայ եւ աշխատինք իր կամքը կատարել, ապա ան պէտք եղած հարստութիւնը եւ անելի՛ն պիտի տայ մեզի (Մտ 6.33):

Կան շատ մարդիկ որոնք ամէն գնով կ'աշխատին նիւթական հարստութիւն դիզել, եւ սակայն, չեն յաջողիր: Աստուած ի՛նքն է որ երբեմն թոյլ չի տար որ կարենանք հարստութիւն հաւաքել, որովհետեւ ան գիտէ որ հարստութիւնը կրնայ պատճառ ըլլալ որ ո՛չ միայն զինք մոռնանք, այլեւ ուրանանք: Ահա թէ ինչո՛ւ Սողոմոն կ'ըսէ. *«Ինձի աղփատութիւն կամ հարստութիւն մի՛ տար: Իմ սովորական հացո՛վս զիս կերակրէ, որպէսզի չըլլայ թէ կշտանամ եւ քեզ ուրանամ ու "Տէրը ո՞վ է" ըսեմ: Եւ չըլլայ թէ աղփատանամ եւ գողութիւն ընեմ եւ իմ Աստուծոյս անունը պարսպ տեղ բերանս առնեմ»* (Առ 30.8-9):

Հեղինակը այստեղ կը խօսի այն երկու վտանգներուն մասին որոնց կրնայ հանդիպիլ հարուստ մարդը իր հարստութեան պատճառով եւ աղփատ մարդը իր աղփատութեան պատճառով: Ի՞նչ են այդ վտանգները: Հարուստին պարագային վտանգը այն է, որ ան անգամ մը որ հարստութեան տէր դառնայ, կրնայ այլեւս Աստուծոյ կարիքը չգգալ, եւ նոյնիսկ կրնայ պահ մը մտածել թէ ինք ամէն ինչ ունի իր ձեռքին մէջ եւ թէ կրնայ ընել այն ինչ որ կը կամենայ, իսկ աղփատին պարագային վտանգը այն է, որ ան իր կրած աղփատութեան պատճառով կրնայ *«Աստուծոյ անունը պարսպ տեղ իր բերանը առնել»*, այսինքն՝ կրնայ տրտնջալ եւ դժգոհիլ Աստուծոյ դէմ եւ զինք մեղադրել մարդոց միջեւ խտրութիւն դնողի մը յանցանքով:

Քիչ չէ թիւր այն մարդոց որոնք կը յայտարարեն որ Աստուած խտրութիւն կը դնէ մարդոց միջեւ, մէկուն առատօրէն տալով, իսկ ուրիշի մը՝ բնա՛ւ չտալով: Այսպիսի յայտարարութիւն ընողներ Աստուծոյ անունը պարսպ տեղ իրենց բերանը առնողներ են:

Ճի՛շդ է որ *«աղփատացնողն ու հարստացնողը, ցածցնողն ու բարձրացնողը Տէրն է»* (Ա.Թգ 2.7), եւ ճի՛շդ է որ առանց Աստուծոյ

կամֆին ն'չ ո՛ք կրնայ հարստանալ կամ աղֆատանալ եւ կամ միջակ մակարդակի վրայ մնալ, բայց մէկ բան յստակ պէտք է գիտնալ, որ Աստուած երբեք չ'արգիլեր որ մարդը հարստանայ եթէ երբեք գիտնայ որ այդ մարդը հարստանալէ ետք պիտի շարունակէ հաւատարիմ մնալ իրեն:

## ՍՍ.ՏԱՆԱՆ ՍԿԻԶԲԷՆ ՄԱՐԴԱՍՊԱՆ Է

*«Անիկա (Սատանան) սկիզբէն մարդասպան էր եւ նշմարտութեան կողմնակից չէ եղած բնաւ, որովհետեւ անոր մէջ նշմարտութիւն չկայ: Երբ սուտ խօսի՝ իր նկարագիրը ցոյց կու տայ, քանի որ ստախօս մըն է եւ սուտին հայրը»* (Յհ 8.44): Տուեալ համարէն երեք բաներ կը սորվինք Սատանային մասին.

*Առաջին.*– անիկա մարդասպան է: Մարդասպանը միայն մարմնապէս մարդը սպաննողը չէ: Իրական մարդասպանը մարդուն հոգին սպաննողն է, այլ խօսքով, մարդուն հոգիին յաւիտեանական կորստեան պատճառ եղողն է: Քրիստոս կը պատուիրէ մեզի չվախնալ *«անոնցմէ, որոնք մարմինը կը սպաննեն եւ սակայն հոգին չեն կրնար սպաննել»*, այլ վախնալ *«անկէ, որ կրնայ թէ՛ հոգին եւ թէ՛ մարմինը կորուստի մատնել դժոխքին մէջ»* (Մտ 10.28):

Քրիստոս այստեղ Աստուծոյ մասին է որ կը խօսի եւ ո՛չ թէ Սատանային մասին, ինչպէս յաջորդող համարները կը պարզեն: *«Ան կրնայ...»*: Այս բառերով Քրիստոս ըսել կ'ուզէ որ Աստուած կատարեալ իրաւասութիւնն ու իշխանութիւնը ունի մարդուն *«թէ՛ հոգին եւ թէ՛ մարմինը կորուստի մատնել դժոխքին մէջ»*: Թէեւ Աստուած կրնայ մարդը յաւիտեանական կորստեան մատնել, եւ սակայն, ինք չէ պատճառը մարդուն կորստեան: Պատճառը մարդը ի՛նքն է, որ յանձն կ'առնէ կամաւորաբար Սատանային կամքը կատարել:

Աստուած մարդասպան չէ, այլ՝ մարդասէր: Մարդասպանը Սատանան ի՛նքն է որ մարդատեաց է: Ան կը սպաննէ մարդուն մէջ մարդկային բաժինը եւ մարդը կը դարձնէ գազան: Ան կը բնաջնջէ մարդուն մէջ Աստուծոյ պատկերն ու նմանութիւնը: Ան արմատախիլ կ'ընէ մարդէն ամէն բան որ բարի ու գեղեցիկ է, ամէն լաւ ցանկութիւն ու փափաք: Ան կը չէզոքացնէ մարդուն կեանքէն երջանկութեան ամէն աղբիւր: Ան ահաւոր ֆինախնդիր մէկն է:

Ան երբ տեսաւ թէ անկարող է պայքարիլ Աստուծոյ դէմ, իր ուշադրութիւնը կեդրոնացուց մարդկային ցեղին վրայ: Ան եղաւ եւ կը շարունակէ մնալ մարդկութեան դժբախտութեան պատճառ եւ առիթ: Իր ռիսկալութեան ոգիէն ան դրաւ եւ կը դնէ մարդուն մէջ: Ան չհանդուրժեց եւ չի հանդուրժեք հանդուրժողութեան ոգի տեսնել մարդոց մօտ իրարու նկատմամբ: Ան չներեց եւ չի ներեր իրարու ներող մարդիկը:

*Երկրորդ.*– *«Անիկա սկիզբէն մարդասպան էր»*: Սատանան ժամանակի ընթացքին չէր որ մարդասպան եղաւ, այլ սկիզբէն այդպիսին էր: Ի՞նչ կը հասկնանք «սկիզբէն» ըսելով: «Սկիզբէն» ըսելով ակնարկութիւնը Սատանային ստեղծման օրուան չէ: Յստակ է որ Աստուած Սատանան իբրեւ Սատանայ չստեղծեց, այլ իբրեւ Աստուծոյ սուրբ լերանը վրայ ապրող ֆերովքէ (Եզ 28.14):

Աստուած խօսքը ուղղելով իրեն կ'ըսէ. *«Պուն մամբաներուդ մէջ կատարեալ էիր, քու ստեղծուած օրէդ մինչեւ այն օրը, երբ քու վրադ անօրէնութիւն գտնուեցաւ»* (Եզ 28.15): Որոշ է որ «անօրէնութիւնը» որուն մասին կը խօսի Աստուած, Սատանային կողմէ ի գործ դրուած Աստուծոյ գաւի գրաւելու ցիւցն էր (Ես 14.13-14) եւ ոչ թէ Ադամն ու Եւան խաբելու գործողութիւնը:

Եթէ երբեք «սկիզբէն» ըսելով չ'ակնարկուիր իր ստեղծման օրուան եւ ո'չ ալ Աստուծոյ գաւի գրաւել փորձելու օրուան, հապա ի՞նչ բանի կ'ակնարկուի: «Սկիզբէն» բառը պէտք է կապել մարդկային ցեղի սկզբնաւորութեան, որովհետեւ Սատանան մարդասպան է եւ ո'չ թէ աստուածասպան:

Աստուած Արուեսակ ֆերովբէին մեղանշումէն ետք էր որ ստեղծեց Ադամն ու Եւան: Արուեսակ որ արդէն իսկ Սատանայի վերածուած էր Աստուծոյ տեղը առնել փորձելուն համար, նախանձով, ատելութեամբ եւ դառնութեամբ լեցուեցաւ երբ տեսաւ որ Աստուած իր պատկերով ու նմանութեամբ, իր ձեռքով ու Հոգիով, իր շունչով ու փառքով ստեղծեց երկու անձեր՝ Ադամն ու Եւան, որոնցմէ *«ամբողջ մարդկութիւնը յառաջ բերաւ, որպէսզի աշխարհի բոլոր կողմերը բնակին»* (Գրծ 17.26): Իր նախանձին արդիւնքը եղաւ այն՝ որ Ադամն ու Եւան եւ ապա ամբողջ մարդկութիւնը իր թիրախը դարձնէ:

*Երրորդ.*– *«Ճշմարտութեան կողմնակից չէ եղած բնաւ, որովհետեւ անոր մէջ նշմարտութիւն չկայ: Երբ սուտ խօսի՝ իր նկարագիրը ցոյց կու տայ, քանի որ ստախօս մըն է եւ սուտին հայրը»:* Ստախօսութիւնը Սատանային նկարագիրին գիծերէն ամէնէն գլխաւորն է: Ստախօսը կամայ թէ ակամայ Աստուծոյ կամքին եւ խօսքին հակադրուող մէկն է:

Աստուած Ադամին ըսաւ. *«Քարիի ու չարի գիտութեան ծառէն մի՛ ուտեր. քանզի այն օրը որ անկէ ուտես՝ անշուշտ պիտի մեռնիս»* (Մճ 2.17, 3.3): Իսկ Սատանան հերքած եղաւ Աստուծոյ խօսքը երբ Եւային ըսաւ. *«Ո՛չ թէ անշուշտ պիտի մեռնիք. քանզի Աստուած գիտէ թէ այն օրը որ անկէ ուտէք, աչքերնիդ պիտի բացուին եւ աստուածներու պէս պիտի ըլլաք՝ բարին ու չարը գիտնալով»* (Մճ 3.4-5):

Աստուած ուտելու եւ մեռնելու մասին կը խօսի, իսկ Սատանան՝ ուտելու եւ չմեռնելու մասին: Ստախօսը միշտ կը հակասէ Աստուծոյ խօսքին քանի որ անիկա *«նշմարտութեան կողմնակից չէ»:* Զուր տեղը չէ որ Քրիստոս Հրեաները կը կոչէ Սատանային գաւակները (Յհ 8.44): Ինչպէս Սատանան ստախօս եւ նշմարտութեան անկողմնակից մէկն էր, այնպէս ալ Հրեաները ստախօս եւ նշմարտութեան հակադրուող ժողովուրդ եղան:

Անոնք չկահադրուեցա՞ն Քրիստոսի որ յայտարարեց. *«Ե՛ս եմ նշմարտութիւնը»* (Յհ 14.6): Անոնք չփորձեցի՞ն *«Յիսուսի դէմ սուտ վկայութիւն գտնել»* որպէսզի գայն սպաննէին (Մտ 26.59-61): Սատանան հեռացաւ նշմարտութենէն երբ հեռացաւ Աստուծմէ: Ան Աստուծմէ

հեռանալով սկսաւ հակադրուիլ նշմարտութեան, հակադրուիլ Քրիստոսով իրագործուած փրկութեան: Աստուծմէ հեռացողը կը դառնայ թշնամի Աստուծոյ եւ իր ժողովուրդին:

## ՍՈՎՈՐԱՄՈԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ՍՊԱՆՆԵՆ ՄԵՐ ՀԱՒԱՏՔԸ

Ամեն ժողովուրդ կամ ազգ, ամեն անհատ կամ հաւաքականութիւն, ամեն կառոյց կամ հաստատութիւն իր կեանքին մէջ կ'ունենայ սովորութիւններու շարք մը, որ կը ջլատէ գորութիւնը ու կը վտանգէ յաջողութիւնը տուեալ ժողովուրդին, ազգին, անհատին, հաւաքականութեան, կառոյցին եւ հաստատութեան:

Այս իրողութիւնը իրականութիւն է նաեւ Քրիստոսի մարմինին՝ եկեղեցիին մէջ: Սա մեր օրերուն պատկանող նշմարտութիւն մը չէ միայն, այլ մի'շտ այդպէս եղած է, եւ կը շարունակէ այդպէս մնալ դժբախտաբար ամէն տեղ, ամէն եկեղեցիի մէջ: Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները քննադատական մօտեցումով մը Քրիստոսի ուշադրութեան յանձնեցին թէ իր աշակերտները *«նաշելէ առաջ չեն լուար իրենց ձեռքերը»* (Մտ 15.2): Ահաւասիկ սովորութիւն մը որ այնքա՛ն գօրեղ տիրապետութիւն հաստատած էր Փարիսեցիներուն եւ Օրէնքի ուսուցիչներուն կեանքին մէջ, որ գայն կը նկատէին նուիրական եւ անխախտելի աւանդութիւն մը: Նման սովորութիւններ մոռցնել կու տան հիմնականն ու կենսականը:

Օրինակ, Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները մոռցած էին որ կենսականը եւ Աստուծոյ պահանջածը ձեռքերու լուացումը չէր, այլ սիրտի լուացումը: Աստուած նորահաւատ մարդուն կը խօսի նո՛ր սիրտ եւ նո՛ր հոգի ունենալու անհրաժեշտութեան մասին, մինչդեռ Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները նորահաւատ մարդուն կը խօսին իրենց հայրերու աւանդութեանց եւ սովորութեանց իւրացման մասին:

Երկրորդ օրինակ մը, անոնք ամէն միջոցի կը դիմէին *«մէկը նորահաւատ ընելու համար»* (Մտ 23.15). իսկ իրենց հասկացողութեամբ նորահաւատ ըլլալ, կը նշանակէ Փարիսեցիներուն աղանդին համակիր ըլլալ: Այս ձեւով, իրենց համար աւելի կարեւոր էր մարդիկը անդամ դարձնել իրենց աղանդին քան Աստուծոյ ընտանիքին: Փարիսեցիի մը համար աւելի կարեւոր էր մարդիկը Փարիսեցի դարձնել քան Աստուծոյ գաւակ: Անոնք նորահաւատներէն օրինապահութիւն կը պահանջէին փոխանակ հաւատք, հայրերու աւանդութեանց պահպանում կը պահանջէին փոխանակ Աստուծոյ խօսքին պահպանում:

Գալով մեր այսօրուայ իրականութեան, կը տեսնենք որ Փարիսեցիական սովորամոլ ոգին կատարեալ տիրութիւն հաստատած է եկեղեցիներուն մէջ: Եկեղեցի յանախելը շատերու համար սովորութեան մը արդիւնքն է եւ ո՛չ թէ հաւատքի: Մարդոց մեծ մասը եկեղեցի կը յանախէ առանց ակնկալութեան: Եկեղեցի յանախող մը Աստուծոյ հրեշտակներուն փառաբանակից դառնալու եւ Սուրբ Հոգիով լեցուելու ակնկալութեամբ պէտք չէ՞ յանախէ:

Նոյնիսկ Քրիստոսի մարմինն ու արիւնը նաշակելն ալ սովորութիւն դարձած է շատերուն համար: Սուրբ Հոգորդութեան մօտեցողը պէտք չէ

մոռնայ որ հաղորդութեամբ կը ստանայ մեղքերու քաղութիւն, կը դառնայ բնակարան Քրիստոսի, անդամ անոր մարմինին եւ գաւակ Աստուծոյ: Կը զարմանանք երբ կը տեսնենք թէ Աստուծոյ հետ երբեք հաղորդութիւն չունեցող մարդիկ Սուրբ Հաղորդութեան կը մերձենան համարձակութեամբ:

Հաւատքով ստացուած Հաղորդութիւն մը հոգեւոր այլակերպում յառաջ կը բերէ ստացողին սիրտին մէջ: Հոգեւոր այլակերպումի մը բացակայութիւնը հաղորդուողներուն կեանքին մէջ, ցոյց կու տայ այն՝ որ անոնք Սուրբ Հաղորդութիւն ստանալը վերածած են հոգիէ պարպուած սովորութեան:

Մոմավառութիւնը նաեւ սովորութիւն չէ՞ դարձած եկեղեցիներուն մէջ: Ոմանք նոյնիսկ մեծ ամօթ կը նկատեն մոմավառութեան սովորութիւնը չյարգելը: Ուրիշներ իրաւունք չեն սեպեր մոմին մօտենալու եթէ իրենց գրպանները պարապ են: Մոմ վառելը մեր հաւատքի կրակին արծարծումին պատկերացումը չէ՞: Ի՞նչը աւելի կարեւոր է, եկեղեցի երթալ եւ մո՞մ վառել, թէ եկեղեցի երթալ մեր հաւատքի կրակը առաւել եւս արծարծելու համար:

Դժբախտութիւն է որ կարգ մը մարդիկ իրենց սիրտը Քրիստոսի հաւատքով լեցնելու փոխարէն կը ջանան իրենց վառած մոմերուն թիւը շատցնել, մնայուն կերպով Հաղորդութիւն ստանալ, բոլորին կողմէ երեւելու համար առաջին կարգին վրայ նստիլ, ձեռներնին դէպի երկինք բարձրացնել եւ իրենց շուրջիները անհագստացնելու աստիճան բարձրաձայն պատարագը երգել, եւ այս բոլորը կ'ընեն համոզելու համար ուրիշները որ իրենք հաւատքի տէր մարդիկ են: Սյդպիսիներն են որոնք կը խրոչեցնեն Աստուծոյ Հոգին:

Ոմանք եկեղեցի յանախելը, եկեղեցական արարողութիւններու մասնակցիլը կամ գանձնք կատարելը բարոյական պարտականութիւն կը սեպեն, ասոնք կը մոռնան սակայն, որ մեր պարտականութիւնները ընելով մենք չենք կրնար գԱստուած պարտաւոր դարձնել մեր նկատմամբ: Եկեղեցական արարողութիւններու մասնակցիլը կամ գանձնք կատարելը պէտք չէ պարտականութիւն կամ պարտաւորութիւն նկատենք, այլ կոչում եւ առաքելութիւն: Եկեղեցի երթալով մենք Աստուծոյ բարիք կամ ծառայութիւն ըրած չենք ըլլար:

Աղֆատի մը օգնելով մենք չենք կրնար գԱստուած մեզ վարձատրելու ստիպողութեան տակ դնել: Փարիսեցիներուն հիմնական սխալը այն էր, որ անոնք կը կարծէին թէ իրենց բարի գործերը գիրենք բարի մարդոց կը վերածէ: Մարդկային կամ աշխարհի չափանիշով բարին ան է՝ որ բարեբարութիւններ կ'ընէ եւ այլոց կարիքին կը հասնի, իսկ Աստուծոյ հայեացքով բարին ան է՝ որ իր Որդիին կը վստահի, կ'ապաւինի եւ զայն կ'ընդունի իբրեւ Տէր ու Փրկիչ: Բարեբարութիւն ընելու կարեւորութիւնը չէ որ կ'ուրանանք հարկաւ, բայց Աստուծոյ բարեբար Որդիին գալու բացարձակ անհրաժեշտութիւնն է որ կը շեշտենք:

Սիրելիներ, գգուշանանք սովորաբար են և աւանդաբար են.  
ատոնք մեզ կը դարձնեն ներկայացուցիչները Փարիսեցիական ոգիին,  
ատոնք կրօնքը կը վերածեն ծիսակատարութեան ուր չկա՛յ Սուրբ Հոգի:



## ՎՍՏԱՀԷ՛ ՅԻՍՈՒՍԻ ԱՆ ԿԸ ԽԱՂԱՂԵՑՆԷ ԿԵԱՆՔԻ ՓՈԹՈՐԻԿՆԵՐԸ

Ղուկաս 8.22-25ին մէջ կը կարդանք փոթորիկի մը խաղաղեցման մասին Յիսուսի ձեռնով: Յիսուս իր աշակերտներուն հետ նաւակ մը բարձրանալէ ետք անոնց ըսաւ. *«Եկէ՛ք յիճի՛ն միւս կողմը անցնի՛նք»* (Ղկ 8.22): Լիճը որուն մասին կը խօսի բնագիրը նոյնիման *«Գալիլեայի յիճն է, իսկ միւս կողմը Դեկապոլիս կոչուած նահանգն էր, գլխաւորաբար խառն եւ հեթանոս ազգերով բնակուած»* կ'ըսէ Զարեհ Արք. Ազնաւորեան:

*«Եկէ՛ք յիճի՛ն միւս կողմը անցնի՛նք»*: Զվախման կեանքի յիճերն ու ծովերը նեղեցնելով անցնիլ անոնց միւս կողմը՝ ուր աստուածային օրհնութիւններ կը սպասեն մեզի: Իւրաքանչիւր փորձութիւն որուն վրայ յաղթանակ կը տանի՛նք՝ նոր օրհնութեան մը դուռն է որ կը բանայ մեր առջեւ: Կեանքի փոթորիկներուն դիմաց մենք առանձին չենք: Այդ բոլորին վրայ իշխանութիւն ունեցող Աստուածորդին մեզի հետ է՝ մեզ յաղթող դարձնելու համար այդ բոլորին դէմ: Քրիստոս իր զաւակները առանձին չի դրկեր փորձութեանց գիրկը: Ան կը միանայ անոնց: Ան իր աշակերտները առանձին չդրկեց *«յիճի՛ն միւս կողմը»*: Բնագիրը կ'ըսէ որ *«Յիսուս նաւակ ելաւ իր աշակերտներուն հետ»*: Յիսուս այսօր ալ մեր կեանքի նաւակներուն մէջ է: Ան մեզի հետ է եւ մեզի զօրավիգ:

Այս իրողութիւնը ամէն բանէ աւելի եկեղեցին ի՛նք պէտք է յիշէ: Եկեղեցին որ կը ծփայ կեանքի կատաղի ալիքներուն վրայ՝ կարիք ունի Քրիստոսի առաջնորդութեան: Դժբախտութիւն է տեսնել եկեղեցիներ որոնք երբեք չեն տեսներ եւ չեն փնտոներ Քրիստոսի ներկայութիւնը իրենց կեանքին մէջ: Առանց Քրիստոսի շնորհած պաշտպանութեան՝ եկեղեցին ենթակայ է ընկղմելու մեղքի ու անհաւատութեան տիղմին մէջ:

Եկեղեցին վտանգի մէջ կ'ըլլայ երբ եկեղեցւոյ Գլուխին՝ Քրիստոսի չյանձնուի եկեղեցւոյ դեկը: Նոյնը չեղա՞ւ աշակերտներուն պարագան: Աշակերտները իրենք է որ կը ղեկավարէին նաւը, բայց երբ փորձութիւնը վրայ հասաւ՝ անոնք դիմեցին Քրիստոսի եւ խնդրեցին իր միջամտութիւնը: Սա կը պարզէ, որ երբ կը փորձենք մեր անձնական նիգերով եւ մեզի նիշդ թուացող կերպերով եւ նամբաներով ղեկավարել մեր կեանքի նաւը՝ կորսնցուցած կ'ըլլանք մեր ապահովութիւնը:

*«Մինչ աշակերտները կը նաւարկէին, Յիսուս ճնացաւ»*: Երբ փորձութիւններով շրջապատուած ըլլանք, երբեմն այն տպաւորութիւնը կ'ունենանք որ Քրիստոս «ճնացած» է, այսինքն՝ կը կարծենք որ Աստուած անտարբեր է մեզի հանդէպ եւ բնաւ չի տագնապիր երբ մեզ տագնապի մէջ կը տեսնէ: Սուրբ Գիրքը սակայն կը հաստատէ որ Աստուած նեղութեան մէջ կ'իյնայ երբ մեզ նեղութեան մէջ ինկած կը տեսնէ (Ես 63.9):

Աստուած կը փափաքի որ մենք նեղութիւններէ զերծ կեանք մը ապրինք, բայց միւս կողմէն, ան գիտէ որ առանց նեղութեանց բովին մենք չենք կրնար իր Որդիին պատկերը դառնալ: Յաճախ մեզի պատահող

չարիքներն են որ մեր ներսիդին կը կերտեն բարութեան հոգին: Ինչպէս մուրնի հարուածներուն տակ անձեւ երկաթը ձեւի կը բերուի, այնպէս ալ փորձութեանց հարուածներուն տակ, մեղքով տձեւ դարձած մարդուն հոգին կը սկսի նառագայթել փառքը Քրիստոսի պատկերին:

Հետաքրքրական է նկատի առնել որ լինը խաղաղ էր այնքան ատեն երբ Յիսուս եւ իր աշակերտները նաւակ չէին բարձրացած նաւարկելու համար: Փոթորիկը չսկսաւ երբ անոնք նաւակ բարձրացան: Փոթորիկը սկսաւ անոնց նաւարկութենէն որոշ ժամանակ ետք միայն: Հոգեւոր դասը որ այստեղէն կը քաղենք այն է, որ երբ փորձենք յառաջանալ մեր հաւատքի նաւարկութեան մէջ՝ ա՛յն ատեն է որ դժուարին պահեր կը սկսին գլուխ ցցել մեր դիմաց: Սատանան չի յարձակիր մէկու մը վրայ որ երբեք ճիշտ չի թափեր եւ փափաք ալ չունի Քրիստոսի գալու: Կեանքի ծովը կը փոթորկի երբ հաւատքի նաւարկութեան ձեռնարկենք:

Ան որ կը ձեռնարկէ հաւատքի նաւարկութեան իր հայեացքները կեդրոնացած ունենալով Քրիստոսի անձին վրայ՝ անոր համար չկա՛յ կորսուելու վախ: Չեմ ըսեր թէ չկա՛յ վտանգ ու պատահար, դժնդակ ու դժուարին պահեր: Կա՛ն այդ բոլորը, բայց մանաւանդ կայ այդ բոլորին յաղթելու յո՛յսն ու միջոցը: Այդ յոյսն ու միջոցը Քրիստոս ի՛նքն է: Մենք Քրիստոսի՛ միջոցաւ միայն կրնանք յաղթող ըլլալ կեանքի պատերազմին մէջ:

Երբ Քրիստոս բացակայ է մեր կեանքէն՝ զօրեղ փորձութեանց դիմաց մնայուն կերպով կորսուելու երկիւղը կը շրջապատէ մեզ, եւ ստիպուած կ'ըլլանք աղաղակելու. *«Վարդապետ, Վարդապետ, ահա կը կորսուինք»*: Եւ ասիկա կարծէք կո՛չ մը կ'ըլլայ Քրիստոսի՛ շարժելու եւ բան մը ընելու. բայց դժբախտաբար բնաւ չենք անդրադառնար որ շարժելու եւ բան մը ընելու կարիքը մե՛նք է որ պէտք ունինք եւ ո՛չ թէ Քրիստոս: Ա՛յս է որ ցոյց կու տայ Քրիստոսի խօսքը ուղղուած իր առաքեալներուն. *«Ո՞ւր է ձեր հաւատքը»*: Այո՛, ո՞ւր է մեր հաւատքը երբ փորձութեանց ժայռերուն կը բաղիսինք: Ա՛յն հաւատքը՝ որ մեզ անդրդուելի ու անյողողող կը պահէ ծանրակշիռ փորձանքներու առջեւ:

Փորձանքներն են որ կ'ապացուցանեն եթէ երբեք մենք հաւատք ունինք թէ ոչ: Երբ փորձանքներու իբրեւ հետեւանք՝ վա՛խ յառաջ գայ մեր սիրտերուն մէջ՝ հաւատքը կ'անհետանայ: Վախը Աստուծոյ կարողութեան եւ ամենահասութեան նկատմամբ հաւատքի ու վստահութեան պակաս կ'ենթադրէ: Աշակերտները վախցան, բայց թէպէտ Քրիստոս գիրենք երեսի վրայ չձգեց, սակայն յանդիմանած եղաւ գիրենք երբ անոնց ըսաւ. *«Ո՞ւր է ձեր հաւատքը»*: Քրիստոս հաւա՛տք է որ կ'ուզէ տեսնել մեր մէջ երբ աղէտի հանդիպինք:

Ծովերու ու լիներու, հովերու ու որոտումներու Տէրն ու ստեղծիչը՝ Քրիստոս, ոտքի կանգնեցաւ ու սաստեց այդ բոլորը: Աշակերտները հիացած բացականչեցին. *«Ո՞վ է արդեօք այս մարդը...»*: Այս Մարդը

պատուհասն է Չարին: Այս Մարդը լոկ հրաշագործ մը չէ, այլ՝ Հրաշքն  
իսկ, մե՛ծ Հրաշք, մե՛ծ Սէր: Այս Մարդը պաշտպանն է մարդկային ցեղին:

## ՆԵՂՈՒԹԻՒՆԸ ՄԵՋ ՀԵՌՈՒ ԿԸ ՊԱՀԷ ՀՊԱՐՏՈՒԹԵՆԷՆ

Աստուած կրնայ իր հաւատացեալ գաւակներուն յայտնութիւններ եւ տեսիլքներ ցոյց տալ, որոնք կրնան հպարտութեան առաջնորդել հաւատացեալը: Նման պարագայի, Աստուած սերէ մղուած թոյլ կու տայ որ նեղութեան հանդիպի ենթական՝ որպէսզի զինք պահէ խոնարութեան մէջ: Պօղոս առաքեալ ունեցաւ այս փորձառութիւնը: Ան կ'ըսէ. *«Որպէսզի չըլլայ որ ունեցած բացառիկ յայտնութիւններովս հպարտանամ, Աստուած փուշի պէս ծակող ցաւ մը տուաւ մարմինիս, կարծես Սատանային ներկայացուցիչը ըլլար մարմինիս մէջ, որպէսզի անով զիս զգաստացնէ եւ չհպարտանամ»* (Բ.Կր 12.7):

Համաձայն առաքեալին այս խօսքին, Աստուծոյ կողմէ թոյլատրուած նեղութիւնը հաւատացեալը կը հրաւիրէ զգաստութեան եւ հեռո՛ւ կը պահէ հպարտութենէն: Մեղքեր կան որ եթէ գործենք՝ Աստուած կը ներէ, բայց հպարտութեան մեղքը ան ո՛չ միայն չի ներեր, այլեւ կը հակառակի հպարտ ու ամբարտաւան մարդուն. *«Տէրը հակառակ է ամբարտաւաններուն, մինչդեռ շնորհք կու տայ խոնարհներուն»* (Յկ 4.6):

Երբ հպարտութենէ մղուած կը պատմենք մեր ունեցած տեսիլքներուն եւ յայտնութիւններուն մասին, կամ երբ Աստուծմէ պարգեւ կը ստանանք եւ ատիկա մեզ հպարտութեան կ'առաջնորդէ՝ Աստուած կը տրտմի, որովհետեւ կը տեսնէ որ իր գաւակները փոխանակ զինք փառաւորելու իր բաշխած պարգեւներուն համար, ընդհակառակը, իրենք զիրենք է որ կը փառաւորեն իրենց ստացած պարգեւներուն մասին պատմելով ասոր անոր:

Աստուած չ'ուզեր իրեն համար յատկացուելիք փառքը իւրացուած տեսնել իր գաւակներուն կողմէ: Ան կ'ըսէ. *«Իմ փառքս ուրիշին չեմ տար»* (Ես 42.8): Հպարտ ու ամբարտաւան մարդն է որ փառք կը փնտռէ: Երբեմն հաւատացեալ մարդը անգամ կրնայ բռնուիլ այդ ախտէն: Պօղոս առաքեալ կ'ըսէ. *«Պիտի պարծենամ, ձեզի պատմելով այն տեսիլքներուն եւ յայտնութիւններուն մասին, որ Տէրը ինծի տուաւ»* (Բ.Կր 12.1): Այս պարծենկոտութիւնը առաքեալին մօտ կրնար փոխուիլ հպարտութեան եւ նոյնիսկ ամբարտաւանութեան եթէ երբեք Աստուած *«փուշի պէս ծակող ցաւ»*ով մը չմիջամտէր անոր կեանքէն ներս:

Ո՛վ գիտէ, թերեւս Պետրոս առաքեալ երբ տեսաւ որ ջուրերուն վրայէն ֆալելով Քրիստոսի կ'երթար՝ սկսաւ հպարտանալ միւս աշակերտներուն դիմաց: Եթէ ան յաջողէր ջուրերուն վրայէն ֆալելով Յիսուսի հասնիլ՝ փառքը իրե՛ն պիտի երթար եւ ո՛չ թէ Յիսուսի: Յիսուս չէր որ զինք ջրամոյն ըրաւ, բայց կարծէք ինքն էր որ միջամտեց եւ թոյլ տուաւ որ ջրամոյն ըլլար առաքեալը, նախ որպէսզի զինք հեռո՛ւ պահէր հաւանական հպարտութենէն, եւ երկրորդ, որպէսզի սորվէր մի՛այն իրեն

վստահիլ: Պետրոս ջրամոյն եղած ատեն Յիսուսէ գատ չունէր ուրիշ մէկը որուն դիմէր ու աղաղակէր:

Այո՛, կեանքի նեղութիւնները երբեմն կը ստիպեն մեզ գալու այն եզրակացութեան՝ թէ Աստուծմէ գատ չկայ ուրիշ մէկը որ կրնայ մեր օգնութեան հասնիլ: Պետրոս առաքեալ բոլոր աշակերտներէն աւելի նարտար ձկնորս ու միաժամանակ վարպետ լողորդ էր: Ան ջրամոյն եղած ժամանակ լողալ անգամ չկրցաւ: Ինչո՞ւ արդեօք: Ո՛չ ոք գիտէ այս «ինչո՞ւ»ին պատասխանը: Արդեօք աստուածայի՞ն միջամտութիւն էր: Արդեօք վախի՞նք հետեւանք էր: Արդեօք իրարանցումի՞նք արդիւնք էր:

Կրնանք գիտնալ թէ ինչո՞ւ սկսաւ ընկղմիլ, բայց դժուար է գիտնալ թէ ինչո՞ւ չկրցաւ լողալով Քրիստոսի հասնիլ: Մէկ բան գիտենք սակայն, որ Աստուած կրնայ իլի մեր ձեռքէն մեր այն բոլոր կարողութիւնները որոնց մենք կը վստահինք՝ որպէսզի սորվեցնէ մեզի իրե՛ն, միայն իրե՛ն վստահիլ: Այս իմաստով, կրնայ ըլլալ որ աստուածային միջամտութեամբ մըն էր որ այդ վայրկեանին Պետրոս չկրցաւ լողալ՝ որպէսզի ան անդրադառնար որ այդ պահուն Քրիստոսէ գատ ուրիշ ապաւէն չունէր:

Աստուած չ՛ուզեր որեւէ տեսակի կուտք ունենանք մեր կեանքերուն մէջ: Վստահ եմ մեզմէ որեւէ մէկը հեթանոսական հասկացողութեամբ քարաշէն, փայտաշէն կամ պղնձաշէն արձան մը առնելով իբրեւ կուտք չէ կանգնեցուցած իր տան մէջ, բայց կուտքերը միայն ասոնք չեն: Ինչ բան որ կը սիրենք Աստուծմէ աւելի կամ ինչ բանի որ կը վստահինք Աստուծմէ աւելի՝ գայն մեր կեանքին կուտքը դարձուցած կ'ըլլանք:

Օրինակ, եթէ դիզած դրամ ունինք եւ մեր դիզած դրամին հանդէպ վստահութիւն ունինք՝ այդ դրամը արդէն կը դառնայ կուտք. կուտք մը՝ որ մեզ հպարտութեան կ'առաջնորդէ եւ թոյլ չի տար ամբողջական խոնարհութեամբ վստահութիւն տածելու Աստուծոյ նկատմամբ: Նման պարագայի, Աստուած կրնայ իլի այդ կուտքը, այսինքն՝ դրամը մեր ձեռքերէն, որպէսզի մեզ առաջնորդէ խոնարհելու իր ձեռքին տակ:

Ոմանց կուտքը կրնայ դրամը ըլլալ, իսկ ուրիշներուն կուտքը՝ իրենց Ֆիզիքական առողջութիւնը: Տակաւին, կուտքի կրնան վերածուիլ մեր ձեռք ձգած յաջողութիւնները, յաղթանակները, մեր գաւակները, բարեկամ մը, գործ մը, նախասիրութիւն մը, աշխատանք մը, որեւէ բան կամ ոեւէ անձ: Աստուած կրնայ հարուածել որեւէ բան կամ ոեւէ անձ որ կուտքի կը վերածենք, կրնայ իլի մեր ձեռքէն մեր գօրութեան աղբիւրները՝ նախ որպէսզի ցոյց տայ մեզի աշխարհի ոչնչութիւնը, եւ երկրորդ, որպէսզի մեր ուշադրութիւնը կեդրոնացնէ իր վրայ:

Աստուած կ'ուզէ մեր հաւատքին եւ վստահութեան միակ առարկան դառնալ: Ան չ'ուզեր ուրիշ բանի մը կամ ուրիշ անձի մը նկատմամբ հաւատք ունենանք եւ մեր յոյսը անոր կապենք: Հաւատքն ու յոյսը միայն Աստուծոյ նկատմամբ պէտք է ցուցաբերուին:

Ան չ'ուզեր մեր կեանքին մէջ իրեն մրցակից բան մը տեսնել: Ուստի, ան երբ տեսնէ թէ կը յոխորտանք եւ կը հպարտանանք մեր ունեցածով՝

փորձութեամբ մը կու գայ միջամտելու մեր կեանքէն ներս, ո՛չ թէ որպէսզի մե՛զ տկարացնէ, այլ որպէսզի տկարացնէ եւ ոչնչացնէ բոլոր այն բաները՝ որոնց կը վստահինք եւ որոնցմով կը հպարտանանք, ատով, մեզ իրե՛ն դարձնելու համար:

## ՆԵՐԵԼԸ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼ ԵՒ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒԻԼ Է

Աններողամիտ մարդը ո՛չ միայն իր նմանը կը կապէ եւ կը կաշկանդէ, այլեւ՝ ինքզինքն: Զուր տեղ չէ որ Քրիստոս կ'ըսէ. «*Ինչ որ կապէ՛ք երկրի վրայ՝ կապուած պիտի ըլլայ երկինքի մէջ, եւ ինչ որ արձակէ՛ք երկրի վրայ՝ արձակուած պիտի ըլլայ երկինքի մէջ*» (Մտ 18.18): Երբ կը ներենք մէկու մը որ մեզի դէմ յանցանք գործած է եւ մեր սիրտը խորապէս վիրաւորած է՝ ազատ արձակած կ'ըլլանք զինքն եւ մենք զմեզ:

Ինչպէս ազատ չարակոչող բանտարկեալը չի՛ կրնար իր ազատութիւնը առնել, այնպէս ալ մեր կողմէ չներուած մարդը չի կրնար ազատ եւ հանգիստ գգալ: Պէտք է նկատի առնել, սակայն, որ չներելը՝ որքան անհանգիստ եւ բանտարկուած վիճակի մէջ կը պահէ մեր եղբայրը, նոյնքան ալ անհանգիստ եւ բանտարկուած վիճակի մէջ կը պահէ մեզ:

Ներող մարդը մնայուն կերպով խաղաղութեամբ համակուած կ'ըլլայ: Ան որ կը մերժէ ներել, մի՛շտ պրկուած եւ լարուած, մի՛շտ գրգռուած եւ խռոված վիճակի մէջ կ'ըլլայ: Զներող մարդը ո՛չ միայն ինք անձնապէս խռովութեամբ լի կ'ըլլայ, այլ նաեւ իր ներկայութիւնը խռովութիւն տարածող ներկայութիւն կ'ըլլայ:

Ինչ ցաւալի երեւոյթ է հանդիպիլ այնպիսի՛ ֆրիստոնեաներու որոնք քիչ մը նախանձի համար, չնչին հաշիւներու համար, կը զլանան ներում շնորհել իրենց եղբոր կամ ֆրոջ: Այսպիսի մարդոց սրտին մէջ ատելութեան մաղձը աւելի՛ մեծ է քան Քրիստոսի սէրը: Այսպիսիները կը թունաւորեն իրենք իրենց կեանքը եւ իրենց նմաններուն կեանքը: Ո՛չ իրենց անձերուն հանգիստ կը շնորհեն եւ ո՛չ ալ ուրիշին: Այսպիսիներ, ատելը աւելի՛ դիւրին կը գտնեն քան սիրելը, ֆինախնդիր ըլլալը աւելի՛ հանելի կը նկատեն քան ներողամիտ ըլլալը: Այսպիսիներուն համար, ներողամտութիւնը պարտութեան նշան է, ահա թէ ինչո՛ւ չեն ուզեր ներել:

Մէկը որուն սրտին մէջ Քրիստոսի շնորհին լոյսը չէ ծագած՝ ո՛չ միայն չ'ուզեր ներել, այլեւ չի՛ կրնար ներել իր նմանին: Աստուծոյ կողմէ մեր գործած մեղքերուն համար փառութիւն ստանալը անբացատրելի խաղաղութեամբ կը լեցնէ մեր սիրտը: Նման խաղաղութեամբ լեցուած մարդը չի՛ կրնար չներել: Աստուծոյ կողմէ ներուած մարդը սիրով եւ ուրախութեամբ կը ներէ իր հակառակորդներուն:

Ան որ չի ներեր իր եղբոր՝ ապացուցած կ'ըլլայ որ ինք Աստուծոյ կողմէ ներում չէ ստացած, եւ հետեւաբար, Աստուծոյ զաւակը չէ: Աստուծոյ զաւակը դարձած մարդը, իր նմանը եղբայր եւ քոյր կը նկատէ եւ ո՛չ թէ մրցակից եւ թշնամի:

Ներողամտութիւնը լաւագոյն ցամաքն է թշնամի մը բարեկամի վերածելու: Ինչպէս մէկը չի կրնար կրակին վրայ ֆարիւղ նետելով կրակը շիջեցնել, այնպէս ալ ո՛չ ոք կրնայ թշնամիին թշնամութիւն ընելով վերջ դնել թշնամութեան: Թշնամութիւնը թշնամութեամբ փոխարինող մարդը

կը նմանի անոր, որ կը փորձէ ածուխով մուրին սեւութիւնը մաքրել: Վերջ դնելու համար թշնամութեան պէտք է սկիզբ դնել բարեկամութեան: Թշնամին չներող մարդը թշնամիին հաւասարած կ'ըլլայ:

Խորքին մէջ, չներող մարդը Քրիստոսի է որ թշնամութիւնը բրած կ'ըլլայ, որովհետեւ փակած կ'ըլլայ այն գամբան որ կրնայ մեղաւոր մարդը առաջնորդել Քրիստոսի: Երբ ներողամտութիւն, ազնուութիւն եւ քաղցրութիւն կը ցուցաբերենք մեզ չսիրողներուն նկատմամբ, առիթ մը տուած կ'ըլլանք իրենց ֆանչնալու Քրիստոսի սէրն ու քաղցրութիւնը:

Պատմութիւնը կը վկայէ որ անհաշիւ թիւով մարդիկ դարձի եկած են Քրիստոսի պարգապէս որովհետեւ հանդիպած են ներողի մը: Յիշեցէք Քրիստոսի խաչակիցը եղող աջակողմեան աւագակին պարագան: Ան ականատես եւ ականջալուր եղած էր թէ ինչպէս Քրիստոս կը խնդրէր իր Հօրմէն ներել անոնց՝ որոնք զինք խաչեցին (Ղկ 23.34): Աւագակին սիրտը նմուխեցաւ երբ Քրիստոսի մօտ ա'յսֆան ներողամտութիւն տեսաւ եւ իսկոյն դարձի եկաւ:

Յանախ ըսուած է որ *«Վեհանձն մարդը չի կրնար չներել»*: Վերածնած քրիստոնէայ մարդը, սակայն, պէտք է ներէ ո'չ թէ որովհետեւ իր վեհանձնութիւնը ա'յդ է որ կը պահանջէ իրմէ, ո'չ թէ որովհետեւ իր հոգիին խաղաղութիւնը ա'յդ է որ ընել կը թելադրէ իրեն, այլ որովհետեւ Աստուած Քրիստոսի միջոցաւ ներած է իր անհամար մեղքերը: Աստուծոյ ներումին արժանացած մարդը եթէ չներէ իր նմանին, օր մը Քրիստոսի կողմէ պիտի լսէ հետեւեալ խօսքը. *«Չա'ր ծառայ, ամբողջ պարտքերդ շնորհեցի քեզի, որովհետեւ աղաչեցիր ինձի: Պէտք չէ՞ որ դուն ալ ողորմէիր ընկերոջդ, ինչպէս որ ես քեզի ողորմեցայ»* (Մտ 18.32-33):

Աստուծոյ ողորմութեամբ փրկուածներուն երբեք չի վայելեր անողորմ ըլլալ: Մեր անողորմութիւնը զԱստուած եւս անողորմութեան կը մղէ: Ահա թէ ինչո՛ւ Քրիստոս կ'ըսէ. *«Եթէ մարդոց չներէք իրենց յանցանքները, ձեր Հայրն ալ պիտի չներէ ձեր յանցանքները»* (Մտ 6.15): Այս խօսքը թող մեզի այն տպաւորութիւնը չտայ որ Աստուծոյ շնորհած ներումը պայմանաւորուած է մեր շնորհած ներումով:

Աստուած կը ներէ մեզի առանց սպասելու որ մենք ներենք իրարու: Աստուած կը ներէ մեզի Քրիստոսի՝ սիրոյն եւ ո'չ թէ մեր ցուցաբերած ներողամտութեան սիրոյն: Բայց կարեւոր է յիշել, որ եթէ շարունակենք աններողամտութիւն սնուցանել մեր սիրտերուն մէջ, Աստուած վերստին պիտի արձանագրէ մեր պարտամտութիւններուն մէջ մեր բոլոր այն մեղքերն ու յանցանքները որոնք ջնջած էր իր Որդիին միջոցաւ:

Պօղոս առաքեալ կ'ըսէ. *«Ինչպէս Աստուած Քրիստոսի միջոցաւ ներեց ձեզի, այնպէս ալ դուք իրարու ներեցէք»* (Կղ 3.13, Եփ 4.32): Պէտք է անսահմանօրէն ներենք իրարու, որովհետեւ Քրիստոս անսահմանօրէն ներեց մեզի: Չըսե՛նք ինչպէս ուրիշներ կ'ըսեն. *«Բաներ կան կը ներուին, իսկ բաներ ալ կան որ չեն ներուիր»*: Քրիստոսի սէրը ունեցող մարդուն համար չկա'յ մեղք մը որ չի ներուիր: Ունի՞ս նման սէր:



## ԻՆԿԱՇԸ ԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՎ ԶԱՅՆ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ԶԵՆՔ ԿՐՆԱՐ

*«Եղբայրներ, եթե պատահի որ մէկը որեւէ յանցանքի վրայ բռնուի, դու՛ք՝ որ Սուրբ Հոգիով կ'առաջնորդուի՛ք՝ պէտք է հեզութեամբ գայն ուղիղ մամբու բերէ՛ք» (Գղ 6.1):*

Շուրջ երկու հազար տարիներ առաջ արձանագրուած այս բառերը ա'յնքան այժմէական են որքան երբ գրուեցան: Մարդ չկա՛յ որ յանցանք չի գործեր: Ոմանք կը գործեն եւ կը բռնուին, իսկ ոմանք ալ կը գործեն եւ չեն բռնուիր: Առաքեալը Սուրբ Հոգիով առաջնորդուողներուն կը թելադրէ հեզութեամբ մամբու բերել յանցանքի վրայ բռնուող մարդը:

Շատ քիչ կը հանդիպինք հեզութեամբ ուրիշները մամբու բերող մարդոց, որովհետեւ քիչ է թիւը այն մարդոց՝ որոնք Սուրբ Հոգիով կ'առաջնորդուին: Ընդհանրապէս մարդիկ բռնի ուժով կը փորձեն ուղղութեան բերել ուրիշը: Բռնութիւն եւ բռնակալութիւն բանեցնողը, չի կրնար Աստուծոյ գաւակը ըլլալ, որովհետեւ հոն *«ուր որ Տիրոջ Հոգին ներկայ է՝ հոն ազատութիւն է»* (Բ.Կր 3.17):

Վա՛յ եկեր է եթէ յանցանք գործող մէկը իյնայ Աստուծմէ չվախցող եւ Սուրբ Հոգիով չառաջնորդուող մարդոց ձեռքը: Անոնք իրենց կծու եւ բարկ լեզուով ա'յնքան սուր կերպով կը քննադատեն, կը բամբասեն եւ կը չարախօսեն գայն, այն տպաւորութիւնը տալով իրենց շուրջիներուն, որ իրենց գլխաւոր նպատակը յանցագործը առաջնորդելն է դէպի ամբողջական խորտակում եւ կործանում:

Այսպիսի մարդիկ Սատանային պաշտօնեաներն ու կամակատարներն են: Սատանային յատուկ գործելակերպն է յարձակիլ յանցագործին վրայ եւ ջանալ գայն նզմել: Սատանան կը փորձէ յանցագործը համոզել որ իր գործած յանցանքը ահաւոր եւ աններելի յանցանք մըն է, որպէսզի գայն առաջնորդէ դէպի կատարեալ յուսալքութիւն: Սատանան շատ լաւ գիտէ որ եթէ կրցաւ յանցագործ մարդը մղել յուսալքութեան՝ անոր համար վերականգնելու յոյս չի մնար:

Երբ յանցագործը հանդիպի հարուածի մը, Սատանան կը ջանայ իսկոյն ուրիշ հարուած մը եւս հասցնել անոր, որպէսզի ան առիթը չունենայ ինքզինք գտնելու եւ ինքնագիտակցութեան գալու: Այս երեւոյթը ինծի կը յիշեցնէ կոփամարտիկներու կոռուածելը: Երբ կոփամարտիկներէն մին յաջողի բռունցքի ջախջախիչ հարուած մը հասցնել հակառակորդին եւ երբ նշմարէ արեան հետք անոր երեսին վրայ, ո՛չ միայն չի գթար, այլ ընդհակառակը, իսկոյն իրերայաջորդ հարուածներով կ'աշխատի անոր ցաւին վրայ ցաւ եւ խոցին վրայ խոց աւելցնելով, զինք տապալել միանգամընդմիշտ:

Եթէ երբեք կոփամարտիկը իր մրացակիցին դէմքին վրայ յոգնածութիւն նկատէ, աւելի՛ կատաղօրէն կը յարձակի անոր վրայ, առիթ չտալու համար անոր ինքզինք գտնելու եւ վերստին բռնցքահարելու: Իր

յանցագործ եղբայրը ֆննադատող եւ պախարակող մարդը արիւննուշտ կոփամարտիկէն ո՛չ մէկ տարբերութիւն ունի: Դատապարտիչ լեզու ունեցողները նաեւ, կոփամարտիկներու նման չեն գթար եւ չեն խղճար երբ կը տեսնեն իրենց եղբայրը կամ բոլորը վիրաւոր եւ ցաւի մէջ, ընդհակառակը, իրենց բերանները լայն բանալով կ'ըսեն. *«Աստուած գիտէ թէ ի՛նչ մեղք գործած է որ այս բոլորը իր գլխուն եկան»*: Այսպիսիները չեն գիտակցիր թէ իրենք մահացո՛ւ մեղք է որ կը գործեն երբ իրենց նմանը մեղապարտ եւ յանցապարտ կը հռչակեն:

Այսպիսիներուն եղբայրակործան վերաբերմունքը անհունօրէն կը վշտացնէ Աստուծոյ սիրտը: Պօղոս առաքեալ *«գայն ուղիղ նամբու բերէ՛ք»* բառերով կը յանձնարարէ մեզի որ մեր նմանները վերականգնեցնող մարդիկ ըլլանք եւ ո՛չ թէ զգեստնող մարդիկ: Աստուծոյ կա՛մքն է որ իւրաքանչիւր մարդ վերականգնեցնող, վերագորացնող, եւ իր եղբօր թեւ ու թիկունք կանգնող մարդ ըլլայ:

Եթէ երբեք իւրաքանչիւր մարդ որ լոյս աշխարհ կու գայ, փորձէ վիշտ մը կամ թշուառութիւն մը վերացնել այս աշխարհէն, ես կը հաւատամ, որ ամէն տեսակի դժբախտութիւն կը վերնայ այս աշխարհէն եւ աշխարհ կը լեցուի խաղաղութեամբ եւ երջանկութեամբ: Դժբախտաբար սակայն, մարդիկ վիշտն ու թշուառութիւնը հալածելու փոխարէն, վշտահարներն ու թշուառներն են որ կը հալածեն: Ո՛չ ոք թշուառները հալածելով կրնայ վերջ դնել թշուառութեան: Ինչպէս մէկը կրակին մէջ փայտ նետելով չի կրնար կրակը շիջեցնել, այնպէս ալ ո՛չ ոք կրնայ դատապարտութեան փայտահարումներով ուղղութեան բերել իր նմանը:

Երբեմն կը հանդիպինք ֆննադատող, բամբասող ու մեղադրող մարդոց, որոնք սակայն իրենք գիրենք աւելի սրբագրող, ուղղութեան բերող եւ ճշդող կը կոչեն քան մարդակործան էակներ: Այսպիսիներուն կը յիշեցնեմ որ ֆննադատութիւնը անուղիղ բան մըն է:

Անուղիղ միջոցներով չենք կրնար ուրիշները ուղղութեան հրաւիրել: Թերիները մատնանշելով մէկը չի՛ կրնար այլոց մղել իրենց դերակատարութեան: Ուրիշներուն սխալները մատնացոյց ընելով չենք կրնար գիրենք սրբագրել: Կոշտ վերաբերմունք եւ կծու լեզու ունեցող մարդը չի կրնար այլոց նամբու բերել: Ահա թէ ինչո՛ւ առաքեալը կ'ըսէ. *«Պէտք է հեղութեամբ գայն ուղիղ նամբու բերէ՛ք»*: Գոռոզ մարդը չի կրնար իր նմանը խոնարհութեան առաջնորդել: Ժողովրդական առածը կ'ըսէ. *«Անոյշ լեզուն օձը ծակէն կը հանէ»*: Կարելի բան չէ որ դառն լեզու մը յաջողի Քրիստոսի փաղցրութեան վկան դառնալ:

Մենք չենք գարմանար երբ աշխարհով առաջնորդուող մարդոց մօտ գտնենք աւերիչ լեզու եւ կորստաբեր վարուելակերպ, բայց կը գարմանանք երբ Սուրբ Հոգիով առաջնորդուող հաւատացեալներու մօտ գտնենք այդպիսի լեզու եւ վարուելակերպ:

*«Եթէ պատահի որ մէկը որեւէ յանցանքի վրայ բռնուի»*: Խօսքին շրջագիծը կը պարզէ որ առաքեալը հոս յանցանք գործող հաւատացեալ

Եղբոր մը մասին է որ կը խօսի եւ ո՛չ թէ պատահական մէկու մը մասին:  
Ան կը յանձնարարէ որ հաւատքի մարդը մեղքի մէջ ինկած իր  
հաւատակից եղբոր նկատմամբ աստուածահանոյ վերաբերմունք ունենայ  
եւ օգնէ իրեն ձերբազատելու մեղքի նիրանէն:

## ԽԱՌՈՒԱԾ ՀԱՒԱՏԱՑԵԱԼՆԵՐ ԿԱՄ ԱՆՀՈԳԻ ԿՐԾՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Որքան մարդիկ կան որոնք իրենց ամբողջ սիրտով կը հաւատան թէ իրենք փրկուած են կամ փրկութեան արժանի: Եթէ ասոնցմէ մէկուն կամ միւսին մօտենանք եւ հարց տանք թէ ի՞նչ բանը իրեն կը վստահեցնէ թէ ինք փրկուած մըն է, ան պիտի պատասխանէ ըսելով. *«Ես ամէն օր Սուրբ Գիրք կը կարդամ: Ես ամէն Կիրակի եկեղեցի կ'երթամ եւ Սուրբ Հաղորդութիւն կը ստանամ: Ես երկար տարիներէ ի վեր այսինչ կամ այնինչ հոգեւոր ժողովարանը կը յանախեմ: Ես... Ես... Ես...»:*

Ո՛հ, այս ես-ը քանի՛ քանի՛ հազարաւոր մարդոց տունը քանդած է: Այս ես-ը ապացոյց մըն է մեր կորսուած ըլլալուն եւ ո՛չ թէ մեր փրկութեան: Երբ Քրիստոս վերադառնայ այս աշխարհ դատաստանի համար, անհամար թիւով եկեղեցի յանախող մարդիկ պիտի աղաղակեն ըսելով. *«Տէ՛ր, չէ՞ որ մենք ամէն Կիրակի եկեղեցի կու գայինք: Չէ՞ որ մենք միշտ մարմինդ եւ արիւնդ կը նաշակէինք: Չէ՞ որ մենք Սուրբ Գիրքդ կը կարդայինք եւ ուրիշներուն ալ կը թելադրէինք կարդալ»:* Եւ այսպէս, *«չէ՞ որ մենք»*–երու անհուն շարք մը պիտի լսուի: Տէրը այդպիսիներուն պիտի պատասխանէ ըսելով. *«Բնա՛ւ ձեզ չեմ նանչնար: Հեռացէ՛ք ինձմէ դուրս բոլորդ, որ չարիք կը գործէիք»* (Մտ 7.23):

Այսօր որքան որքան Փարիսեցիներ կան մեր մէջ որոնք Փարիսեցիացած են կամայ, իսկ ոմանք ալ՝ ակամայ: Փարիսեցիներ, որոնք աղօթքի ընթացքին իրենց ձեռքերը կ'երկարեն դէպի Աստուած, բայց կը զլանան զանոնք երկարելու դէպի իրենց ինկած եւ անօթի եղբայրը: Փարիսեցիներ, որոնք իրենց ծունկերը կը խոնարհեցնեն եկեղեցիներուն մէջ Աստուծոյ ներկայութեան, բայց անդին, կ'անարգեն եւ կ'ոտնակոխեն խոնարհն ու հեզը: Փարիսեցիներ, որոնք եկեղեցի մտնելուն պէս մոմ կը վառեն, առանց անդրադառնալու որ նախ իրենց սիրտերուն մէջ Յիսուսի սէրն ու հաւատքն է որ պէտք է արծարծեն: Փարիսեցիներ, որոնք պատարագի ներկայ կ'ըլլան կամ պատարագ կը մատուցանեն, բայց սակայն երբեք չեն փաշտուիր նուագագոյն շահի կամ չնչին հաշիւի համար պատարագելու իրենց եղբայրը կամ քոյրը:

Փարիսեցիները ձեւապաշտութեան, ձեւականութեան եւ ծիսակատարութեան մէջ անմրձելի էին: Քրիստոս իրենց այս վերաբերմունքին համար խի՛ստ կերպով յանդիմանեց զիրենք (Մտ 23): Աստուած չի հանդուրժեր ձեւապաշտութիւն, ձեւականութիւն, չոր ու ցամաք ծիսակատարութիւն եւ բարեպաշտական արտաքին կերպեր: Ծէսը կը մեռնի՛ երբ Աստուծոյ Հոգին բացակայ է անկէ: Ծիսակատարը կը դառնայ ձեւապաշտ եւ կեղծաւոր երբ իր կատարածը հաւատքի արդիւնք չէ: Աշխարհի մէջ ո՛չ ոք փրկուած է եւ ո՛չ ոք պիտի փրկուի ծիսակատար, խորհրդակատար, փարոզիչ կամ փարոզ լսող ըլլալուն համար:

Ո՛չ մնայուն կերպով եկեղեցի յաճախողը իր եկեղեցագնացութեամբ թող պարծի եւ ո՛չ ալ եկեղեցիէն ներս առաւօտէն մինչեւ իրիկուն Աստուծոյ աղաղակողը: Ո՛չ յարատեւօրէն Սուրբ Գիրք կարդացողը թող հպարտանայ եւ ո՛չ ալ Սուրբ Գիրք ֆարոգողը: Ո՛չ մում վառողը թող կարծէ որ գԱստուած կը գոհացնէ եւ ո՛չ ալ ինֆզինֆ վառողը (Ա.Կր 13.3): Ո՛չ Աստուծոյ մասին խօսող եկեղեցականը թող ենթադրէ որ ինֆ գԱստուած կը ֆանչնայ եւ ո՛չ ալ ուրիշները Աստուծոյ բերող մը թող խորհի որ ինֆ Աստուծոյ եկած անձ մըն է:

Աստուծոյ համար երբեք կարելորութիւն չի ներկայացներ թէ ֆանի՛ անգամ եկեղեցի գացած ենֆ, ֆանի՛ անգամ Սուրբ Գիրքը կարդացած ենֆ, ֆանի՛ անգամ Սուրբ Հաղորդութիւն ստացած ենֆ, ֆանի՛ անգամ եւ ֆանի՛ անհատներու օգնած ենֆ, ֆանի՛ մարդ կրցած ենֆ իրեն բերել, ֆանի՛ ֆարոգ տուած կամ լսած ենֆ, ֆանի՛ աղօթատեղիներ գացած ու աղօթած ենֆ: Աստուծոյ համար մէ՛կ բան կարելոր է. ընդունա՞ծ ենֆ իր Որդին իբրեւ մեր անձերուն Տէրն ու Փրկիչը:

Աստուծոյ մասին խօսող ամէն մարդ Աստուծոյ սրտին խօսող մը չէ: Եկեղեցի եկող ամէն անհատ Աստուծոյ եկող մը չէ: Եկեղեցիին անդամ եղող մը Քրիստոսի չէ որ անդամ եղած կ'ըլլայ: Հաղորդութիւն ստացող իւրաքանչիւր անձ Աստուծոյ հետ հաղորդութիւն ունեցող մը չէ: Ո՛չ մեր թափած արցունքները կրնան իբրեւ փաստ ծառայել որ մենֆ Աստուծոյ գաւակներն ենֆ եւ ո՛չ ալ մեր ծունկի գալը անոր խաչին ներքեւ: Ո՛չ մեր բարձրացուցած ձեռքերը ապացոյց են որ մենֆ իսկապէս գԱստուած պաշտողներ ու փառաբանողներ ենֆ եւ ո՛չ ալ մեր երգած հոգեւոր երգերը:

Քրիստոս կ'ըսէ. *«Ճշմարիտ երկրպագուները հոգիով եւ նշմարտութեամբ պիտի պաշտեն Հայրը, որովհետեւ Հայրն ալ կ'ուզէ որ իր երկրպագուները այդպիսին ըլլան»* (Յն 4.23): Ի՞նչ է Քրիստոսի ըսել ուզածը այստեղ: Իր ըսել ուզածը այն է, որ Աստուած իր երկրպագուներուն մէջ սի՛րտ եւ հոգի՛ կ'ուզէ տեսնել եւ ո՛չ թէ պարզապէս շարժող շրթունֆ եւ ծնրադրող ծունկ: *«Ճշմարտութեամբ պիտի պաշտեն Հայրը»*: Դժբախտութիւն է տեսնել մարդիկ, հոգեւորական թէ աշխարհական, որոնֆ նշմարիտ Աստուածը ստութեամբ կը պաշտեն: Կրօնասէր կամ կրօնաւոր ըլլալ բնա՛ւ չի նշանակեր աստուածասէր ըլլալ:

Պօղոս առաքեալ խօսքը ուղղելով Աթենացիներուն, ըսաւ. *«Ո՛վ Աթենացիներ, կը տեսնեմ որ ծայր աստիճան կրօնասէր էֆ ամէն ինչով. որովհետեւ երբ կը պտըտէի եւ աչֆէ կ'անցընէի ձեր պաշտամունքի վայրերը, տեսայ բազին մը, որուն վրայ գրուած էր "Անծանօթ Աստուծոյ": Ահա, ինչ որ դու՛ք առանց ֆանչնալու կը պաշտէֆ՝ նոյնը կը ֆարոգեմ ես ձեզի»* (Գրծ 17.22): Համաձայն այս բառերուն, մեր կրօնասիրութիւնը փաստ մը չէ որ մենֆ աստուածասէր եւ գԱստուած ֆանչցող մարդիկ ենֆ: Տուեալ բառերով առաքեալը մեզ կրօնասիրութենէ դէպի աստուածասիրութիւն եւ աստուածֆանաչողութիւն կը հրաւիրէ:

## ՄԵՐ Ա.Ձ ԵՐԵՍԸ ԱՊՏԱԿՈՂԻՆ ՄԻՒՍ ԵՐԵՄՆ ԱԼ ՊԷՏՔ Է ԴԱՐՁՆԵՆՔ

«Մի՛ հակառակիր քեզի չարիք ընողին: Եթե՛ մեկը աջ երեսիդ ապտակ գարնե՛՛ միևս երեսդ ալ դարձուր անոր» (Մտ 5.39): Այս համարը Աստուածաշունչի ամենէն պարզիմաստ համարներէն մէկն է, բայց զարմանալիօրէն յաճախ ատիկա սխալ բացատրուած եւ մեկնաբանուած է մարդոց կողմէ: «Եթե՛ մեկը աջ երեսիդ ապտակ գարնե՛՛ միևս երեսդ ալ դարձուր անոր»: այս խօսքին իմաստն ու նշանակութիւնը պարզ կը դառնայ եթէ երբեք աչքի առջեւ ունենանք զինքնախորհող խօսքը. «Մի՛ հակառակիր քեզի չարիք ընողին»:

Հիմնական դասը որ Քրիստոս կ'ուզէ այստեղ մեզի սորվեցնել այն է, որ մարդ արարածը պետք չէ փորձէ վրէժխնդիր ըլլալ անձնապէս: Ո՛չ Հին Կտակարանը եւ ո՛չ ալ Նոր Կտակարանը կը խօսին անձնական վրէժխնդրութեան սկզբունքին մասին: Ընդհակառակը, անոնք բազմիցս կը շեշտեն որ վրէժխնդրութիւնը Աստուծոյ կը պատկանի (Բ.Օր 32.35, Ես 34.8, Հո 12.19):

«Աչքի դէմ՝ աչք պիտի հատուցանես եւ ակոյսի դէմ՝ ակոյս» (Մտ 5.38): Քրիստոսէ առաջ, ինչպէս նաեւ Քրիստոսի ժամանակակից Հրեաներ այս բառերուն ետին անձնական վրէժխնդրութեան սկզբունքի մը հաստատումն էր որ կը տեսնէին: Ճշմարտութիւնը սակայն տարբեր էր: Աստուծոյ պահանջածը իր ժողովուրդէն չարիքը չարիքով չհակադարձելն էր: Աստուած կ'ուզէ մեզի սորվեցնել որ մեր աչքը հանողին աչքը հանելով ո՛չ յաղթանակ է որ ձեռք ձգած կ'ըլլանք եւ ո՛չ ալ արդարութիւնն որ տիրած կ'ըլլայ:

Նման իսիստ օրէնքի մը տրւելութեամբ, Աստուած հիմնական մէկ նպատակ կը հետապնդէր՝ հեռու՛ պահել մարդը չարիք գործելու իր տրամադրութենէն: Արդարեւ, չենք կրնար ուրանալ որ նման օրէնք մը կը սանձէ եւ կը զսպէ չարագործ մարդուն չարաբոյր ախորժակը: Չարագործ մարդը եթէ ուզէ դիմացիներն աչքը հանել, նախ բնականօրէն պիտի մտածէ որ ի՛ր ալ աչքը պիտի հանեն, եւ այս մտածումը, պատճառ կ'ըլլայ որ հրաժարի դիմացիներն աչքը հանելու իր չար մտադրութենէն: Մեզմէ ո՞վ պիտի ուզէր իր նմանին ակոսան փշրել եթէ երբեք գիտնար որ իր ալ ակոսան պիտի փշրուի:

Բայց Քրիստոսի մեզի սորվեցուցածը այն չէ, որ չարիքէ հեռու կենանք որպէսզի չարիքի չհանդիպինք: Քրիստոս երկու քայլ առջեւ գնաց իր ուսուցումին մէջ: Առաջին քայլը կը տեսնենք Մտ 5.39-ին առաջին բաժինին մէջ. «Մի՛ հակառակիր քեզի չարիք ընողին»: Քրիստոս անոխակալութեան սկզբունք մըն է որ կը հաստատէ այստեղ: Մէկու մը աչքը հանելը չարիք մըն է: Նման արարքի մը կատարումը որեւէ ձեռով չ'արդարացուիր:

Մեզի հակառակողին հակառակիր՝ անոր մակարդակին իջնել է: Բամբաստողին բամբասելը՝ բամբասող դառնալ է: Զարիֆ ընողին չարիֆ ընելը՝ չարագործութիւն է: Զարեհ Արֆ. Ազնաւորեան խօսելով վերոյիշեալ համարին մասին կ'ըսէ. «*Երբ մէկը չարիֆ կ'ընէ, յստակ կը դառնայ որ ան բարիին գիտութիւնը եւ ծանօթութիւնը չունի, բարիին գօրութիւնը չի գիտեր: Մեզի չարիֆ գործողին դէմ չարիֆ որդեգրել եւ նոյն ձեւի պատասխան տալ, կը նշանակէ ուրանալ այդ բարիքը*»:

Երկրորդ ֆայլը կը տեսնենք տուեալ համարին երկրորդ կէսին մէջ. «*Եթէ մէկը աջ երեսիդ ապտակ գարնէ՝ միւս երեսդ ալ դարձուր անոր*»: Քրիստոս չի գոհանար չարիֆ գործողին չհակառակիլ թելադրելով, այլ ֆայլ մը եւս առջեւ կ'երթայ եւ կը պատուիրէ ի պահանջել հարկին զիջում կատարել. «*Միւս երեսդ ալ դարձուր անոր*»: Այս խօսքը բառացիօրէն պէտք է հասկնալ: Քրիստոս ինքն իսկ իր այս խօսքը բառացիօրէն չհասկցաւ: Յիշեցէք որ երբ Յիսուս Հաննա ֆահանայապետին առջեւ կանգնած էր եւ համարձակութեամբ կը խօսէր, ֆահանայապետին «*սպասաւորներէն մէկը, որ հոն կեցած էր, ապտակ մը գարկաւ Յիսուսի*»: Յիսուս իր միւս երեսը չդարձուց եւ ո՛չ ալ լուռ կեցաւ, ընդհակառակը, ձեռով մը արդարութիւն է որ պահանջած եղաւ երբ ըսաւ. «*Եթէ սիսլ բան մը խօսեցայ՝ ցոյց տուր սիսլը. իսկ եթէ շիտակ է ըսածս՝ ինչո՞ւ կը գարնես ինձի*» (Յհ 18.23):

Մտաբերեցէք նաեւ Պօղոս առաքեալին օրինակը: Երբ ան Ատեանին առջեւ կանգնելով իր անձին վերաբերեալ վկայութիւն մը տուաւ, «*Անանիա ֆահանայապետը սպասաւորներուն հրամայեց որ անոր բերանին գարնեն*» (Գրծ 23.2): Պօղոս լուռ չկեցաւ եւ ո՛չ ալ ապտակող սպասաւորին ըսաւ. «*Հանիս անգամ մը եւս զիս ապտակէ*», այլ իր աչքերը յառելով Անանիա ֆահանայապետին, ըսաւ. «*Թող Աստուած քեզի գարնէ, ներմկցուած պատ. նստեր ես՝ Օրէնքով զիս դատելու համար, եւ ապօրէն հրաման կու տաս որ գարնե՞ն ինձի*» (Գրծ 23.3):

Առաքեալին ընդվզումը հարկաւ միայն իր ապտակուելուն համար չէր, այլ նաեւ Օրէնքի խախտումին եւ անարգումին համար էր: Եթէ երբեք ո՛չ քրիստոնէութեան հիմնադիրը՝ Քրիստոս, եւ ո՛չ ալ քրիստոնէութեան մեծագոյն տարածիչը՝ Պօղոս, ապտակուելով լուռ կեցան կամ խնդրեցին որ անգամ մը եւս ապտակուին, մե՛նք նաեւ, միշտ չէ որ լուռ պէտք է կենանք երբ մեր իրաւունքը կը խլեն, երբ նշմարտութիւնը կը խեղաթիւրեն եւ երբ ազատը կ'ոտնակոխեն:

Քրիստոնեայ մարդը կոչուած է ըլլալու ձայնը արդարութեան, շեփորահարը նշմարտութեան: Պատահեցաւ որ Քրիստոս ապտակուի եւ լուռ եւ պատահեցաւ որ ապտակուի եւ արդարութիւն պահանջէ: Պօղոս առաքեալ նաեւ, երբեմն լուռ, երբեմն բարկացաւ եւ յանդիմանեց, երբեմն թելադրեց եւ սաստեց: Այս իրողութիւնը կը պարզէ, որ քրիստոնեայ մարդը պէտք է գիտնայ թէ ե՛րբ պէտք է լուռ եւ ե՛րբ պէտք է խօսի, ե՛րբ պէտք է խաղաղ մնայ եւ ե՛րբ պէտք է տագնապի:

Հետեւաբար, «միւս երեսդ ալ դարձուր» խօսքով, Քրիստոս լռութեան եւ անտարբերութեան կոչ մը չէ որ կ'ուղղէ մեզի, ո՛չ ալ տկարանալու եւ վախնալու հրաւեր մըն է որ կը կարդայ, այլ պարզապէս, չարին չընդդիմանալու, գիջում ընելու, ներողամիտ կեցուածք ունենալու, եւ չարին բարիով յաղթելու թելադրանք մըն է որ կ'ընէ:



## ԱՅՆ ԾՆՈՂԸ ՈՐ ԿԸ ՍԻՐԷ ԻՐ ԶԱԻԱԿԸ՝ ԹՈՂ ԶԱՅՆ ՄՕՏԵՑՆԷ ՔՐԻՍՏՈՍԻ

Եթէ երբեք կը կարծենք որ մեր սէրն է որ արտայայտած կ'ըլլաք մեր գաւակներուն նկատմամբ տալով անոնց ինչ որ կ'ուզեն ու կը փափաքին, ասիկա զանոնք սիրել չեղաւ, այլ զանոնք կործանել: Ծնողներ իրենց գաւակներուն պէտք չէ տան ու արտօնեն ինչ որ անոնք կ'ուզեն ու կը սիրեն, այլ պէտք է տան ու արտօնեն միայն այն՝ ինչ որ օգտակար է անոնց: Պօղոս առաքեալ այս ուղղութեամբ կ'ըսէ. *«Ամէն ինչ արտօնուած է ինծի, բայց ամէն ինչ օգտակար չէ...»* (Ա.Կր 10.23 Հմմտ 6.12):

Կեանքի մէջ շատ բաներ կան որ կրնանք ընել որոնք սակայն օգտակար չեն: Եթէ մէկը ուզէ շատակերութիւն ընել՝ արգիլող չկա՛յ, բայց մեզմէ ո՞վ չի գիտեր շատակերութեան վնասները: Եթէ մայր մը ուզէ իր գաւակին արգիլել որ եկեղեցի յանախէ կամ Սուրբ Գիրք կարդայ՝ մէկը չի կրնար պահանջել իրմէ որ փոխէ իր վերաբերմունքը, բայց դարձեալ, ո՞վ չի գիտեր որ այդ մայրը դէպի ամբողջական կործանում կ'առաջնորդէ իր գաւակը. ո՞վ չի գիտեր որ ան պատասխանատու է Աստուծոյ առջեւ, իր գաւակին առջեւ, եւ բոլոր այն մարդոց առջեւ՝ որոնց գայթակղութեան պատճառ դարձած է ու կը դառնայ:

Յիշեցէք Հեղի քահանային օրինակը: Ան իր գաւակներուն՝ Ոփնիին ու Փենէհէսին նկատմամբ իր ցուցաբերած անտարբեր ու անհոգ վերաբերմունքին պատճառով՝ գայթակղութեան պատճառ դարձած էր ամբողջ ժողովուրդին համար (Ա.Թգ 2.22-24): Աստուածաշունչը կը պարզէ որ Հեղի քահանան երբեք խիստ չէ եղած իր գաւակներուն հանդէպ: Ան նոյնիսկ չէ սանձած ու չէ յանդիմանած զիրենք երբ անոնք խախտած ու անարգած են աստուածադիր օրէնքներն ու պատուիրանները: Ա՛յս է ինչ որ ցոյց կու տայ Աստուծոյ խօսքը ուղղուած Հեղի քահանային. *«Իմ տանս համար պատուիրած գոհերս ու ընծաներս ինչո՞ւ կ'անարգես եւ քու որդիներդ ինձմէ աւելի կը փառաւորես, որպէսզի իմ ժողովուրդիս Խրայէլի ընտիր գոհերովը դու՛ք ձեզ գիրցնէք»* (Ա.Թգ 2.29):

Հաւանաբար հայրական «սէրէ» մղուած, Հեղի քահանան չէ ուզած իր գաւակները հեռացնել քահանայական պաշտօնէն. բայց այսպիսի սխալներու լոնը սիրոյ կամ բարեացակամութեան արտայայտութիւն չէ, այլ՝ բացարձակ անպատասխանատուութեան եւ անտարբերութեան արտայայտութիւն: Մայր մը կամ հայր մը պէտք չէ լոնն իրենց գաւակին սխալին, մանաւանդ եթէ երբեք այդ սխալը ուղղուած է Աստուծոյ դէմ:

Ոփնիին եւ Փենէհէսին սխալն ու մեղքը ուղղուած էր Աստուծոյ դէմ. նոյնիմօն Հեղի այս բանը կը հաստատէ. *«Եթէ մարդ մը մարդու դէմ մեղք գործէ, անոր դատաստանը Աստուած կ'որոշէ, բայց եթէ մարդ մը Տիրոջը դէմ մեղք գործէ, անոր համար ո՞վ աղաչանք պիտի ընէ»* (Ա.Թգ 2.25): Իր գաւակին աստուածամարգութեան նկատմամբ հաղորժողութիւն յայտնաբերող մայրը՝ անհանդուրժելի կը դառնայ Աստուծոյ համար:

Ծնողներ իրենց ծնողական պարտականութիւնը լիովին կատարած կ'ըլլան միայն ա՛յն ատեն՝ երբ առաջնորդեն իրենց մանուկները մանուկներու մեծ սիրահարին՝ Յիսուսի մօտ. *«Զգեցէ՛ք որ մանուկները ինձի գան, արգելէ՛ մի՛ ըլլա՛ք անոնց...»* (Մտ 19.14): Ի՛նչ ցաւալի բան է հանդիպիլ այնպիսի՛ ծնողներու որոնք չեն ուզեր որ իրենց զաւակները իրենց կանուխ տարիքէն յանձնուին Քրիստոսի՛ այն տրամաբանութեամբ կամ առարկութեամբ, որ իրենց զաւակները պիտի չկրնան վայելիլ իրենց մանկութիւնը, իրենց երիտասարդութիւնը, իրենց կեանքները: Անոնք չեն անդրադառնար որ Քրիստոսի հետ ըլլալն ու ապրիլը մեծագոյն հանոյժն է, գերագոյն վայելքն է: Քրիստոսէ հեռու ոչինչ կրնայ հանելի ըլլալ:

Ո՞վ ըսաւ որ Քրիստոսի յանձնուող մարդը կը դժբախտանայ: Փորձառո՞ւ մէկը: Քրիստոսի հետ ապրած ու անոր սիրոյն մէջ անա՞ծ մէկը: Ո՛չ մէկ անձ որ ապրած է Քրիստոսի հետ եկած է այն եզրակացութեան որ Քրիստոսի յանձնուիլն ու անոր հետ ապրիլը աղէտ է: Եթէ կայ այդպիսի անձ մը, մեր ամուր համոզումը այն է, որ այդ անձը երբեք ալ չէ ընդունած գՔրիստոս իր սրտին եւ հոգիին մէջ:

Դիտեցէ՛ք մարդկային կեանքի փորձառութիւնը եւ պիտի տեսնէ՛ք, թէ բոլոր այն ծնողները որոնք յանձնուած են Քրիստոսի՛ ֆաջալերած են նաեւ որ իրենց զաւակները յանձնուին, իսկ անոնք որոնք չեն յանձնուած Քրիստոսի՛ փորձած են նաեւ արգելի հանդիսանալ իրենց զաւակներուն այդ ֆայլը առնելու:

Իսկապէս իր զաւակը սիրող մայրը կամ հայրը, ամէն բանէ առաջ պէտք է ապահովեցնէ յաւիտենականութիւնը իր զաւակին: Իսկ զաւակին յաւիտենականութիւնը ապահովեցնելու միակ կերպը գայն Քրիստոսի ծանօթացնելն է: Քրիստոսէ հեռու չկա՛յ ապահովութիւն: Ոեւէ մայր կամ հայր իր սեփական նիգերով թող ի գուր տեղ չփորձէ ապահովութեան եւ վստահութեան զգացում ներշնչել իր զաւակին:

Ապահովութեան զգացումը մեր զաւակներուն մօտ հանդէս չի գար երբ անոնց անունով մեծ գումարներ դիզենք դրամատուններու մէջ, ո՛չ ալ եթէ յարկաբաժիններ արձանագրենք անոնց անուններով: Մեր զաւակներուն ապահովութիւնն ու յաջողութիւնը կախեալ չէ անոնց ունեցած նւիրակներէն, կարելիութիւններէն, հանգստաւէտ պայմաններէն կամ գործերու առատութենէն: Մեր զաւակները ապահովութեան զգացումով կը լեցուին միայն ա՛յն ատեն՝ երբ օգնենք անոնց իրենց սիրտերը բանալու Քրիստոսի շնորհին առջեւ:

Սիրելի՛ ընթերցող մայր եւ հայր, *«Տէրը իր սիրածը կը խրատէ, ինչպէս հայր մը իր սիրական զաւակին կ'ընէ»* (Ա.ո 3.12), ուստի, եթէ զաւակիդ կը սիրես, հետեւէ Տիրոջ օրինակին եւ ֆաղցրութեամբ «խրատէ» ու յանդիմանէ գայն երբ սխալ ընթացքի մէջ ըլլայ: Խրատելը անուշ-անուշ խօսիլը չէ միայն, այլ ի պահանջել հարկին պատժելն է նաեւ, ֆաղցրօրէն պատժելը: Զաւակիդ սխալ ընթացքին դիմաց մնայուն կերպով ներողամիտ ըլլալովդ կրնաս անոր յաւերժ կորստեան պատճառ դառնալ:

## ԱՍՏՈՒԱԾ ՉԻ՝ ԿԱՐԾՐԱՑՆԵՐ ՄԱՐԴՈՒՆ ՍԻՐՏԸ

Աստուած *«որուն որ ուզէ՝ կ'ողորմի եւ որուն որ սիրտը կարծրացնել ուզէ՝ կը կարծրացնէ»* (Հն 9.18): Ոմանք հիմնուելով այս համարին վրայ, կ'ուսուցանեն որ Աստուած որուն որ փրկել կ'ուզէ՝ կը կակուղցնէ անոր սիրտը եւ ապաշխարութեան արցունք կը շնորհէ անոր, իսկ որուն որ կորսնցնել կ'ուզէ՝ կը կարծրացնէ անոր սիրտը: Նման բացատրութիւն մը հետո՛ւ է մշմարիտ ըլլալէ: Պօղոս եւ Պետրոս կ'ուսուցանեն որ Աստուած քաղցրութիւն եւ համբերատարութիւն կը ցուցաբերէ մեր նկատմամբ որպէսզի մեզ ապաշխարութեան բերէ (Հն 2.4 Հմմտ Բ.Պտ 3.9): Անկարելի է որ Աստուած չողորմի մէկու մը որ իր ողորմութեան կ'ապաւինի:

*«Որուն որ սիրտը կարծրացնել ուզէ՝ կը կարծրացնէ»*: Աստուած իսկապէս կը կարծրացնէ՞ մարդուն սիրտը: Աստուած երբեք չի՛ կարծրացներ մարդուն կակուղ սիրտը, ո՛չ ալ կը դառնացնէ քաղցրութեամբ լեցուն հոգի մը: Ելից գիրքին մէջ կը կարդանք որ երբեմն Փարաւոն կարծրացուց ինքնիր սիրտը (Ել 8.32) եւ երբեմն ալ Աստուած ի՛նք կարծրացուց Փարաւոնին սիրտը (Ել 10.20):

Աստուած չկարծրացուց Փարաւոնին սիրտը: Աստուած պարզապէս Փարաւոնին սիրտին կարծրութիւնը օգտագործեց իր ծրագիրը իրականացնելու համար: Մէկը կրնայ չարիք մը ընել մեզի եւ Աստուած կրնայ օգտագործել այդ չարիքը եւ անկէ հոգեւոր օրհնութիւն մը քաղել մեզի համար, բայց այդ չի՛ մշանակել որ Աստուած ի՛նքն է այդ չարիքը ընողը կամ ընելու արտօնութիւնը տուողը:

Աստուած կրնայ թոյլ տալ որ կարծր սիրտ ունեցող մը պահէ իր սիրտին կարծրութիւնը, այդպէս ընելուն պարագային, կարծէք Աստուած ի՛նք կը նկատուի պատճառը անոր սիրտին կարծրութեան: *«Կարծէք»* կ'ըսեմ, որովհետեւ իրողութիւնը այդպէս չէ: Աստուած ինքզինք չի մանչցներ մէկու մը որ չ'ուզեր զինք մանչնալ: Այս ուղղութեամբ Պօղոս առաքեալ կ'ըսէ. *«Քանի որ չուզեցին զԱստուած մանչնալ, Աստուած ալ թոյլ տուաւ որ անոնք իրենց անարգ միտքերուն անձնատուր եղած՝ ընեն ինչ որ պէտք չէ ընել»* (Հն 1.28): Ըստ այս համարին, անոնք որոնք *«չուզեցին զԱստուած մանչնալ»*, Աստուած անոնց է որ թոյլ տուաւ որ *«իրենց անարգ միտքերուն անձնատուր եղած՝ ընեն ինչ որ պէտք չէ ընել»*: Կարելի՞ քան էր որ Աստուած անարգ միտքերու անձնատուր դարձնէ այնպիսի մարդիկ՝ որոնք զինք մանչնալ կ'ուզեն:

Երբ դէմ դնենք Սուրբ Հոգիին՝ ան կը հեռանայ մեզմէ (Ա.Թգ 16.14): Եթէ իսլամի գործեր կատարենք, անշուշտ որ Աստուած իր լոյսը պիտի չշողացնէ մեր վրայ: Եթէ մեր սիրտը կամաւորապէս կարծրացնենք, բնականօրէն մեր սիրտին մէջ աստուածադիր գորովի եւ գուրի ամէն զգացում պիտի չքանայ: Նոյնը չպատահեցա՞ւ Փարաւոնին հետ: Ան կամաւորապէս չկարծրացո՞ւց իր սիրտը: Թէպէտ Փարաւոն կարծր սիրտ մը ունէր, բայց այդ բոլոր նշաններն ու հրաշքները որոնց ականատեսը

եղաւ, իրեն համար առիթ մը չէի՞ն դառնալու Աստուծոյ: Փարաւոն օգտագործե՞ց առիթը: Հետեւաբար, «Տէրը կարծրացուց Փարաւոնին սիրտը» բացատրութիւնը, պարզապէս կը նշանակէ, որ Աստուած թոյլ տուաւ որ ան շարունակէր իր կարծր եւ կամակոր ընթացքին մէջ մնալ:

*«Այս ժողովուրդին սիրտը թանձրացուր եւ ականջները ծանրացուր ու անոր աչքերը գոցէ, որպէսզի չըլլայ թէ աչքերովը տեսնէ ու ականջներովը լսէ եւ սիրտովը իմանայ եւ դարձի գայ ու բժշկուի»* (Ես 6.10): Դարձեալ, անոնք որոնք կը հաւատան որ Աստուած որու որ չ'ուզեր փրկել՝ կը կարծրացնէ անոր սիրտը, այս համարը կը վկայակոչեն: Սա ողջմիտ մարդու տրամաբանութիւն չէ:

Ո՞վ է ան՝ որուն Աստուած «չ'ուզեր» կամ «չի՛ կրնար» փրկել: Կարելի՞ քան է որ Աստուած կարծրացնէ մեր սիրտը, ի՞նք՝ որ խոստացաւ ըսելով. *«Զեր մարմիններէն քարեղէն սիրտը պիտի հանեմ ու ձեզի մարմնեղէն սիրտ պիտի տամ»* (Եզ 36.26): Կարելի՞ քան է որ Աստուած ուրախանայ սիրտի կուրուքիւն տալով մեզի, ի՞նք՝ որ տրամեցաւ մեր սիրտի կուրուքեան համար (Մր 3.5): Կարելի՞ քան է որ սկիզբէն որոշած ըլլայ թէ որոնք պիտի չփրկուին, ի՞նք՝ որ աշխարհի սկիզբէն պատրաստած է երկինքի արքայութիւնը մարդոց համար (Մտ 25.34):

Աստուած կը հրամայէ Եսայի մարգարէին որ աստուածապաշտութիւն քարոզէ: Բնական է որ նման քարոզ մը աստուածապաշտ ըլլալ չուզողի մը սիրտը աւելի՛ կը կարծրացնէ: Մեղքով թմրած եւ մեղկացած մարդիկ երբ լսեն արթնութեան կոչեր աւելի՛ «կը ֆնանան» ու կը թմրին: Ո՞ր խաւարասէր մարդը լոյսի մասին դասախօսութիւն կ'ուզէ լսել: Ո՞ր չարագործ մարդը բարեգործութեան մասին ֆառ կը սիրէ լսել: Ո՞ր ժլատ մարդ ինքնիր ունեցածը եւ ինքզինք յանձնելու կոչ կ'ուզէ լսել:

Ինչպէս եթէ Ֆիզիքապէս անօթի եղող մեր «թշնամին» կերակրենք *«անոր գլխուն վրայ կրակի կայծեր»* դիզած կ'ըլլանք (Առ 25.21-22), այնպէս ալ եթէ Աստուծոյ խօսքը քարոզենք Աստուծոյ թշնամի եղող մարդոց, զանոնք դատապարտութեան տակ դրած կ'ըլլանք: Երբ նշմարտութիւնը քարոզենք մարդոց, անոնք պատասխանատու կը դառնան իրենց անձերուն, որովհետեւ եթէ ընդունին նշմարտութիւնը՝ կ'ազատին (Յհ 8.32), իսկ եթէ մերժեն զանիկա՝ կը կորսուին (Հո 2.8):

Երբ դարձի գալու կոչ կ'ուղղենք մէկու մը որ դարձի գալ չ'ուզեր, խորքին մէջ անոր պատիժը աւելի՛ անտանելի դարձուցած կ'ըլլանք: Երբ *«Բացէ՛ք ձեր հոգեւոր աչքերը»* կ'ըսենք այնպիսի մարդոց, որ բնա՛ւ չեն հետաքրքրուած հոգեւոր կեանքով, կարծէք մե՛նք է որ բոցած կ'ըլլանք անոնց աչքերը: «Կարծէք» կ'ըսեմ, որովհետեւ երբ նշմարտութիւնը կը հոչակենք, ձեւով մը անոնց աչքերուն բոց ըլլալուն իրողութիւնն է որ բացայայտած կ'ըլլանք: Սիրելի՛ բարեկամ, ինչպէս արեւէն միայն լոյս դուրս կ'ելլէ, այնպէս ալ մեր ֆաղք Տիրոջմէն միայն ֆաղքութիւն դուրս կ'ելլէ: Աստուած չի՛ խստացնէր մարդուն սիրտը: Ուրեմն, մի՛ խստացնէր սիրտդ ըսելով. *«Աստուած կը խստացնէ մարդուն սիրտը»*:

## ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՆ

Ոմանք այս դարը կը կոչեն *«կրօնի դար»* իսկ ուրիշներ՝ *«գիտութեան դար»*: Երկու որակումներն ալ նիշդ են: Ընդվզեցուցիչը սակայն այն է, որ կարգ մը «գիտուն» մարդիկ, իրենց գիտուն ըլլալը փաստելու համար կ'անգիտանան Ամենագէտին ներկայութիւնը:

Պէ՞տք է անտեսել Անհասանելիին, Ամենահասին, Արագահասին եւ Մշտահասին գոյութիւնը՝ մեր երագներուն հասնելու համար:

Կարելի՞ քան է որ մենք զմեզ արդարացնելու համար՝ արդարութեան Աստուածն ու արդարացնող Աստուածը յանցաւոր հանենք:

Կարելի՞ քան է մեր սխալները պարտկելու համար՝ անսխալական Աստուած սխալած յայտարարենք:

Կարելի՞ քան է մեր անպարտ ըլլալը փաստելու համար՝ Աստուծոյ պարտապան ըլլալը հոչակել:

Կարելի՞ քան է հրէշաբար կատարած մեր գործերը հրաշալիք սեպել, իսկ Աստուծոյ հրաշալուր հրաշագործութիւնները՝ նանրապատիր:

Գիտութիւնը սիրող մարդիկ խօսելով գիտութեան մասին, կ'ըսեն. *«Գիտութիւն եւ գիտնականներ հրաշք է որ կը գործեն: Անոնք հեզասահ ընթացք մը կու տան մեր կեանքին»*: Նոյն այս մարդիկը որոնք կը յայտարարեն որ գիտութիւնը հրաշք է որ կը գործէ, երբ կը լսեն Սուրբ Գիրքի հրաշքներուն մասին, կ'ըսեն. *«Անոնք առասպելներ են»*: Ո՞ր ողջմիտ մարդը չ'ընդվզիր այս երեւոյթին դիմաց:

Եթէ երբեք հրաշագործ անունը կու տանք մեր հաւասարներուն, հապա ինչո՞ւ հրաշագործ անունը չտանք անհաւասարին՝ Աստուծոյ:

Եթէ երբեք կը պարծենանք ինքնիր անձին տէրը ըլլալ չկրցող մարդու մը կատարած աշխատանքով, հապա ինչո՞ւ չպարծենանք աշխարհի Տէրն ու տիրականը եղող ամենակալ Աստուծով եւ մեր կեանքներուն մէջ անոր կատարած մեծամեծ գործերով:

Եթէ երբեք կարելի է հրաշք կոչել այն ինչ որ ողորմելի մարդիկ Աստուծոյ ողորմութեամբ կը կատարեն, հապա ինչո՞ւ հրաշք չկոչել այն ինչ որ ողորմածն Աստուած իր հրաշափառ գորութեամբ կը կատարէ:

Հեղինակ մը ըսած է. *«Պարգեւները ոչինչ կ'արժեն առանց Պարգեւատուին»*: Մարդիկ որոնք իրենց տրուած պարգեւներով, իմաստութեամբ եւ բանականութեամբ մեծամեծ իրագործումներ կը կատարեն, պէտք չէ ուրանան զԱստուած, որ այդ բոլորին ետին կանգնողն ու այդ բոլորը յաջողութեամբ պսակողն է:

Քրիստոնեայ մարդուն վերաբերմունքը հիմնովին տարբեր պէտք է ըլլայ նման գիտնականներէ: Գիտնական մարդը երբ իր կատարած մեծ գործերով կը հպարտանայ՝ իր անձն է որ փառաբանած կ'ըլլայ, մինչ անդին, քրիստոնեայ մարդը իր կատարած գործերուն մէջ Աստուծոյ գործակցութիւնն ու միջամտութիւնն է որ կը տեսնէ, եւ փառքը միայն փառքի թագաւորին՝ Քրիստոսի կը յատկացնէ:

Եթէ գիտութեան հետամուտ եղող մարդը իր կարողութիւնները ի գործ կը դնէ հասկնալու համար հիմնադրութիւնը այս աշխարհին, ապա, քրիստոնեայ մարդը կոչուած է իր հաւատքը օգտագործելու, հասկնալու համար ո՛չ թէ հիմնադրութիւնը այս աշխարհին, այլ՝ Հիմնադիրը, Ապրեցնողը, Հայթայթիչը, Տէրն ու Տիրականը այս աշխարհին:

Եթէ գիտնականին հետաքրքրութեան առարկան այս տեսանելի աշխարհն է, ապա քրիստոնեայ մարդուն հետաքրքրութեան առարկան պէտք է ըլլայ անտեսանելի աշխարհը. այն աշխարհը՝ որուն յոյսով ապրիլ եւ որուն մասին խոկալ կը սորվեցնէ մեզի Աստուածաշունչը (Կղ 3.2):

Եթէ գիտնականներ կը ջանան դէպի մոլորակները տանող նամբայ գտնել, ապա քրիստոնեայ մարդը կ'աշխատի ցոյց տալ մեզի այն Ճամբան՝ որ մեզ կ'առաջնորդէ մոլորակներուն Ստեղծիչին եւ Պահապանին:

Եթէ մոլորակներուն մեծութիւնը մեզ կը զարմացնեն, որքա՞ն աւելի մեզ պէտք է զարմացնէ Աստուած, որուն ձեռքերուն մէջ մոլորակները ա՛յն են՝ ինչ որ է կաթիլ մը ջուրը ամբողջ ովկիանոսին մէջ:

Եթէ երբեք անխորատես գիտնականներ խորխորատներուն խորերը կը խորասուզուին խորապէս ֆանչնալու համար անոնց խրթնութիւններն ու խնդիրները, անդին քրիստոնեայ մարդը՝ խոնարհ եւ խոհեմ, Աստուծոյ խորախորհուրդ սիրտին մէջ է որ խորամուխ ըլլալ կը խորհի՝ խելամուտ դառնալու անոր անխար, անխախտ եւ անխարդախ սիրոյն:

Եթէ գիտնականը կը փորձէ գիտնալ թէ մարդն ու աշխարհ ինչպէ՞ս եւ ե՞րբ գոյացան, անդին, քրիստոնեայ մարդը պէտք է փորձէ գիտնալ ո՛չ թէ մարդն ու աշխարհ ինչպէ՞ս ստեղծուեցան, այլ ինչո՞ւ ստեղծուեցան եւ ինչո՞ւ Քրիստոս աշխարհ գալով իր արիւնը թափեց: «Ինչպէս»-ին պատասխանը կը կայանայ Աստուծոյ ամենակարողութեան մէջ, իսկ «Ինչու»-ին պատասխանը՝ անոր սիրոյն մէջ:

Վերել ըսուածներէն պէտք չէ եզրակացնել, որ քրիստոնէութիւն եւ գիտութիւն զիրար հակասող իրականութիւններ են: Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեան կ'ըսէ. *«Քրիստոնէութիւն եւ գիտութիւն տարբեր են իրարմէ, բայց անոնք հակադրութիւններ չեն: Աւետարանի ազատ ոգին ամենեւին դէմ չէ գիտութեան. ընդհակառակը, Աւետարանի քարոզած բարոյական կատարելութեան համար նպաստաւոր միջոցներ են գիտութիւնն ու արուեստը: Իսկական գիտութիւնը հետամուտ է միմիայն նշմարտութեան, իսկ նշմարտութիւնը ազատութիւն (Յե 8.32) եւ զօրութիւն կու տայ մարդուն: Ճշմարտութիւնը ըմբռնելու երկու նանապարհ ունինք, կրօնք եւ գիտութիւն. երկուքն ալ... միջոցներ են, որոնք կ'օգնեն մեզի հասկնալու Աստուծոյ տնօրինութիւններն ու վերջնական նպատակները»:*

Այն գիտութիւնը որ չ'օգնէր մեզի հասկնալու *«Աստուծոյ տնօրինութիւններն ու վերջնական նպատակները»*, կե՛ղծ գիտութիւն է: Ճշմարիտ գիտութիւնը մեզ նշմարտութեան է որ պէտք է առաջնորդէ, իսկ նշմարտութիւնը Քրիստոս ի՛նքն է (Յե 14.6):

## ԻՆՔՉԻՆՔ ԽՈՆԱՐՀԵՑՆՈՂԸ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՅ

Քրիստոս ինֆզինֆ կոչեց հեզ ու խոնարհ (Մտ 11.29), ուստի ան չի կրնար աշխատիլ կամ գործակցիլ մէկու մը հետ որ հպարտ ու ամբարտաւան է: Ամբարտաւան մարդը յանձնապաստան մարդ կ'ըլլայ, այսինքն, ան կ'ըլլայ մէկը որ ինֆզինֆին նկատմամբ կոյր վստահութիւն կ'ունենայ, մէկը՝ որուն յոյսը ինֆնիր անձն է, մէկը՝ որուն ապաւենը ինֆնիր կարողութիւններն են: Այսպիսի մարդ մը չի կրնար Սուրբ Հոգիին օրհնութիւնը վայելի, որովհետեւ ան ինֆզինֆ է որ օրհնութիւն կը սեպէ:

Աշխարհի մէջ չէ ապրած անձ մը որ փորձած ըլլայ ինֆզինֆ բարձրացանել եւ վայելած ըլլայ Աստուծոյ առաջնորդութիւնը: Աստուած չի մեծցներ մէկը որուն կեանքին նպատակը մեծնալն է: Չի փառաւորեր մէկը որ ուրիշներէն փառք կը փնտռէ: Երբ կը տեսնենք մէկը որ կը հարստանայ, տուներու, գործերու ու բարձր պաշտօններու տէր կը դառնայ, այս բոլորը երբեք իր յաջողութեան ապացոյց իբրեւ չեն ծառայեր:

Աշխարհի ակնոցով դիտուած, յաջող մարդը ա'յն մարդն է, որ մեծ հարստութեան տէր կը դառնայ եւ կը շրջապատուի կեանքի լաւ պայմաններով, իսկ Աստուծոյ ակնոցով դիտուած, յաջող ու երանելի մարդը ա'յն մարդն է, որ դարձի կու գայ Քրիստոսի եւ ձեռք կը ձգէ փրկութիւն, ֆաութիւն, արդարացում եւ յաւիտենական կեանք:

Աստուած կը բարձրացնէ ո'չ թէ ինֆզինֆ բարձրացնողը, այլ զինքն բարձրացնողը: Ան խօսքը ուղղելով Հեղին կ'ըսէ. *«Ես զիս փառաւորողները պիտի փառաւորեմ»* (Ա.Թգ 2.30): Փիլիպպեցիներուն նամակին մէջ կը կարդանք որ Քրիստոս *«ինֆզինֆը խոնարհեցուց եւ Աստուծոյ հնազանդեցաւ»* եւ *«ատոր համար ալ Աստուած զայն շատ աւելի բարձրացուց եւ իրեն տուաւ այն անունը, որ վեր է բոլոր անուններէն»* (Փլպ 2.8-9):

Յովհաննէս Մկրտիչ ինֆզինֆ խոնարհեցուց երբ Քրիստոսի վերաբերեալ ըսաւ. *«Անիկա ինձմէ աւելի հզօր է, եւ ես անոր կօշիկները կրելու իսկ արժանի չեմ»* (Մտ 3.11), իսկ Քրիստոս զայն բարձրացուց ու պատուեց երբ ըսաւ. *«Վստահ եղէ՛ք, թէ մարդոց մէջ Յովհաննէս Մկրտիչէն մեծը չէ ծնած»* (Մտ 11.11):

Պօղոս առաքեալ նաեւ անչափօրէն խոնարհ անձնաւորութիւն մըն էր: Ան երբ կը խօսի ինֆզինֆին եւ առաքեալներուն մասին կ'ըսէ. *«Առաքեալներուն մէջ յետինն եմ եւ արժանի իսկ չեմ առաքեալ կոչուելու, քանի Աստուծոյ եկեղեցին հայածեցի»* (Ա.Կր 15.9). իսկ երբ կը խօսի մեղաւորներուն մասին, ինֆզինֆ կը կոչէ *«առաջին մեղաւորը»* (Ա.Տմ 2.15): Տարօրինակ չէ՞ որ Պօղոսին պէս մէկը ինֆզինֆ նկատէ յետինը առաքեալներուն մէջ եւ առաջինը մեղաւորներուն մէջ: Մարդիկ ընդհանրապէս հակառակն է որ կ'ընեն: Մարդիկ միշտ ուրիշն է որ

մատնացոյց կ'ընեն երբ խօսքը մեղաւոր կամ յանցապարտ ըլլալու մասին է, իսկ երբ խօսքը արդար ու բարի ըլլալու մասին է, իրենք գիրենք մատնացոյց կ'ընեն:

Գողիաթին ինքնավստահութիւնը զինք գոռոզութեան առաջնորդեց: Ան նոյնիսկ յանդգնեցաւ գԱստուած նախատել (Ա.Թգ 17.26): Ան վստահեցաւ իր յաղթակազմ եւ հուժկու մարմինին, ապաւինեցաւ իր տարիներու պատերազմական փորձառութեան, իր սուրին, նիզակին ու գեղարդին, բայց Աստուած զինք խոնարհեցուց պատանի Դաւիթին ձեռքով, որ գայն տապալեց ու գլխատեց (Ա.Թգ 17.49-51):

Մարդիկը ընդհանրապէս հպարտութեան ու գոռոզութեան առաջնորդողը Գողիաթի հոգեբանութիւնն է: Անոնք որոնք Գողիաթի նման կ'ապաւինին իրենց անձերուն քարայկութեան եւ կարողութեան, եւ կը կարծեն որ իրենց սեփական զօրութեամբ ու միջոցներով կրնան իրագործել իրենց փափաքները, երազները, աշխատանքները, տեսիլները, յաղթանակները, անոնք ուշ կամ կանուխ յուսախար կ'ըլլան:

Ամբարտաւան մարդը յանձնապաստան մարդ կ'ըլլայ միշտ: Ահա թէ ինչո՛ւ Աստուած հակառակ է անոնց: Յակոբոս առաքեալ կ'ըսէ. *«Տէրը հակառակ է ամբարտաւաններուն, մինչդեռ շնորհք կու տայ խոնարհներուն»* (Յկ 4.6): Ինչո՛ւ Աստուած հակառակ է ամբարտաւաններուն: Ամբարտաւան մարդը Աստուծոյ յուսալու եւ ապաւինելու փոխարէն, ինքնիր անձին կը յուսայ եւ կ'ապաւինի, եւ այս երեւոյթը կը գրգռէ գԱստուած, որովհետեւ ան որ ինքնիր անձին կը յուսայ եւ կ'ապաւինի՝ ինքզինք է որ պատուած ու փառաւորած կ'ըլլայ, մինչդեռ ան որ Աստուծոյ կը յուսայ եւ կ'ապաւինի՝ գԱստուած է որ պատուած ու փառաւորած կ'ըլլայ:

Աստուած թոյլ չի տար որ մարդիկ հպարտութեամբ յափշտակեն իր փառքն ու պատիւը: Ան կը յայտարարէ ըսելով. *«Իմ փառքս ուրիշին չեմ տար»* (Ես 42.8, 48.11): Աստուած մերժեց իր փառքը տալ Հերովդէս Ագրիպպասին: Երբ Հերովդէս ինդիր մը լուծելու համար իր թագաւորական զգեստը հագաւ եւ եկաւ ատեան նստաւ ու խօսելու սկսաւ, ամբոխը աղաղակեց ըսելով. *«Մարդ մը չէ՛ խօսողը, այլ Աստուած»*: Այս խօսքին վրայ *«տեղնուտեղը Տիրոջ հրեշտակը հարուածեց գայն, քանի որ փառքը Աստուծոյ չվերագրեց»* (Գրծ 12.21-23): Ասիկա դաս մը պէտք է ըլլայ բոլոր անոնց՝ որոնք Հերովդէս Ագրիպպասի հոգիէն կը կրեն իրենց ներսիդին:

Յիշեմք նաեւ Նաբուգոդոնոսորին օրինակը: Երբ ան իր պալատին պատշգամբ կը նեմէր, շուրջի գեղեցիկ շինարարութիւններուն նայեցաւ եւ հպարտանալով ըսաւ. *«Այս չէ՞ այն մեծ Բաբելոնը որ ես իմ զօրութեամբս ու կարողութեամբս իմ... փառքիս... համար շինեցի»*: Խօսքը տակաւին չաւարտած, երկինքէն ձայն մը իրեն ըսաւ թէ թագաւորութիւնը իյուեցաւ իր ձեռքէն եւ թէ ինք անասուններու նման խոտաճարակ պիտի



ըլլայ, մինչեւ որ գիտնայ «թէ մարդոց թագաւորութեանը վրայ  
Բարձրեայր կը տիրէ ու զանիկա իր ուզածին կու տայ» (ԴՆ 4.28-33):

## Ի՞ՆՉ ԿՐ ՆՇԱՆԱԿԷ ԾԱՌԱՅԵԼ ԱՍՏՈՒԾՈՅ

Աստուծոյ ծառայելը իւրաքանչիւր մարդու կոչումն է, բայց միաժամանակ պարտաւորութիւնը: Երբեմն մարդիկ Աստուծոյ անունով կը գործեն, բայց իրենց գործն է որ կը գործեն եւ ո՛չ թէ Աստուծոյ: Աստուծոյ ծառայելը՝ Աստուծոյ կամֆին հնազանդիլն է: Իսկ Աստուծոյ կամֆը միշտ ալ դիւրին չէ կատարելը: Կրնայ պատահիլ որ Աստուծոյ կամեցածը մեր կամեցածին հակառակ ըլլայ:

Օրինակ, կրնայ ըլլալ որ ես ուզեմ Աստուծոյ խօսքը ֆարոգել Լիբանանի մէջ, մինչ Աստուած ուզէ զիս ուրիշ երկիր մը դրկել իր խօսքը այդտեղ ֆարոգելու համար: Ահաւասիկ երկու կամֆերու բաղիտում: Հո՛ւ է որ ցոյց պէտք է տամ, թէ ես իսկապէս Աստուծո՞յ է որ կը ծառայեմ, թէ՛ Աստուծոյ անունով ես իմ անձիս է որ կը ծառայեմ: Դիւրին ու հաճելի է Աստուծոյ խօսքը տարածել հոն ուր մենք կ'ուզենք, հոն ուր մեզ փառաբանողներ եւ ունկնդրողներ կան:

Ընդհանրապէս մարդիկ կը սիրեն ծառայել Աստուծոյ, ծառայելով իրենց սիրած միջավայրին մէջ եւ իրենց սիրած մարդոց: Բայց պէտք չէ մոռնանք որ Աստուծո՛յ իրաւունքն է որոշել մեր ծառայութեան դաշտը, ինչպէս նաեւ մարդիկը՝ որոնց պէտք է ծառայենք: Ինչպէս զինուորը իր ուզած տեղը եւ իր ուզած մարդոց չէ որ ծառայութիւն կ'ընէ, այլ իր զօրավարին ուզած տեղն ու ուզած մարդոց, այնպէս ալ մենք իբրեւ զինուորները Քրիստոսի, պատրաստ պէտք է ըլլանք երթալու հոն՝ ուր ինք կը կամենայ եւ ծառայելու անոնց՝ որ ինք կ'որոշէ:

Հարց չէ թէ մենք որո՛ւ կը ծառայենք, որովհետեւ որու որ ալ ծառայենք, Աստուծոյ է որ ծառայած կ'ըլլանք եւ Աստուած ի՛նքն է որ մեզի պիտի հատուցանէ: Պօղոս խօսքը ուղղելով ծառաներուն կ'ըսէ. *«Ծառաներ, ամէն բանով հնազանդեցէ՛ք ձեր տէրերուն: Ձեր ծառայութիւնը ըրէ՛ք՝ ո՛չ միայն երբ հսկող աչք կայ ձեր վրայ, ինչպէս կ'ընեն անոնք՝ որոնք մարդոց հանութիւնը կ'ուզեն շահիլ, այլ՝ անկեղծ սրտով, Տիրոջ հանդէպ ձեր ունեցած պատկառանքէն մղուած: Ինչ որ ալ ընէ՛ք՝ սրտանց ըրէ՛ք, այնպէս՝ ինչպէս պիտի ընէիք Տիրոջ, եւ ոչ՝ մարդոց: Գիտցէ՛ք, որ Տիրոջմէ է որ պիտի առնէ՛ք ձեր հատուցումը, որ խոստացաւ ձեզի տալ, քանի որ Տիրոջ՝ այսինքն Քրիստոսին է որ կը ծառայէք»* (Կղ 3.22-24):

Շատե՛ր կը վազվզեն ու կ'աշխատին պարզապէս մարդոց հանութիւնը սիրաշահելու համար: Մարդիկ որքան ալ աշխատին, տմին, յոգնին, ոչինչով կ'օգտուին եթէ Աստուծոյ հանութիւնը շահելու համար չէ որ կ'ընեն իրենց գործը: Ինչ բարի գործ որ կը կատարենք, պէտք է նկատի առնել որ Աստուծոյ կամֆն է որ կատարած կ'ըլլանք: Իսկ Աստուծոյ կամֆը կատարողը՝ իր արժանի հատուցումը պիտի ստանայ:

Աստուծոյ իսկական ծառան ան է որ իր կեանքին դեկը կը յանձնէ Աստուծոյ եւ թոյլ կու տայ որ ան առաջնորդէ զինք կամ դրկէ զինք հոն

ուր կը փափափի: Աստուծոյ յանձնուած մարդուն կեանքին մէջ ամէն ինչ Աստուած ինքն է որ կ'որոշէ կամ որոշել կ'ուզէ: Այս ընելու համար, Աստուած իր գաւակներէն կը պահանջէ ամբողջական ինքնայանձնում եւ բացարձակ վստահութիւն: Երբ Աստուած հարց տուաւ. «Ո՞վ դրկեմ եւ մեզի համար ո՞վ պիտի երթայ», Եսայի մարգարէն իսկոյն պատասխանեց. «Զի՛ս դրկէ» (Ես 6.8): Մարգարէն Աստուծոյ չըսաւ. «Զիս հոս կամ հոն դրկէ», այլ՝ պարզապէս պատրաստակամութիւն յայտնեց երթալու հոն՝ ուր Աստուած կ'ուզէր զինք դրկել:

Երբ կը խօսինք Աստուծոյ ծառայելու մասին, խօսած չենք ըլլար Աստուծոյ օգտակար դառնալու մասին: Նախ պէտք է գիտնալ որ երբ Աստուած մեզմէ ծառայութիւն կը պահանջէ, կը պահանջէ ո՛չ թէ որովհետեւ պէտք ունի մեզի, այլ որովհետեւ կ'ուզէ պատուել մեզ: Ինչպէս ծառայի մը համար պատիւ է թագաւորի մը գործակից ըլլալը, այնպէս ալ մեզի համար պատիւ է Աստուծոյ ծառայ ըլլալը: Երկրորդ, Աստուած կ'ուզէ որ ծառայենք իրեն որովհետեւ ան կ'ակնկալէ իր գաւակներէն որ իրենց մասնակցութիւնը բերեն փրկութեան տարածման աշխատանքին: Երրորդ, ծառայելը մեզ արժանի կը դարձնէ վարձատրութեան:

Աստուած կ'ուզէ որ աշխատինք իր փառքին համար, իր սիրոյն տարածման համար, իր կամքին ծանուցման եւ կատարման համար, իր թագաւորութեան մարդոց սրտին ու կեանքին մէջ հաստատման համար, որպէսզի մեզ վարձատրէ: Ասիկա պատճառ մը պէտք չէ ըլլայ սակայն, որ Աստուծոյ ծառայենք վարձատրուելու ակնկալութեամբ եւ նպատակով: Երբ վարձատրուելու նպատակով ծառայենք, ծառայութեան մեր սիրոյ ոգին կը վերածուի ստրուկի հոգեբանութեան:

Երբ կ'աշխատինք Աստուծոյ փառքին համար, երբեք պէտք չէ ունենանք այն մտածումը թէ մենք Աստուծոյ համար բան մը ըրինք կամ կ'ընենք: Այն ինչ որ կ'ընենք, Աստուած ի՛նքն է որ կ'ընէ մեր անձերուն ընդմէջէն: Առանց Աստուծոյ գործակցութեան մենք ոչինչ կրնանք ընել: Յիսուս ըսաւ. «Առանց ինձի դուք ոչինչ կրնաք ընել» (Յի 15.5): Յիշեցէք որ առաքեալները Յիսուսի գործակցութեամբ Աւետարանը կը փարփէին (Մր 16.20):

Պօղոս առաքեալ կը հաստատէ թէ մենք «Աստուծոյ գործակիցներ ենք» (Ա.Կր 3.9): Հոն ուր չկայ աստուածային գործակցութիւն, հոն չի կրնար աստուածային ծրագրի իրագործում ըլլալ: Ահա թէ ինչո՞ւ առաքեալը կը վկայէ թէ Աստուած ի՛նքն է որ «ամէն ինչ կը յաջողցնէ ըստ իր առաջադրած ծրագրիին ու կամքիին» (Եփ 1.11): Երբ Աստուած «ամէն ինչ կը յաջողցնէ ըստ իր առաջադրած ծրագրիին ու կամքիին» մեր ընդմէջէն ու մեր ձեռքով, այդ չի նշանակեր որ մեզմով պայմանաւորուած է իր ծրագրիին ու կամքիին իրագործումը: Մենք ինչ որ կ'ընենք՝ կ'ընենք շնորհիւ այն ոյժին որ մեր մէջ կը գործէ գորեղապէս (Կղ 1.29):

Սիրելիներ, Աստուած ծառայութիւն չի պահանջեր ու չ'ընդունիր մեզմէ եթէ չենք յանձնուած իրեն: Աստուած որպէսզի ընդունի մեր ծառայութիւնը, նախ ընդունած պէտք է ըլլայ մեզ իբրեւ իր ծառաները: Եթէ իսկապէս կը սիրենք Աստուծոյ ծառայել, վստահ ըլլանք որ Աստուած առիթներ եւ պատեհութիւններ պիտի ստեղծէ որ ծառայենք իրեն:

## ԱՍՏՈՒԱԾ ՉԻ ԾԱԾԿԵՐ ՄԱՐԴՈՒՆ ՄԵՂՔԸ

Սուրբ Գիրքի ուսանող մը շատ լաւ գիտէ որ Աստուած չի վերաբերիր մեղքին հետ այնպէս ինչպէս մենք պիտի վերաբերէինք: Մենք սովորաբար չենք ուզեր որ մարդիկ գիտնան մեր մեղքերուն մասին, չենք ուզեր զանոնք հրապարակել: Աստուածաշունչը սակայն կը պարզէ որ Աստուած երբեք չի ծածկեր իր հաւատացեալներուն ու հետեւորդներուն մեղքերը:

Աստուածաշունչին նպատակը կատարեալ տիպարներ ներկայացնելը չէ: Օրինակ, Աստուած չծածկեց Յակոբին խաբեբայ նկարագիրը, եւ ինչն<sup>օ</sup>ւ. որպէսզի ցոյց տայ մեզի թէ ինչպէս ան աշխատեցաւ Յակոբին կեանքին մէջ, եւ աստիճանական կերպով ձեռքազատեց զայն իր այդ նկարագիրէն: Աբրահամի կեանքին թերութիւնները նաեւ մատնանշուած են, բայց շնորհիւ Աստուծոյ հետ իր ունեցած մտերմութեան, ան դարձաւ ու ֆանչցուեցաւ իբրեւ հաւատքի ջահակիր ու ախոյեան:

Մեզմէ ոեւէ մէկը պիտի չուզէր գիտնալ թէ Աստուծոյ մարդը, զԱստուած երես առ երես տեսնող մարդը՝ Մովսէս, օրին մէկը պիտի յանդգնէր Աստուծոյ փառքին մէկ մասը իւրացնել կամ իւրացնելու փորձ մը ընել, եւ ասիկա պատճառ պիտի ըլլար որ Աստուած արգիլէր իրեն, ժողովուրդը անձամբ առաջնորդելու դէպի խոստացեալ երկիր (Թ՛ւ 20.7–13): Մենք ընդհանրապէս վարժ ենք Աստուծոյ մարդիկը պատկերացնել կամ ներկայացնել առանց թերութեան եւ մեղքի: Մենք սովորաբար մեզի մօտիկ եղող մարդիկը կը սիրենք տեսնել առանց պակասութեան: Այս չէ՛ սակայն Աստուծոյ մօտեցման կերպը կամ գործելակերպը:

Աստուածաշունչը կը յայտնէ նոյնիսկ Աստուծոյ ամէնէն մօտիկ եղող մարդոց մեղքերը, որպէսզի ցոյց տայ մեզի թէ Աստուած կը զգուի եւ կը նողկայ մեղքէն: Աստուած կ'ուզէ յայտնել մեղքը եւ օգնել մեզի ձեռքազատուելու անկէ: Ինչպէս հիւանդ մը չի կրնար ազատագրուիլ իր հիւանդութենէն եթէ փորձէ ծածկել զանիկա, այնպէս ալ յատուկ մեղքէ մը գերուած մարդը, չի կրնար հրաժարիլ անկէ եթէ խոստովանութեամբ չյայտնէ զայն Աստուծոյ:

Ան որ կը փորձէ ծածկել իր մեղքը, կը նմանի այն մարդուն որ գորգը կ'աւլէ եւ փոշին գորգին տակ կը պահէ, կամ կը նմանի այն մարդուն որ որդնոտած ու նեխած խնձորը կը փորձէ պահել լաւ խնձորներուն տակ: Բոլորս ալ գիտենք նման արարքի մը հետեւանք: Եթէ որդնոտած ու նեխած խնձորը մէկ կողմ չնետենք, ամբողջ խնձորները ի վերջոյ պիտի աւրուին: Ինչպէս մէկ որդնոտած խնձոր մը կրնայ ամբողջ սնտուկ մը ապականել, այնպէս ալ, եթէ ունինք միայն մէկ մեղք եւ եթէ թոյլ տանք որ այդ միակ մեղքը արմատ դնէ մեր ներսիդին եւ բոյն հաստատէ, կրնայ մեր ամբողջ բնութիւնը ապականել:

Մեղքը մեղք է, ասիկա ըլլայ մէկ հատ թէ հազար հատ, փոքր թէ մեծ: Մեզմէ ո՞վ չի գիտեր որ մէկ մեղքը կ'առաջնորդէ ուրիշ մեղքի մը: Ո՞վ չի գիտեր թէ այսօր մեզի պատիկ թուացող մեղքը, վաղը կրնայ

անչափօրէն մեծնալ եւ լեցնել մեր կեանքը եւ մեզ ստրկացնել: Բարսեղ Մաշկեւորցին կ'ըսէ. «Մեղքի բնութեան մի՛ նայիր, թէ փոքր է, այլ՝ նկատի առ որ մեղքը անհոգութենէ կը մեծնայ՝ ինչպէս մարմինի ցաւերը, որոնք իրենց փոքրութեան մէջ երբ անտեսուին հետզհետէ կը մեծնան: Այսպէս էր Յուդայի պարագան, ուր փոքր բաներէ մեծամեծ չարիքներ ծնան. աղփասներու ունեցածէն գողնալը եթէ ան փոքր բան չհամարէր, մատնութիւնն ալ չէր ընէր: Նոյնպէս են պոռնկութիւնն ու այլ չարիքները, որովհետեւ մէկը անմիջապէս չարիքի չի դիմեր, այլ՝ աստիճանաբար»:

Յիշեցէք Դաւիթ մարգարէին օրինակը: Դաւիթ որ Տիրոջ սրտին ուզածին պէս մարդ մըն էր (Ա.ԹԳ 13.14), անօրէնութիւն մը գործեց եւ այդ անօրէնութիւնը ո՛չ միայն յիշուած է Աստուածաշունչին մէջ, այլեւ լայն տեղ տրուած է անոր յիշատակութեան (Բ.ԹԳ 11-12): Ան սպաննեց կամ կարգադրեց սպաննութիւնը Ուրիային, ապա անոր կինը՝ Բերսաբէն քովը բերել տուաւ: «Դաւիթին այս ըրած բանը Տիրոջ աչքերուն գէշ երեւցաւ» (Բ.ԹԳ 11.27), եւ ասոր համար ալ Աստուած «զարկաւ այն մանուկը, որ Ուրիային կինը Դաւիթին ծներ էր... եւ եօթներորդ օրը մանուկը մեռաւ» (Բ.ԹԳ 12.15-18):

Ինչո՞ւ Դաւիթ արձանագրած է այս պատմութիւնը թագաւորութեան գիրքին մէջ: Եթէ մեզմէ ոեւէ մէկը գիրք մը գրէր, արդեօք պիտի ուզէ՞ր այդ գիրքին մէջ յիշել իր գործած անօրէնութիւնները կամ յանցանքները: Աշխարհի մարդիկ երբեք չեն ուզեր խօսիլ կամ լսել իրենց մեղքերուն եւ գործած անիրաւութիւններուն մասին: Իսկ Աստուծոյ մարդիկը, չեն փաշտուի իրենց մեղքերը հրապարակելու, որպէսզի օրինակ դառնան ուրիշներուն եւ բացայայտեն մեղքին կործանարար բնութիւնը:

Դաւիթ ո՛չ միայն յիշեց իր գործած մեղքը, այլեւ յիշեց այդ մեղքին հետեւանքները: Այդ մեղքին հետեւանքներէն էին Բերսաբէին ծնած մանուկին մահը եւ իր հարճերուն բռնաբարուիլը իր որդիին՝ Աբիսողոմին կողմէ (Բ.ԹԳ 16.22): Դաւիթի այս անբարոյութեան մեղքէն ետք աղէտները անպակաս եղան իր կեանքէն: Իր որդիին՝ Ամմոնը սպաննուեցաւ, իր որդիէն՝ Աբիսողոմէն երկար ատեն հալածուեցաւ, թափառական դարձաւ, երեք տարիներու սովի հանդիպեցաւ, եւ այլն: Ան երկար տարիներ տառապեցաւ ու զոջաց իր գործած մեղքին համար:

Դաւիթ փաշտութիւնը ունեցաւ հրապարակելու իր մեղքը: Մէկը մեղքէն ազատած չ'ըլլար եթէ ֆօղարկէ զանիկա: Երբեմն մենք կը փորձենք եւ կը յաջողինք ֆօղարկել այսինչ կամ այնինչ մեղքը, եւ կը կարծենք որ ձերբազատուեցանք անկէ: Ո՛չ ոք կրնայ ազատիլ իր սրտին մէջ բնակութիւն հաստատած մեղքէն, եթէ թոյլ չտայ որ Սուրբ Հոգին Յիսուսի խաչով սրտի բաց գործողութիւն ընէ իրեն: Սիրտ մը կրնայ խաղաղութիւն վայելել միայն ա՛յն ատեն՝ երբ յանձնուի Աստուծոյ:

Սիրելի՛ ընթերցող, Աստուած գիտէ մեղքերուդ մասին, ուստի ապարդիւն է զանոնք ծածկելու նիզդ: Մեղքերդ ծածկելը Աստուծոյ բաժինն է, իսկ բոլ բաժինդ՝ զանոնք հրապարակելն է:

**ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ**  
**ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԷՋ**  
(Մելփսեդեկ եւ Քրիստոս)

Սուրբ Պատարագը երեք ձեւերով նախապատկերացուած է Հին Կտակարանին մէջ: Այս յօդուածով պիտի անդրադառնամ անոնցմէ միայն մէկուն: Միւս երկուքը կարգալ յաջորդ յօդուածներուն մէջ:

Երբ Աբրահամ պատերազմէ յաղթական կը վերադառնար, դիմաւորուեցաւ Բարձրեալ Աստուծոյ ֆահանային՝ Մելփսեդեկի կողմէ, որ իրեն հաց եւ գինի տուաւ եւ օրհնեց զինք (Ծն 14.18-19): Ո՞վ էր Մելփսեդեկ: Նոր կտակարանը ցոյց կու տայ մեզի որ Մելփսեդեկը Քրիստոսի նախատիպն էր յայտնուած Հին Կտակարանին մէջ: Երբ 7.3-ին մէջ կը կարդանք. *«Մելփսեդեկի ո՛չ հայրը յայտնի է, ո՛չ մայրը եւ ո՛չ ալ ծագումը. իր կեանքին ո՛չ սկիզբը գիտենք եւ ո՛չ ալ վախճանը: Նման է Աստուծոյ Որդիին. մշտնջենական ֆահանայ է»* (Երբ 7.3):

Մենք գիտենք որ ֆահանայական պաշտօնը իբրեւ պարգեւ տրուեցաւ Ղեւիի սերունդին (Թւ 18.6-7), հետեւաբար, հետաքրքրական է գիտնալ, թէ ինչո՞ւ Ղեւտացի ֆահանայ մը չեղաւ նախատիպը Քրիստոսի, եւ անոր փոխարէն Մելփսեդեկ ի՞նք եղաւ անոր նախատիպը: Մելփսեդեկ Ղեւիի սերունդին չէր պատկաներ: Քրիստոս ի՞նքն ալ Ղեւիի սերունդին չէր պատկաներ: Թէ որո՞ւն սերունդին կը պատկանէր Քրիստոս, առաքեալը կը պատասխանէ ըսելով. *«Քրիստոս, որուն մասին կը խօսուի, կը պատկանէր ուրիշ ցեղի մը, որուն անդամներէն ո՛չ մէկը ֆահանայութեան պաշտօնը ստանձնեց երբեւիցէ: Արդ, յայտնի է՝ թէ մեր Տէրը Յուդայի ցեղէն էր, մինչդեռ այդ ցեղէն գալիք ֆահանայութեան մը մասին Մովսէս որեւէ բան չըսաւ»* (Երբ 7.13-14):

Արդ, դարձեալ հարց կու տանք, ինչո՞ւ Մելփսեդեկ ի՞նք եղաւ Քրիստոսի ֆահանայութեան նախատիպը եւ ո՛չ թէ Ղեւտացի ֆահանայ մը: Հիմնական երկու պատճառներով.–

1- Ղեւտացիներուն ֆահանայութիւնը ունեցաւ սկիզբ եւ վախճան, մինչդեռ Մելփսեդեկի ֆահանայութիւնը ո՛չ սկիզբ ունի եւ ո՛չ ալ վախճան (Երբ 7.3), ատո՞վ իսկ, ան կը դառնայ կատարեալ նախատիպը կամ նախօրինակը Քրիստոսի, որովհետեւ Քրիստոսի ալ ֆահանայութիւնը անվախճան է, համաձայն Պօղոսի խօսքին. *«Որովհետեւ Յիսուս յաւիտեան կ'ապրի, իր ֆահանայութիւնն ալ անվախճան է»* (Երբ 7.24): Իսկ ուրիշ տեղ մը կ'ըսէ. *«Դուն յաւիտեան ֆահանայ ես, Մելփսեդեկ ֆահանային պէս»* (Երբ 5.6, 6.20, Սղ 110.4):

2- Երկրորդ պատճառը թէ ինչո՞ւ Ղեւտացի ֆահանայ մը չէր կրնար Քրիստոսի ֆահանայութեան նախատիպը ըլլալ, այն է, որ ո՛չ մէկ Ղեւտացի եղաւ ֆահանայ եւ թագաւոր միաժամանակ, ինչպէս էր պարագան Մելփսեդեկի: Մելփսեդեկ թէ՛ թագաւոր էր եւ թէ՛ ֆահանայ,

համաձայն Սուրբ Գիրքի խօսքին. «*Եւ Սաղէմի թագաւորը՝ Մելիսեդեկ՝ հաց ու գինի հանեց ու անհկա Բարձրեայ Աստուծոյ փահանան էր: Եւ օրհնեց Աբրահամը...*» (Ծն 14.18): Քրիստոս ո՛չ միայն Մելիսեդեկ փահանային պէս յաւիտեան փահանայ է, այլ նաեւ Մելիսեդեկ թագաւորին նման յաւիտեան թագաւոր է:

Անդրադառնանք տուեալ մէջբերումին վերջին երեք բառերուն. «*Եւ օրհնեց Աբրահամը...*»: Ի՞նչ բան ցոյց կու տայ օրհնելու արարողութիւնը: Օրհնելու արարողութիւնը ցոյց կու տայ փահանայական պաշտօնը: Քրիստոս օրհնեց հացն ու գինին որ իբրեւ իր մարմինն ու արիւնը պիտի տար իր աշակերտներուն (Մտ 26.26): Քրիստոս հացն ու գինին օրհնելով, խորքին մէջ իր փահանայապետական պաշտօնին մասին վկայութիւն մըն էր որ կու տար:

Քրիստոս միայն հացն ու գինին չէ որ օրհնեց, այլ նաեւ օրհնեց իր աշակերտները. «*Ապա տարաւ զանոնք մինչեւ Բեթանիա եւ ձեռքերը վեր բարձրացնելով՝ օրհնեց զանոնք*» (Ղկ 24.50): Զմոռնանք որ Մելիսեդեկ եւս օրհնեց Աբրահամը: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «*Մելիսեդեկ Ղեւրի սերունդէն չըլլալով հանդերձ՝ տասանորդ առաւ եւ օրհնեց Աբրահամը, որ Աստուծմէ խոստումները ստացած էր: Եւ կասկած չկայ որ օրհնողը շատ աւելի բարձր է քան օրհնուողը*» (Եբր 7.7):

Ինչպէս Մելիսեդեկ նախատիպն էր Քրիստոսի, այնպէս ալ Աբրահամ նախատիպն էր իւրաքանչիւր հաւատացեալի: Եւ ինչպէս Աբրահամ օրհնուեցաւ Մելիսեդեկի կողմէ, այնպէս ալ քրիստոնեայ հաւատացեալը կ'օրհնուի Քրիստոսի կողմէ: Այն օրհնութիւնը որ Մելիսեդեկ տուաւ Աբրահամին, նախապատկերացումն էր այն նշմարիտ օրհնութեան որ Քրիստոս ի՛նքն պիտի տար բոլոր հաւատացողներուն:

Կէտ մը եւս որուն կ'արժէ անդրադառնալ: Ե՞րբ է որ Մելիսեդեկ օրհնեց Աբրահամը: Զորս թագաւորներ յարձակած էին Սոդոմի եւ Գոմորի վրայ եւ գերի տարած էին Աբրահամի եղբօրորդին՝ Ղովտը: Աբրահամ իր մարդոց հետ միասին յարձակեցաւ անոնց վրայ եւ ազատեց Ղովտը: Երբ պատերազմէն յաղթական կը վերադառնար, դիմաւորուեցաւ Մելիսեդեկ փահանային կողմէ եւ օրհնուեցաւ անկէ: Այսօր ալ, բոլոր անոնք որոնք յաղթական կը վերադառնան մեղքի պատերազմէն, նշմարիտ Մելիսեդեկը՝ Քրիստոս, գիրենք կը դիմաւորէ հացով եւ գինիով, այսինքն՝ իր մարմինով եւ արիւնով, եւ կ'օրհնէ զանոնք:

«*Մելիսեդեկ հաց եւ գինի հանեց...*» (Ծն 14.18): Անցեալին սովորութիւն կար որ պատերազմէ յաղթական վերադարձող թագաւորներ հաց եւ գինի փոխանակէին իրարու հետ: Ինչո՞ւ: Իրարու հաց եւ գինի տալը պատկերացումն էր կամ խորհրդանիշն էր այն բարեկամութեան որ անոնք իրարու հետ կը կնքէին: Խորքին մէջ, կնքուածը ուխտ մըն էր: Ուխտ մը, ըստ որուն անոնք պէտք էր միասնաբար դիմագրաւէին բոլոր պատերազմները: Նման ուխտ մըն է որ կը կնքուի մեր եւ Քրիստոսի միջեւ երբ յաղթական կը մերձենանք անոր սուրբ մարմինին եւ արիւնին:



**ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ**  
**ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԷՋ**  
(Զատկական գառնուկը եւ Քրիստոս)

Քրիստոսի պատարագումին կատարեալ նախապատկերացումն էր Հին Կտակարանին մէջ յիշուած գատկական գառնուկին գեռումը: Երբ Աստուած որոշեց ազատագրել Եբրայեցիները Եգիպտացիներուն ձեռքէն, հրահանգեց որ իւրաքանչիւր Եբրայեցի ընտանիք գառնուկ մը առնէ (Ել 12.3), գայն մորթէ եւ անոր արիւնէն փէ իր տունին դրանը սեմին եւ երկու կողմի դրանդիփներուն վրայ (Ել 12.7), որպէսզի երբ սատակիչը Եգիպտոսէն անցընէր զարնելու համար Եգիպտացիներուն անդրանիկները, Աստուած թոյլ չտար անոր վնաս հասցնելու Եբրայեցիներու անդրանիկներուն (Ել 12.13, 23):

Դիւրին է կայն ու յարաբերութիւնը տեսնել Հին Կտակարանի գառնուկին եւ Նոր Կտակարանի Գառնուկին: Նոր Կտակարանի Գառնուկը նոյնինքն Քրիստոս է: Յովհաննէս Մկրտիչ երբ գայն Յորդանան գետի եզերքը տեսաւ, ըսաւ. *«Ահաւասիկ Աստուծոյ գառնուկը, որ աշխարհի մեղքը կը վերցնէ»* (Յհ 1.29): Իսկ Պետրոս առաքեալ կ'ըսէ. *«Կորստական արծաթով կամ ոսկիով չէր որ փրկուեցա՞մ ձեր հայրերէն ժառանգած ձեր ունայն կենցաղէն, այլ՝ անբիծ եւ անարատ Գառնուկին՝ Քրիստոսի թանկագին արիւնովը»* (Ա.Պտ 1.18):

Քիչ մը վերեւ, Հին Կտակարանի գառնուկը կոչեցինք «գատկական գառնուկ»: Ի՞նչ կը նշանակէ «Զատիկ» եւ ուրկէ՞ եկած է այս բառը: Գտնելու համար այս բառին ետին կանգնող նշգրիտ իմաստն ու նշանակութիւնը, մեր հայեացքը պէտք է կեդրոնացնենք հետեւեալ համարին վրայ. *«Տէրը այն դրանը վրայէն պիտի ԱՆՅՆԻ եւ պիտի չթողու սատակիչը՝ որ ձեր տուները մտնէ ձեզ զարնելու համար»* (Ել 12.23): «Անցնիլ» բառը Եբրայերէն լեզուին մէջ Փեսախ բառն է, որուն Գրաբարեան ձեւը Պասեֆ է: Նոր Կտակարանին մէջ յաճախ Զատիկը կոչուած է Պասեֆ: Հետեւաբար, Զատիկ բառը ԱՆՅԸՆԵԼՈՒ գործողութիւնը խորհրդանշող բառ մըն է:

Եբրայերէն Փեսախ-անցնիլ բառը գործածուած է, խորհրդանշելու համար Աստուծոյ անցնիլը կամ Աստուծոյ գայրոյթին եւ հարուածին անցնիլը Եբրայեցիներու տուններուն վրայէն՝ առանց որեւէ վնաս հասցնելու անոնց: Աստուած հարկաւ պէտք չունէր այդ երեւելի նշանին (տան դրան սեմին եւ անոր երկու դրանդիփներուն վրայ փուած արիւնին), որպէսզի կարենար գիտնալ թէ ո՞ր ընտանիքները Եբրայեցի ընտանիքներ էին:

Եւ սակայն, Աստուած անպայման ուզեց եւ պահանջեց որ գառնուկը մորթուէր եւ անոր արիւնը փուէր տան դրան սեմին եւ անոր երկու դրանդիփներուն վրայ, որովհետեւ ատիկա պիտի դառնար խորհրդանշող

եւ նախապատկերացումը այն փրկութեան, որ Աստուծոյ Գառնուկին՝ Քրիստոսի արիւնով պիտի իրագործուէր: Առանց արիւնի չկա՛յ մեղքերու քողութիւն եւ փրկութիւն (Եբր 9.22, Եփ 1.7):

Ինչպէս որ Հին Կտակարանին մէջ Եբրայեցիները գառնուկին արիւնը իրենց տուններուն սեմին ֆսելով, իրենցմէ հեռո՛ւ վանած եղան Աստուծոյ բարկութիւնն ու հարուածը, այնպէս ալ երբ մենք կ'ապաւինինք Քրիստոսի արիւնին, Աստուած կը խնայէ եւ կը փրկէ մեզ: Պօղոս առաքեալ կ'ըսէ. *«Հիմա որ իր արիւնով արդարացած ենք՝ որքա՛ն աւելի վստահութեամբ կրնանք ըսել՝ թէ Քրիստոսով պիտի փրկուինք Աստուծոյ բարկութենէն»* (Հռ 5.9): Այո՛, Քրիստոսի արիւնէն գատ ուրիշ ոչինչ կրնայ ազատագրել մեզ գալիք բարկութենէն:

Հին Կտակարանի գատկական գառնուկը, հետեւաբար, պիտի փոխարինուէր Քրիստոս-գառնուկով: Առաքեալը կը վկայէ որ Քրիստոս ի՛նքն է մեր Զատիկին իսկական Գառնուկը որ մորթուեցաւ մեզի համար (Ա.Կր 5.7): Տակաւին նմանութիւնները բազմաթիւ են: Յիշեմք ոմանք: Մովսէս գատկական գառնուկին համար կ'ըսէ. *«Անոր ռեւէ ոսկորը պիտի չկտորէք»* (Ել 12.46), Յիսուսի ալ ռեւէ ոսկորը չկտորուեցաւ (Յհ 19.33, 36): Մովսէս կը պատուիրէ որ գառնուկը ըլլար *«անարատ, արու եւ մէկ տարեկան»* (Ել 12.5):

Ինչո՞ւ գատիկի գառնուկը պէտք էր ըլլար «անարատ», այսինքն՝ մաքուր: Պարզ այն պատճառով, որ ատիկա Աստուծոյ ընծայուած պիտի ըլլար: Աստուծոյ ընծայուած որեւէ բան պէտք է կատարեալ ըլլայ: Անշնորհք եւ խոտելի բան պէտք չէ տալ շնորհաբաշխ մեր Տիրոջ (Հմմտ Մդ 1.7-8): Քրիստոս ի՛նքն նաեւ իբրեւ մեր Զատիկին իսկական Գառնուկը եղա՛ւ եւ է՛ անարատ, այսինքն՝ սուրբ եւ արդար (Գրծ 3.14), կատարեալ (Եբր 7.28), եւ անմեղ, համաձայն առաքեալի խօսքին. *«Աստուած մեզի համար մեղքի պատարագ ըրաւ Քրիստոսը, ան՝ որ բնաւ մեղք չէր գործած...»* (Բ.Կր 5.21): Ուրիշ տեղեր նաեւ կը յիշուի Քրիստոսի բացարձակապէս մեղք գործած չըլլալը (Յհ 8.46, Եբր 4.15, Ա.Յհ 3.5):

Գալով «արու» բացատրութեան. ոմանք կ'ենթադրեն որ գառնուկը պէտք էր արու ըլլար, որովհետեւ Աստուծոյ Գառնուկը՝ Քրիստոս ի՛նքն, արու պիտի ըլլար: Մենք նիշդ չենք գտներ այս բացատրութիւնը: Կենդանիներու աշխարհին մէջ արուն ընդհանրապէս նկատուած է ոյժի խորհրդանիշ: Այդ ոյժն ու գօրութիւնը Քրիստոսի անձին մէջ կատարեալ իրականութիւն են (Մտ 24.30, Ղկ 5.17, Գրծ 10.38, Բ.Պտ 1.16):

Իսկ «մէկ տարեկան» բացատրութեան վերաբերեալ, պարզապէս ըսեմք, որ Հրեաներուն համար կենդանական աշխարհին մէջ մէկ տարեկանը իսկ մարդկային կեանքին մէջ երեսուն տարիքը կը խորհրդանշեն կատարելութիւն: Մէկ տարեկան կենդանին պատրաստ պէտք էր ըլլար գոհուելու, իսկ երեսուն տարեկան մարդը, դարձեալ գոհողութեան կեանք մը պէտք է ապրէր՝ ազգային կեանքին մէջ պատասխանատուութիւն մը յանձն առնելով:

## ՅԱԻԵԼԵԱԼ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆ ՄԸ ԶԱՏԿԱԿԱՆ ԳԱՌՆՈՒԿԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Քրիստոսի խաչելութիւնը տեղի ունեցաւ Գիշոյ ա'յն պահուն՝ երբ Հրեաներ պատրաստութիւն կը տեսնէին իրենց գատկական գառնուկները մորթելու (30 թուականի Ապրիլ 1-ին): Արդ, կարեւոր է գիտնալ թէ անոնք ե՞րբ կը մորթէին իրենց գատկական գառնուկները: Անոնք կը սկսէին մորթել երեկոյեան ժամը 3-ին տաճարի շրջափակին մէջ: Գառնուկին զենումը պէտք էր որ աւարտէր երեկոյեան ժամը 6-էն առաջ: Այս իմաստով, գառնուկին զենումը տեղի կ'ունենար երեկոյեան 3-6-ի միջեւ:

Խորհին մէջ, ասիկա աստուածային հրահանգ մըն էր որ Հին Կտակարանէն կու գար. «*Իսրայէլի ժողովին բոլոր ժողովուրդը մորթեն զանիկա երկու իրիկուններուն մէջտեղ*» (Ել 12.6): Ի՞նչ կը նշանակէ «*երկու իրիկուններուն մէջտեղ*» բացատրութիւնը: Այստեղ «*իրիկուն*» բառը կը թագմանուի նաեւ «*երեկոյ*»: Եբրայեցիներուն համար երեկոն կը սկսէր կէսօրէ ետք ժամը 3-ին եւ կ'աւարտէր ժամը 6-ին: Այս ժամանակամիջոցին էր որ գառնուկներուն զենումը պէտք էր սկսէր եւ աւարտէր: Կարեւոր է այս մանրամասնութիւնը մեր միտքին մէջ ունենալ, որովհետեւ մենք գիտենք որ Քրիստոս իբրեւ ամբողջ մարդկութեան գատիկին Գառնուկը՝ երեկոյեան մօտաւորապէս ժամը 3-ին իր հոգին պիտի աւանդէր եւ ժամը 6-էն առաջ արդէն թաղուած պիտի ըլլար:

Այս իսօսքը կը հաստատուի աւետարանական վկայութիւններով նաեւ: Երբ կը կարդանք հին թարգմանութիւնը, մեզի կ'ըսուի որ Յիսուս ժամը 9-ին իր հոգին աւանդեց (Մտ 27.45.50, Մր 15.34-37, Ղկ 23.44-46, Յհ): Հրեաներուն ժամը հաշուելու կերպը տարբեր է մերինէն: Անոնց ժամը 9-ըն մեր ժամով կ'ըլլայ յետմիջօրէի ժամը 3-ը: Նոր թարգմանութիւնը արդէն 9-ի փոխարէն արձանագրած է ժամը 3-ը: Պարզ է հետեւաբար, որ Յիսուս իր հոգին աւանդեց շուրջ ժամը 3-ին (այն միջոցին երբ Հրեաներ իրենց գառնուկները կը մորթէին), եւ թաղուեցաւ ժամը 6-էն առաջ (երբ Հրեաներ գառնուկը արդէն ֆաշակած պէտք է ըլլային):

Քրիստոսի թաղումը չէր կրնար ժամը 6-էն ետք տեղի ունենալ, որովհետեւ 6-էն ետք Հրեաներուն համար յաջորդ օրը սկսած կը սեպուէր, եւ նկատի ունենալով որ յաջորդ օրը Շաբաթ էր, «*Հրեայ դեկավարները չուզեցին որ մարմինները խաչերուն վրայ մնան Շաբաթ օրով*» (Յհ 19.31): Երկու հոգիներ, Յովսէփ՝ որ Արիմաթիա ֆաղաֆէն էր եւ Նիկոդեմոս՝ որ նախապէս գիշերով Յիսուսի մօտ գացած էր, առին Յիսուսի մարմինը եւ կտաններով փաթեցին՝ շուրջ երեսուն ֆիլօ հալուէով խառն զմուռսի հետ, ինչպէս Հրեաներուն սովորութիւնն էր պատանֆել, եւ ապա զանիկա դրին ժայռափոր նոր գերեզմանի մը մէջ, ուր երբեք մէկը չէր թաղուած (Յհ 19.38-42):

**ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ**  
**ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԷՋ**  
(Քառութեան գոհերը եւ Քրիստոս)

Ղեւտացւոց գիրքին 16-րդ գլուխը մեզի կը ներկայացնէ Եբրայեցիներուն տօներէն «Քառութեան Օր» տօնը: Այս գլուխը մեզի կը խօսի մէկ գուարակի (մատղաշ ցուլ) եւ երկու նոխագներու (արու այծ) մասին: Զուարակը պէտք էր գեներէր Քահանայապետին ձեռնով՝ Քահանայապետին եւ բոլոր քահանաներուն մեղքերուն քառութեան համար (11-րդ համար): Իսկ երկու նոխագներուն վրայ Քահանայապետը վիճակ պիտի ձգէր՝ նշդելու համար թէ ո՛ր մէկ անոնցմէ Աստուծոյ պիտի ընծայուէր իբրեւ մեղքի պատարագ, եւ ո՛ր մէկը անապատ պիտի տարուէր՝ իբրեւ «Քառութեան նոխագ» (8-10-րդ համարներ): Աստուծոյ վիճակուած նոխագը պիտի մորթուէր ժողովուրդին մեղքերուն քառութեան համար եւ անոր արիւնը պիտի սրսկուէր «Քառութեան» առջեւ, իսկ միւս նոխագին գլխուն Քահանայապետը իր ձեռքերը պիտի դնէր եւ խնդրէր Աստուծմէ որ ներէր իր ժողովուրդին մեղքերը, եւ ապա ան որոշուած մարդու մը ձեռնով անապատ պիտի տարուէր:

Նոխագին գլխուն ձեռքերը դնելը՝ ժողովուրդին մեղքերը անոր փոխանցել էր: Իսկ նոխագը անապատ տանիլը՝ ժողովուրդին գործած մեղքերը անոնցմէ հեռացնել էր: Խորքին մէջ, ինչպէս կը տեսնէք, թէ՛ մորթուած նոխագը եւ թէ՛ դէպի անապատ տարուած նոխագը, երկուքն ալ խորհրդանշականօրէն ժողովուրդին մեղքերը սրբելու կը ծառայէին: Քրիստոս ի՛նք եղաւ այն նշմարիտ գոհը որուն վրայ Աստուծոյ մեղքերը դրաւ իր ձեռքերով եւ Քրիստոսով զանոնք հեռացուց մեզմէ:

Եբրայեցիներուն նամակին ծանօթ ոեւէ անձ, գիտէ որ Պօղոս առաքեալ «Քառութեան տօնը», ինչպէս նաեւ այդ տօնին ընթացքին մատուցուող քառութեան գոհերն ու (անապատ տարուող) «Քառութեան նոխագը», կը նկատէ գալիլիին (Քրիստոսի գոհագործումին) շուրջ: Ան կ'ըսէ. *«Մովսիսական Օրէնքը պարզապէս գալիլէնոր կարգերուն շուրջը, այսինքն՝ մօտաւոր նմանութիւնը միայն կը ներկայացնէ եւ ո՛չ թէ անոր հարազատ պատկերը: Այդ պատճառով ալ՝ նոյն գոհերը տարուէ տարի շարունակ կը մատուցուին, որովհետեւ չեն կրնար կատարելութեան հասցնել այդ գոհերով Աստուծոյ մօտիկ եկողները»* (Եբր 10.1):

Քրիստոսի պարագային տարուէ տարի գոհագործուելու հարց չկայ, ահա թէ ինչո՛ւ առաքեալը կ'ըսէ. *«Քրիստոս երկնային Սրբարան չմտաւ բազմաթիւ անգամներ ինքզինքը ընծայելու համար. այլապէս՝ պէտք էր աշխարհին սկիզբէն ի վեր բազմաթիւ անգամներ չարչարուէր: Մինչդեռ այժմ, ահաւասիկ, երբ ժամանակները իրենց կատարումին կը մօտենան, Քրիստոս յայտնուեցաւ՝ միանգամընդմիջտ ինքզինքը իբրեւ գոհ ընծայելով, մեղքը բնաջինջ ընելու համար»* (Եբր 9.25-26):

Քրիստոս պէտք է չունի բազմաթիւ անգամներ պատարագուելու որպէսզի մեր մեղքերը սրբէ: Ան *«միակ պատարագով մը՝ յաւիտենապէս կատարեալ դարձուց մեղքերէ սրբուած մարդիկը»* (Եբր 10.14): Ճիշդ է որ ամէն անգամ երբ Սուրբ Պատարագ կը մատուցանենք՝ Քրիստոս կը պատարագուի, բայց ատիկա, մեր եկեղեցւոյ հայրերուն իսկ բնութագրումով, «անարիւն պատարագ» է: Պօղոս առաքեալ Քրիստոսի գոհագործումը կը բնորոշէ իբրեւ «անկրկնելի» գոհագործում (Եբր 10.10, 12): Քրիստոսի պատարագումով կը դադրին կենդանական ամէն տեսակի գոհագործութիւններ: Պօղոս առաքեալ նոյն բանը կ'ըսէ. *«Աստուած բոլոր նախկին գոհերը կը վերցնէ եւ անոնց տեղ Քրիստոսի գոհը կը հաստատէ»* (Եբր 10.9, 14):

Նախկին բոլոր գոհերը պէտք էր որ վերցուէին, որովհետեւ չէին կրնար սրբել պաշտամունքը մատուցանողին մեղքերը (Եբր 10.2): Արդարեւ, *«ցուլերու եւ նոխազներու արիւնը բնաւ չի՛ կրնար մեղքերը ջնջել»* (Եբր 10.4): Միայն Աստուծոյ Որդիին արիւնը կրնայ Աստուծոյ նմանութեամբ ստեղծուած մարդոց մեղքերը սրբել: Քրիստոս ի՛նքն եղաւ այն ճշմարիտ Գառնուկը, որ *«յաւիտենական Հոգիին միջոցաւ ինքզինքն որպէս անարատ գոհ Աստուծոյ մատուցանեց»*, որպէսզի իր արիւնով մաքրէ մեր խղճմտանքը մեռելական գործերէ, եւ մենք կարենանք կենդանի Աստուածը պաշտել (Եբր 9.6-15):

Եթէ երբեք *«Օրէնքին համաձայն՝ գրեթէ ամէն ինչ արիւնով կը սրբուի. մեղքերու թողութիւնն ալ առանց արեան հեղումի չ'ըլլար»* (Եբր 9.22), այդ պարագային, ինչո՞ւ կենդանիներուն արիւնը չէր կրնար սրբել մեր մեղքերը: Ինչո՞ւ անպայման Աստուած պէտք էր իր արիւնը թափէր խաչին վրայ: Մեղքը կրնայ սրբել միայն ա՛ն՝ որուն դէմ գործուած է ատիկա: Մենք կենդանիներուն դէմ չէ որ մեղք գործած ենք կամ կը գործենք, այլ՝ Աստուծոյ, համաձայն Դաւիթի խօսքին. *«Քեզի՛, մի՛այն թեզի դէմ մեղանչեցի»* (Սղ 51.4):

Յաճախ հարց կը տրուի. *«Աստուած չէ՞ր կրնար տարբեր միջոցով մը սրբել մեր մեղքերը եւ մեզ փրկել: Իր Որդին անպայման պէ՞տք էր գոհուէր»:* Շատ կարեւոր է հետեւեալը մեր միտքին մէջ ունենալ: Աստուած յաւիտենական է: Յաւիտենական Աստուծոյ դէմ գործուած մեղքը՝ յաւիտենական մեղք կը նկատուի: Յաւիտենական մեղք մը ջնջելու համար յաւիտենական գոհի մը կարիքը կար, որ կարող ըլլար յաւիտենական փառութիւն պարգեւել: Այդ գոհը Քրիստոսէ գատ ո՛չ ոք կրնար ըլլալ:

Մեղքի ապականութենէն ձերբագատելու համար անապական գոհի մը կարիքը կար: Կենդանիները անապական գոհեր չեն, եւ հետեւաբար, անոնք չեն կրնար մեզ առաջնորդել անապականութեան: Քրիստոսն է մէկ եւ միակ անապական եւ անապականացնող գոհը, սուրբ եւ սրբող գոհը: Սուրբ Հաղորդութեամբ մեր մարմինին մեղանչականութիւնն է որ սրբուի Քրիստոսի մարմինին անմեղութեամբ:

## ԻՆՉՊԵՕՍ ՊԱՏՐԱՍՏՈՒԻԼ ՍՈՒՐԻ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ (Ինֆնաֆննութիւն եւ Ծումապահութիւն)

Չորս բաներ հիմնական են Սուրբ Խորհուրդին մօտենալէ առաջ.– ինֆնաֆննութիւն, ծումապահութիւն, խոստովանութիւն եւ աղօթք: Այս յօդուածով պիտի անդրադառնամ առաջին երկուքին: Միւս երկուքին մասին կարդալ յաջորդ յօդուածին մէջ:

1- Ինֆնաֆննութիւն: Պօղոս առաքեալ կ'ըսէ. *«Ամէն մարդ նախ ինֆգիներ թող ֆննէ եւ ապա միայն այս հացէն ուտէ եւ բաժակէն խմէ»* (Ա.Կր 11.28): Սուրբ Հաղորդութիւն ստանալէ առաջ պէտք է մենք զմեզ ինֆնաֆննութենէ անցընենք: Ինֆնաֆննութեան գործողութիւնը Սուրբ Հոգիին առաջնորդութեան ներքեւ պէտք է ըլլայ: Սուրբ Հոգին ի՛նքն է որ իր լոյսը կը ճառագայթէ հաւատացեալ մարդուն սիրտին մէջ եւ հանդէս կը բերէ անոր գործած մեղքերը որոնք կրնան իր յիշողութենէն վրիպած ըլլալ:

Քննե՛նք մենք զմեզ: Իրապէս կը հաւատա՞նք որ սրբագործեալ հացն ու գինին Քրիստոսի մարմինն ու արիւնն են: Յովհաննէս Մանդակունի կ'ըսէ. *«Հացին եւ գինիին լոկ որպէս հաց եւ գինի պիտի չնայիս, որովհետեւ սուրբ խորհուրդին ահաւորութիւնը տեսանելի չէ, այլ՝ իմանալի է անոր գօրութիւնը...: Մենք Քրիստոսը նշմարիտ հաւատով կ'իմանանք սեղանին վրայ. իրեն կը մօտենանք, գինի կը տեսնենք, գայն կը շօշափենք, կը համբուրենք, մեր ներսիդին կ'ընդունինք, իրեն կ'ըլլանք մարմին ու անդամներ, ինչպէս նաեւ Աստուծոյ որդիներ»:*

Քննե՛նք մենք զմեզ: Իսկապէս կը հաւատա՞նք Քրիստոսի փրկագործութեան: Կը հաւատա՞նք որ մեր սիրոյն համար էր որ անոր սիրտը սրախողխող եղաւ: Կը հաւատա՞նք որ մեղքի մէջ կորսուածներու համար էր որ ան ցաւի փուշերուն մէջ կորսուեցաւ: Քննե՛նք մենք զմեզ, տեսնելու համար եթէ երբեք ֆէնն ու ոխը բոյն դրած են մեր ներսիդին, դառնութիւնն ու ատելութիւնը կը կրծեն մեր ոսկորները, անապաշխար եւ անգիղջ ոգին կը կարծրացնէ մեր սիրտերը:

Քննե՛նք մենք զմեզ, տեսնելու համար թէ ի՞նչ բանէ մղուած կը մօտենանք Սուրբ Հաղորդութեան խորհուրդին: Քրիստոսի մարմինին եւ արիւնին մօտենալը արդեօք հաւատքի մը կամ հոգեւոր ծարաւի մը արտայայտութի՞ւնն է, թէ՛ չոր ու ցամաք սովորութեան մը: Անհամար է թիւը այն հաւատացեալներուն, որոնք հաղորդուիլը սովորութեան վերածած են, որոնք չեն գիտեր թէ ինչո՛ւ կամ ինչո՛վ է որ կը հաղորդուին:

Վա՛յ մեզի եթէ կը համարձակինք *«Նս եմ՝ նշմարտութիւնը»* յայտարարող աստուածորդիին մարմինը առնելու մեր բերաններուն մէջ, իսկ անդին՝ կ'ապրինք ստութեան կեանք մը: Վա՛յ մեզի եթէ մէկ կողմէն կենսատու Հացէն կը ճաշակենք, իսկ միւս կողմէն կը շարունակենք ապրիլ մահաբեր եւ մահաբոյր կեանք մը: Վա՛յ մեզի եթէ Քրիստոսի փառաւորիչ

մարմինին կը մերձենանք, իսկ զինք փառաւորելը հաճոյք չէ մեզի համար: Վա՛յ մեզի եթէ ներում շնորհող Հացին ու Գինին կը մօտենանք, իսկ մենք՝ աններողամիտ ենք իրարու հանդէպ: Զյանդգնի՛նք մօտենալու Տիրոջ մարմինին եւ արիւնին, եթէ երբեք կը մերժենք ներողամտութեամբ մօտենալ իրարու: Երբ մեր սիրտերուն մէջ սէր ու ներում կայ, գութ եւ կարեկցութիւն կայ, ա՛յն ատեն միայն սրբագործեալ հացն ու գինին կրնան մեզ սրբագործել եւ դարձնել Քրիստոսի տունը (Եբր 3.6):

2- Ծումապահութիւն: Ծումապահութիւնը որոշ ուտելիքներէ հեռու կենալը չէ միայն, այլեւ աշխարհային ամէն տեսակի ցանկութիւններէ հեռու մնալն է: Ի՞նչ օգուտ երբ կենդանիներու միւ չենք ուտեր բայց «իրարու միւ կ'ուտենք»: Ի՞նչ օգուտ երբ երկրայինէն կը պարպուինք բայց երկնայինով չենք լեցուիր: Ի՞նչ օգուտ երբ Ֆիզիքապէս անօթի կը մերձենանք Սուրբ Հաղորդութեան, իսկ հոգեպէս՝ բնաւ երբեք՝ անօթի չենք զգար: Հոգեւոր ծարաւ չունեցող մարդուն համար Սուրբ Հաղորդութիւնը որեւէ ձեւով օգտակար չ'ըլլար: Հոգեպէս անօթի մարդն է որ Քրիստոս-գոհին արժէքը գիտէ եւ ո՛չ թէ աշխարհով կշտացած մարդը:

Ծումապահութեան նպատակը եկեղեցական հայրերուն այս կամ այդ կանոնը պահելը պէտք չէ ըլլայ: Փարիսեցիները շատ հպարտ էին ծումապահութեան օրէնքին գործադրութեամբ: Ղուկաս կը յիշէ որ աղօթող Փարիսեցին շատ հպարտ էր որ շաբաթը երկու անգամ ծոմ կը պահէր (Ղկ 18.12): Ծումապահութիւնը սակայն խոնարհելու առիթ մը պէտք է ըլլայ եւ ո՛չ թէ հպարտութեամբ ուռելու: Ծումապահութիւնը կը խոնարհեցնէ մեզ, որովհետեւ անոր ընթացքին է որ մեր Ֆիզիքական աշխարհին ամբողջ տկարութիւնները կը յայտնաբերուին: Սուրբ Հաղորդութեան նամբով, Աստուած կը խոնարհի եւ կը բնակի այնպիսի մարդոց մէջ՝ որոնք կը խոնարհին դառնալու համար բնակարան Աստուծոյ:

Զգո՛յժ պէտք է ըլլանք որ միայն ստամոքսով հեռու չկենանք որոշ ուտելիքներէ, այլեւ՝ սիրտով: Ոչինչով կ'օգտուինք եթէ երբեք ստամոքսով հեռու ենք մտեղէններու տեսակներէն, եւ սակայն, սիրտով ո՛չ միայն կը ցանկանք զանոնք, այլ նաեւ մեծապէս կը տանջուինք անոնց համար: Ծումապահութիւնը պէտք է օգնէ մեզի աշխարհային բեռէ մը ազատելու, բայց ինչպէ՞ս կրնայ օգնել մեզի ազատելու աշխարհային բեռէ մը, երբ ծումապահութիւնը ի՛նք բեռ ըլլայ մեզի համար: Սուրբ Հաղորդութիւնը թեթեւութիւն չի բերեր այն հոգիին որ նման բեռի մը տակ ննջուած է:

Զգո՛յժ ըլլանք անոնցմէ որոնք կ'ըսեն. «Կարեւոր չէ ծոմ պահել Սուրբ Հաղորդութիւն ստանալէ առաջ: Կարեւորը սիրտը մաքուր պահելն է: Աստուած գիտէ մեր սիրտերը»: Այս խօսքը, Սուրբ Հոգիին շնորհով ինքնիր սիրտը մաքուր պահած հաւատացեալ մարդու խօսք չէ: Այս խօսքը Քրիստոսի մարմինին եւ արիւնին նկատմամբ սաստիկ ծարաւ ունեցող մարդու խօսք չէ: Բոլորս ալ գիտենք, որ աշխարհային վատ մտածումներ դիւրութեամբ չեն կրնար մուտք գործել աղօթող սիրտ եւ անօթի ստամոքս ունեցող մարդոց սիրտերէն ներս:

## ԻՆՉՊԼԵՕՍ ՊԱՏՐԱՍՏՈՒԻԼ ՍՈՒՐԻ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ (Խոստովանութիւն եւ Աղօթք)

1- Խոստովանութիւն: Մեղքերու խոստովանութեամբ պէտք է պատրաստենք մեր սիրտերը դառնալու բնական Անմեղին: Զխոստովանուած մեղքեր արգելք են որ Քրիստոս մուտք գործէ մեր հոգիներէն ներս: *«Եթէ խոստովանիմք մեր մեղքերը, վստահ եղէ՛ք՝ թէ Աստուած, որ արդար է, պիտի ներէ մեր մեղքերը եւ մեզ պիտի սրբէ մեր բոլոր անիրաւութիւններէն»* (Ա.Յի 1.9): Շատ ողորմելի ենք եթէ երբեք խոստովանութեան ցամբով մեղքերու թողութիւն ստանալու առիթը ունինք, իսկ մենք մեր մեղքերուն բեռը մեր ուսերուն վրայ պահել կը շարունակենք: Խոստովանիլը՝ մեղքերուն բեռը մէկդի ձգելն է:

Բարսեղ Մաշկեւորցի խօսելով խոստովանութեան մասին կ'ըսէ. *«Ինչպէս որ պղնձագործը ժանգոտած անօթը փուրայէն անցրնելով՝ մուրնի հարուածներով գայն կը փայլեցնէ, նոյնպէս դուն եւս մեղքերով ժանգոտած հոգիդ խոստովանութեան փուրային մէջ նետէ, եւ ապա բարձրէն իջեցուր մուրնը, այսինքն՝ մեղադրանքի եւ յանդիմանական խօսքերը, որպէսզի հոգիդ վերստին պայծառանայ»:* Բարսեղին ըսել ուզածը այն է, որ քրիստոնեայ մարդը խոստովանութեան պահուն ինքնամեղադրութեան եւ ինքնաշանդիմանումի ցամբան պէտք է ընտրէ, որպէսզի կարենայ մեղքի ժանգը մաքրել իր հոգիէն: Ինչպէս երբ ծառի մը միւղերը յօտուին, ծառը իր գօրութիւնը կը վերագտնէ, այնպէս ալ երբ քրիստոնեայ մարդը կը խոստովանի իր մեղքերը՝ Սուրբ Հաղորդութեան միջոցաւ իր գօրութիւնն ու հոգեւոր պայծառութիւնն է որ գտնէ:

Սուրբ Հաղորդութիւնը դեղ է մեր հոգիին եւ մարմինին համար: Այս դեղը մեզի օգտակար կ'ըլլայ միայն ա՛յն ատեն՝ երբ խոստովանիմք մեր մեղքերը: Ինչպէս եթէ հիւանդ մարդը չխոստովանի եւ չհրապարակէ իր հիւանդութիւնը՝ դեղ չ'ստանար եւ չի դարմանուիր, այնպէս ալ, ան որ Սուրբ Հաղորդութեան կը մօտենայ առանց խոստովանելու իր մեղքերը՝ թողութիւն եւ հոգիի խաղաղութիւն չի գտներ:

Սիրելի՛ հաւատացեալ, թոյլ չտանք որ Սատանան կամ մեր նման մարդիկ ամչցնեն մեզ եւ հեռու պահեն խոստովանութենէն: 13-րդ դարու հեղինակ, Յովհաննէս Երզնկացի կ'ըսէ. *«Քահանային ներկայութեան ձեռ ունեցած փոքր վախով ու ամօթով կը փրկուի՛ք այն մեծ ամօթէն որ տիեզերական ահեղ հրապարակին վրայ տեղի պիտի ունենայ... երբ մարդոց բոլոր ծածուկ գործերը պիտի յայտնուին: Այդ վախը եւ ամօթը շատ աւելի սաստիկ է, երբ երկինքն ու երկիրը ի մի պիտի գան եւ ոչ ոք պիտի կարենայ ծածկել իր մեղքերը, այլ պիտի յանդիմանուի, ամչնայ ու դողայ մեծ հրապարակին վրայ: Ամօթէն ետք գեհե՛նի հուրին եւ յաւիտենական տանջանքին պիտի մատնուի Սատանային հետ... , ուր աչքերը պիտի լան եւ ակռաները կրճտեն»:*



2- Աղօթք: Եթէ երբեք խոստովանութիւնը մեր մեղքերուն միւղերը յօտել է, ապա աղօթքը նոր միւղեր պատուաստել է: Ճիւղեր՝ որոնց վրայ հաւատքի եւ հաւատարմութեան, սիրոյ եւ սրբութեան պտուղները միասնաբար կը հասունանան: Չաղօթող մարդը կը նմանի անպտուղ ծառի մը՝ որուն ո՛չ թուղանները կը մօտենան, ո՛չ մարդիկը եւ ո՛չ ալ Աստուած՝ Սուրբ Հաղորդութեան նամբով:

Աղօթքը մեր սիրտին դուռն ու ցանկապատն է: Ինչպէս դուռ եւ ցանկապատ չունեցող պարտէզ մը, ամէն տեսակ կենդանի կրնայ մտնել եւ աներ գործել, այնպէս ալ աղօթքը իբրեւ դուռ եւ ցանկապատ չունեցող սիրտ մը, յարձակումի կ'ենթարկուի չար դեւերուն եւ ոգիներուն կողմէ: Նման սիրտ մը չի կրնար պարուրուիլ Քրիստոսի մարմինով եւ արիւնով:

Աղօթքով պէտք է մաքրենք մեղքի թարախը մեր հոգիներէն: Մեզմէ ո՞վ չի պժգար թարախոտած ձեռքով կերակուր ուտելու: Եթէ երբեք թարախոտած ձեռքով մաշ չենք ուտեր, հապա որքա՞ն անելի գգոյշ պէտք է ըլլանք Քրիստոսի մարմինն ու արիւնը մեղքերով թարախոտած մեր մարմիններուն մէջ առնելու:

Ինչպէս խի՛ստ պատիժի կ'արժանանայ ան որ փշրուած ու կոտրուած գահ մը կու տայ իր երկրի թագաւորին եւ անկէ կը խնդրէ անոր վրայ բազմիլ, այնպէս ալ մեծապէս պիտի պատժուին բոլոր անոնք՝ որոնք Սուրբ Հաղորդութեամբ գՔրիստոս կը հրաւիրեն բազմելու մեղքով փշրուած ու կոտրուած իրենց սիրտի գահին վրայ: Աստուծոյ կողմէ եւ Աստուծո՛յ համար մեր սիրտերուն մէջ դրուած այդ գահը, մի՛այն աղօթքով կրնայ նորոգուիլ: Այդ նորոգութեան կը յաջորդէ Սուրբ Հոգիին ներգործութիւնը երբ կը մաշակենք Քրիստոսի մարմինէն եւ արիւնէն: Ուրեմն, աղօթե՛նք արարչագործութեան եւ արարածներուն Նորոգիչին եւ Վերանորոգիչին մերձենալէ առաջ Աստուծոյ մարմինին եւ արիւնին:

Աղօթե՛նք, որպէսզի մեր սիրտերը վերածուին սկիհի՛ պատրաստ իր մէջ առնելու Տէր Յիսուսի մարմինն ու արիւնը: Աղօթե՛նք, որպէսզի կաւէ զանգուածներս չայրիմք աստուածորդիին հրանման մարմինին եւ արիւնին առջեւ: Աղօթե՛նք, որպէսզի մեր հոգիները դո՛ւրս շարտեն իրենց ներսիդէն մահաոխթ մեղքը եւ միանան կենսատու Նշխարին եւ առատահոս սրբաբար Գինիին:

Աղօթե՛նք, որպէսզի կասեցնենք չար խորհուրդներուն հոսքը մեր կեանքներուն մէջ եւ Սուրբ Հաղորդութեամբ Աստուծոյ բազմապիսի բարեբարութիւններով լի գետին ուղղութիւնը դարձնենք դէպի մեր կեանքերը: Չաղօթող մարդը չի՛ բարեբարուիր մեր Տիրոջ բարեգործ եւ բարեբաշխ մարմինէն եւ արիւնէն: Սուրբ Հաղորդութիւնը կը կենսագործէ երբ կ'աղօթենք կեանքի Արարիչին ու Տուիչին:

Եկէ՛ք ինքնաքննութեան, ծոմապահութեան, խոստովանութեան եւ աղօթքի նամբով, մաքրենք մեր սիրտերէն եւ հոգիներէն մեղքի տիղմը, որպէսզի փառքի թագաւորը՝ Քրիստոս, իր յաղթական մուտքը գործէ մեր կեանքներէն ներս, Սուրբ Հաղորդութեան միջոցաւ:

## ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԸ՝ ՅԻՇԱՏԱԿ ՔՐԻՍՏՈՍԻ

Քրիստոս Սուրբ Հաղորդութեան խորհուրդը հաստատեց Վերջին Ընթրիքի ընթացքին (Ղկ 22.14-23). այնպիսի ժամանակ մը՝ երբ ան կը պատրաստուէր իր աշակերտները ձգելով հեռանալ այս աշխարհէն Ֆիզիքապէս: Ինչպէս երբ մարդ մը պիտի բաժնուի իր սիրելիներէն բան մը կու տայ անոնց որպէսզի անով միշտ յիշեն զինք, այնպէս ալ Քրիստոս երբ պիտի բաժնուէր իր աշակերտներէն, իրմէ բան մը տուաւ, աւելի նիշդ՝ ինքզինք տուաւ անոնց եւ անոնց ընդմէջէն մեզի, որպէսզի միշտ յիշենք զինք, զօրանանք իր ներկայութեամբ եւ լեցուինք իր սիրով:

Քրիստոս հացն ու գինին օրհնելէ եւ իր աշակերտներուն տալէ ետք ըսաւ. «*Ասիկա կատարեցէ՛ք իմ յիշատակիս համար*» (Ղկ 22.19): Քրիստոս իր այս խօսքով, խնդրանք մը չէր որ կը ներկայացնէր, այլ՝ հրահանգ էր որ կու տար: «Կատարեցէ՛ք» բացատրութիւնը մեզ կը դնէ պարտականութեան եւ պարտաւորութեան մը առջեւ: Խորհուրդին կատարումը մեր ազատ կամքին թողուած չէ: Մենք (եկեղեցականներս) չէ՛ որ պիտի որոշենք եթէ Սուրբ Պատարագ մատուցանել կ'ուզենք կամ ոչ: Սուրբ Պատարագ մատուցանելը ո՛չ նախնորութեան եւ ո՛չ ալ նախասիրութեան հարց է, այլ աստուածային հրահանգ ու պահանջ է:

Այդ հրահանգը ի գործ դնողները առաջին հերթին առաքելները իրենք պիտի ըլլային: Սուրբ Հաղորդութեան խորհուրդին հաստատումով կ'աւարտի Հին Կտակարանի ֆահանայական պատմութիւնը եւ սկիզբ կ'առնէ Նոր Կտակարանի ֆահանայական պատմութիւնը: Առաքելները Հաղորդութեան խորհուրդին առաջին ֆահանաները եղան, զՔրիստոս ունենալով իրբեւ առաջին եւ յաւիտենական ֆահանայապետ: Պէտք է յիշել նաեւ որ Աստուծոյ վերջնական նպատակն ու ծրագիրն ալ, մեզ ֆահանաներու թագաւորութեան մը վերածելն է (Ա.Պտ 2.9, Յյտ 1.6): Աստուած իր այս նպատակը պիտի յաջողցնէ երբ իր Որդին երկրորդ անգամ յայտնուի (Յյտ 20.6):

«*Յիշատակիս համար...*» բացատրութիւնը, բնականօրէն չի՛ նշանակեր յիշատակումը անցեալին պատահած դէպքի մը եւ կամ անցեալին պատկանող դէմքի մը: Քրիստոս մեր կողմէ յիշուիլ չէ որ կ'աղաչէ: Իր յիշատակը միշտ վառ պահել չէ որ խնդրէ: «*Յիշատակիս համար*» բացատրութեամբ, Քրիստոս կը պահանջէ մեզմէ որ յիշենք եւ յիշեցնենք ամբողջ աշխարհին խաչելութեամբ իր իրագործած փրկութիւնը: Ան կ'ուզէ որ պատմենք իրարու իր անչափ սիրոյն մասին. այն սիրոյն մասին՝ որ զինք խաչ բարձրացուց: Պօղոս առաքել նաեւ կը յանձնարարէ որ Տիրոջ մահը պատմենք ամէն անգամ երբ ուտենք սուրբ Հացէն եւ խմենք սուրբ Բաժակէն (Ա.Կր 11.26): Մեր կոչումն է սիրելի՛ ընթերցող, որ ամէն անգամ երբ հաղորդուինք Քրիստոսի մարմինով եւ արիւնով, յիշենք եւ յիշեցնենք ուրիշներուն նաեւ, որ Քրիստոս մեռաւ մեզի համար՝ մեզ դարձնելու համար որդիները Աստուծոյ զաւակները:

## ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՄԲ ԻՐԱԳՈՐԾՈՒԱԾ ՄԷԿՈՒԹԻԻՆԸ

«Մենք բոլորս մէկ հաց, մէկ մարմին ենք, որովհետեւ նոյն եւ միակ հացէն կը մաշակենք» (Ա.Կր 10.17): Տիրոջ մարմինն ու արիւնը ո՛չ միայն մեզ հաղորդակցութեան մէջ կը դնեն եւ մէկ կը դարձնեն Աստուծոյ հետ, այլ նաեւ հաղորդակցութեան մէջ կը դնեն եւ մէկ կը դարձնեն եկեղեցւոյ բոլոր անդամներուն հետ: Արդարեւ, Քրիստոսի մարմինէն եւ արիւնէն զատ ուրիշ ո՛չ մէկ բան կրնայ վերամիացնել եւ հաշտեցնել իրարու հետ Աստուած եւ մարդ, եւ մարդ ու մարդ:

Ինչո՞ւ արդեօք Հին կտակարանին մէջ յիշուած գատկական գառնուկին վերաբերեալ, Աստուած պատուիրեց ուտել գանիկա առանց անոր ոսկորներէն որեւէ մէկը փշրելու կամ կոտրելու (Ել 12.46, Թւ 9.12): Աստուած չուզեց որ գատկական գառնուկին ոսկորներէն որեւէ մէկը կոտրուէր, որովհետեւ ատիկա Քրիստոս-Գառնուկին կատարեալ նախապատկերացումը պիտի ըլլար: Ինչպէս Հին կտակարանի գառնուկին ոսկորներէն որեւէ մէկը չկոտրեցաւ, այնպէս ալ Նոր կտակարանի Գառնուկին ոսկորներէն որեւէ մէկը չկոտրեցաւ:

Յովհաննէսի Աւետարանին մէջ կը կարդանք. «Զինուորները... երբ Յիսուսի եկան, տեսան որ անիկա արդէն իսկ մեռած էր, ուստի չկոտրեցին անոր սրունքները...: Ասիկա պատահեցաւ՝ որպէսզի իրականանայ Սուրբ գիրքերուն մէջ ըսուածը.– Անոր որեւէ մէկ ոսկորը պիտի չփշրուի» (Յհ 19.33, 36, Ել 12.46, Թւ 9.12, Աղ 34.20):

Աստուած գիտէր որ հետագային եկեղեցին պիտի կազմէր Քրիստոսի մարմինը (Ա.Կր 12.27–28, Կղ 1.18, Եփ 5.23, 29), ահա թէ ինչո՞ւ ան թոյլ չտուաւ որ իր Որդիին մարմինին ոսկորներէն որեւէ մէկը փշրուի կամ կոտրուի: Այլ խօսքով, Աստուած չուզեց որ իր Որդիին մարմինը ըլլալու կանչուած եկեղեցին, իր մէջ ունենայ փշրուած ոսկորներ, այսինքն՝ պառակտումներ եւ բաժանումներ:

Դերենիկ Եպս. Փօլատեան խօսելով Սուրբ Հաղորդութեան ցամբով բոլոր եկեղեցիներուն միջեւ ստեղծուող միութեան մասին, կ'ըսէ. «Սուրբ Հաղորդութեան խորհուրդի մատուցմամբ տեսանելի եւ անտեսանելի, զինուորեալ եւ յաղթական եկեղեցիներ, մէկ կը հանդիսանան. հրեշտակներ եւ սուրբեր, ննջեցեալներ եւ ապրողներ, ու տանարին մէջ ու բոլոր տանարներուն մէջ հաւաքուած մարդիկը, նոյն Սուրբ Հոգւոյն հաղորդակից՝ իրարու հետ տիեզերական միութեան մը մէջ կը մտնեն»:

Թող որ Տէր Յիսուս Քրիստոսի մարմինն ու արիւնը մեզ սերտօրէն միացնեն իրեն եւ իրարու, որպէսզի կարենանք ապրիլ եւ գործել իրարու հետ իբրեւ մէկ եկեղեցի, մէկ մարմին, սպասելով մեր միակ Գլուխին՝ Քրիստոսի երկրորդ գալուստին, որուն համար ամէն մէկ հաւատացեալ բերանը թող բանայ եւ ըսէ. «Ամէն: Եկո՛ւր, Տէր Յիսուս» (Յյտ 22.20):

## ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՅԼԱԿԵՐՊԻՉ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Սուրբ Հաղորդութեան խորհուրդին հաստատումը Քրիստոսի խորախորհուրդ մարդասիրութեան բացառիկ եւ բացարձակ արտայայտութիւնն է: Քրիստոս երկինք համբարձաւ, բայց իր մարմինն ու արիւնը թողուց երկրի վրայ՝ երկիրը երկնայնացնելու, օրհնելու, պաշտպանելու, արգասաբեր դարձնելու եւ երկինք առաջնորդելու: Քրիստոսի մարմինն ու արիւնը երկինքն ու երկիրը իրարու կը կապեն: Երկնաւորն ու երկրաւորը իրարու հետ յարաբերութեան մէջ կը պահեն:

Սուրբ Հաղորդութիւն ստանալը Աստուծոյ մէջ խորանալ է, դէպի աստուածայինը խոյանալ է, Աստուծոյ սրբութեամբ սրբուիլ է, ամենակալին ձեռքերուն յանձնուիլ է, մեր սիրտերուն վրայ Քրիստոսի իշխանութիւնը նանչնալ է, մեր հոգիներուն մէջ Աստուծոյ թագաւորութիւնը գոյացնել է, մեր միտքերուն մէջ մեղքի հուրը շիջեցնել է, մեր միտքերուն վահանուիլն է Զարին արձակած նետերուն դիմաց:

Տակաւին, Տէր Յիսուսի մարմինն ու արիւնը նաշակելը՝ Աստուծոյ պարուրուիլ է, Սուրբ Հոգիով նորոգուիլ է, Քրիստոսի սիրոյ թելերուն տակ ապաստան գտնել է, մեր երկնաւոր Հօր մտերմութիւնը վայելել է, Բարձրեալը բարձրացնել եւ Բարձրեալին կողմէ բարձրացուիլ է, Հրեշտակներուն կողմէ երանուիլ է, երկինքի իւրով օծուիլ է, Աստուծոյ մէջ, Աստուծոյ համար եւ Աստուծոյ հետ առանձնանալ է:

Տէր Յիսուս լոկ ուտելիք կամ խմելիք չէ: Սուրբ Հաղորդութիւնը պարզ մարդոց կը տրուի, բայց պարզ բան մը չէ: Ան Սուրբ Հոգիին բուրմունքն է մեր ներսիդին: Ամենասուրբ Երրորդութեան փառքին եւ զօրութեան, իմաստութեան եւ սրբութեան հանգչումն է մեր վրայ: Մեր սիրտերուն տանաբացումն է: Մեր հոգիներուն կենսաւորումն է: Յաւիտենական այլակերպութեան նախաբայն է: ԶԱստուած ստանալն ու շալկելն է: Աստուծոյ զօրութեան պատգամաբերը դառնալն է:

Սուրբ Հաղորդութեամբ Տէր Յիսուսի սէրը կը հոսի մեր կեանքներուն մէջ, եւ իր մարդասիրութեան նման մարդասիրութիւն մը կ'ունենանք, իր անկեղծութեան նման՝ անկեղծութիւն մը, իր քաղցրութեան նման՝ քաղցրութիւն մը: Ինչպէս գուլալ ջուրով լեցուած բաժակը տարբեր եւ գերազանց արժէք ունի քան տղմոտ ջուրով լեցուած բաժակը, այնպէս ալ Սուրբ Հաղորդութեան նամբով աստուածորդիով լեցուած մարդը, տարբեր է եւ տարբեր պէտք է ըլլայ աշխարհի մարդէն:

Կեանքի Հացէն նաշակելն ու կենսատու Արիւնը ըմպելը՝ յաւիտենական կեանք ունենալ է (Յհ 6.54), Աստուծոյ մէջ բնակիլն ու Աստուծոյ բնակարան դառնալ է (Յհ 6.56), յարութեան համար նախապատրաստուիլ է (Յհ 6.54), Քրիստոսով ապրիլ (Յհ 6.57) ու անմահանալ է (Յհ 6.50): Երբ կը հաղորդուինք անմահ եւ անմահարար Աստուծոյ մարմնով եւ արիւնով՝ անոր անմահութիւնը կ'անցնի մեր

մահկանացու մարմիններուն մէջ, եւ մենք կը դառնանք անմահ որդիները անմահ Աստուծոյ:

Քրիստոս իր մարմինն ու արիւնը բնորոշէ իբրեւ նշմարիտ կերակուր եւ նշմարիտ խմելիք (Յհ 6.55): Քրիստոսի մարմինն ու արիւնը յագեցում կը շնորհեն շնմարիտին եւ նշմարտութեան ծարաւը ունեցողներուն: Շնմարիտ կեանքի որոնիչներուն համար ան նշմարիտ կեանք պարգեւող հացն է: «*Ես եմ կենդանի հացը՝ որ երկինքէն իջած է*» (Յհ 6.51): Երկնաէջ Հա՛ցը միայն կրնայ կեանք պարգեւել մարդուն հոգիին եւ կշտացնել զանիկա:

Հաղորդուիլը յաւիտենական կեանքին փափաքը մեր ներսիդին բորբոքել է: Ինչպէս ծառին վրայ հաստատուած ճիւղը կ'ըմպէ ծառէն եկած ամբողջ հարուստ աւիշը, այնպէս ալ երբ Քրիստոսի մարմինով եւ արիւնով կը հաղորդուինք՝ Քրիստոսի կեանքը եւ Քրիստոս իբրեւ կեանք կը հոսի մեր անձերուն մէջ՝ մեր հաւատքի երակներուն նամբով:

Սուրբ Հաղորդութեամբ Տէր Յիսուս Քրիստոսի բարեգործ ձեռներուն նման ձեռներ կ'ունենանք: Ձեռներ՝ որոնք կրնան հասնիլ տառապեալին, օգնել՝ անկեալին, գրկել՝ մերժուածը եւ տալ՝ կարօտեալին:

Սուրբ Հաղորդութեամբ Տէր Յիսուսի մշտաշարժ ոտներուն նման ոտներ կ'ունենանք: Ոտներ՝ որոնք կ'առաջնորդեն եւ կ'առաջնորդուին դէպի Կատարեալն ու կատարելութիւնը, դէպի շնմարիտն ու նշմարտութիւնը:

Սուրբ Հաղորդութեամբ Տէր Յիսուսի բերանին նման բերաններ կ'ունենանք: Բերաններ՝ որոնք կը վկայեն Մեծ Վկայեալին համար, կը պատմեն անոր անպատմելի գործերուն մասին, անիծողը՝ կ'օրհնեն, հալածողին համար՝ կ'աղօթեն:

Սուրբ Հաղորդութեամբ Տէր Յիսուսի աչքերուն նման աչքեր կ'ունենանք: Աչքեր՝ որոնք մարդուն մէջ Աստուծոյ գուրգուրանքին կարօտ մարդը կը տեսնեն: Աչքեր՝ որոնք կը տեսնեն՝ անտեսուածը, կը նշմարեն՝ աննշմարը:

Որքա՛ն անմեղ եւ իրատես պիտի ըլլան մեր հայեացքները երբ Աստուած ըլլայ անոնցմով նայողը: Որքա՛ն մաքուր պիտի ըլլան մեր ձեռները երբ աստուածորդին ըլլայ անոնցմով գործողը: Որքա՛ն արագագնաց պիտի ըլլան մեր ոտները բարեգործութեան նամբուն վրայ երբ Քրիստոս ըլլայ անոնցմով քայողը:

Երբ կը նաշակենք Քրիստոսի մարմինն ու արիւնը, Անհունն Աստուած մուտք կը գործէ հունաւորներու սիրտէն ներս: Հաղորդուիլը՝ սահմանաւորներու անսահմանօրէն բացուիլն է Անսահման Աստուծոյ առջեւ: Հաղորդուիլը՝ ժամանակաւորներու լուծուիլն Անժամանակին մէջ եւ երկրաւորներու պատուաստուիլն է Երկնաւորին վրայ:

Սիրելի՛ ընթերցող, հաւա՛տք ունեցիր սիրտիդ մէջ երբ կը մերձենաս Տիրոջ մարմինին եւ արիւնին, եւ ան պիտի փոխէ կեանքդ, պիտի նորոգէ սիրտդ, պիտի կենդանացնէ հոգիդ եւ պիտի լուսաւորէ միտքդ:

## ԶԳՈՅՇ ԵՂԻՐ ԵՐԲ ԿԸ ՄՕՏԵՆԱՍ ԿԵԱՆՔԻ ՀԱՑԻՆ ՈՒ ԳԻՆԻՒՆ

Ան որ անհոգութեամբ կը մօտենայ սրբագործեալ հացին եւ գինիին, ոտնակոխ ըրած կ'ըլլայ Աստուծոյ Որդին, համաձայն Պօղոս առաքեալի խօսքին. *«Եթէ Մովսիսական Օրէնքը խախտողը երկու կամ երեք հոգիի վկայութեամբ մահուան կը դատապարտուի առանց գթութեան, որքա՛ն անելի ծանր պատիժի արժանի պիտի համարէ՞ այն անձը՝ որ ոտնակոխ կ'ընէ Աստուծոյ Որդին, կ'արհամարհէ Նոր Ուխտի կնքումին համար թափուած արիւնը, որով Քրիստոս զինք սրբեց, եւ կ'անարգէ շնորհքները պարգեւող Սուրբ Հոգին»* (Եբր 10.28-29):

Երբ մարմնասէր մարդը Քրիստոսի մարմինը ուտէ եւ ինքնիք արիւնը մեղքի տիղմով շաղախած անձը Քրիստոսի արիւնը իմէ, ան ո՛չ միայն ոտնակոխ ըրած կ'ըլլայ Աստուծոյ Որդին, այլեւ սպաննած կ'ըլլայ զանիկա: Նո՛յնը կը հաստատէ Յովհաննէս Մանդակունի երբ կ'ըսէ. *«Մարդը որ մարդ կը սպաննէ, մարդասպան կ'անուանուի. իսկ ան որ անարժանութեամբ Տիրոջ մարմինէն հաղորդուի, աստուածասպան կ'ըլլայ. որովհետեւ անգամ մը եւս իսպ կը հանէ Աստուծոյ Որդին»*:

Արդարեւ, աստուածասպանութիւն է անհաւատութեամբ քաշակել մեր հաւատքի Հիմնադիրին մարմինն ու արիւնը: Յաւիտենական արցո՛ւնք պիտի ըլլայ բաժինը անոր որ արցունքով չի՛ մօտենար Սուրբ Հաղորդութեան: Կրա՛կ պիտի ըլլայ բաժինը անոր որ կրակէ հաւատքով չի՛ մերձենար Տիրոջ բաժակին: Մա՛հ պիտի ըլլայ բաժինը անոր որ անմահանալու համար չէ որ կը հաղորդուի: Արդարեւ, մեռած հաւատքով Անմահին մօտենալը կրնայ մեզ մահուան առաջնորդել:

Մտաբերեցէ՛ք որ երբ Բեթսամիւսի մարդիկը Տիրոջ տապանակին մէջ նայեցան, Տէրը անոնցմէ յիսուն հազար եօթանասուն մարդ սպաննեց: Ի տես պատահածին, Բեթսամիւսի մարդիկը աղաղակեցին ըսելով. *«Ո՞վ կրնայ կենալ այս սուրբ Աստուծոյ ներկայութեան»* (Ա.Թգ 6.19-20): Այս իրողութիւնը ահով պէտք չէ՞ լեցնէ մեր սիրտերը եթէ երբեք անհոգութեամբ է որ Տիրոջ մարմինին կը մօտենանք:

Բեթսամիւսացիներուն եւ մեր ըրածին տարբերութիւնը շատ մեծ է: Անոնք պարզապէս նայեցան Տիրոջ տապանակին մէջ, իսկ մենք որ հաղորդուելու կը մօտենանք՝ միայն սկիհին մէջ չէ որ կը նայինք, այլ սկիհին մէջ եղած Աստուծոյ սրբարար մարմինն ու արիւնը՝ կ'առնենք մեր բերաններուն մէջ: Աստուծոյ մարմինն ու արիւնը սկիհէն առնելով մեր սիրտերուն սկիհին մէջ է որ կը դնենք:

Մեռած հաւատքով պէտք չէ մերձենալ անմահատու կեանքի Հացին եւ Գինիին: Սուրբ Հաղորդութիւնը կրնայ թէ՛ փրկութեան եւ թէ՛ կորուստի պատճառ հանդիսանալ: Փրկութեան պատճառ կը դառնայ երբ փրկութեան կարօտ մեր հոգին է որ մեզ անոր կ'առաջնորդէ, եւ կորուստի պատճառ կը դառնայ՝ երբ մեղքի մէջ կորսուած վիճակով եւ

անտարբերօրէն կը մօտենանք անոր: Սուրբ Խորհուրդին անտարբերութեամբ մօտենալը վտանգումն է մեր փրկութեան, իսթարումն է մեր յաւիտենականութեան:

Նշխարն ու գինին կը փրկեն երբ փրկութեան կարօտ հոգիներու հանդիպին: Ինչպէս ջուրը ծարաւ մարդուն համար աւելի օգտակար է քան յագեցածին, նոյնպէս ալ Սուրբ Հաղորդութիւնը Աստուծոյ ծարաւը ունեցողներուն աւելի կ'օգտէ եւ ո՛չ թէ անտարբերներուն: Սուրբ Հաղորդութիւնը մեզ այլակերպել չի՛ կրնար եթէ երբեք մենք այլակերպուելու փափաք չունինք: Ինչպէս սերմը եթէ բերրի հողի մէջ իյնայ կը ծլի, կ'անի եւ պտուղ կը բերէ, այնպէս ալ եթէ Տիրոջ մարմինն ու արիւնը Աստուծոյ սիրով եւ հաւատով բերրի դարձած հոգիի մը հանդիպին՝ կ'այլակերպեն եւ կ'արդիւնաւորեն գանիկա: Հաղորդութեամբ Տէրը կը հանդիպի մեզի եթէ մեզ հոգեպէս պատրաստ վիճակի մէջ գտնէ: Իսկ մեզ հոգեպէս պատրաստողը Սուրբ Հոգին ի՛նքն է:

Ինչպէս երբ մէկը պիտի հրաւիրենք մեր տունը, մաքրութիւն կ'ընենք եւ պատրաստութիւններ կը տեսնենք, այնպէս ալ երբ Հաղորդութեան համար սուրբ սեղան մօտենանք, պէտք է աղօթքով եւ ծումապահութեամբ պատրաստած ըլլանք մեր հոգիներն ու սիրտերը: Հաղորդութեամբ մեր սիրտերէն ներս մուտք գործողը պարզ անձ մը չէ, այլ մեր փրկութեան Աստուածն է, փառքի ու փառաւոր Թագաւորն է, երկինքի եւ երկրի Իշխանն է: Երբ կը հաղորդուինք, իսղաղութիւնն է որ կ'իշխէ մեր հոգիներուն մէջ, որովհետեւ իսղաղութեան իշխանը՝ Քրիստոս, կու գայ բազմելու մեր սիրտի գահին վրայ:

Ս. Ներսէս Շնորհալի խօսելով Սուրբ Հաղորդութեան մասին, կ'ըսէ. *«Եթէ Աստուած հրահանգեց Մովսէսին որ մեռած կենդանիի մորթէ շինուած կօշիկով չկոխել այն վայրը, ուր երեւաց Աստուածութեան հուրը, հապա որքա՛ն աւելի անհրաժեշտ է որ մենք նախ վանենք մեր ներսիդէն մեղքերու մեղելութիւնը եւ յետո՛յ միայն մերձենանք աստուածային խորհուրդին, որովհետեւ մենք Մովսէսի նման Աստուծոյ հետ չէ որ կը խօսինք կամ անոր թիկունքը չէ որ կը տեսնենք միայն, այլ մեր ձեռքով կը շօշափենք Անշօշափելին, մեր շրթունքներով կը համբուրենք Սէրը, մեր բերանով կը ճաշակենք բոլոր մարդիկը Կերակրողը, Զայն կ'ընդունինք մեր սիրտին մէջ եւ հոգիով կը միանանք Աստուծոյ հետ»:*

Բարսեղ Մաշկեւորցիին խօսելով Երբայեցիներուն գաղկական գաղնուկին եւ գանիկա ուտելու կերպին մասին, կ'ըսէ. *«Հրեաները եթէ ոտքի կանգնած, կօշիկով, ցուպը իրենց ձեռքը բռնած կ'ուտէին (Ել 12.11) գաղնուկը, որչա՞փ աւելի դուն պէտք է արթուն ըլլաս երբ սուրբ սեղանին կը մերձենաս ճաշակելու Քրիստոսի մարմինն ու արիւնը: Անոնք Պաղեստինցիներու երկիրը պիտի երթային, իսկ դուն՝ երկինք»:* Քանի որ Սուրբ Հաղորդութիւնը մեզ երկրէն երկինք կ'առաջնորդէ եւ Ամենատեսին տեսութեան կը տանի՝ պէտք չէ՞ լուրջ կերպով պատրաստուիմք ատոր:

## ՀԱՅ ԵՒ ԳԻՆԻ՞, ԹԷ՞ ՄԱՐՄԻՆ ԵՒ ԱՐԻԻՆ

*«Ով որ անարժանութեամբ կ'ուտէ եւ կը խմէ՝ այդ ուտելովն ու խմելովը ինժզին՝ դատապարտութեան կ'ենթարկէ, քանի որ զանազանութիւն չի՝ դնէր սովորական հացին եւ Տիրոջ մարմինին միջեւ» (Ա.Կր 11.29):* Չենք կրնար Սուրբ Պատարագի ընթացքին սրբագործեալ հացին եւ գինիին հետ վերաբերիլ այնպէս՝ ինչպէս պիտի վերաբերէինք մեր տան սեղանին վրայ գտնուող հացին եւ գինիին հետ: Եթէ անսահմանօրէն իրարմէ տարբեր են եկեղեցւոյ սեղանն ու մեր տուններուն սեղանները, հապա որքա՞ն աւելի իրարմէ տարբեր են այդ երկու սեղաններուն վրայ դրուող տարրերը՝ հացն ու գինին:

Հացն ու գինին որոնք նիւթական տարրեր են, սուրբ Պատարագի ընթացքին կ'աննիւթականանան եւ կ'աննիւթականացնեն սիրտերն ու հոգիները բոլոր անոնց՝ որոնք նիւթի եւ նիւթականի տիրապետութենէն ձերբագատիլ կ'աղերսեն: Սուրբ Պատարագի ընթացքին մատուցուած հացին եւ գինիին մէջ լոկ հաց եւ գինի պէտք չէ տեսնենք: Քրիստոս զանոնք իր անձով փոխարինեց: Եթէ անոնք լոկ հաց եւ գինի ըլլային, ո՛չ հաւատով հաղորդուողին կեանքին մէջ իրենց սրբարար եւ փրկարար ազդեցութիւնը պիտի ունենային եւ ո՛չ ալ անհաւատութեամբ հաղորդուողին որեւէ ձեւով պիտի վնասէին:

Հայ Եկեղեցւոյ տեսակէտը այն է, որ երբ Սուրբ Պատարագ կը մատուցանենք, Սուրբ Հոգիին վայրէջով եւ ներգործութեամբ, հացն ու գինին սրբագործման պահուն կը փոխուին եւ կը փոխակերպուին Քրիստոսի նշմարիտ մարմինին եւ արիւնին: Դերենիկ Եպիսկոպոս կ'ըսէ. *«Արտաքննապէս հացին եւ գինիին տարրերը նոյնը կը մնան, սակայն կը ստանան նոր զօրութիւն մը, անոնց մէջ խորհրդաւոր կերպով մը կը հաստատուի Քրիստոսի մարմինին եւ արիւնին իսկութիւնը Սուրբ Հոգիին ներգործութեամբ»:* Ներսէս Լամբրոնացի նաեւ նոյն իմաստը ընդգրկող հաստատում մը կը կատարէ. *«Նիւթը (հացն ու գինին) չեն այլայլիր, այլ պարզապէս իմանալի զօրութիւն մը կ'ընդունին»:*

Ս. Գրիգոր Տաթեւացի եւ Ներսէս Լամբրոնացի գրեթէ նոյն բառերով, կ'ըսեն. *«Հացն ու գինին "կը փոխարկուին" Քրիստոսի մարմինին եւ արիւնին»:* Դարձեալ, մեր եկեղեցւոյ վարդապետներէն, Ներսէս Լամբրոնացի, Խոսրով Անձեւացի եւ Արմիշեցի, կը հաստատեն. *«Հացն ու գինին իսկապէս "կ'ըլլան" անոր մարմինն ու արիւնը»:* Յիշենք որ ոմանք հացին եւ գինիին փոխուելուն համար գործած են ուրիշ եզրեր նաեւ, ինչպէս օրինակ, *«կ'անդրակերպուին, կ'անդրագոյաւորուին, կը հրաշակերպուին»:*

Յովհան Մանդակունի կ'ըսէ. *«Հացին եւ գինիին մօտենալով մենք Քրիստոսի՝ է որ կը մօտենանք, անո՛ր է որ կը տեսնենք, կը շօշափենք, կը համրուրենք, մեր ներսիդին կ'ընդունինք, եւ կը դառնանք մարմին եւ անդամ Քրիստոսի եւ որդիներ Աստուծոյ»:*



## ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԸ՝ ԻՆՔՆԱՄԱՏՈՒՑՈՒՄ Է

Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Յաւիտենական Հոգիին միջոցաւ Քրիստոսս ինձգիմք որպէս անարատ գոհ Աստուծոյ մատուցանեց» (Եբր 9.14): Քրիստոսս Սուրբ Հոգիին միջոցաւ է որ ինձգիմք Աստուծոյ մատուցանեց: Ան «մեզ փրկելու համար ինձգիմքը Աստուծոյ ընծայեց որպէս անուշահոտ ընծայ եւ գոհ» (Եփ 1.2): Քրիստոսս ի՛նքն է պատարագուողն ու պատարագողը, ի՛նքն է բաշխողն ու բաշխուողը: Ա՛յս է որ կ'ուսուցանեն Սուրբ Գիրքն ու Հայց. Եկեղեցւոյ Խորհրդատետրը: Պարգեւողն ու պարգեւուածը Քրիստոսէ տարբեր չեն կրնար ըլլալ, քանի որ Քրիստոսս ինձգիմքէն տարբեր բանով մը չի՛ կրնար մեր մեղքերը սրբել:

Արիւնը կեանքի խորհրդանիշ է: Արիւնը մարմինին կեանք պարգեւողն է (Ղւ 17.14): Ուրեմն, Քրիստոսս իր արիւնը իսաչին վրայ թափելով, *առաջին*.- իր կեանքը տուած եղաւ մեզի համար: *Երկրորդ*.- ան ինձգիմք իբրեւ կեանք տուած եղաւ մեզի: Եւ *երրորդ*.- ան ինձգիմք մեր յաւիտենական կեանքին համար տուած եղաւ: Կեանքը տալ, իբրեւ կեանք տալ եւ մեր կեանքին համար տալ: Ա՛յս է ճշմարիտ իմաստը Քրիստոսի պատարագումին իսաչին վրայ: Ան իսաչապարգեւ իր կեանքով կազմեց մարդկային ցեղին «առաւել կեանք», փառքի կեանքը, յաւերժ կեանքը:

Զուր տեղ չէ որ Քրիստոսս հացի եւ գինիի տեսակին տակ իր մարմինն ու արիւնը շնորհեց մեզի: Քրիստոսս իր մարմինով սրբեց մարմինով գործած մեր մեղքերը եւ իր արիւնով սրբեց հոգիով գործած մեր մեղքերը: Նո՛յնը Մովսէս կ'ըսէ. «Հոգիին համար քաւութիւն ընողը արիւնն է» (Ղւ 17.11): Քրիստոսս մարմինին եւ արիւնին հետ միասին, անոր հոգին եւս փրկութեան աշխատանքին լծուած էր. «Թէպէտ մեռաւ մարմինով, բայց կենդանի մնաց հոգիով: Եւ հոգիով ալ՝ գնաց քարոզեց բանտարկուած հոգիներուն...» (Ա.Պո 3.18-19):

Հացն ու գինին զոր Քրիստոսս մեզի տուաւ իբրեւ իր սեփական մարմինն ու արիւնը կը պատկանին երկրի բերքին: Քրիստոսս առնելով երկրային այս երկու տարբերը անոնց երկնային նշանակութիւն եւ զօրութիւն տուաւ: Անոնք իր իսկ օրհնած եւ պահպանած երկրին արգասիքն են: Մենք մեր բովէն չէ որ Քրիստոսսի բան մը կու տանք, որովհետեւ Տիրոջն է երկիրն ու անոր լիութիւնը (Սղ 24.1): Հետեւաբար, ինչ որ Քրիստոսսի կու տանք արդէն իսկ Քրիստոսսի կը պատկանի:

Երբ կ'ըսենք որ Քրիստոսս մեզի տուաւ իր մարմինն ու արիւնը, այդ կը նշանակէ որ ան ինձգիմք տուաւ ամբողջովին: Տրւչութիւնը մասնակի չէր, այլ՝ ամբողջական: Ան ինձգիմք տուաւ ամբողջապէս որովհետեւ ամբողջական սէր ունէր մեզի հանդէպ: Քրիստոսս ինձգիմք տուաւ կատարելապէս, որպէսզի մեզ առաջնորդէ կատարելութեան: Աստուած կատարեալ ըլլալով՝ իր պարգեւներն ալ կատարեալ են: Աստուած կիսկատար բան չի՛ տար: Քրիստոսս է Աստուծոյ մեծագոյն պարգեւը մարդկային ցեղին: Ընդունա՞ծ ես այդ մեծագոյն պարգեւը սիրտիդ մէջ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- 1- «Ե՛ս եմ նամբան»
- 2- «Ե՛ս եմ նշմարտութիւնը»
- 3- «Ե՛ս եմ կեանքը»
- 4- «Ե՛ս եմ աշխարհի լոյսը»
- 5- «Ե՛ս եմ յարութիւնը»
- 6- «Ե՛ս եմ իրաւ հովիւր»
- 7- «Ե՛ս եմ ոչխարներուն դուռը»
- 8- «Ես եմ նշմարիտ որթատունկը»
- 9- «Ե՛ս եմ կեանքի հացը»
- 10- Գործածենք այն ինչ որ ունինք
- 11- Հեղի, Սամուէլ եւ մենք
- 12- «Անօթի էի եւ զիս կերակրեցիք»
- 13- «Ծարաւ էի եւ ջուր տուիք»
- 14- «Օտարական էի եւ ընդունեցիք զիս»
- 15- «Մերկ էի եւ հագցուցիք ինձի»
- 16- «Հիւանդ էի եւ հոգ տարիք ինձի»
- 17- «Բանտի մէջ էի եւ այցելեցիք ինձի»
- 18- Աստուծոյ կանխագիտութիւնը  
չօգտագործենք Աստուծոյ դէմ
- 19- Աստուած իր ծրագիրը կը փոխէ  
եթէ մենք մեր ընթացքը չփոխենք
- 20- Աստուածսիրութիւն եւ մարդասիրութիւն
- 21- Մարդ չի՛ կրնար երկու տէրերու ծառայել
- 22- Ինչո՞ւ Աստուած մեզ ստեղծեց
- 23- Խաչին հրաշալի իրագործումները
- 24- Հարստութիւնը անէ՞ծք, թէ՛ օրհնութիւն
- 25- Սատանան սկիզբէն մարդասպան է

- 26- Սովորամոլութիւններ  
կը սպանեն մեր հաւատքը
- 27- Վստահէ՛ Յիսուսի  
ան կը խաղաղեցնէ կեանքի փոթորիկները
- 28- Նեղութիւնը մեզ հեռու  
կը պահէ հպարտութենէն
- 29- Ներելը ազատ արձակել  
եւ ազատ արձակուիլ է
- 30- Ինկածը դատապարտելով  
գայն վերականգնել չենք կրնար
- 31- Խարուած հաւատացեալներ  
կամ անհոգի կրօնասիրութիւն
- 32- Մեր աջ երեսը ապտակողին  
միւս երեսն ալ պէ՞տք է դարձնենք
- 33- Այն ծնողը որ կը սիրէ իր գաւակը՝  
թող գայն մօտեցնէ Քրիստոսի
- 34- Աստուած չի՛ կարծրացներ մարդուն սիրտը
- 35- Գիտնականն ու քրիստոնեան
- 36- Ինքզինք խոնարհեցնողը կը բարձրանայ
- 37- Ի՞նչ կը նշանակէ ծառայել Աստուծոյ
- 38- Աստուած չի՛ ծածկեր մարդուն մեղքը
- 39- Սուրբ Պատարագի արմատները  
Հին Կտակարանի մէջ  
(Մելքիսեդեկ եւ Քրիստոս)
- 40- Սուրբ Պատարագի արմատները  
Հին Կտակարանի մէջ  
(Զատկական գառնուկը եւ Քրիստոս)
- 41- Յաւելեալ մանրամասնութիւն մը  
գատկական գառնուկին վերաբերեալ
- 42- Սուրբ Պատարագի արմատները  
Հին Կտակարանի մէջ  
(Քաւութեան գոհերը եւ Քրիստոս)
- 43- Ինչպէ՞ս պատրաստուիլ Սուրբ Հաղորդութեան  
(Ինքնաքննութիւն եւ Ծումապահութիւն)

- 44- Ինչպե՞ս պատրաստուիլ Սուրբ Հաղորդութեան  
(Խոստովանութիւն եւ Աղօթք)
- 45- Սուրբ Պատարագը՝ յիշատակ Քրիստոսի
- 46- Սուրբ Հաղորդութեամբ  
իրագործուած մէկութիւնը
- 47- Սուրբ Հաղորդութեան  
այլակերպիչ գորութիւնը
- 48- Զգո՛յշ եղիր երբ կը մօտենաս  
կեանքի Հացին ու Գինիին
- 49- Հաց եւ գինի՞, թէ մարմին եւ արիւն
- 50- Սուրբ Պատարագը՝ ինքնամատուցում է